



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1918

1919

1920

[Faint, illegible handwriting]

[Faint, illegible handwriting]

[Faint, illegible handwriting]

84
17-60

2011

2003

ԱՂԷԲՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ

ՏԻԿԻՆ ՄՈՆՍՈՐՈ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Մ . ԹԱԹՈՒՂ . ԹՕՁԼԵԱՆՅ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՅՈՎՀԱՆՆԵՍ Գ . ԲՕՁԼԵԱՆՅ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ



Կ . ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ . ՀԻՆԵԿԱՆՈՒ

)(1869)(

440

ՕԳՐԱՍԻՄ ԳԿԵԿԵ

ՅԵՄԱԼՈՐԳ ԼԻՌԱԳՐԻ ԿՆՅՈՒՄՆԵՐԻՆԻ

ՇԻՄՈՒՄՆԵՐԻ ԿՆՅՈՒՄՆԵՐԻՆԻ

ՅԵՄԱԼՈՐԳ ԼԻՌԱԳՐԻ ԿՆՅՈՒՄՆԵՐԻՆԻ

ՇԻՄՈՒՄՆԵՐԻ ԿՆՅՈՒՄՆԵՐԻՆԻ



ՏՐԿԱՆ ՄՈՆՍՈՐՈ

ԶԼՈՒՆ Ա.

ԹԷ ԵՂԵՍՅԵ ԿՈՒՆՏԱՆՈ ԻՐ ՔՆԱՇՐՁԻՆ ԸԼԼԱՍՒՈՒՆ
ԻՆՉՊԵՍ ԶԱՄՈՁՈՒԵՑԱՒ ՈՒ ԱՅՍ ԱՆՏԻՆ
ՎՐԱՅ ԳԱՌՆԱՊԵՍ ՈՂՐԱՅ :

Մտերոց օրն հասած էր՝ յորում տարազազը արեղայն
այնպէս անակնկալ կերպով վանքէն վտարական եղեր էր . մին-
չեւ այն օրը Կօւէնֆլօ մասնաւոր կենաց տարազ մը կը բերէր ,
այսինքն երբ առաւօտեան օդը վայելել ուզէր՝ խիստ կանուխ
խիկ երբ արեղակը տնանել ուզէր՝ ուշ դուրս կենէր : Ատ-
ուած և մենատամնին խոհանոցն՝ իւր կենաց խորհրդաւոր
երկու բառերն էին . Քօրն ա՛ Սպօնտանսի համադամ և ընտիր
խորտիկներուն և հեշտայլիր զեղխութեանց վրայ կը խորհէր
միշտ . խորտիկներ զորս հաւատացեցայ ստակովը կը յազենար :
Կօւէնֆլօ նաեւ հաւարելէ ետք Ան-ժաղ փողոցէն կ'անց-
նէր , հոն մէկ մասը կը վստանէր և մնացածովը վանք կը վե :
բազառնար : Սօկեց զատ ունէր նաեւ ընտիր բարեկամ մ'ալ
Շիքօ որ նոյնպէս համադամ կերակրոց և սեղանակից ունե-
նարու սիրահար էր : Բայց Շիքօ այն մարդիկներէն էր որոց
կեանքն երեւակայութեանց օղակներ կը կազմէ : Սրեղայն ե-
րեք չորս օր շարունակ անոր հետ կը տեսակցէր , և ահա
հինգերորդ օրէն մինչև տան և հինգ օր , ամիս մը և կամ
վեց շաբաթ հազիւ կրնար վերստին տեսնել : Ա գիտէ՛ թե-
րեւս արքայն թ իւր տար որ պալատն դուրս ենէ , կամ
ուխտաւեղի տարած չըլլար զայն և կամ նոյն խիկ ինքն իւր
զործերուն համար տեղ կերթար :

Հետեւարար Աօռէնֆլօ այն արեղայններէն մին էր որոց համար ինչպէս նաեւ բանակի զաւակներու համար՝ աշխարհի իրերն տան մը մեծաւորէն այսինքն վանքի մը վանահայրէն կըսուէր և պարսպ սաներու մէջ կը վերջանան, նմանապէս այս եկեղեցւոյ զինուորը, այս վեղարի զաւակը, եթէ ներքի է հայրենեաց պաշտպաններու այս նկարագրական բառերը դորձածել, երբէք մտքէն չէր անցուցած թէ օր մը աշխատութեամբ ուղին լինալու և արկածներուն հանդիպելու պիտի տախտէր :

Եթէ դրամ ունենար իսկ տակաւին մեծաւորին իր հարցմանց տուած պատասխանը պարզ էր և առանց առաքելաբանական ձևերու, ինչպէս Աէն-Ալիքին ըսած սա հետեւեալ հասուածը :

— Փնտռէ և կը գտնես :

Աօռէնֆլօ խորհելով որ խիտտ հեռու երթալ և վնասել տախտած էր, սկսեց յառաջ լքում կ'ըզար :

Սակայն իր աւաջին հոգը նախ իրեն սպառնացող վրտանդէն ինքզինքն ապառնէր էր, վտանգ մը, որ թէպէտ անձանօթ, բայց մեծաւորին խօսքերուն գուշակութեանը համեմատ, մտաբերուած կ'երեւէր :

Տարաբաղդ արեղայն ուրիշներու պէս ծպտելով և այլա կերպերով փախչելու ճարպիկութիւնը չունէր : Խորհեցաւ որ նախ քաղաքին դռնէն դուրս ձգէ ինքզինքն, ուստի արագընթաց քայլերով Աօռտէլի դռնէն դուրս ելաւ, ամենայն զգուշութեամբ սմբելով առանց դիշերապահ զօրքերէ նշմարուելու գոնապանայ կայանին առջևէն սահեցաւ, վախճարով որ ժընէվիէի Սբրային նախադրաց չարագէտ իրութեանց հեղեղակներն ասոնք չըլլան :

Բայց երբ մէկ մ'ազատ օդը շնչեց, երբ անգամ մը լայնարձակ դաշտն հասաւ, երբ քաղաքին դռնէն հինգ հարիւր քայլ հեռաւորութեամբ վաղը մը հասաւ, երբ խըրաւ մին դիմացի կողմը գարնանային այն թիկնաթուածեւ առաջին խտր տեսաւ, որ արդէն կանոնաշարու սկսող երկիրը պատ-

ուելով գլուխը վեր հանելու կը ջանայր, երբ կ'ըսեմ, հօրեղանին վրայ գեղածիծաղ արեգակն տեսաւ երկու կողմն առանձնութիւն, եւ ետին մրմնլող քաղաքը նկատեց, ճանապարհին մէկ խորտ ու բուրդ անկիւնը նստելով իւր ծնօտը երկու գիրուկ ու խոշոր ձեռքերուն մէջ առաւ և ցուցամատով իւր քառանկիւնածեւ և դամբաւային քիթը քերեց և հառաչանք մը հանելով մտախոհութեան ու երազներու մէջ թախառիլ սկսաւ :

Թէ և կիթառ մը կը պահէր, բայց և այնպէս կրնանք ըսել թէ եղբայր Աօռէնֆլօ կը նմանէր այն հրէից, որոնք Երոստաղիմայ առման ժամանակ իրենց տաւիցն ուսերնէն վար կախելով Սուրբ գրոց հետեւեալ նշանաւոր խօսքերը կը նուագէին «Միւրէն Փլիւմինա Պապիլօնի» Անգլիէն և Կոնստանտինուպոլիսի, և անոր կատարածին անթիւ տեսարաններուն մեղամաղձային անցքերը կ'երգէին :

Գնաի որ ժամը ինը կը մտենար, Աօռէնֆլօ իր հեծեծանքը կը կրկնապատուէր, վասն զի ասի այն սովորական ժամն է, ուր ընդհանուր վանքն իր ճաշը կ'ընէ, ըստ որում քաղաքաւորութեան մէջ յետագէմ արեղայններն, ինչպէս կ'ըլլան ընդհանրապէս աշխարհէ մեկուսացողք, 1578 թուին տակաւին Ապրիլու Ե. ի բարեպաշտ սովորութեանը կը հետեւէին, որն որ պատարագ տեսնելէ յետոյ, առաւօտեան ժամը ութին կը ճաշէր :

Հետոյ հետ Աօռէնֆլօի ըզեղին մէջ ծնունդ առնող հակասական մտածմունքներն՝ վտարկալից օրերուն մէջ միրիկէն վեր բարձրացող ծովախմց աւազներու հատիկներէն աւելի դժուար էր հաշուել :

Ամենէն սատոիկ զինքը ճնշող զազախարը, որմէ հետեւապէս ամենէն յառաջ ազատել կը ջանար, Փարիզ մտնել, ուղղակի վանքն երթալ և վանահօր յայտնելն էր թէ եղեռնաւորացքով բանտարկուելը, խայտարակուելը, վանական բանտին մէջ երկնդի խառնազանաւ դանակոծիլը, միայն դէթ օրն հինգ անգամ կանոնաւորապէս կերակուր մատակարարուելն

երդմամբ ընդունին արտրէ աւելի նախամեծար կը համարէր :

Քառորդէ մ' աւելի սղորմելի արեղային խելապատակը ճաթեցնելու չափ տողորդ այս խիստ գաղափարը դեռ չաւարտած՝ ուրիշ մը յաջորդեց : Այս գաղափարն էր ուղղակի Քօրն տ'Ապոստոսն երթալ, Շիրօն դանաղ, եթէ տակաւին քնոյ մէջ չէր՝ անոր խնայ տալ ամեն բան, և զինքը գերի ընելու յաջորդ Քաղոսի սանդարամետական սպեկուլեթեան հետեւած իւր գաւնաղին վիճակն անոր ներկայացունել և այս առատաձեռն բարեկամէն աւուր պարէնի համար ստակ խնդրել :

Այս վերջին յատակադ ծին վրայ քիչ մը կանոյ առաւ . ընտիր գիւտ մ'ըրէր էր և բաւական յուսալի գաղափար մը ծագէր էր իր մտքին մէջ :

Վերջապէս ասիկայ այնպիսի գաղափար մ'էր որ բաւական սիրտ պէտք էր քաղաքին պարսպին շուրջն երթեւեկելու, Աէն-ժէրմէնի դռնէն կամ Նէպէի աշտարակէն անցնելու և Փարիզի մէջ գաղտնաբար մուրդուլթիւնը շարունակելու համար : Լաւ կը ճանչէր ընտիր կողմերը, բաղնայրիւն անկիւններն և այն փոքրիկ փողոցներն՝ ուր մասնաւոր շաղակրատներ՝ պարարտ հաւերը մեծցունելով միշտ մուրացիկ մը պարկը նետելու համար ճարտային հալումէ մեռած արծաթ մը կ'ոռնենային : Իր յիշողութեան երախտադէտ հայելոյն մէջ քանի մը ստորերկեայ սներ կը նշմարէր, ուր ամառն ամեն կերպ անուշեղէններ կը շինուէին, որպէսզի Առեհնֆլօի հայրական օրհնութիւնը վայելելու համար ինչպէս եղբայրն ինքզինք կը վստահացունէր՝ երբեմն քիչ մը շաքարուտ ընկոյզ, երբեմն ճմլած խնձորենեոյ տուփ մը, խնձորենի մ'որոյ հասն օրհասական մը զինովցունելու բաւական էր, անոր պարիը լեցունեն, ըստ որում պէտք է ըսել որ եղբայր Առեհնֆլօ միշտ խելքն ու միտքն ընտիր և համազամ ուտելեաց և հանդրատութեան հետալի հրատուրանօքը գրաւած էին և ոչ սակաւ անձկութեամբ սատոնային այն երկու վստատարաններուն՝ Փուլութեան և Արկրամուլութեան վրայ կը մտածէր ո-

րոնք վերջին դատաստանին ժամանակ էրեն դէմ պիտի բողոք բառնային :

Քայց և այնպէս խոստովանին որ բարի արեղայն թերեւս առանց խղճի խայթ խոնալու չէր շարժեր :

Կը շարժէր ու կ'իջներ ծաղկադիթիթ զառիվայրէ մ'որոյ ստորտն անդնդի մը կը յանգի, անդունդ մ'որոյ յատակն Սկիլլա և Քարիբատո* այս երկու մահացու մեղքերը կ'ոռնան անդադար :

Կը թուէր իրեն թէ այս վերջին յատակադիծը ընտիր էր, թէ ընտրեանէն այս կենաց տարալին սահմանուած էր, բայց այս գաղափարին հետեւելու և այս տեսակ կեանք մը վարելու համար Փարիզի մէջ մնալն ու առ իւրաքանչիւր քայլ տախիկանութեան պահպան զինւորներու, դատաւորի սպասաւորներու և եկեղեցական իշխանութեանց՝ վերջապէս թափառական արեղայի մը համար վտանգաւոր լամբի մը հանդիպելու վտանգն աչք առնուլ պէտք էր :

Ուրիշ անյարմարութիւն մ'ալ կար. Աէն-ժէնըվիէի վանքին գանձապետը մուրացիկ եղբոր Փարիզ կենալ չթողլու չափ կծծի և խիստ պաշտօնեայ մ'էր, Առեհնֆլօ իր առջև ունէր վտանգ մ'իւր պաշտօնակցին հետ դէմ առ դէմ դրտնրուելու, որ իրեն նման պաշտօնը ձգելու հարկադրած չըլլալով իւր վրայ մեծ առաւելութիւն մը կը բերէր :

Այս գաղափարը զինքը սարսեցուց, և անշուշտ շատ իբրաւամբ :

Կը մենախօսէր, դէմը վարանարեկ էր, յանկարծ հեռուէն Պօրնէի դրան տակ ձիւտոր մը նշմարեցաւ, որ ձին մտրակելով սմրակներուն տակ բոլոր կամարը դըզըրգեցուց :

Այս մարդը Առեհնֆլօի նստած տեղէն զրեթէ հարիւր

* Սկիլիոյ մէջ երկու ահագին ժայռերու անդնդային ծոցեր են :

քայլ հեռաւորութեամբ տան մը մօտ ձիէն վար իջաւ բազ-
խեց , դուռը բացաւ , և ձին ու ասպետը տան մէջ աներեւու-
թացան :

Կօռէնֆլօ այս պարագաները դիտեց , որովհետեւ ասպե-
տին երջանկութեանը վրայ նախանձեցաւ որ ձի մ'ունէր , զոր
նաեւ կրնար ծախել :

Բայց վայրկեանէ մ' ետք ասպետը՝ զոր Կօռէնֆլօ իր վե-
րարկուին տակէն ճանչցաւ՝ տնէն դուրս ելաւ , և հոն որ քիչ մը
Բացօթեայ ծառուղի մը և ասոր առջեւ ալ քարակոյտ մը
կայր , գնաց այս ծառաստանին և այս նոր օրինակ մարտկոցին
մէջ տեղ դաւարելու :

— Ահա անտարակոյս գաւազբութիւն մը կը պատրաս-
տուի , մումուաց Կօռէնֆլօ : Եթէ պահակներու այնչափ կատա-
ծելի չըլլայի կերթայի և կամ եթէ քաջ մէկն ըլլայի կը դի-
մագրաւէի :

Այս միջոցին , դարանամուտ անձ , որուն շարունակ ա-
չեր անհանդիստ կերպով քաղաքին դուռը չէին ձգեր չորս
կողմը զննելու համար , իր արագաչարժ ակնարկներուն մէկովը ,
որոնք ալ ու ձախ կ'ուզուէին , Կօռէնֆլօն նշմարեց . որ
միշտ նստած ու միշտ իւր վերարկուին տակն էր : Այս ակնար-
կը զննքը վրդովեց և որմնաքարերուն ետեւն անտարբեր դէմ-
քով չըջաղայել կեղծեց :

— Ահաւասիկ ձեւ մ' ըսաւ Կօռէնֆլօ , ահաւասիկ հասակ
մը . . . ինձ այնպէս կը թուի թէ կը ճանչեմ ասի , բայց ո՛չ ,
անկարելի բան է :

Այս միջոցին անձանօթը , որ կռնակը Կօռէնֆլօին կը
դարձնէր , ցածցաւ յանկարծ որպէս թէ ազդերուն շղեր
կտրուած կամ պակտած ըլլային : Զիտ մը մտնաւոր
երկաթներուն շփննն ակամօլին կը հասնէր , որ քաղաքին
դռնէն կ'ուզար :

Արդարեւ , երեք մարդ , որոնց երկուքը սուրհանդակի կը
նմանէին , երեք ընտիր մատակ չորի և երեք խոչոր մանկա-
ւիկներ արքայի (չուհատար) Փարիզէն կ'ուզային Պօրտէլի

դռնէն անցնելով : Երբ զատոնք տեսաւ , որմնաքարերուն
մարդը աւելի լիւքբոցաւ որչափ կարելի էր և սողալով անմի-
ջապէս խուճի մը ծառերու մէջ հասաւ և անոնց ամենէն խո-
չորքն ընտրելով ետին կ'ծկեցաւ դարանակալ որսորդի մը
դիրքով :

Հեծելադուռն առանց զայն տեսնելու անցաւ կամ դոնէ
առանց զայն ճանչելու , մինչդեռ՝ ընդհակառակն դարանա-
մուտ մարդն անյագաբար կը դիտէր :

— Աճիրն արդիւրոյն ես եմ , կ'ըսէր Կօռէնֆլօ ինքնիրեն ,
և ճիշդ միեւնոյն ժամանակ այս ճամբուն վրայ իմ'ներկայու-
թիւնս նախախնամական կամքի մը կատարումն է , ինչպէս և
այսպիսի կատարում մ'ալ , կրկնեց , իմ'նախաճաշիկիս համար
պէտք էր :

Հեծելադուռն երբ անցաւ դարանամուտը տուն մտաւ :

— Լաւ , ըսաւ Կօռէնֆլօ , ահա պարագայ մ'որ ինձ՝ եթէ
չեմ խարուիր անակնկալ նպատ մը պիտի մատակարարէ , ու-
րուն կը կարօտէի : Այս դարանամուտ մարդը տեսնուիլ
չուղեր : Ասիկայ դադանիք մ' է զոր մինչեւ իսկ վեց
դեցարի ալ կրնամ վաճառել :

Եւ առանց գեղեւելու դէպ 'ի տունն ուղղուեցաւ , բայց
քանի որ կը մտենար ասպետին պատերազմական երեւոյթը
մտքին մէջ նորէն կը տպաւորէր նոյնպէս , երկայն և
դուր թուրը , որ իւր սրունքներուն վրայ կը բազխէր և այն
ահուելի աչքը որով հեծալագնտին անցնելը տեսած էր ,
յետոյ կըսէր ինքնիրեն :

— Իրաւամբ կը կարծեմ թէ սխալած եմ և թէ այսպի-
սի մարդ մը վախաւ տեղ մը կրնար ունենալ :

Երբ դուռը հասաւ , Կօռէնֆլօ իսպառ վհատեցաւ և ոչ
հիմայ քիթը , այլ ակամօլը կը քերէր :

— Խորհուրդ մը ըսաւ ,

Ասիկայ այնպիսի յառաջադիմութիւն մ'էր , որ դադախա-
քի մ'ըզեղի մէջ զարթնումը աբեղայն թովեց , որուն վրայ ին-
քըն անգամ զարմացաւ թէ ինչպէս այս դադախարն յըղա-

յաւ , բայց նոյն ժաման կրնար ըստիւ արդէն , թէ կարօտու թիւնն հնարից մայր է :

— Գաղափար մը , կրկնեց , բաւական հանճարաւոր գաղափար մը : Արտեմ իրեն թէ « Պարոն , ամեն մարդ իրեն համար նպատակ , իղձեր , յոյսեր ունի . պիտի աղօթեմ ձեր նպատակին , իղձերուն « ինչ որ ըլլան » և յոյսերուն համար , ինձ քիչ մը դրամ չնորհ բրէք » : Եթէ իր յառաջադրութիւնները ըստ չեն , որուն տարակոյտ չունիմ , աղօթքիս աւելի պէտք պիտ'ունենայ և ինձ սղորմութիւն պիտի տայ : Առաջին հանգիստը բռնիկս այս ընթացքը կը բանեցնեմ :

Գիտնալու է որ անձանօթ յառաջադրութեանց համար աղօթեալ պէտք է , եթէ այն յառաջադրութեանց վրայ դէշ կարծիք մ' ու կատկած մը կը յղանանք , ինձ ինչ որ ըսէ վարդապետը , այնպէս պիտ'ընեմ , հետեւաբար ես պատասխանատու ըսել չեմ , այլ նա , և եթէ վարդապետն ինձ չը հանդը պիտ'ընէ , իսկ եթէ չհանդ պիտ' , ինչպէս որ կը կատկածիմ ալ կը հրատարիմ այն ատեն : Միանդամայն այս վատթար յառաջադրութիւնն ունեցող մարդուն տուած սղորմութեանովը նախաճաշիկս կ'ընեմ ,

Այս որոշումէն ետքը պատերուն տակ կ'ծկտեցաւ և սպասեց :

Հինդ վարկեան յետոյ դուռը բացուեցաւ , և ձին ու մարդը տեսնուեցան մին միւսին վրայ հեծած :

Կօռէնֆիօ մտաեցաւ :

— Պարոն , ըստ , եթէ հինդ « հայր մեր » և հինդ « ողորջն » ձեր յառաջադրութեանց յաջողութեանն համար հաճելի կըրնան ըլլալ . . . :

Մարդը դուրսը Կօռէնֆիօի դարձուց :

— Կօռէնֆիօ , գոչեց :

— Պարոն Եիբօ , ըստ արեղայն վարմանմամբ :

— Ռէր կ'երթայիր , վերապատուելի կնքհայրեկո , սատանայն ո՞ր կը տանի ձեզ հարցուց Եիբօ :

— Ես ալ չեմ գիտեր , բայց դո՞ւ :

— Աս ուրիշ բան , ես դացած տեղս գիտեմ , ըստ Եիբօ , սակից ուղղակի վեր կ'երթամ :

— Եստ հեռու :

— Մինչեւ որ կանգնիմ : Իսկ դու՞ եղբար կնքահայր որով հեռեւ ինչ պատճառաւ հասեկած ըլլալը յայտնելու կարող չես կատկածի կ'երթամ :

— Ի՞նչ բանէ :

— Կատկածի կ'երթամ թէ դեռ կը լրտեսելը :

— Տէր Յիսուս , ես գրեզ լրտեսեմ , Սատուած մի' արատցէ . քեզ տեսայ , այս է բարոյն :

— Ինչ կ'ընէի :

— Մատակ շորհներուն ճամբայն կ'սողաւիր :

— Խենդեցիք ես :

— Ի վերայ այսր ամենայնի' այս քարերուն ետին և մանրաւ կըրկիտ նայուածքով :

— Այդպէս չէ , Կօռէնֆիօ , կնքահայրիկ , պարկապէն դուրս ինձ համար տուն մը շինել տայ կ'ուրեմ . տեսած որ մտաբարեղ ինս են , և կը քննեմ թէ արդեօք ըստ տեսակէ են :

— Այդ ուրիշ բան , արտասխանեց Կօռէնֆիօ , որ Եիբօի բանձ խօսքերուն և ոչ մէկ բառին հաւատք կրնձայէր . սխալեցայ :

— Բայց վերջապէս դու ինչու՞ համար քաղաքէն դուրս ելիր ես :

— Աւաղ , պարոն Եիբօ , արտուած եմ , պատասխանեց Կօռէնֆիօ բարձր հառաչանայ ձայնով մը :

— Հէ , ձայնեց Եիբօ ,

— Աքտրեալ եմ՝ կ'ըսեմ քեզ :

Եւ Կօռէնֆիօ իւր կնդուղը շտկելով , իր կարճ հասակն ուղղեց և իւր դուրսը դէպ 'ի ետեւն հակեց՝ այնպիսի մարդու մը հրամայական նայուածքովն , որոյ կարծեա մեծ ազէտք մ' իր նմանեաց գթութիւնն հայցելու իրաւունք կ'ուտայ :

— Եղբայրակիցներն զիս իրենց մէջէն մերժեցին, շարու- նակեց, բանադրուած եմ, անաթեմայի տակ եմ :

— Պահ, և ինչո՞ւ այդպէս :

— Մտիկ բրէք, պարոն Շիրօ, ըսաւ արեղայն ձեռքը սրբ- տին վրայ դնելով, մինակ այս գիտեմ և Կօռէնֆլօի կար- գին վրայ կ'երդնում որ պատճառ մը չեմ գիտէր :

— Հայր, չըլլայ որ այն գիշեր Կապելայի երթալդ ըլլայ :

— Առակալի կատակ, ըսաւ Կօռէնֆլօ, խիստ լաւ գիտէք ինչ որ ըրած եմ երեկ իրիկուընէ ի վեր :

— Այո՛րնքն, ըսաւ, Շիրօ, այո՛, ժամը ութէն մինչեւ տա- սը, և ոչ տասնէն մինչեւ երեք :

— Ինչպէ՞ս, տասնէն մինչեւ երեք :

— Անշուշտ, դուք ժամը տասնին գուրս ելաք :

— Ես, ըսաւ Կօռէնֆլօ, աչքերը զարմայմամբ բացած

Կարծնայելին նայելով :

— Շատ լաւ կը յիշեմ, որ ես ալ Ձեզ ուր երթայնիդ հարցուցի :

— Ուր երթալս, դուք հարցուցիք ինձ :

— Այո՛,

— Եւ ի՞նչ պատասխան տուի :

— Պատասխանեցիք թէ ատենախօսութիւն մ'ընելու կ'եր- թաք :

— Բոլորին մէջ ալ ճշմարտութիւն կայ, բայց, մրմնաց Կօ- ռէնֆլօ տատանելով :

— Չարմանք, այնչափ ճշմարիտ է որ ատենախօսութեան մէկ մասն ալ ինձ ըսիք և որ շատ երկար է :

— Երեք մասէ կը բաղկանար և վերջաբանէ մը, զոր Արիս- տակրադ կը յօրինէ :

— Իր մէջ միանգամայն Հէնրի Գ. է՞դեմ կծու խօսքեր կային :

— Պահ, ըսաւ Կօռէնֆլօ :

— Այնքան կծու, որ չը պիտի զարմանայի բնաւ եթէ ձեզ իրը խուսկայուզի մը նայէին :

— Պարոն Շիրօ՛, իմ աչքս դուք բացիք, ձեզ խօսած ա- տենս լաւ յուզուած էի :

— Կը պարտիմ խոստովանել, հայր որ ինձ տարօրինակ բան մը կը թուէիք, մանաւանդ ձեր նայուածքն այնպիսի ան- շարժ ու հատառտէր, որ զիս կը սարսափեցնէր, կ'ըսուի որ առանց յուզման յուզեալ էիք, և թէ նայած տեղերնիդ կը խօսէիք :

— Մակայն, ըսաւ Կօռէնֆլօ վստահ եմ որ այս առաւօտ արթնցած ատենս Քօռն — տ' Ապօնտանի մէջ էի, ի՞նչպէ՞ս ալ հոն եկայ :

— Հը՛, ատոր ի՞նչ կը զարմանաք :

— Ի՞նչ, բուն զարմանալու կէտն այդ է, ըստ որում ըսիք թէ ժամը տասնին Քօռն տ'Ապօնտանէն դուրս ելած եմ :

— Այո՛, բայց առաւօտեան ժամը երեքին հոն վերադար- ձաք, և իրր սպացոյց, կը վկայեմ որ դուռն ալ բաց թողու- ցած էիք, որով ես ալ սաստիկ մտնայայ :

— Ես ալ նոյնպէս, ըսաւ Կօռէնֆլօ, խիստ լաւ կը յիշեմ ատի :

— Եւ կը նայէիք, կրկնեց Շիրօ :

— Թէ որ բոլոր ինձ ըսածնիդ ճշմարիտ են . . . :

— Ի՞նչպէս, թէ որ բոլոր Ձեզ ըսածս ճշմարիտ, հայր, իսկութիւնն է, Մէտր Պօնօմէի՛ն հարցուցէք :

— Անտարակոյս, ան է որ դուռը ձեզ բացաւ : Նտեւ կը պարտիմ ըսել վերադարձնուդ հարտութեամբ ուռեցած է- իք, և ես ձեզ ըսի, հայր, մարդուս հրպարտութիւն չը վայլեր մանաւանդ երբ այս մարդն աշեւայ կամ վարդա- պետ մ'է :

— Եւ ինչո՞ւ հպարտացած էի :

— Ձեր ատենաբանութեան յաջողութեանն և կարգինալ ու Պ. տը Մայէն տը Կիզ դքսին մատուցած քաղաքավարա- կան ձեւերուդ և խօսքերուդ վրայ որ Սատուած մի տրասցէ յաւելցուց Կարծնային իր վաղոյն ձվերցնուելով :

— Հիմայ ամեն բան հասկցայ, ըսաւ Կօռէնֆլօ :

— Եստ լաւ՝ կը խոստովանի՛ր թէ Ժողովին ներկայ էիք .
ա՛, բայց ի՛նչ կ'անուանէք զայն . կեցի՛ր, միտքս եկաւ՝ Սուրբ
— Միութեան Ժողով՝ ճիշդ՝ այս է :

— Կօռէնֆլօ գլուխը վար կախեց արտմութեամբ և հառաչեց :
— Քնաչըլի եմ՝, ըսաւ . երկար Ժամանակ տարակոյս ու-
նենալէս ետք կը հասկնամ :

— Քնաչըլի կ, ըսաւ Եիքօ , ի՛նչ կը նշանակէ :
— Կը նշանակէ որ, պարոն Եիքօ՛ , ըսաւ արեղայն , իմ՝
ողիս մարմնոյս կիշխե՛ այնպէս որ մարմինս կը ննջէ , իսկ
ողիս արթուն է և մարմինս հրամաններ կ'ընդունի հողիէս ու-
րոց կը հնազանդի :

— Ա՛հ , կնքհայրիկս , ըսաւ Եիքօ , առիկայ կերպ մը
մտգութիւն է որում եթէ հմուտ էք, ըսէ՛ք ինձ համարձա-
կօրէն . այն մարդն որ կը շրջի 'ի քուն , թաղաւորին ընդ դէմ՝
ատենարկօսութիւններ կ'ընէ 'ի քուն , միշտ 'ի քուն , եզան վնճը
(վանթըը տը պիշ) . այդ ընական չէ՛ . կօրի՛ր, Բէեզզբուղ՝
« Երթ յետս իմ սասանայ » :

Եիքօ իր ձին մտրակեց՝ որպէս թէ Կօռէնֆլօէն բարկա-
ցած բլար :

— Գու՛ք ա, ըսաւ Կօռէնֆլօ , գու՛ք ալ զիս երեսէ կը ձը-
դէք , պարոն Եիքօ՛ , « Երթ յետս իմ սասանայ » (Ա. քուրքուէ , պը-
րիւթէ) Ա՛հ , ա՛հ . ձեռնէ ընաւ չէի յուսար :

Այս բնիով արեղայն յուսահատութեան հառաչ մը հա-
նեց բերնէն :

Իւր յուսարեկ դէմքէն Եիքօ 'ի գութ շարժելով և ա՛հ
մ՝ գղ ալով՝ ըսաւ :

- Նայինք , ի՛նչ էր ինձ ըսածդ :
- Մ՛րբ :
- Հիմայ :
- Աւա՛ղ , չեմ գիտեր ինչ ըսի , խենդենայս կուպայ . զը-
լուխտ լցուն , այլ ստամբոս դաաարկ է . ճամբայ հանեցէ՛ք
զիս , պարոն Եիքօ՛ :
- Ըննապարհորդելու համար էր խօսածնիդ :

— Այո՛ . ձեզ ըսի որ պատկառելի մեծաւորն ինձ ճանա-
պարհորդելու պատուէր տուած էր :

— Ըննապարհորդութիւն , ու՛ր , հարցոց Եիքօ :

— Ուր որ ուզեմ , պատասխանեց արեղայն :

— Հիմայ քեզ եղած հրաւէրը կը կատարես :

— Այդ չեմ գիտեր :

Կօռէնֆլօ իր երկու ձեռքերն երկինք վերցոյ :

— Ստուծոյ սիրոյն , ըսաւ . իմ՝ ճանապարհորդութեանս
համար ինձ ստակ տուէ՛ք , պարոն Եիքօ՛ , երկու սիւղ շը-
նորհեցէ՛ք :

— Ատկեց աւելին կ'ընեմ , ըսաւ Եիքօ :

— Ա՛հ , ի՛նչ :

— Զեղ ըսի որ ես ալ կը ճանապարհորդեմ :

— Այո՛ , ըսիք :

— Քեզ հետս կը տանիմ :

Կօռէնֆլօ երկրայական կերպով Կապրօնային գիտեց այն-
պիսի մարդու մը նման՝ որ չհամարձակիր հաւատալ թէ
այսպիսի բարիք մը պիտի ըլլայ իրեն :

— Բայց սա պայմանաւ որ խիստ խելօք վարուիք . եթէ
նոյն իսկ ամենամեարիշտ բարք մ'ունենաք՝ կը ներեմ : Կըն-
դունիք առաջարկութիւնս :

— Տէր , ընդունիմ , ըսաւ արեղայն , ընդունիմ . . . :
Բայց ճանապարհորդութեան բառական ստակ ունի՛նք :

— Կեցի՛ր , ըսաւ Եիքօ մինչեւ բերանը պատուականապէս
լեցուն երկար քօակ մը հանելով :

Կօռէնֆլօ ուրախութենէն ցատկըտեց :

- Որչա՛մ է , հարցոց :
- Հարիւր յիսուն բիւթոլ :
- Մւր պիտ'երթանք :
- Պիտի տեսես , սանհայրիկս :
- Երբ պիտի նախաճաշենք :
- Հիմայ անսիջապէս :
- Բայց ի՛նչի վրայ պիտի հեծնամ , հարցոց Կօռէնֆլօ ան-

հանդիսան կերպով:

— Ի՞նչ էիս չլլար, չարածճի, կը սատկեցնես:

— Հապա՞, ըսաւ Կօռէնֆօ յուսաբեկ, ի՛նչպէս ընելու է:

— Սմեհապարզ բան մը, Սիէնի* պէս փոր մ'ունիս, անոր պէս գինով ես, հը՛, որպէս զի ամեն բան համակերպ և կատարեալ ըլլայ, բեզի աւանակ մ'ալ կը գնեմ:

— Գուք իմ կայսրս էք, պարոն Շիրօ, դուք իմ արեւս էք: Առնելու էշէրնիդ քիչ մը զօրեղ ըլլայ . . . : Գուք իմ Աստուածս էք, նախաճաշիկնիս ու՛ր տեղ պիտ'ընենք:

— Հո՛ս, չարածճի՛, նոյն իսկ հոս: Սա դրան վրան նայէ և կարդա՛, եթէ կարդալ գիտես:

Արդարեւ ախարհաւանդի մ' առջեւն հասած էին: Կօռէնֆօ Շիրօի մատին ծայրը դրած տեղը նոյեցաւ և կարդաց:


• Հոս, ապուխտներ, հաւկիթներ, կարկանդակներ, և ճերմակ զինի՞:

Անկարելի է Կօռէնֆօի դէմքին վրայ նշմարուած յուզմունքը նկարագրել, իւր կերպարանքը զուարթացաւ, աչքերը տարածեցան, և բերանը բացուելով սպիտակ և անյագ ակուսներու երլու շարք երեւցան: Իր երկու թեւերը տարածեց ինչան խնդու թեան և չորհակալեաց և իւր հսկայանման մարմինը նշանական կերպով մը ճօճելով և իւր ծայրայեղ յափշտակութեան մէջ ինչ ընելը չը գիտնարով հեւտեւալ վաղեմի երզն երգել սկսաւ:

- Անբեռն է երբ աւանակ
- Խըց ելիք է երբ բաժակ,
- Զականջա ի վեր տրնիէ մին
- Միւսէն դուրս հեղու գինին:
- Անզուգապէս կը շիւղայ
- Աւանակի մ' անհամեռ
- Յորթ արրը շիւղ արեղայ.
- Անմտագոյն ո՛չ որ քան զնա:

* Կիսատուած մ'է:

— Ի՛նչ ընտիր երգասաց, գոչեց Շիրօ, բայց չու՛տ, հրաւնեցէ՛ք՝ վայրապար ժամանակ շննցունէ՛ նք: Ես երթամ ձեզի համար էշ մը պատրաստել տամ:



Գ Լ Ո Ւ Ն Բ.

Թի՛ ԻնՉՊԷՍ ԵՂԲԱՅԻ ԿՈՒԷՆՖԻՕ ԲԱՆԻԻԲԻ ԱՆՈՒՆՈՎ ԻՇՈՒՄԸ ՎՐԱՅ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԹՈՒԹԻՆԵՆԵՐ ԸՐԱՒ, ԵՒ ԱՅՍ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹԵՆԵՆ ԻՐ ԲԱԶՈՒՄ ԹԵՐՈՒԹԻՆԵՆԵՐԸ ՀԱՍԿՅԱՒ ԶՈՐ ՅԱՍԱԶ ԶԸ ԳԻՏԸՐ

Շիրօի՛ իւր ստամբան հողարու անտարբերութեան պատճառըն, որոյ համար խենդ կըլլար կամ այնպէս ըլլալ կը սարժէր և որ արեղայի մ'իր ստամբան մասին անհողութեան կը հաւատարէր նախ այն էր որ Քօռն տ'Ապօնտանը թողէ յառաջ պատուական ճաշ մ'ըրած էր:

Երկրորդ մեծամեծ ցանկութիւններն զմարդ կը յագեցընեն, ինչպէս կը ըսուի, որոյմէ Շիրօ անման չէր այս պարագային մէջ:

Եղբայր Կօռէնֆօն փոքրիկ անակի սեղանի մը գլուխը բազմեցուցին և կարգաւ ապուխտ, հաւկիթ ու գինի բերին առաջը, զորս իւր սովորական վաղվազակրութեամբն ու անընդհատութեամբն բարիզել սկսաւ:

Իսկ Շիրօ՛ իւր ընկերոջ անպարած աւանակը դանելու համար մօտակայները գնաց, Սօի գիւղացուց քով եղան մ'ու ձիու մը մէջ անզը կապուած Կօռէնֆօի ուխտին առարկայ հանդարտասէր կենդանին գտաւ: Հորս տարեկան և թըխագոյն էր կանաճել չորս նրբաւարտ աղբըրերու վրայ բաւական պարարտ իրան մ'ունէր: Այն միջոցին այս տեսակ աւանակ մը քսան ոսկի կ'արժէր, իսկ Շիրօ տուաւ քսան երկու և իր առատաձեռնութեան համար օրհնուեցաւ:

Շիրօ իր այս ընտիր կենդանին հետն առնելով անոր հետ

ի միասին ուղղակի Կօռէնֆլօի ճաշած սենեակը զնայ .
 Կօռէնֆլօ , որ կարկանդակի մը մնացորդը կընեւու և
 գինիին երրորդ գաւաթը պարպելու ետեւէ էր , մէկ կողմէն
 կենդանիին երեւոյթէն կախարդուած , միւս կողմէն՝ ամենա-
 փափուկ զգացումներու համար իսկ պատուական գինիին գո-
 լորչիներէն գրաւուած , յանկարծ իր աւանակին պարանոցը
 ցատկեց , և անոր երկու ծնօտները դատ զատ գրկեւէ և զըդ-
 լեւէ վերջը՝ հացի ստուար շերտ մ'անոր բերանը խոթեց , որու
 վրայ կենդանին ուրախութենէն զռայ սկսաւ :

— Ո՛հ , ո՛հ , ըսաւ Կօռէնֆլօ , ահա կենդանի մ'որ սքան-
 չելի ճայն ունի . երբեմն ի միասին պիտ' երդենք , շնորհա-
 կալ եմ , Եիքօ բարեկամ , շնորհակալ եմ :

Եւ միեւնոյն ատեն Բանիւրժ անուամբ մկրտեց զանի :
 Եիքօ սեղանին վրայ ակնարկ մը ձգեց և տեսաւ որ ա-
 ռանց բռնութեան կրնայ պահանջել իր ընկերէն ճանապար-
 հել , որ ճաշի նստած էր իր առջի տեղը :

Ուստի խօսիլ սկսաւ այնպիսի ձայնով մ' որում՝ Կօռէնֆլօ
 չէր գիտեր ինչպէս գիմադրէ :

— Օ՛ն , յուզի՛ , սանահայր , յուզի՛ , փորձենք անգամ մը :
 Եիքօի ձայնին եղանակը այնչափ հրամայական էր որ , թե-
 պէտ մասամբ իւր իւր քաղցր խօստումը կը յիշեցունէր , բայց
 Կօռէնֆլօ առանց երբէք ուրիշ գործ մը տեսնելու կրկնեց :

— Գէպ ՚ի Մեղի՛ւն , Մեղի՛ւն :

Եւ առանց յապաղելու , Կօռէնֆլօ , աթոռի մը օգնու-
 թեամբ սրճի պարզ սնարքով մը հազուած աւանակին
 վրայ ելաւ , որուն երկու կողմէն ասպատաններու նման երկու
 նուրբ և երկայն փոկեր կախուած էին : Արեղայն մուճակ-
 ներն երկու փոկերուն մէջ անցուց , աւանակին սանձն աջ
 ձեռքով բռնեց , ձախ բուռնը սակուրդին վրայ կրթնցուց և
 պանդոկէն դուրս ելաւ փառասոր , նման այն Ատտուճոյն , ու
 ըուն հետ Եիքօ իրաւունք ունէր համեմատելու :

Իսկ Եիքօ վարժ ապիտի մը պէս ձին երասանելով վրան
 ելաւ , և այս երկու հեծեալներն անմիջապէս Մեղիւնի ճամ-

բան ըռնեցին իրենց կենդանեաց դուզնընդոստ զնայիւրք :

Այսպէս միօրինակ չորս մըն ճամբայ ըրին , յետոյ վայր-
 կեան մը հանդիստ առին : Արեղայն մարմանդին վրայ տա-
 րածուիլ և քնանալու համար գեղեցիկ արևէն օդուտ քաղեց :
 Եիքօ ինքնիրեն օթելու հաչու մ'ըբաւ և որով հասու եղաւ
 թէ հարիւր քսան փարսախի համար օրը տասն փարսախ ճամբայ
 ընելով տասն երկու օր պէտք էր :

Բանիւրժ չրթանցը ծայրովն ուղտալիչի տրցակ մը ճա-
 րակեց :

Արդարեւ աւանակի մ'ու արեղայի մը կարողութիւնն ալ օ-
 րը տասն փարսախ հաղիւ կրնայ տանիլ :

Եիքօ դուխը ցնցեց :

— Կարելի բան չէ , մրմնջեց , Կօռէնֆլօին նայելով , որ
 կռնակին վրայ կը քնանար , մազի մը չտի իսկ , ոչ աւելի ոչ պա-
 կաս , անկարելի բան է , եթէ ինձ հետեւիլ կուզէ , պէտք է
 որ կնդրակիրն դոնէ օրը տասն և հինգ փարսախ ճամբայ ընէ :

Ինչպէս կը տեսնուի , ժամանակէ մ'ի վեր էր եղբայր Կօ-
 ռէնֆլօ մղձաւանջներու ճակատագրուած էր :

Եիքօ արմուկովն անոր գրդեց որպէս զի արթննայ և ար-
 թըննալէ յետոյ իւր գործին սկսի :

Կօռէնֆլօ աչքերը բացաւ :

— Մեղիւն եկա՞նք . անօթի եմ , ըսաւ :

— Ո՛չ , սանհայրիկա , ըսաւ Եիքօ , գեռ ոչ , և ահաւասիկ
 ստոր համար ձեզ արթնցուցի , հոն հասնելիս անհրաժեշտ
 հարկ մ'է : Ետոյ յամր կերթանք , դանդաղ եղբայր , շատ
 յամր կերթանք :

— Ի՛հ . կը բարկանա՞ք , սիրելի պարոն Եիքօ՛ , ծանր եր-
 թանքուս համար : Կենաց ուղին վերելակելով կ'երթայ , ըստ
 որում երկնից կը յանդի , և շատ դժուար է վեր ելնել : Նա
 մանաւանդ ո՛վ մեզ կ'պատէ . որչափ ժամանակն երկարենք ,
 նոյնչափ աւելի միասին օր կ'անցնենք : Միթէ ես հաւատոյ տա-
 րածման համար և դուք ձեր զուարճութեան համար չե՞նք
 ուղեւորիր : Հը՛ լա՛ւ , շատ շուտ չենք երթար , հաւատքը շատ

արագ կը զարգանայ, շատ արագ չենք չուեր և դուք կը զըւարճանաք: Օրինակի ազագաւ, իմ գազափարս քանի մ' օր Մեղին մնալ է, հոն, ինչպէս կը հաստատեն, պատուական կարկանդակներ կը գտնուին, զորս անաշուտ դատողութեամբ ուրիշ երկրի խնդրելինաց հետ բաղդատել կուզեմ: Ինչ կըսէք դուք ասոր, պարոն Շիրօ:

— Արեւմ, որ իմ կարծիքս, ըսաւ Աստրօնոյին, ընդ հաւկառակը կարելի եղածին չափ շուտ տեղերնիս հասնիլ, Մեղինի մէջ ճաշել ու Մոնթորօի մէջ ընթերել է՝ կորուսած փամանակին տեղը լեցունելու համար:

— Կօռէնֆիօ իւր ուղեկցին այնպէս մը նայեցաւ, որպէս թէ չը հասկցաւ անոր ըսածը:

— Օ՛ն, յուզի՛, յուզի՛, ըսաւ Շիրօ:

Կօռէնֆիօ, որ գլուխը խաչածու ձեռքերուն վրայ դրած բոլոր երկայնութեամբ պառկած էր, մոռնալով մ'իբ թիկան վրայ գալով շատացաւ:

— Ուտի, ըսաւ Շիրօ, եթէ ետ մնալ և ձեր հաճոյից համեմատ ճանապարհորդել կուզէք, ազատ էք:

— Ա՛յ, ըսաւ Կօռէնֆիօ, որ պատգամէ մը սթափածի պէս այս մենաւորութենէն կը ստկար. ո՛չ, ըսաւ, Պարոն Շիրօ՛, ես ձերն եմ, և դիւ ձեզ յանձնելը կը սիրեմ:

— Ուրեմն, հեճնանք, սանհայրի՛կս, հեճնանք:

Կօռէնֆիօ թմրի մ' եզրը քաշեց իր աւանակն հեճնելու համար, բայց այս անգամ ոչ թէ առջի անգամուն պէս երասան ածելով, այլ կանանց պէս քոյրատի հեծաւ. մտածելով որ այսպէս աւելի դիւրութիւն կունենայ շարակրատելու: Ինդիրն հոն է որ այս դիւրելին մէջ աբեղայն կրկնակի արագնթացութիւն կը յուսար կենդանիէն ու երկու յնարան կունենար, այն է՝ կենդանոյն բաշքն ու պոչը:

Շիրօ արագնթաց քշել սկսաւ, աւանակն որ անձկութենէն փոքոցը ձեւիւել կասաւ:

Առջի բերան ասիկայ շատ ստկալի երեւցաւ Կօռէնֆիօի, բարեբաղդարար այն մասը՝ որուն վրայ իր նստոցը տե-

ղաւորած էր, այնպիսի դիրք մ'ունէր որ իր հաւասարակըւ ուղեւորներն այնքան չէր խանգարեր, որչափ կարելի էր ըլլալ ուրիշ գրից վրայ:

Փամանակ առ փամանակ Շիրօ իր ասպատաններն ամուր կը կոխէր՝ ճամբայները կը լըտեսէր, և մակերեւութին վրայ բան մը չը տեսնելով աւելի կ'չտապէր:

Կօռէնֆիօ այս հետազոտութեան և անհամբերութեան առաջին նշաններն ուշագորութեան շառաւ երբէք այլ անոնց անոնց պատճառն հարցունելու՝ լոկ իր հեծանելիին վրայ տեղադրելու զբաղած էր: Բայց երբ տակաւ առ տակաւ տեղաւորեցաւ, եիբ իր ծիանաց վարժեցաւ, ինչպէս կ'ըսեն լուղակներն, և երբ տեսաւ որ Շիրօ միեւնոյն խաղը կը շարունակէ,

— Հը՛, ըսաւ, ի՛նչ կը միտտէք, սիրելի պարոն Շիրօ,

— Այնչ, յարեց Շիրօ: Ար նայիմ թէ ո՛ր կերթանք:

— Բայց՝ ինձ կը թուի թէ դէպ ՚ի Մեղին կերթանք, ինչպէս դուք ըսիք, և նախ և առաջ աւելցուցիք թէ...

— Չենք երթար, սանահայր, չենք երթար, ըսաւ Շիրօ իր ձին մարակելով:

— Ի՛նչ, չենք երթար, բայց արագ ոտտուն ամենեւին թուղած չունինք, ազազակեց արեղայն:

— Քառարչա՛ւ, Քառարչա՛ւ, ըսաւ Աստրօնոյին սոյն արշաւը տալով իր երկվարին:

Բանիւրժ գրեթէ ընդ քարչ ընդոտումը թողուլ և սրչաւել սկսաւ, բայց այնպիսի մալեղնութեամբ մ'այլակերպեցաւ որ իւր հեճեպէն յուսաշատելը կը ցուցնէր:

Կօռէնֆիօի հեղձումներն կրկնապատկեցան:

— Ըսէք ուրեմն, ըսէք տեսնեմ, պարոն Շիրօ՛, անմիւրպէս պօռալ սկսաւ երբ խօսելու կարողացաւ, հաճելի ճանապարհորդութիւն մ'է կըսէիք, բայց ո՛ր է որ բնաւ չեմ ըլլօրօնուր ես:

— Յառա՛ջ, յառա՛ջ, պատասխանեց Շիրօ:

— Բայց ուզին տաժանելի է:

— Վարժ ասպետներն ալ դարովերները կ'արշաւեն :

— Ս, յո՛, բայց ես, ես վարժ ասպետի մը հանդամանքը չունիմ :

— Ուրեմն, յեանեցէ՛ք որ . . . :

— Ո՛չ, Աստուած չընէ, աշխարհ աչքիս չերեւիր ձեր քով :

— Ի՛հ, լա՛ւ, յառաջ ուրեմն, ինչպէս կ'ըսէի, յառաջ : Եւ Շիրօ իր ձիուն արագութիւնն աստիճան մ'ալ սատուացուց :

— Ահա ա՛լ Բանիւռժը կը խուկայ, աղաղակեց, ահա ա՛լ ետ կը մնայ :

— Ուրեմն մնաս բարեա՛ւ, սանահայր, ըսաւ Շիրօ :

Առէնֆիլօ ըսպէ մը համանման պատասխան տալու ոյժ մ'ըզգաց, բայց խորհեցաւ որ իր 'իսրոնէ անիծած ձին իր հետ կը տանէր նաեւ այն վէս մարդն որ այն ալ դրպանով դրամի քսակ կը տանէր : Ուստի կատարութեամբ մ'իր ոտքերով աւանդիկն կողերը ծեծելով ինքզինք Ստուռոյ յանձնեց և քառարշաւ յառաջ ընթանալ սկսեց :

— Խեղճ Բանիւռժս պիտի սատուեցունեմ՝, գոչեց ու դուր՝ ձայնով, Շիրօի շահուն սուր հարուած մը տուած ըլլալու կերպիւ, վասն զի անոր զգացմանց ուրիշ կերպով չէր կրնար ազդել : Ս, յո՛ պիտի սատուի, շատ վտահ եմ, պօռաց :

— Հը՛ լաւ, սատուեցու՛ր, սանահայր, սատուեցու՛ր, ըսաւ Շիրօ, այս շահաբեր ծառայութիւնը, ինչպէս կը դատէր Առէնֆիլօ, առանց իր արշաւանաց վրայ թուլութեան նշոյլ մը թողուլ կարենալու, թող սատուի, մատակ ջորի մը կը դընենք :

Երբ այս սպանալի խօսքերը լսեց, աւանակը ճանապարհին մէջ տեղը թող տուաւ, և թուա վրայէն, ամենաչոր և կողմնական փոքրիկ ճամբու մը մէջ նետուեցաւ, ուր Առէնֆիլօ ամենեւին չը համարձակեցաւ հետի քայլելու :

— Ինքնին, կ'աղաղակէր արեղայն, ինքնին, ես կերթամ ինքզինքս դետը դահալիժելու :

— Վրոնդ մը չհասնիր բնաւ, ըսաւ Շիրօ, եթէ ինքզինքնիդ գետը նետէր, կ'երաշխաւորեմ, ինքնիրեն պիտի լողար :

— Ո՛հ, մրմնջեց Առէնֆիլօ, հոն կը խեղդուիմ, տարաւոյս չկայ : Եւ երբ մարդ մտածէ թէ այս ամենը քնաչըրջը կութեանս արդիւնքն է . . . :

Եւ արեղայն դէպ երկին նայուածք մը բարձրացուց, որ ըսել կուզէր,

— Տէ՛ր, Տէ՛ր, ի՛նչ մեղք գործած եմ որ զիս այս տառապանաց կը մատնես :

Երան կատարն հասածին պէս յանկարծ Շիրօ իր ձին կայնեցուց այնպիսի սուղ և անյարմար ժամանակի մը մէջ որ կենդանին զարհուրած իր ետեւի կողման ծնդացը վրայ կը քեցաւ, այնպէս որ իր դաւակը դրեթէ գետինը շարժեց :

Առէնֆիլօ այս քան զՇիրօ սակաւալարժ ասպետն, որ առջի բերան սանձի տեղ փոկերասան մ'ունէր, Առէնֆիլօ կ'ըսէր, իր ճանրայն շարունակեց :

— Աեցի՛ր, չարածճի՛, կեցի՛ր, աղաղակեց Շիրօ :

Բայց աւանակն անընդհատ արշաւելու դաղափարին ետեւէն էր, և աւանակի մը դաղափարն ալ խիտ յամառ կը լայ արդէն :

— Պէտք է կայնի՛, աղաղակեց Շիրօ, ապա թէ ոչ ստորձանակի դնտակ մը կ'արձակեմ վրադ :

— Ի՛նչ զարմանալի մարդ է ասի, ըսաւ ինքնիրեն Առէնֆիլօ և ի՛նչ որդ զինքը կուտէ :

Հետզհետէ աւելի անարկութեամբ կը թնդար Շիրօի ձայնըն : Սրդէն Առէնֆիլօ ամեն մանրերկրորդի կը կարծէր թէ դնտակի պայթիւնը պիտի լսէր, ուստի այնպիսի խորադիտական ձեւ մ'ըբաւ որ աւանակէն սահեցաւ վար ինկաւ :

— Ահաւասիկ, ըսաւ, ինքզինք կ'ունակին վրայ թող տալով և իւր երկու ձեռքերով աւանակին փոկերասանը պատատելով, զոր աւանակը ընդ քարչ տարաւ մէկ երկու քայլ անդին, կանգ առաւ :

Այն ատեն Առէնֆիլօ Շիրօն փնտուեց, որպէս զի անոր

կերպարանքին վրայ դոհունակութեան նշաններ տեսնէ, որոնք անշուշտ այնպիսի ճարտարութեամբ դործուած խորամանկութիւն մը տեսած ատեն չէին կրնար չը յայտնուիլ :

Շիրքո ժայռէ մ'ետեւ պահուած էր և անկից իր նշաններըն ու սպառնալիքները կը շարունակէր :

Սյս նախագդուշութենէն հասկցաւ Կօռէնֆլօ թէ խաղ մը կայ : Յառաջ նայեցաւ, և հարիւրքայլ հեռուն ճանապարհին վրայ երեք մարդ տեսաւ, որոնք հանդարտօրէն ջորիներու վրայ հեծած կուղեւորէին :

Մէկ նայուածքով ուղեւորները ճանչցաւ, որ Պորտելի դըբունէն Փարիզէն կուգային, զորս Շիրքո՝ իր դարանամուտ ծառին ետեւէն ամենայն ուշադրութեամբ իր աչքերուն ճայրովը դիտած էր :

Մինչեւ երեք ուղեւորներուն աներեւութանալը Շիրքո մի եւնոյն դրկց մէջ կեցաւ, յետոյ անձամբ միացաւ իր ընկերոջ որ մինչեւ այն ատեն ինկած կեցած կըմնայր միշտ միեւնոյն կերպով Բանիւրժի փոկերասանն արեւորուն մէջ բռնելով :

— Հա՛ ասանկ, ըսաւ Կօռէնֆլօ համբերութիւնն հասնելով. սիրելի պարոն Շիրքո՛, քիչ մը բացատրեցէք ինձ թէ ինչ առ և սուր է ըրածնիս որ քիչ մ' առաջ որովայն յերկիր արշաւել հարկ էր, իսկ հիմայ ընդհակառակը :

— Աղնիւ բարեկամս, ըսաւ Շիրքո, քիչ մ' առաջ հասկնալ կուղէի թէ արդեօք ձեր աւանակը ընտիր տեսակէ՞ է, և թէ զանի քաններկու ոսկոով զներուս խաբուած չե՞մ : հիմայ փորձը տեսնուեցաւ, և ես շատ դոհ եմ :

Աբեղայն, ինչպէս կրնայ մակարերուիլ տասնիկ պատասխանէ մը դիւրութեամբ չը խաբուեցաւ և իւր ձին իր ընկերին ցոյց տալու կը պատրաստուէր երբ իր ընտան ծուլութիւնն իւր ականնն, ի վայր փոխալով թելադրեց զինքը բնաւ վիճարգաբանութեան չմտնալ :

Ուստի առանց իւր գէշ բնաւորութիւնն իսկ պահելու դոհ եղաւ պատասխանելու :

— Հարկ չէ, սաստիկ յողնած եմ, և փորս խիտ անօթի է :

Հը՛, լաւ, ասոր չը դիմացուիր, կրկնից Շիրքո զուարթութեամբ վեղարաւորին ուսին զարնելով, ես ալ յօգնած եմ, ես ալ անօթի եմ, և մեր ճանապարհին առջեւնիս ելած առաջին պանդոկին մէջ . . . ,

— Հը՛, հարցուց Կօռէնֆլօ Կասրօնացոյն արտատնամ առաջին բառերն, որոց հաղիւ կրնար հաւատալ :

— Հը՛, կրկնեց Շիրքո, կասկարայի վրայ խողենե մը, մէկ կամ երկու խորոված վառեակ և կոյժ մը պատուական զինի սպասքներն :

— Իրա՛ւ, կրկնեց Կօռէնֆլօ, արդեօք անկե՞ղծ է այդ խտտումը, տեսնե՞ք :

— Կը խտտանամ ձեզ, սանահայր :

— Հը՛, լա՛ւ ուրեմն, ըսաւ արեղայն կանգնելով, առանց յապաղման հեծնանք ուրեմն այդ երջանիկ պանդոկը դտնալու : Կեցցէ՛, Բանիւրժ, երգելու ժամանակդ է :

Աւանակը զուարճութենէն սխաւ դալ :

Յանկալի ճաշատուը շուտով տեսնուեցաւ որ Քօռպէլի և Մելիւնի մէջ տեղը կառուցուած էր, Կօռէնֆլօ ասոր յանկուցիչ տեսիլը նշմարած ատեն չափազանց յափշտակուեցաւ . Շիրքո ըսաւ անոր որ աւանակին վրայ վեր ելլայ և ինքն ձախ կողմէն տան ետեւի կողմն անցնելու համար մանուածոյ շրջան մ'ըրաւ, յետոյ, Կօռէնֆլօ, որ սուր իմացողութիւն մը ունէր, այս խեղութիւնը Քիտք պահեց և տեսաւ որ քիչ մը առաջ Շիրքո՛ հեռքերնին զննած ուղեւորաց երեք ջորիներն զրան առջեւ կայնած են :

— Ուրեմն մեր ճամբու արկածներն ու ճաշու ժամերու որոշումներն այս անխժեղ ուղեւորաց գիտութեամբն է, հետեւցուց Կօռէնֆլօ, տխուր բա՛ն :

Եւ սուր հառաչ մ'արձակեց :

Բանիւրժ, ինչպէս բարձր աշխարհի հետ աւանակներն ալ զիտեն թէ ամենէն կարճ ճամբան աս է, տեսնալով որ զինքն ուղիղ շարժէն կը խտորեցնէին, յանկարծ կանգ առնելով չորս ոտքին վրայ արձանացաւ որպէս թէ եղած տեղէն քայլ մ'անա-

զամ չը շարժելու հաստատանութեամբ :

— Նայե՛, ըստ Աօռէնֆլօ ցաւազին ձայնով մը , նոյն իսկ աւանակս ալ երթալ չուզէր :

— Ա՛հ , չուզէր յառաջ երթալ : Կեցի՛ր , կեցի՛ր ըստ Շիքօ :


Եւ հոյնի ցանկապատէն յառաջ եկաւ , ուրիշ հինգ սունաչափ երկայնութեամբ և բլթամատի հաստութեամբ նուրբ , կարծր և միանգամայն դիւրակոր ցուպ մը կտրեց :

Բանխրթ ուրիշ չորրորտանեաց պէս իր շուրջն անցած դարձւած քնեւորուն անտարբեր և անհոգ չէր , Շիքօի ընթացքը զիտած էր , որուն զիտաւորութիւնն անշուշտ զգացած էր , ուտի օգտաւ արշաւել սկսաւ :

— Կերթա՛յ , կ'երթա՛յ , աղաղակեց արեղայն Շիքօի :

— Հոգ չէ՛ , ըստ նա , աւանակի մ'ու արեղայնի մ'ընկեալ կցութեամբ ճանապարհորդելու համար գաւազան մ'անօգուտ չէ :

Կատրոնային իրն ալ թող տուաւ :



Գ Լ Ո Ւ Խ Յ

ԹԻՆ ԵՂՐԱՅՐ ԿՈՒԷՆՖԼՕ ԻՆՉՊԷՍ ԻՐ ԱԻԱՆՍԱԿԸ
ՋՈՐԻԻ ՄԸ ՀԵՏ ԵՒ ՋՈՐԻՆ ՉԻՈՒ ՄԸ ՀԵՏ
ՓՈՒՆՅ

Սակայն Աօռէնֆլօի նեղութիւններն իրենց վախճանին կը մօտենային դէթ նոյն աւուր համար , ամէն դարձուած քէ վերջը երկար ճամբայ մ'ալ ըրին և երեք փարսախ անդին շքեղ աշխարհաւանդ մ'իջկուանեցան :

Շիքօ սենեակ մը բռնեց , որ փողոցին վրայ կը նայէր , ընթրիք աղսպրեց և իր սենեակը բերին , բայց յայտնի էր որ մնունդը Շիքօի համար երկրորդ զբաղում մ'էր : Աէս բերան կուտէր , անթարթ աչօք և խոր մտադրութեամբ կը նայէր ,

կը դիտէր ու մտիկ կ'ընէր : Այս դրազումը մինչև ժամը տասը տեսեց , սակայն մինչև այն ատեն ու բան մը լսած և ոչ տեսած ըլլալով աթոռը վերուց և պատուիրեց որ արշալուսին իր ձին ու արեղային աւանակը քաշեն , որանք հանապազօրեայ վարտակներն ու վախն և վախիւն լիովին առած ու կատարած էին :

Այս հրամանին վրայ Աօռէնֆլօ հառաչեց , որ ժամէ մը 'ի վեր քնացած կ'երեւար , և սակայն ասի պատուական զինիկ առատութեամբն առողուած ընտիր ճաշի մը քայցր հիացման մէկ թմբութիւնն էր :

— Արշալուսին , ըստ :

— Հը՛ , մեծ փո՛ր , յարեց Շիքօ , սոյն ժամուն ելլալ սովորիլ պետք ես :

— Ինչո՞ւ համար , հարցուց Աօռէնֆլօ :

— Եւ առաւօտն՞ըր :

— Մեծաւորին կողմէն առանձնաշորհութիւն մ'ունէի , պատասխանեց արեղայն :

Շիքօ ուսերը թոթվեց , և ծուլ բառն իր յոգնականացուցիչ ; տառին հետ իր շրթներուն վրայ խեղդուեցան :

— Բայց այո՛ , ծոյնը , ըստ Աօռէնֆլօ , բայց այո՛ , ուրեմն ի՛նչու ո՛չ :

— Մարդն աշխատութեան համար ծնած է , ըստ Կատրօնային իմաստասիրելով :

— Աբեղայն ալ հանդատութեան համար , ըստ եղբայրը , արեղայն մարդուն բացառութիւնն է :

Աօռէնֆլօ իր այս փաստաբանութենէն դոհ , որ մինչև իսկ կարծեց թէ Շիքօն համոզեց , շնորհալի ոտտում մ'ընելով անկողնոյն մէջ ցատկեց , որ Շիքօ՝ անշուշտ անխոհեմութեան մը տեղի չորուեւրու համար իր սենեկին մէջ շտկել տուած էր :

Աօռէնֆլօ եթէ ամենախոր քնոյ մէջ չընկղմեցա՛ւ արդարեւ կրցաւ տեսնալ որ Շիքօ արշալուսին հետ ելած , պատուահանին կը մօտենայ և վարագուրին ետեւ ծառայութեանց կ'սկսի :

Անմիջապէս Շիրք, թեպէտ օթոցին մէջ պլլուած, դէպ 'ի ետին շոյտ քայլ մ'ըրաւ, և եթէ Կօռէնֆլօ իւր բունը շարունակելու տեղ արթնցած էր, բնեց անշուշտ որ երեք ջորիներու պայտերն սաչայատակի վրայ կը շառաչեն:

Շիրք խնայն Կօռէնֆլօին քով դնաց և մինչև որ աչքերը բացաւ անոր թեւը թոթովեց:

— Բայց վայրկեան մը հանդիստ չը պիտ'ընեմ, թոթովեց Կօռէնֆլօ, որ ժամը տասնէն 'ի վեր կը քնանար:

— Հապօն, հապօն, ըսաւ Շիրք, հադուինք ու մեկնինք:

- Ապա նախաճաշի՞ կը, ըսաւ արեղայն:
- Մոնթորօի ճամբուն վրայ:
- Ինչ կը նշանակէ Մօնթորօ, հարցուց արեղայն աշխարհագրութեան իսպառ անտեղեակ:
- Մոնթորօյ քաղաք մ'է, ուր կը ճաչեն, ըսաւ Կապրօնացին, ասկէց դո՛հ չե՛ս:

- Այո՛, ըսաւ Կօռէնֆլօ լակոնորէն:
- Ուտի, ըսաւ Կապրօնացին, և ս մեր և մեր անամոց ծախքը վճարելու կ'իշնեմ, եթէ հինգ րոպէի մէջ դքեղ պատրաստ չը գտնեմ, առանց քեզի ճամբայ կ'եշնեմ:

Արեղայի մը վերարկու առնելը մեծ բան մը չէ, սակայն Կօռէնֆլօ տասը վայրկեանի մէջ հազիւ կրցաւ հագնիլ: Արով երբ դուռն իջաւ, տեսաւ որ Շիրք ճիշդ Հոլանտացիի մը պէս արդէն ճամբան բռնած էր:

Արեղայն երասանելով Բանիւսթին վրայ հեծաւ, որն որ Շիրքօի պատուիրանաց համեմատ դրուած խոտն ու վարսակը կերած էր և քառարչաւ վազել սկսեց մինչև որ շուտ մ'իր հեծեալը տարաւ Կապրօնացւոյն հետ քով քովի հասուց:

Կապրօնացին ասպատաններուն վրայ գլխէն մինչև ոտքն ուղղաճգօրէն կանգուն կեցած էր առանց բնաւ ծռելու և ծալուելու:

Կօռէնֆլօ ալ իրեններուն վրայ կանգնեցաւ և հօրիզոնին վրայ երեք ջորին ու երեք ձիաւորները տեսաւ, որոնք բլուբլի մը ե-

տեւէն կ'իջնային:

Կօռէնֆլօ այսպիսի օտար ազդեցութենէ չըլլապատուելուն տխուր հետեւանքը խորհելով հառաչ մը հանեց:

Այս անդամ Շիրք իր խոստումը կատարեց և Մոնթորօյի մէջ ճաչեցին:

Արեւն իր ծագման հետ մեծ համաճայնութեամբ գնաց, և գրեթէ ճիշդ առջի առար անցից շարքն ունեցաւ: Յայտնի է որ մանրապատում չենք խօսիք: Կօռէնֆլօ այս սլատոհաբաւոր կացութեան վրայ դէշ կ'զգածուէր, մանաւանդ երբ տեսաւ որ Շիրք մինչև երեկոյ տակաւ առ տակաւ իր հանգիստը կը կորոնցունէր, կէս օրէն 'ի վեր երեք ուղեւորներուն ստուերը տեսած չէր, որոնց կը հետեւէր, շատ մտաւանջութեամբ ընթերցեց և ննջեց:

Կօռէնֆլօ երկու մարդու չափ կերաւ խմեց, իր սքանչելի երգերն յեղյեղեց:

Շիրք անխռով էր:
Հազիւ արեւը կը ծագէր երբ ոտքի ելած՝ իր ընկերով թեւէն կը ցնցէր, արեղայն հագուեցաւ, և չուել սկսեցին ընդօստ, յետոյ խնայն խեղցնորական քառարչաւի մը լոխեցին:

Շատ դայցին, բայց մակերեւոյթին վրայ բնաւ մարդ չը տեսան:

Կէս օրուան մօտ առանակն ու ձին կը ճարակէին:
Շիրք ուղակի բաժատունը գնաց, որ պճճաւոր կենդանեայ համար Վիլնէօվ-ը-Ռօսա կամուրջին վրայ կառուցուած էր:

- Ջորիներու վրայ հեծած երեք ուղեւորներ տեսա՞ք, հարցուց, որ այս առտու ասկէ անցնելու պարտաւորած էին:
- Իմադնուականս, պատասխանեց բաժառուն, այս առտու ոչ, այլ երէկ շատ կանուխ:
- Երե՞կ:
- Այո, երէկ երեկոյ ժամը եօթին:
- Արդեօք կրցա՞ք ճաննալ գիրենք:

— Արդարեւ, որչափ որ կարելի է ճանապարհորդները դիտարկել :

— Այլ խնդրեմ՝ եթէ այս մարդկանց ընթացքն կրճատուի յետեւ :

— Ինձ այնպէս երեւցաւ որ մին տէրը և երկուքը ետին սպասաւորներն են :

— Ճշմարիտ է, ըսաւ Շիրօ, և բաժառուկն երկու սկուգտուաւ :

Յետոյ խնդիրեն խօսելով :

— Երեկ երեկոյ, ժամը եօթին, մրմնոյնց չարածճինե՛ր, ինէ տասն երկու ժամ յառաջ անցած են : Օն, քաջալերուինք :

— Միտ դէր, պարոն Շիրօ՛, ըսաւ արեղայն, քաջալերութիւն, իմ մտախ հոգ չէ, բայց Բանիւրժը չեմ կրնար երաշխաւորել :

Արդարեւ ապիկար կենդանին երկու օրէ աստիկ հոգնած ըլլալուն չոր ոտքերուն վրայ կը դողդղար և իր նկուն մարմնոյն յոյզը Կօռէնֆլօին կը հազորդէր :

— Ձեր ձին ալ, չարունակեց Կօռէնֆլօ, տեսէք ինչ վիճակի մէջ կը դռնուի :

Արդարեւ ազնիւ կենդանին այնչափ բորբոքած էր և այս բորբոքման պատճառաւ այնպէս վտախօրէն փրփրած էր, որ տաք դողոջի մը իր սնդունքներէն դուրս կը հասէր և արիւնը ձարծէս աչերէն դուրս կը ժայթքէր :

Շիրօ կենդանիներուն վիճակը քննելով իր ընկերոջ համասակարծիք եղաւ :

— Բարե՛, եղբայր դրամսժողով, հիմայ խնդիրը առաջադրութիւն մ'ընելու վրայ է :

— Բայց այդ բանը քանի օրէ ՚ի վեր է որ կ'ընենք, գուցեց Կօռէնֆլօ, որուն դէմքը իրեն ըլլալիք առաջարկութիւնը գիտնալէ յառաջ այլափոխեցաւ :

— Պետք է զմեզ թողունք, ըսաւ Շիրօի, առաջին հարուածին, և զն իր եղբայրներէն բռնելով. ինչպէս կ'ըսէ առակը :

— Պահ, ըսաւ Կօռէնֆլօ, միշտ միեւնոյն խնդկատակու-

թիւնը : Զմեզ թողուլ, բայց ի՞նչու համար :

— Եստ կամայ կերթաք, սանահայր :

— Ստուած իմ, բայց հովի նման կը սահիմ, բայց այս առտու հինգ ժամ շարունակ քառարշաւ գայինք :

— Այդ չտիւր բառական չէ :

— Մեկինքը տրեմն, որչափ շուտ երթանք, այնչափ շուտ կը հասնինք, վասն զի վերջապէս վտաս հեմ որ պիտի հասնինք :

— Ձիս երթալ չուզէր, ձեր աւտնակն աշխատիլ չուզէր :

— Ուրեմն ի՞նչ ընելու է :

— Պետք է երկուքն ալ հոս ձգենք, և անցած ատեն նիս ասիէ կ'առնունք :

— Հապա մե՞նք : Հաչուէ՛ սրբմն հետի քայլել :

— Ձորինեքու վրայ կը հեծնանք :

— Հապա ջորի՞ :

— Կըզնենք :

— Ս. հա զո՛հ մ'ալ, ըսաւ Կօռէնֆլօ հառաչանօք :

— Ս. յապէս :

— Ս. յապէս, հ'նա՛ ջորի դռնելու :

— Կեցցե՛ս, սանահայր, քիչ մը կարգի դալ կ'սկսիք : Պայտեւան ու Բանիւրժն պանդակապետին խնամոյն յանձնեցէք, ես կերթամ մեր պետքն հոգարու :

Կօռէնֆլօ իրեն յանձնուած հոգը խղճիվին կատարեց, Բանիւրժին հետ ունեցած քառօրեայ յարաբերութեանց միջոցին ոչ թէ իր բնութիւնը, այլ թերութիւնները զգացած և ճանչցած էր որ զինքն ընկճող հետեւեալ երեք նշանաւոր թերութիւններն, ծուլութիւնը, շուսլութիւնը և որկրամոլութիւնըն էին : Ս. յս գիտակցութիւնն որ զինքը կը շարժէր աւանակէն բաժնուած ատեն ըրած տեսութեամբն էր, բայց Կօռէնֆլօ ոչմիայն ծոյլ, շուսլ և որկրամոլ մեկն էր, այլ նաեւ աւելի անշուք էր, որով նախամեծար կը համարէր Բանիւրժէն անյնիկ ու Շիրօէն չը բաժնուել, վասն զի գիտէր թէ անիքոսակ մ'ունի :

Շիրքո երկու շորիով վերագարձաւ, որոնցմով նոյն օրը քը-
անն մընն ճամբայ ըրին, այնպէս որ Շիրքո երեկոյն մարա-
շախտի մը դրանն առջեւ երեք շորիները տեսներու ուրախու-
թիւնն ունեցաւ:

— Ա՛հ, ըրաւ, առաջին անգամ շունչ առնելով:

Ա՛հ, հառաչեց Կօռէնֆլօ ալ իր մասին:

Բայց Կասքօնացւոյն վարժ աչերը չը կրցան ճանչնալ ոչ երի-
վարաց սպաններն, ոչ շորիներն, ոչ իրենց տերերն և ոչ ար-
քանեակներն, շորիներն իրենց բնական զարգերովը չէին երե-
ւար, այսինքն բարբովին մերկուած էին, իսկ տէր և արքան-
եակներն ալ անյայտեր էին:

Ասկէց առելի, անծանօթ մարդիկներ այս կենդանիները
չը շապատած զանոնք կը քննէին և խուզարկութիւն ընելու ե-
լած կը թուէին. ասի ձիավաճառ մը և մարաշախտ մ'էր իր
երկու դաղղիացիներովը, որոնք շորիները կը գարձնէին ու
կը վերագարձնէին, անոնց ակոսներն ոտքերն ու ականջները
կը դիտէին, մեկ խօսքով զանոնք կը փորձէին:

Շիրքի բոլոր մարմնոյն մէջ սարսուռ մ'ընթացաւ:

— Յառաջ գնա՛, ըսաւ Կօռէնֆլօին, դաղղիացիներուն մօ-
տեցիր, աստին քաջէ՛, հարցո՛ւր սակաւ առ սակաւ, կար-
ծեմ, դաղտնիք չպիտի մնայ, ճարտար և համարձակ կերպով
մը շորիներուն տիրով ինչ ըլլալը, անոնց դինը, ինչ բան պա-
տահելը հասկցիր և շուտով ինձ պատմէ հանդամանօք:

Կօռէնֆլօ իր բարեկամին անհանդտութենէն անհանգ խոտ
իւր շորին ոտուցանելով գնաց և մեկ վարկենէն գարձաւ:

— Ահա պատմութիւնը, ըսաւ, նախ՝ դիտե՛ք թէ որ տեղ
ենք:

— Է՛հ տէր ողորմեա՛, Լիօնի ճամբուն վրայն ենք, ըսաւ
Շիրքո, ատի մինակ ինձ վերաբերեալ ինդ իր մ' է:

— Եթէ այդպէս է, ձեզ կը վերաբերի նաեւ գիտնալ, ինչ-
պէս որ ինձ պատուիրեցիք, շորիներուն տիրով պատահածը:

— Այո՛ հրամէ՛,

— Այն որ ազնուականի մը կը նմանի . . .

— Բարի:

— Այն որ ազնուականի մը կը նմանի, ասկէց դէպէ՛ Ա-
վինեօն ճամբայ ելած է, ճամբայ մը որ, ինչպէս փորձողք դի-
տեսն, կարճ է և Շաթօ-Շինեօնէն ու Բուլվաէն կանցնի:

— Ս'ինա՛կ:

— Լնչպէս, մինա՛կ:

— Կը հարցնեմ թէ այդ անձը առանց ընկերի ուղեւոր-
ըէր է:

— Սպասաւորի մը հետ:

— Եւ միւս սպասաւորը:

— Միւսն ալ իր ճամբան շարունակէր է:

— Գէպ ՚ի Լիօն:

— Գէպ ՚ի Լիօն:

— Չարմանք: Եւ ինչու՞ ազնուականը Ավինեօն կերթայ:
Կը կարծէի թէ Հոսով կերթար: Բայց, կրկնեց Շիրքո, ինք-
նիրեն խօսելու պէս, ուրիշ բաներ ալ հարցնել կ'ուզեմ, զոր՞
չես կրնար հասկնալ:

— Եթէ այդպէս . . . դիտեմ, պատասխանեց Կօռէնֆլօ,
որովհետեւ Ն. Ս. Գրիգոր Թ. Պատը լիազօր իշխանութեամբ
վիճակաւոր մը զրկած է յԱվինեօն:

— Բարի, ըսաւ Շիրքո, կը հասկնամ . . . և շորիները:

— Չորիներն հոգնած ըլլալով ձիավաճառի մը ծախեր են
և այս ձիավաճառն ալ զանոնք դաղղիացւոց ծախել կ'ուզէ:

— Բանի՛ր:

— Հատը տասնեւհինգ ոսկի:

— Ինչպէ՛ս ուրե՛ն կարողացեր են իրենց ճամբան շարու-
նակել:

— Չիեր գնելով հեծ եր են:

— Ուրկէ գներ են,

— Գերմանացի զօրապետէ մը որ հոս կը գտնուի:

— Կը զարմանամ սանահայր, ըսաւ Շիրքո, պատուական
մարդ մ'եղեր ես այսօր, այս բանը նոր կը տեսնամ վրագ:

Կօռէնֆլօ վերացաւ:

— Երբ , ըսաւ Շիրօ , աւարտէ՛ սկսածդ :

— Ի՞նչ ընել պէտք է :

Շիրօ ձեռն վար իջաւ , և սանձը արեղային թեւին վրայ նետելով ,

— Ա՛ռ երկու ջորիներն , դաղղիացիներուն տար ծախելու , քեզի աւելի պատիւ պէտք է ընեն :

— Եւ պիտի տան , ապա թէ ոչ զերենք կ'ամբաստանեմ իրենց մեծաւորին առջեւ :

— Պաւլօ , սանահայր , քիչ մը ճամբու կուգաս :

— Ա՛հ , բայց , մեր ճամբան ինչպէ՞ս պիտի շարունակենք հարցուց Կօռէնֆլօ :

— Զիով , երանելի՛ ձիով :

— Սատանայ , ըսաւ արեղայն ականջը քերքելով :

— Օն ուրեմն , քեզի պէս ուղեկից մը :

— Պա՛հ , քիչ երջանկութիւն չէ , ըսաւ Կօռէնֆլօ : Բայց ձեզ ո՛ր դանամ :

— Քաղաքին հրապարարակին վրայ :

— Պացէ՛ք ինձ սպասելու :

Եւ երբ Շիրօ զարտուղի փողոցէ մը փոքրիկ տանին դըլխաւոր հրապարակը գնաց , Կօռէնֆլօ յանդուգն քայլով դաղղիացիներուն մօտեցաւ :

Շիրօ Քօբ-Հառափի աշխարհաւանդին մէջ դերմանացի զօրապետը տեսաւ , որ նստած՝ Օկղէօի փոքրիկ և սիրուն շիշէն կը խմեր , զոր երկրորդ կարգի սիրուք Պաւլօսի հընարածներուն հետ կը շիտթէին անկէց , նոր տեղեկութիւններ առաւ , որոնք Կօռէնֆլօի ըսածներուն հաստատութիւն կոտային :

Մեկ վայրկեանի մէջ Շիրօ ձիերուն տիրոջ հետ ծանօթցաւ , որն որ երկու ձի բերաւ ու ետեսունեւհինգ ոսկիի՛ վաճառեց :

Պործը թամբերուն և սանձերուն սակարկութեանը մնացած էր , մէյ մ'ալ տեսաւ Շիրօ որ կողմնական փոքրիկ փողոցէ մը երկու թամբ գլխուն վրայ և երկու սանձ ալ ձեռքը բռնած գարս կելար :

— Օ՛հ , օ՛հ , ըրաւ , ի՛նչ է այդ , հայր :

— Հը՛ , ըսաւ Կօռէնֆլօ , մեր ջորիներուն թամբն ու սանձնն :

— Ուրեմն ոտոնք վա՛ր դրժք , վեղարաւո՛ր , ըսաւ Շիրօ իր յորդ ժպիտովը :

— Սնտարակո՛յս :

— Զորիները ծախեցի՞ր :

Իւրարանչիւրն տան ոսկի :

— Ի՛նչ ստակ տուին :

— Ահա ստակը :

Եւ Կօռէնֆլօ անմիջապէս իր դրամին մէջէն քսակին ձայնն հանեց , որ ամեն տեսակ ստակներով լեցուն էր :

— Կը զարմանամ , սանահայր , դու մեծ մարդ մ'ես :

— Ահա ինչ որ եմ , ըսաւ Կօռէնֆլօ համեստ անձնագոյն վռձեւածը մը :

— Ի գործ , ըսաւ Շիրօ :

— Մ՛հ , բայց ծառախ եմ , ըսաւ արեղայն :

— Լաւ , մինչև որ ես կէնդանիները թամբեմ դուք ալ ջորիներդ խմեցէք առանց աշխատու :

Կօռէնֆլօ երկու մարդու չափ խմեց և ստակին մնացածն Շիրօին տալու եկաւ :

Շիրօ թեպէտ բոլորէ մը երկու շիշի ստակ մէջէն հանելով արեղային թողուլ մտքէն անցուց , սակայն խորհեցաւ որ Կօռէնֆլօ երկու սկուդ ունեցած օր իր անձին տէրը չէր ըլլար :

Ուստի նոյն խակ արեղային ակնկալութեան և փորձին հակառակ առանց երբէք բան մը տալու դրամներն առաւ և թամբին վրայ ելաւ :

Նոյնպէս և արեղայն հեծաւ դերմանական զօրաց պաշտօնատարին օգնութեամբ , որն որ երկիւղած և բարեպաշտ անձ մ'ըլլալով Կօռէնֆլօին ձեռքէն բռնեց և ձիուն վրայ հանեց , որուն վեղարաւորն իր օրհնութիւնը տուաւ :

— Ժամանակն է՝, ահա օրհնեալ կենդանի, առոյդ մը, ըսելով Եիքօ արչաւանք մ'առաւ,

Կօռէնֆլօ տեսնելով որ իր ընթերիքն իր առջեւէն կ'ընթացայ, անոր հետքերուն վրայ իր ձին ալ լարեց, առջի բերան ուրիշ անդամներ ըրածին պէս ձիուն բաշքերը բռնցելու տեղ երկու ձեռքերով թամբին երախակալ գունդը շոշափեց, յենարանի տեղ անոր կրթներով ձիալարեր սկսաւ և յետոյ Եիքօի հաւասար որնթաց սա՛խւմ մ'առաւ:

Միւսնոյն չափը չանցուց. վասն զի Եիքօի ամեն արչաւանքը չափաւորելուն և իր ձին յամրնթացելուն, արեւոյն ընդոստ արչաւը սիրելով հազարակեցով իր ձին կը վարէր:

Այսպիսի եզակիան ճղունք վարձագրութեան արժանի են, հետեւեալ երեկոյ Գալսնէն քիչ մ'անդին Եիքօ Նիքօլա Գաւիթը դատա միշտ միւսնոյն ծպտեալ սպասաւորի կերպարանօք, զրբ մինչև Լիօն իր աչքէն չվրիպեցաւ, և այս երեքն ալ իրենց Փարիզէն մեկնելուն եօթնհարորդ օրն երեկոյեան դէմ դռներէն ներս մտան:

Աօի գրեթէ ճիշդ այն վայրկենէն էր, ուր Պիւսի, Սէն-Լիւք և Խոր կինը հանդիպակաց ուղիէ մ'ընթանալով, ինչպէս ըսած էինք, Մեռիտօրի դղեակը հասան:

ՅԼՈՒՆ Դ

ՇԻՔՕՒՄԻ ԻՌ ԸՆԿԵՐՈՋ ՄԻՆԵՂ-ՏԸ ԼՍ ԲՈՒՌՄ ՊԱՆԳՈՒՆԵՆ
ՄԵՂ ՕԹԵՒԱՆԵՒԼՆ ՈՒ ՊԱՆԳՈՒԿԱՊԵՏԻՆ ԸՆԳՈՒՆԵՒՆՈՒԹՒՆԵՂ

Մեթըրը Նիքօլա Գաւիթ միւսնոյն ծպտութեամբ դէպ ի Թէւոյի հրապարակն ուղղուեցաւ և հրապարակին գլխաւոր պանդոսին ընտրեց, որ Սենեք-տըլա Քուուա կ'անուանուի:

Եիքօ անոր հոն մտնալը տեսաւ, վայրկեան մը զբաղեալ մնաց հետաքրքրութեամբ ապահով ըլլալու թէ հոն պիտի մնար թէ ոչ դուրս պիտ' ելար:

— Սենեք տըլա Քուուաի պանդոկապետին հետ հակառակութեան բան մ'ունի՞ս, ըսաւ Կառքօնային իր ուղեկցին:

— Ամենեւին, պատասխանեց ասի:

— Ուրեմն ներս կը մտնաս, մեկուսիկ սենեկի մը վարձ կը սակարկես, կ'ըսես որ եղբօրդ կ'սպասես և նոյնպէս ալ զըրան սեւամին վրայ ինձ կ'սպասես, ես չըջայայելու պետի երթամ և գիշերը կուգամ, գիշերը մութին, և ձեր կայանը պատրաստ կ'ուզեմ գտնալ, պէտք է այնչափ արթուն և զգոյշ շարժիս որ տանը նախագիծը լաւ ճանչնաս և զիս սենեակն առաջ նորդած ժամանակը բնաւ չը պատահիմ այնպիսի մարդոց, զորս տեսնել չեմ ուզեր, կը հասկնաս:

— Ամենայն կատարելութեամբ, ըսաւ Կօռէնֆլօ:

— Ընդարձակ, լուսաւոր, շքեղ և եթէ կարելի է գալիք ուղեւորաց սենեկին կից սենեակ մ'ընտրէ, դիտէ՛ որ պատահանները փողպին վրայ իյնայ, որպէս զի ել և մուտները կարենամ տեսնել, անուշա բնաւ որ և է մէկու մ'առջեւ որ և իցէ պատճառաւ մի՛ արտասանէր և ըստ հարկին խոհարարին շատ մ'ոսկի խօստացից:

Ստուգիւ Կօռէնֆլօ ամենայն ճշգրութեամբ իր պարտքը կատարեց, սենեակն ընտրեց, գիշերը վրայ հասաւ. մութը կոխածին պէս Եիքօի ձեռքէն բռնել զնայ, անոր պատուիրանայ համեմատ զանի սենեակը առաջնորդեց:

Արեւոյն որ ընութեամբ թանձրամիտ մեկն էր, եկեղեցւոյ զաւակի մը յարմար այնպիսի խորամանկութիւն բանեցուց, որ յաջողեցաւ ասնդուսին վրայ յանդող Նիքօլա Գաւիթին սենեկին յարակից սենեակ մը վարձելու որ սոսկ զիւրաթափանց կրեայ և փայտաշէն միջնորմով մը անկէ զատուած էր:

Եիքօ արեւոյին լաւ ուշադրութիւն ըրաւ, անանկ որ, եթէ ընթերցողը ատենախօս մ'իր ունեկնդրին հետ տեսած է, պիտի կրնայ հասկնալ ասոնց մեկուն խօսքերն ու միւսին դիմաց զուարթութիւնը:

Յետոյ, երբ արեւոյն իր խօսքն աւարտեց:

-- Բոլոր ըսածդ վարձադրութեան արժանի են , պատաս-
խանեց Շիրօ , այս երեկոյ ընթրիքիդ հետ Քղերեղի դինք
պիտ'առնեսս , Առէնֆլօ , աչո՛ւ , պիտ'առնեսս , ճշմարիտ , ապա
թէ ոչ ձեզ սանահայր չեմ'անուաներ :

— Սյդ գինւոյն արեցութիւնն ամենեւին չեմ' փորձած ,
հաճոյսկան բան մ'ըլլալու է , անչուչտ , ըսաւ Առէնֆլօ :

— Շա՛տ բան , յարեց Շիրօ իր սենեկին ստացողին հետ
խօսելով , երկու ժամուան մէջ լաւ մը կրնանք փորձել , բա-
ւական է որ ես եմ ըսողը :

Շիրօ պանդոկապետը կանչեց տուաւ :
Թերեւս սողտանք մ'ըլլայ թէ վիպասան անձերն մեծաւ
մասամբ պանդոկներու մէջ պիտի ներկայայնէ , ի պատասխանի
կ'ըսենք որ եթէ պակասութիւն մը կայ այս մասին հեղինա-
կին չէ , այլ անոր որ ոմանք իրենց տիրուհիներուն ծառայե-
լու համար դէպ 'ի հիւսիս երթալու , ոմանք թագաւորին բար-
կութենէն վրիպելու համար դէպ 'ի հարաւ փախչելու ըս-
տիպուած են :

Սրդ , ենթադրելով որ հնութեան մէջ կ'ապրինք , ուր 'ի
չնորհս եզրայցական հիւրասիրութեան աշխարհաւանդներու
բազմութիւն մը կար ե որոնք 'ի չնորհս նորոգ կեանքի պան-
դոկի սեղաններու փոխուած են , համարձակութիւն կուտայ
մեծաւ մասամբ պանդոկներու մէջ հոյովել գրքիս կորեւոր
տեսակներն , հին ատենները մեր Արեւմտեան իլեւաններն ,
որոնք այնչափ մերժելու չենքեր չէին , երեք ձեւ ունէին , սա-
կայն ժամանակը շատ փոփոխութիւններ տուաւ անոնց :

Սյս երեք տեսակներէն մին աշխարհաւանդ , մին պան-
դոկ ե միւսն ալ կապեղանոց կանուանին : Յիշէ՛ որ հոս չենք
խօսիր այն դեղեցիկ բազանիքներուն նկատմամբ որոնք մեր
ժամանակուան համար արժէք չունին , որոնք Հռովմայ մէջ
կայսերուն ե Փարիզի մէջ թագաւորներուն աւանդուելէն
վերջը , իրենց մեղի տխարութեամբն այլակրօն ե բազմա-
պատիկ սրբապղծութեանց հետ փոխեցին :

Բայց՝ այս հաստատութիւններն Հէնրի Գ . ի տէրութեան

ժամանակ մայրաքաղաքին պարսպին ներսի կողմերը տակա-
ւին հաստատ կը մնային , քաղաքային միայն պանդոկ , աշ-
խարհաւանդ ե կապեղաներ ունէր :

Հիմայ , պանդոկի մը մեջն ենք :

Պանդոկապետն որ կանչուած էր , իր պատասխաններովն
ոս զգալ տուաւ Շիրօի որ , պէտք էր համբերութիւն ունե-
նալ , վասն զի այն ուղեւորը , որուն հետ կը շաղակրատէր ,
իրմէն յառաջ հոն եկած ըլլալով առաջնութեան իրաւունքն
անոր կը պատկանէր :

Շիրօ խելամուտ եղաւ որ այս ուղեւորը իր փաստարանն
էր :

— Սրդեօք ի՛նչ կրնայ ըլլալ խօսածնին , հարցուց Շի-
րօ :

— Կը կարծե՞ք ուրեմն որ պանդոկապետն ու մարդդ
քաղոնիք մ'ունենան :

— Սրդարե՛ւ , խիստ լաւ կը տեսնաք արդէն , սա ժպիւրհ
դէմքը , զոր տեսանք ե ինչպէս կը գուշակեմ'ալ , պանդո-
կապետին դեմքն է . . . :

— Նոյնիդն , ըսաւ արեղայն :

— Սպասաւորի մը հազուստով ծպտեալ մարդու մը հետ
ի՛նչ հաճութեամբ կը շաղակրատէ :

— Ա՛հ , հազուստը փոխել է , տեսայ , հիմայ բոլորովին
սեւ հաղած է , ըսաւ Առէնֆլօ :

— Ստիկեց աւելին կայ , ըսաւ Շիրօ , անտարակոյս պան-
դոկապետն դարձուածք մ'ունի :

— Կուզէ՞ք որ իր կինը խօստովանցնելու աշխատիմ :

— Ո՛չ , աւելի կուզեմ որ երթաք քաղաքին մէջ պտոյտ մը
ընէք :

— Պա՛հ , հապա ընթրիքն , ըսաւ Առէնֆլօ :

— Մինչեւ ձեր գալը ես պատրաստել կուտամ : Կեցի՛ր ,
ահաւասիկ ձեզի երկու սկուդ ալ :

— Առէնֆլօ երախտադ խտութեամբ սկուդն առաւ :
Արեղայն ժամբուն վրայ արդէն շատ անդամ ինքզինք ցայ-

գաղնայ չընդհատեալ առած էր, զոր կը պաշտէր և ՚ի չը-
նորհա իւր «գրամաժողով եղբայր» տխուրօրէն ժամանակ առ
ժամանակ Փարիզի մէջ ինքզինք այսպէս հրապարակ կը նե-
տէր: Բայց վսնքէն երեսէն ՚ի վեր այս ասպատակութիւնքն
իրեն աւելի սիրելի էին տակաւին: Կօռէնֆլօ հիմայ իր մար-
թին բոլոր ծակտոխիներով ազատութեան մէջ կը շնչէր, և
այն աստիճան հասած էր որ իր վանքն բանտի մը կատարեալ
տեօնով իր յիշողութեան կը ներկայանար:

Ուտի վերադրուան մէկ կողման վրայ կը կնած և սլուզն
իր գրպանին մէջ դուրս ելաւ:

Կօռէնֆլօ հաղիւ սենեկէն դուրս ելած էր, Շիքօ, առանց
վայրկեան մը փախցնելու գայլիկն մ'առաւ և աչքին բարձ-
րութեամբն ասխտակամածին վրայ ծակ մը բացաւ:

Այս շեփորի ծակի մեծութեամբ բացուածքը տախտակ-
ներու թանձրութեամբ պատճառաւ սենեկին ամեն կողմերը
որոշ կերպով տեսնել չէր ներէր, բայց ականջն ծակին բեր-
նին փակցնելով եղած խօսակցութիւններն բաւական որոշ կը
լսէր:

Սակայն ներան եղողներն կեցած դիրքերնին ու կայնած
տեղերնին անանկ բազդաւոր պատահած էր, որ Շիքօ պան-
դօկապետին՝ Նիքօլա Գաւիթին հետ շաղակրատելը կրցաւ
նշմարել:

Ինչպէս ըսած ենք, քանի մը բառեր սահեցան, որոնք բա-
ւական եղան Շիքօին հասկցնելու որ Գաւիթ առ թաղաւորն
հաւատարմութեան մեծ ցոյցեր և նստել Պ. Մօռվիլիէսի կող-
մէն հաղորդած մեկ խորհրդոյ մասին արտայայտումներ
կ'ընէր:

Սնոր այսպէս խօսած ժամանակ պանդօկապետն յարգա-
նօք բայց գրեթէ անտարբերութեամբ մտիկ կընէր, ըստ ու-
սմ քիչ կը պատասխանէր: Սմեն անդամ թաղաւորին ա-
նունը արտասանելուն Շիքօ թէ անոր անխաղճեղութիւն և թէ
ձայնին երեսնջներուն մէջ բաւական ծանօթ հեղուկութիւններ
նըշմարել կերեւար:

Հը', հը', մեր պանդօկապետն դաշնակից է, թէ պա-
տահմանք այսպէս կ'ընէ, ահ չարածնի՛, յետոյ կը տեսնը-
ուինք պէտք եղածին պէս ըսաւ:

Եւ երբ ալ կարեւոր բան մը չէր խօսուէր մէթը Նիքօլա
Գաւիթի սենեկին մէջ, Շիքօի սպասեց որ պանդօկապետն
իր կողմէն այցելութիւն տալ գայ:

Վերջապէս դուռը բացուեցաւ:

Պանդօկապետն պծնէթան ձեռքը բռնած էր, բայց փա-
տարանին հետ խօսելու ատեն Շիքօի նշմարածին պէս միեւ-
նոյն խեղկատակ կերպարանքն ունէր:

— Կանոնքը, սիրելի պարոնս, ըսաւ անոր Շիքօ, որոշ կար-
դադրութիւն մ'ընենէս յառաջ, եթէ կը հաճիք, մտիկ ըրէք
պատմութիւնս:

Պանդօկապետն այս յոռաշարանն անխորժ կերպով ուն-
կնդրել ձեւացաւ և գլուխով միեւնոյն նշանն ըրաւ, որով սու-
քի վրայ կայնելու փափաքը կը յայտնէր:

— Ինչպէս որ կը հաճիք, սիրելի պարոնս, կը'նեց Շիքօ:
Պանդօկապետն նշան մ'ըրաւ, որով ըսել կ'ուզէր, հա-
ճութիւնն ստանալու համար մէկը միւսին ներողամտութիւնն
սպասելու հարկ չը կայ:

— Այս անտու, շարունակեց Շիքօ, արեղայի մը հետ
տեսաք զիս:

— Այո՛, Պարոն:

— Լսութիւն, մարդու բան մի՛ զխոցունէք այդ մաս-
ին . . . այս արեղայն արսորեալ է:

— Պահ, ըրաւ պանդօկապետն, չըլլա՞յ որ ծպտեալ կալ-
վինական մ'ըլլայ:

Շիքօ այս խօսքին վրայ անհաճոյ կերպարանքը ցուցուց:

— Կարլինական, ըսաւ անխորժ կերպով, ո՞վ ըսաւ թէ
կարլինական մ'է, գիտցէք որ արեղայն իմ ազգականն է, և
ես կարլինական ազգական մը չունիմ: Գնա՛ բռնդ, այրդ
զարմանալի, այդպիսի անհեթեթ խօսքէ մը դոնէ կարծիւ
պէտք էիք:

— Ա՛հ , պարոն , այնպէս երեւցաւ , կրկնեց պանդոկապեան :

— Իմ ցեղիս մէջ քաւ լիցի , պարոն պանդոկապեա : Ընդհակառակն այս արեգայն կարվինականաց դէմ այն աստիճան զինեալ ոսող մ'է որ մինչեւ անգամ Նորին Վեհափառութեան Հէնրի Պ . ին ցամանս արժանացած է , որ ինչպէս գիտես զանոնք կը պաշտպանէ :

Պանդոկապեան Առէնֆլօր հալածումէն մեծ օգուտ մը քաղել սկսած կ'երևար :

— Լուութիւն , ըսաւ , մատն իր չըթանցը վրայ դնելով :
— Ինչ , լուութիւն , հարցուց Շիրօ՝ չըլլա՞յ որ թաղաւորին մարդիկներէն հոս ըլլան դիպուածէ արդեօք :

— Այդպէս կը կասկածիմ , ըսաւ պանդոկապեան դիտով ընելով , հոն քովը ո՛ւրեւոր մը կայ :

— Ուրեմն պէտք է զմեզ ազատենք իսկոյն ազգականի հետ , վասն զի աքսորեալ և հալածեալ . . . :

— Եւ ո՛ւր պիտ' երթայիր :
— Երկու երեք հասցէ ունինք , որոնք մեր աշխարհաւանդապետ բարեկամը Լա Հիւռիէոն տուինք :

— Լա Հիւռիէո , ուրեմն կը ճանչնաք Լա Հիւռիէոը :
— Լուութիւն պէտք չէ ձայն հանել ըստ Ան-Պարթէլըմիի երեկոյն ծանօթացանք :

— Աղէ՛ , կը հասկնամ որ դուք երկուքնիդ ալ թէ դուք և թէ ազգակարնիդ սուրբ մարդիկներ էք , լա Հիւռիէոն ես ալ կը ճանչնամ : Սոյն պանդոկը դնած ժամանակս ես ալ իբր հաւատարի բարեկամութեան միեւնոյն տեղեկութիւններն առնելու համար միեւնոյն եռանդն ունիի ինչպէս նա Պէլ-Էթուալի մէջ , ըսայց պանդոկապեան Աններ տըլա Քուուաի պանդոկապետին մըկանուանը տակ ճանչնած էր , որով շատ կերպերէն որ այս փոխանութիւնը զիս չիտալեցնէ : Ահա այսպէս ըսել կ'ուզեք ուրեմն , պարոն , թէ ձեք ազգականք :

— Կարվինականաց դէմ քարոզելու անխոհեմութիւնը դորձած է , որ ընդարձակ յաջողութիւն մը դատած և մինչեւ ան-

դամ Նորին Ամենաբրիտանեայ Վեհափառութիւնն այս յաջողութեան վրայ կատարեցուցած էր , որ թէ իր ներսիդին թագուն կը պահէր , ըսայց քարոզէն բանտարկելու համար կը բնտուէր :

— Հապա ուրեմն , հարցուց պանդոկապեան այնպիսի նըպատաւոր ձայնով մ' որ ալ չը խաբուելու տարակոյտը չէր մընացած :

— Կերդնում , որ փախուցի , ըսաւ Շիրօ :
— Եւ Շա՛տ աղէկ ըրիր , տարալազգ և սիրելի անձ :

— Պ . տը կիդ բնաւ զանի պատուանելու չ'ախտաւցաւ :
— Ինչպէս , Հէնրի տը կիդ մեծը՝ , Հէնրի Պալաֆոնէն :
— Սուրբ Հէնրին :

— Այո՛ , փնչպէս ըսիր , սուրբ Հէնրին :
— Քայց քաղաքական պատերազմէն կը վախնամ :
— Սրդ , եթէ Պ . տը կիդ բարեկամներէն էք կը ճանչնա՞ք սաի :

Եւ պանդոկապեան Շիրօին տեսալ մը մասօնական նշան ըրաւ ձեռքով , որով դաշնակիցներն զիրար կը ճանչէին :

Շիրօ Անթ-Փրնէվիէլ վանքին մէջ անցուցած այն նշանաւոր դիշերուան մէջ քսան անգամ այ՛ և ասոր համապատասխանի նշաններ ալ իր աչքին առջեւ տեսած էր :

— Յիրաւի՛ , ըսաւ , և դուք սա՞ :
Եւ Շիրօ ալ իր կողմէն երկրորդ նշանն ըրաւ :

— Ուրեմն , ըսաւ պանդոկապեան ամենակատարեալ անհոգութեամբ , համարեցեք թէ օտար Վայ հոս , իմտունս ձեռքն է , զիս բարեկամ մը ճանչցեք , ես ալ ձեզ եղբայր կը ճանչնամ և եթէ ստակ ալ չունիք

Շիրօի բոլոր պատասխանն այս եղաւ որ դրոպանէն քսակ մը հանեց , որն որ թեպէտ քիչ մը թուլած , ըսայց տակաւին բաւական պատուական պարարտութիւն մը կը ներկայացնէր :

Կըր ու պարարտ քսակի մ' երեւոյթը բաւական հաճելի բան մ'է նոյն իսկ այն մարդկանց , որոնք քեզ ստակ կուտան և այնպէս կը ձեւացնեն իբր թէ անոր պէտք չունին , որպէ

Կօռնիֆլօ պատասխանեց և պանդոկապետն ուրախութեամբ լեցուեցաւ :

— Բայց Քղէսէ խօստացար ինձ , ըսաւ Կօռնիֆլօ , որ կա՞ծապարտեր խօսակցութիւնը փոխելու :

— Քղէսէի զինի , Սալակաի զինի , Ալիբունդի զինի , ամեն տեսակներէն ունիմ ձեր հաճոյից համեմատ :

Կօռնիֆլօ իր նայուածքը պանդոկապետէն Շիրօին վրայ և Շիրօէն ալ դէպ ՚ի Երկինք պորտցուց : Իրեն եղածը չէր հասկնար , և իր հեղութեան մէջ յայտնի կը տեսնար որ երջանկութիւնն իր արժանաւորութիւնէն շատ վեր կանցնէր :

Երեք օր իրարու ետեւէ Կօռնիֆլօ զինովցաւ , առաջին օրը Քղէսէով , երկրորդ Սալակայով , ետէ երրորդին Ալիբունդով , սակայն բոլոր այս զինովութեանց մէջ Կօռնիֆլօ խստովանեցաւ որ իրեն ամենէն հաճելի թուածը Կանպէտթէնէն եկած պուսկոնի զինին էր :

Այս չորս օրերուն մէջ , մինչդեռ Կօռնիֆլօ իր դերմանական փորձերը յառաջ կը տանէր , Շիրօ ամենեւին սենեկէն դուրս չելաւ , և երեկոյէն մինչեւ առաւօտ Նիքօյա Գաւիթ փաստաբանը դիտեց :

Պանդոկապետն , որ Շիրօի արգիլափակութիւնը արքայականէն անոր զգուշութեանը կուտար , ասոր շրջաններ տալու համար հնարքներ կը մտած էր :

Բայց ամենեւին չէր ազդեր և չէր շարժեր գէթ առ երեւոյթս : Նիքօյա Գաւիթն որ Սենը տըլա Քառա պանդոկին մէջ բիէս Կօսիի ժամագրութիւն տուած էր , բնաւ իր ստժամանակեայ բնակարանը ձգել չէր ուզեր , վախնալով Տ . տը Արդի թղտաբերն զինքը չը գտնար , թեպէտ արտաբոլստ բարձրովին անդրայ կը ձեւանար պանդոկապետին քով : Ստոյգ է , Պէռնույթթի ետեւէն դուռը գոցուելէն վերջը , Նիքօյա Գաւիթը իր առանձնական ամայութեան դրօսալի տեսարանը կը ներկայէր Շիրօին , որն որ ծակը անդադար աչքէն չէր հեռացնէր :

Պանդոկն իջեւանութեան երկրորդ օրէն յետոյ իւր վառ

դիտաւորութիւնն արդէն պանդոկապետն հասկցած էր , վասն զի անդամը բառերն անոր ցոյց տալով և անոր դուրս ելած դրան վրայ բառերը ցուցնելով բերնէն փածուցած էր թէ ,

— Հինդ կամ վէյ օր եւս , ծաղրածու և ապա ինձ պիտի դարձունես զանի :

Շիրօ բաւական հասկցաւ ասի և վտահ էր որ Նիքօյա Գաւիթ մինչեւ որ հրաւիրակէն պատասխանը չընդունի պանդոկը չպիտի ձգէ :

Բայց այս վեցերորդ օրուան մօտիլը , որ իր իջեւանութեան եօթներորդ օրէն էր , Շիրօի ժառութեանց հակառակ պանդոկապետն Նիքօյա Գաւիթին ազդարարութիւն ըրած էր թէ սենեկին պէտք ունէր , բայց Գաւիթ էրեւոյցաւ :

Պանդոկապետն ժտեց որ քանի որ տակաւին կրնայ քալել իր օթեակը ձգէ ու ելլայ , փաստաբանը յուսալով որ մինչև յաւրդ օրը կ'առողջանայ՝ հետեւեալ օրուան ձգեց , Հետեւեալ օրն աւելի ծանրացաւ :

Պանդոկապետն այս լուրը իր դաշնակից բարեկամին հաղորդեց :

— Հը , բարի , ըսաւ ձեռքերն իշար շիւելով , մեր արքայականը , մեր Հերովդեայ բարեկամը ծովակալին հարցաբընութիւնն անցունելու կ'երթայ , ա՛ն , թան , բլան , բլան , բլան , բլան :

Գաշնակցաց մէջ այս աշխարհէն միւսն այնելն , ճո՛ւկէն հարցաբընութեան անցունել , կ'անուանի :

— Պահ , կը յուսար որ մեռնի , ըսաւ Շիրօ :

— Սարտախելի տենդ մը , սիրելի եղբայր , եւ օրեայ տենդ մը , քառորեայ տենդ մը կրկնապատիկ ստտակութեամբ անկողնոյն մէջ զինքը վեր վեր կը նետեն . դիւական քաղց մը ունի , զիս խեղդել ուզեց . ծառաներս ծեծեց , բժիշկները ամենեւին իր հիւանդութիւնը չեն հասկնար :

Շիրօի դեմքը լուսաւորուեցաւ :

— Տեսա՞ք զինքը , հարցուց :

- Անշուշտ, վանն զի ձեզ ըստի որ զիս խեղդեալ ուզեց :
- Ինչպե՞ս է :
- Գունատ, յուզեալ, ծիրբեալ և այսահայտի մը պէս անգաղար կ'աղաղակէ :
- Ինչ կ'աղաղակէ :
- Թաղաւորը պահպանեցէ՛ք : Թաղաւորին չարիք հասցունել կը խորհին :
- Թշուառականը :
- Նենգաւորը : Ատեն ատեն ալ կ'ըսէ որ Ավինեօնէն մարդ մը կ'սպասէ զոր մեռնելէն յառաջ տեսնալ կը փափագի :
- Կը տեսնաք ատի, ըսաւ Շիրօ : Ա՛հ, Ավինեօնի վըրայօք կը խօսի :
- Ամեն բոպէ :
- Անպղտմ, ըսաւ Շիրօ իր ակորժ հայտնեանքն բերնէն փողցունելով :
- Չ'ըսեմ ուրիմն որ, կրկնեց պանդոկապետն, եթէ մեռնելու ըլլայ զուարճալի բան մը պիտ'ըլլայ :
- Խիտ զուարճալի, ըսաւ Շիրօ, բայց շատ կը փափարիմ որ Ավինեօնէն սպասած մարդը չեկած՝ չմեռնի :
- Ի՛նչու համար, որչափ շուտ մեռնի այնչափ շուտ կ'ազատինք :
- Այո, բայց չեմ ուզեր որ իմ ատելութիւնս մինչեւ հասնի ու մարմինը կորսնցունելու ատիճանը հասնի, վանն զի Ավինեօնէն դա՛լիք անձը զանի խոստովանցելու պաշտօնն ունի :
- Հը՛, կը տեսնաք որ ատի իր տենդին ցնորքն ու հիւանդութեան իր ըզիզին ներշնչած երեսակայութիւններ են և մարդու չ'սպասէր :
- Պա՛հ, ո՛վ գիտէ, ըսաւ Շիրօ :
- Ա՛հ, դուք, կրկնեց պանդոկապետն, Քրիստոնէսութեան մէկ բարեպաշտ պատկերն էք դուք :
- Բարի արարէք ատելեաց ձերոց, կ'ըսէ Աստուածային

օրէնքը :

Պանդոկապետն ապշութենէն ընկրկեցաւ :

Իսկ Աօռէնֆլօ բոլոր այս անցքերուն խաբառ անտարբեր աչքի ակնարկով կը բաւականանար . եօթներորդ օրը սենեակը առաջնորդող սանդուխն իր ծանրութեանը տակ կը շառաչէր, եւ զինքն որմին ու սանդուխին էջքին մէջ տեղը կը փակէր : Այնչափ որ իրիկուն մը Աօռէնֆլօ Շիրօին պօռաց թէ սանդուխը կը կըրէ : Իսկ Գաւթի ոչ դաշնաւորութիւնը եւ ոչ անոր կրօնական այն ողբալի կացութիւնը երբէք հողք չէր, կերակրոց ցանկերը փոփոխելէ եւ զանազան խորտիկներով խառն իրեն բերուած Պուրկիօնի այլազան աղաղակներն ներդաշնակելէ զատ մտածմունք մը չունէր, որուն ամեն մէկ ելու մուտը տեսած ատեն պանդոկապետն կը կրկնէր զարմացմամբ,

— Եւ ըսե՛լ որ այս անհեթեթ եղբայրն ալ ճարտարագասնութեան հեղեղ մ'է :

Գ Լ Ռ Ի Ս Ե

ԻՆՉՊԷՍ ԱՐԵՂԱՅՆ ՓԱՍՏԱՐԱՆՆ ԵՒ ՓԱՍՏԱԲԱՆՆ ԱՄ ԱՐԵՂԱՅՆ ԽՈՍԱՊԱՆՅՈՒՅ

Աերջապէս այն օրը որ պանդոկապետն իր վարձաբնակէն պիտ'աղատէր արդէն հասած կամ հասնելու մօտ էր : Պէտնույլէթ տեսուչն այնպիսի չափազանց ծիծաղներով սենեկէն ներս դըրեցաւ որ Շիրօ ստիպուեցաւ ժամանակ մը սպասելէն վերջը պատճառն հասկնալ :

— Կը մեռնի, կը իչէ, կը պայթի վերջապէս, դո՛չեց բաւեալաշտ պանդոկապետն :

— Եւ ատի ձեր ծիծա՞ղը կը շարժէ այս կէտին, հարցուց Շիրօ :

- Տարակոյս չունիմ. խաղը սրանչելի է :
- Ի՞նչ խաղ :
- Ո՛չ : Ի՞նչ ազնուական , խոստովանեցէք որ այդ խաղը խաղացողը դուք էք :
- Ես , հիւանդին խաղ խաղալ :
- Այո՛ :
- Ի՞նչ կայ . Ի՞նչ եղած է :
- Իր Ավինեօնի մարդուն համար միշտ աղաղակելէն վերջը չէ՞ք դիտէր ինչ եղած է :
- Հը՛ , վերջապէս պիտի դա՛յ արդեօք այդ անձը :
- Եկած է :
- Տեսա՞ք :
- Ծա՛տ բան , հոս մտնող մարդ մը կրնա՛յ ըլլալ որ ես չը տեսնամ :
- Ի՞նչ տեսակ մարդ է :
- Ավինեօնի՞ մարդը . փոքր , նուրբ եւ վարդազոյն :
- Ինքն է՛ . փախցուց Շիրօ շրթներէն :
- Ահա , կը տեսնաք որ զինքը կը ճանչէք . կարծածիս պէս այդ անձը հոս զրկողը դուք էք :
- Թղտաբերն եկէ՛ր է , գոչեց Շիրօ ելլալով եւ իւր պեխերն ոլորելով , անզգամ : Պատմէ՛ ինձ ուրեմն , հայր Պէտնուլլէ՛թ , ինչպէս եղաւ :
- Ասկէց պարզ բան չկայ . եթէ նոյն խաղ դուք հանած ալ չըլլաք այս խաղը , դէթ կասկածելուս իրաւունք պիտի տար : Գրեթէ ժամ մը կայ , տախտակեսոյ վերդիէ մը վար ճազար մը կը կախէի , յանկարծ մեծկակ ձի մ՛ու փոքրիկ մարդ մը գրանն առչեւ կայնեցան :
- Մեթրը Նիքօլան հոս է , ըսաւ փոքրիկ մարդը : Գիտէ՞ք որ այս վատանուն արքայականն սոյն անուամբ արձանագրուած է :
- Այո՛ , Պարոն , պատասխանեցի :
- Ըսէք ուրեմն իրեն թէ Ավինեօնէն սպասած անձը եկած է :

- Յօժարութեամբ , Պարոն , բայց կանխաւ ձեզ բան մ՛իւ մայցնել կը պարտիմ :
- Ի՞նչ բան :
- Ձեր Մեթր Նիքօլա կոչած անձը մեռնելու վրայ է :
- Ուրեմն հարկը կը պահանջէ որ առանց ուշանալու շուտով երթաք իմաց տաք ըսածս :
- Բայց չէք գիտէր թերեւս որ ռոսկալի տենդով մը կը մեռնի :
- Չե՛ղ , ըսաւ մարդը , եթէ այդպէս չըլլար , չէի փութայնէր :
- Ինչպէս , կը յամուսիք :
- Կը յամուսիմ :
- Առա՞նց վտանգը խորհելու :
- Եւ ոչ իսկ բան մը խորհելու . ըսի ձեզ որ պէտք է զինքը տեսնամ :
- Փոքրիկ մարդը հետզհետէ կը դայրանար եւ հրամայական կերպով մը խօսելով կրկնուսմներ կրնէր :
- Հուսի յետոյ զանի հողեւիքաբիւն սենեակին առաջնորդեցիւ .
- Գեռ հոն է՛ , ըսաւ Շիրօ ձեռքը նոյն սենեկին ուղղուած թեամբը տարածելով :
- Հոն է . ծիծաղաչարժ բան մը չէ՛ :
- Չախաղանց ծիծաղաչարժ :
- Ի՞նչ դժբաղդութիւն որ չեմ կրնար ըսել :
- Այո՛ , դժբաղդութիւն մը :
- Խեղկատակական տեսարան մ՛ըլլալու է :
- Վերջին ատիճան . բայց ո՞վ կարդիլէ ձեզ ներս մըտնելու :
- Զիս ես դարձուցին :
- Ի՞նչ պատրուակաւ :
- Թէ պիտի խոստովանի :
- Գռնէն մտիկ ընելուդ ո՞վ արդէր կըլլայ :
- Է՛հ , իրաւունք ոչնիք , ըսաւ սրանդովապետն սենեկէն գուրս նետուելով :

Սաղին Երբօ իր ծակուն բերանը վազեց :

Բիէս Աօնտին հիւանդին բարձին քով նստած էր : Բայց երկուքն ալ խիստ կամայ կը լռուէին , Երբօ անոնց խօսակցութենէն բաւ մ'անդամ չկրցաւ լսել :

Գարձեալ մտիկ ըրաւ , խօսակցութիւնը իր վախճանին մօտեցած ատեն հաղիւ դոյզն ինչ նշմարեց , վասն զի հինգ ըսպէ ետքը Բիէս Աօնտի ոտքի ելաւ , ոգեվարին հրաժարական ողջոյնը տալով դուրս ելաւ :

Երբօ դէպի պատուհանը վազեց :

Սպասաւոր մը կը ճատ եւ ակնշատ երեւարի մը վրայ , ուրիշ մէկ ձիւ մը սանձէն բռնած էր , վարկենէ մ'ետք Տ . տը Արզի դեսպանը երեւցաւ , հեծաւ եւ փողոցին անկիւնը դարձաւ , որ Փարիզի հրապարակը կը տանի :

— Աստուած իմ , միայն թէ ազգահամարն հետ չտանէր , ամեն տեղ , թէ որ չարունակ իրեն հետեւիմ , ետեւէն հասնելու համար տասը ձի պէտք է ճաթեցնեմ :

Բայց ոչ , ըսաւ , այս փաստաբաններն վարպետ աղուհաներ են , մանաւանդ մերը , և կը կրակած իմ . . . : Եկէք քիչ մը , շարունակեց Երբօ անհամբերութեամբ ոտքերը գետին զարնելով անտարակոյս իր մտքին մէջ մէկ գաղափարն միտին աղխելով , հոս եկէք քիչ մը , ո՛ւր է աս խեղկատակ Աօսէնֆիօն :

Լյոս միջոցին պանդոկապետն ներս մտաւ :

— Հը՞ հիմա՞յ , հարցուց Երբօ :

— Մեկնեցաւ , ըսաւ պանդոկապետն :

— Խոստովանահայրը :

— Ինէ զատ խոստովանահայր , մարդ բան չ'կայ :

— Հստա հիւանդը :

— Խորհուրդէն վերջը մարեցաւ :

— Միշտ իր սենեակը մնալու վստահ էր :

— Աւերբդ հարցում , հաւանականաբար միայն դերեզմանատուն երթալու համար դուրս պիտի լլայ :

— Լաւ է , գնացէ՛ք , եղբայրս անհայնաւդ սլէս խիտնինձ զրկեցէք :

— Վին՞ով ալ ըլլայ :

— Ինչ որ ալ ըլլայ :

— Անհրաժեշտ է :

— Ամենաբարի ինչորոյ մը համար է :

Պէննուլլէթ թաւալազլոր դուրս ելաւ , աշխոյժ մարդ մ'էր :

Տեղին կարգը Երբօն եկած էր , չէր զիտէր Պօնտիլ ետեւէն վազէ , թէ Պաւլիթին սենեակը սահի , եթէ պանդոկապետին գուշակածին պէս փաստաբանն իրօք հիւանդ ըլլար , հաւանական է որ իր դեսպանական գրութիւններն Պ . տը Աօնտիին յանձնած պիտի ըլլար : Աստի Երբօ իր սենեակին մէջ ցնորածի պէս մեծաբայլ կերթեւեկէր . ճակատը ծեծելով խելստատակին մէջ եռացող միջոնաւոր զնաակիկներուն մէջ դաղաբար մը , խորհուրդ մը կը փնտռէր :

Իր գիտանոցի սենեակին մէջ ալ բնաւ ձայն մը չէր լսուէր , Երբօ միայն վարագոյրներու մէջ պարուրուած անկողնոյն անկիւնը կը նշմարէր :

Յանկարծ սանդուխին վրայ ձայն մը որոտաց : Երբօ ահաւեցաւ , Արեղային ձայնն էր :

Աօսէնֆիօ , զոր պանդոկապետն հրելով կը բերէր առանց լռեցնել կարենալու , արբշու ձայնով սանդուխին ոտքերէն մեկիկ մեկիկ վեր կելլար երգելով :

Վիշո

Եւ գինին միշո

Կը բազխեն իմ դանկ

Սղմիկն հոն ցանդ

Խրրու փոթորիկ

Բայց մին է սաստիկ

Վինին

Քան զվիշո

Կնքին

Պտուայ միշո

Շիրքո դուռը վաղեց :

— Լուսթիւն , արքեցո՛ղ , պօռայ :

— Արքեցոյ , որովհետեւ խմեալ է , ըսաւ Կօռէնֆլօ :

— Տեանանք , հոս եկէք , և դուք , Պէռնուլլէթ , գիտէ՞ք :

— Այո՛ , ըսաւ պանդոկատէրն , անոր համամտութեան նշան մ՛ընէրով եւ սանդուխէն վար չորս չորս աստիճանը մեկէն իջնարով :

— Հոս արի՛ , քեզ կըսեմ , շարունակեց Շիրքօ արեղայն իր սենեկին մէկ անկիւնը քաշելով , հոս արի , զգուշութեամբ քիչ մը խօսիմք եթէ կրնաս :

— Ատուած իմ , ըսաւ Կօռէնֆլօ , կատակ կընէք , սանահայր , խմող աւանակի մը պէս զգոյշ ու դարձնապահ եմ :

— Այո՛ , խմած աւանակի մը պէս , ըսաւ Շիրքօ ուսերը վեր վերցնելով :

Յետոյ զանի աթոռակի մը առջեւը քաշեց , որուն վրայ Կօռէնֆլօ թող տուաւ ինք զինքն ցնծութեամբ « ա՛՜ն » մը քաշելով ,

Շիրքօ դուռը դպել զնաց եւ ծանր կերպարանքով մը Կօռէնֆլօի քով դարձաւ , որն որ հասկցաւ թէ մտիկ ընելու բան մը կայ :

— Տեանանք , ի՞նչ կայ « Լուսթիւն » , ըսաւ արեղայն այս վերջին բառով այնպիսի կտրուկ կերպիւ բոյր անձկութիւններն ամիսիւելու , որ Շիրքօն տանելու կը պարտաւորէր :

— Կայ , ըսաւ Շիրքօ սաստիկ պնդութեամբ , այնպիսի բան մ՛ որ ընտ չես խորհր թէ աստիճանիդ վերաբերեալ պարտաւորութեանցդ կը պատկանի , արքեցոյութեան մէջ կը լողար , ինքզինքնիդ զեղխութեան գերի ըրած ընաւ չէք նայիր թէ կրօնքը ինչ վեճակի մէջ կը լինայ , մեղայ :

Կօռէնֆլօ իր երկու խոշոր աչքերը իր խօսակցին վրայ յարեց :

— Ես , ըսաւ :

— Այո՛ , դու , նայէ , տեսնուելու շորհք մը ունի՞ս : Ախրարկուդ պատռած , կարգէ դուքս ելիր ես , ձախ աչքիդ շրջանակը սեւցեր է :

— Ես , կրկնեց Կօռէնֆլօ , հետզհետէ զարմանք յայտնելով այնպիսի կշտամբանաց վրայ , որ երբէք ընելու սովորութիւն չունէր Շիրքօ :

— Անտարակոյս , ոտքերէդ մինչեւ ծունկերդ տղմով ծածկուած է , եւ ի՞նչ արդ՛մ , այնպիսի սպիտակ տիղ՛մ մ՛որ կարծես արուարձաններու մէջ զինովցեր ես :

— Իմ ճշմարտ հաւատքս այս է , ըսաւ Կօռէնֆլօ :

— Թշուառական , ժընդլիէվեան կըրեր մը , հապա Փրանկեսիեան կրօնաւոր մ՛եղած ըլլայիր :

— Շիրքօ , բարեկամս , միթէ այդ աստիճան պատժապարտ եմ , ըսաւ Կօռէնֆլօ խանդաղատքէն :

— Այսինքն արժանի ես որ երկնից կայծակը գլուխէդ մինչեւ ստքերդ խորտակէ , զգուշացիր , եթէ այդպէս դեռ շարունակելու ըլլաս քեզ կը ձգեմ :

— Շիրքօ , բարեկամս մի այդպէս ընէր , ըսաւ արեղայն :

— Գեռ Լիճնի մէջ ստիկանութեան զինուորներն ալ կան :

— Ահ , չնորհ , իմ սիրելի պաշտպանս , թօթովեց արեղայն , որ ոչ թէ ողբալու , այլ եղան պէս բառաչելու սկսեց :

— Արի՛ր , զապիր կենդանի , շարունակեց Շիրքօ , որ ատեն որ այսպիսի կարեւոր բան մը պահանջեմ դու միշտ այդ ընթացքին մէջ պիտի դանուխ , նա՛՛ երբ մեր դրացին մահւան մժա կը գտնուի :

— Ստոյգ է , ըսաւ Կօռէնֆլօ որտաղ ին զղջնամբ մը :

— Տեանանք , Քրիստոնեայ ես , այո՛ կամ ոչ :

— Թէ Քրիստոնեայ եմ , ըսաւ Կօռէնֆլօ ոտքի ելլարով , թէ Քրիստոնեայ եմ , Պապին աղիքներն եմ , Քրիստոնեայ եմ , սէն Լօռէնի կասկարային վրայ հրապարակաւ կը քարոզեմ :

Եւ երդում ընելու պէս թիւերը տարածելով ապակիները խորտակելու չափ ուժ զին երգել սկսեց ,

Քրիստոնեայ եմ
Այլ բարիք չկտան :

— Բաւական է , ըսաւ Ալիքօ ձեռքը անոր բերին զնելով
եթէ Քրիստոնեայ ես , ուրեմն եղբայրդ մի ձգէր որ առանց
խոստովանութեան մեռնի :

— Իրաւացի է , բայց ո՛ւր է եղբայրս , որ խոստովանցնեմ
ըսաւ Առէնֆլօ , այսինքն խմելէս վերջը , վասն զի ծարաւես
կը մեռնիմ :

Եւ Եիքօ դաւաթ մը լեցուն ջուր տուաւ արեղային , որ
մինչեւ տակը կատարեւապէս պարպեց :

— Ա՛հ , գաւա՛կս , ըսաւ դաւաթը սեղանին վրայ գնելով ,
աչքերս քիչ մը ըյս աւին :

— Խիտ բարի , ըսաւ Եիքօ այս վարկենական լուսաւորու
թեան ակնարկելով :

— Սրդ , ալիւ բարեկամս , ո՛վ է խոստովանցիւնը :

— Մեր թշուառ դրացին , որ հողեկարք է :

— Ըսել կողքը պուտ մը մեղքի զինի կաթեղնեմ բերնին
մէջ , ըսաւ Առէնֆլօ :

— Ձէ չեմ ըսեր , բայց աւելի հողեւոր օշնութեանց կա
բօտ է քան աշխարհիկ : Պատրաստելու աշխատէ :

— Պարոն Եիքօ , կը հաւատար որ պէտք եղածին պէս
պատրաստ գտնուիմ , հարցուց արեղայն գողգողուն կերպով :

— Քե՛ղ , ես քեզ ուրիշ եւ ոչ մէկ ատեն հիմակուան պէս
հողեկեց չեմ գտած բնաւ : Եթէ մտրած է ուղղութեան կը
բերես , եթէ արքայութեան շաւիղը կը խնդրէ անվրեպ , հոն
կուղղես :

— Փութանք :

— Սպասէ քիչ մը , պէտք է որ բռնելէք ընթացքդ քեզ
բացադրեմ :

— Ի՞նչ հարկ կայ , քսան տարի է ի վեր արեղայ եղզը
հարկաւ իր ընելէքը ճշդ իս զիտէ :

— Ս , յո՛ւ , բայց ոչ միայն քու պաշտօնդ , այլ նաեւ իմ կամ
քըս ալ ի գործ սիտի դնես :

— Ձեր կամքը :

— Եւ եթէ կէտ առ կէտ ի գործ դնես , հաւատա՞ որ Քօ

ուրն տ՛Ապօնտանսի մէջ հարիւր սոկի կուտամ քեզ , որպէս
զի ուղած իդ պէս ուտես ու խմես :

— Ուտեմ ու խմեմ , ո՛հ , առ բանը շատ կը սիրեմ :

— Լաւ ուրեմն , թող ըլլայ հարիւր սոկի , կը լսե՞ս , եթէ
այդ բարի հողեկարքը խոստովանցնելու ըլլաս :

— Եթէ չը խոստովանցնեմ քօնքո՞ւ թող զիս տանի : Ի՞նչ
պէս պէտք է խոստովանցնեմ :

— Մտիկ ըրէ՛ , վերարկուդ քեզ համար մեծ իշխանութիւն
մ՛է , յանուն Աստուծոյ եւ յանուն թագաւորին կը խօսիս ,
քու հանճարեղութեամբդ պէտք է այդ մարդը ստիպես որ
Սվինեօնէն իրեն բերուած թուղթերն քեզ յանձնէ :

— Ինչու համար ստիպել որ թուղթերն յանձնէ :

Եիքօ դժասիրտ նայուածք մը նետեց արեղային :

— Հազար գահեկան ստանալու համար , ամենաանբան ,
ըսաւ անոր :

— Իրաւ է , կ'երթամ , ըսաւ Առէնֆլօ :

— Աեցի՛ր , քեզ պիտի ըսէ թէ խոստովանած է :

— Հապա թէոր խոստովանած ըլլա՞յ :

— Արսես թէ այն անձը որ իր սենեկէն դուրս ելաւ սուտ
է , խոստովանահայր չէ , այլ պարզապէս իրեն նման խարե
բայ մ'է :

— Բայց կը բարկանայ :

— Քեզ ի՞նչ հարկ , որովհետեւ արդէն ինք կը մեռնի :

— Օրինաւոր է :

— Հիմայ հասկցար , Աստուծոյ վրայօք կը խօսիս , սա
տանային վրայօք կը խօսիս , ինչ բանի վրայ որ ուղես կը խօ
սիս , վերջապէս Սվինեօնէն եկած թղթերը ձեռքէն առնե
լու համար ինչ որ կրնաս ըրէ՛ :

— Եթէ մերժէ՞ :

— Գու ալ արձակումը կը մերժես , կանխես եւ անաթե
մաներ կը կարդաս :

— Կամ բռնութեամբ կառնում :

— Սւելի լաւ , այնպէս ըրէ , տեսնանք , իմ սուած կըր

թու թխեններս ճշդև գործադրելու չափ ճարպիկութիւն ունի՞ս :

— Անլրէպ հիմայ կը տեսնաք :

Եւ Աօռէնֆլօ մեկ ձեռքը իր լայն կերպարանքին սանելով՝ գինովութեան արտաքին դիժերն անկէց սրել ձևացաւ, աչքերը հանդարտեցան, թեպէտև ուշադրութեամբ քննուած ատեն յայտնի էին թէ տակաւին ապուշ կերուան . իր բերանը զգուշութեամբ միայն չափաւոր խօսքեր կը հնչէր, իր շարժումները ծանրաբարոյ, միայն թէ քիչ մը դողդոջուն կերուար :

Յետոյ հանդիսաւոր կերպիւ գէպի գուռն ուղղուեցաւ :

— Այսրիեան մը, ըսաւ Շիրօ, երբ թղթերը քեզ տայ, ամուր մը մեկ ձեռքիդ մէջ պահէ, եւ միւս ձեռքովդ պատին զարկ :

— Թէ որ չտայ :

— Դարձեալ զարկ :

— Ուստի տայ թէ չտայ անպատճառ պէտք է զարնե՞մ :

— Ա, յո՛ :

— Բարի :

Աօռէնֆլօ սենեակէն դուրս ելաւ, իսկ Շիրօ սաղին անըրկարադրելի յոյզով մը գրաւուած՝ ամենամանր շշուկ մ'ալ չը վերակցնելու համար ահանջ պնդովին սրմին կը յայչէր :

Տասը բազէ յետոյ տակտակամածին չաչիւնն իրեն իմաց տուաւ թէ Աօռէնֆլօ իր գրացնոյն քով կերթար, եւ յետոյ իսկոյն անոր իր տեսութեան նշոյններուն պարուրած ծիրին մէջ երեւիլը նշմարեց :

Փաստաբանն անկողնոյն մէջ ելաւ նստեցաւ եւ անմանօթ տեսիլն մը երեւիլը նկատեց :

— Է՛հ, բարի լոյս, եղբայր իմ, ըսաւ Աօռէնֆլօ սենեկին մէջ տեղը կայնելով, եւ իր ստուար ուսերը ճօճելով :

— Կ'նչ կը լինուէք հոս, հայր իմ, միմնչեց հիւանդն նըւադուն ձայնով մը :

— Որդեակ, ես անարխան կղեր մ'եմ, լսեցի որ վրանդի

մէջ ես, ուստի եկայ որ ձեր հոգոյն յորկութեան համար ձեզ հետ խօսիմ :

— Ծնորհակալ եմ, ըսաւ ողբվաբը, բայց կարծեմ ձեր խընամբը անօգուտ է, վասն զի բաւական առողջ կը գտնամ զիս :

Աօռէնֆլօ գլուխը ցնցեց :

— Ար հաւատա՞ք ասոր :

— Վատահ եմ :

— Ո՞վ խորամանկութիւն Սատանայի, որ առանց խստու վանութեան մեռնիլդ կուզէ :

— Սատանայն թակարթուեցաւ, վասն զի խստովանութիւնս դեռ հիմայ աւարտեցի :

— Որո՞ւ :

— Սրժանաւոր քահանայի մ'առջեւ որ Վինեօնէն եկաւ :

Աօռէնֆլօ գլուխը թրթվեց :

— Կ'նչ . միթէ անի քահանայ մը չէր :

— Ո՛չ :

— Կ'նչէ՞ն զիտես :

— Ար ճանչնամ :

— Սակէց գուրս ելլ'ղը :

— Ա, յո՛, ըսաւ Աօռէնֆլօ հաւանականութեան այնպիսի ձայնով մ'որ երևելի փաստարաններն անդամ շատ դժուարաւ կրնար հնչել, որով մինչեւ իսկ հիւանդն շիթեցաւ :

— Արդ, թէ ձեր առողջանալու վրայ չըլլալը, թէ այդ անձին քահանայ մը չըլլալը պէտք կը դնեն վրաս զձեզ խստովանցնելու :

— Ազէկ չեմ, բայց կամքս որու որ հաճի՛ անոր կը խստովանիմ, ըսաւ փաստաբանը սակաւիկ ինչ ուժ դին ձայնով :

— Որդեակ, ուրիշ մը զրկել եւ փնտուել տալու ժամանակ չունիք եւ քանի որ ես հոս . . . :

Կ'նչ, ժամանակ չունիմ, մինչդեռ ձեզ կըսեմ թէ առողջանալու վրայ եմ, մինչդեռ ձեզ կը հաւատեմ թէ ազատելուս վտահ եմ, գոչեց փաստաբանը այնպիսի ձայնով մ'որ հետզհետէ կը բարձրանար :

Առէնֆլօ երբորդ անդամ մ'ալ դուխը թոժվեց ,

— Եւ ես ալ , ըսաւ մի և նոյն հանդարտութեամբ , իմ հողմանէս ձեզ կը հաւատեմ որդեակ , թէ ձեր վրայ ընաւ աղեկութեան բան մը չեմ նշմարէր , գիտեմ թէ որչափ դժժընդակ բան է ձեզ բռել որ արդէն ինչպէս բժիշկներէն դատապարտեալ էք , նոյնպէս և երկնային Նախանձամութեանէն , բայց վերջապէս ազան կամ անապան ամենքնիս ալ հոն պիտ'երթանք , հոն կշիռ մը կայ , արդարութեան կշիռն է ասի , երկրորդ այս կեանքին մահը կրնայ միեթարութիւն դնալ և անցնիլ , վասն զի միւսին մէջ զայն կտանանք : Նոյն ինքն Պիւթադօրոս անդամ այսպէս կըսէր , որդեակ , որ հեթանոս մ'էր : Սն , սիրելի աղաս , խոստովանէ տեսնամ :

— Բայց կը հաւատացնեմ ձեզ , հայր իմ , կը հաւատացնեմ որ արդէն խիտ առօզլ եմ , եւ այսալ անտարակոյս ձեր սուրբ ներկայութեան շնորհիւն է :

— Մորբութիւն , որդեակ , մարբութիւն , կրկեց Առէնֆլօ , մարդուս վերջին վարկենին մէջ կենսական խոնջ մը կայ , ասի լամպար մ'է որ իր վերջին քայլը արձակելու կը նկրտի : Տեսնանք , ըսէք ձեր խարդախութիւններն ձեր մեքենայութիւններն և դաւանքներն , շարունակեց արեղայն անոր անկողնոյն մօտ նստելով :

— Իմ խարդախութիւններս , իմ մեքենայութիւններս և իմ դաւանքներս , կրկեց Նիքօլա Պալիթ եղական արեղային առջև ընկրկելով , զոր թեպէտ չէր ճանչէր , բայց խիտ ծանօթ կը թուէր իրեն :

— Այո՛ , ըսաւ Առէնֆլօ հանդարտօրէն իր խոշոր ականջներն ունկնդրութեան պատրաստելով և երկու բխամասն միմեանց հիւստած ձեռքերուն վրայ իրար կպցնելով , յետոյ , ըսաւ այս ամենքն ինձ պատմեմէդ զկնի թղթերն ինձ պիտի տար , և թերևս Ատոուած պիտի ներէ ձեզ արձակում տալու :

— Եւ որ թղթերը , գոչեց հիւանդը այնպէս ուժգին ձայնով և այնպիսի ահեղ հնչումով մ'որ առօջլութեան կատարեալ նշան մը կուտար :

— Այն թղթերը որ այն դացող քահանայն Ալինեօնէն ձեզ բերաւ :

— Եւ ո՞վ ըսաւ ձեզ որ այդ քահանայն ինձ թղթեր բերաւ , հարցուց փաստաբանը ստրին մէկը ծածկոցին տակէն դուրս հանելով և որոտայիր ձայնով մը , որ Առէնֆլօ երանութեան սկզբան մէջ շիթիլ սկսելով իր թիկնաթուին վրայ մնաց :

Առէնֆլօ խորհեցաւ որ արութեան վարկեանը հասաւ :

— Ըսողն իր ըսածը գիտէ արդէն , կրկեց . օն , թղթերը , թղթերը կըսեմ , ապա թէ ոչ արձակում չկայ :

— Հը , կը խնդամ արձակումիդ վրայ , դատարկասուն , գոչեց Պալիթ , եւ անկողնէն դուրս ցատկելով Առէնֆլօին կոկորդը նետուեցաւ :

— Հը բայց , գոչեց արեղայն , սաստիկ տե՛նդ ունիք ուրեմն , դուք չէք ուզեր որ խոստովանիք :

Փաստաբանն իր բխամասը ճարպիկութեամբ և սաստիկ կերպով արեղայնին կոկորդին վրայ դնելով անոր բերնին պարբերութիւնը ընդհատեց , որուն մնացորդ բառերը սուլմամբ շրթներէն դուրս թափեցան , որով կարծես թէ Լորու մարդի մը կը խօսէր :

— Հիմայ կը տեսնաս ըսաւ Նիքօլա թէ ո՞վ զով կը խոստովանցնէ , իսկ տենդին գալով քեզ պիտի հասկցնեմ որ տե՛ս տենդն զքեզ խեղդելուս արդեւք կրնայ ըլլալ , վեղարա՛ւոր Բէհեզգեբիւզի :

Եղբայր Առէնֆլօ կորովի էր , բայց այս վարկենէս դժբաղդարար այնպիսի հակառակ կացութեան մը մէջ կը գլորնուէր , ուր զինին իր ջղային դրութեան ներգործելով զինք անդամալուծի պէս ըլլած էր , նոյն միջոցին կըցածն միայն սաչափն էր , գիմաղիք դործողութեամբ մը քաղութիւնը իրեն ժողովելու կսկսէր :

Հետեւապէս իր ակթուին վրայ ելլալով որչափ որ ալ իր բոլոր զօրութիւնը հաւաքեց տակաւին չկրցաւ փաստաբանին շարիքը երկու ձեռքով բռնեց և զանի ուժգնութեամբ իր մէն հեռու մղել :

Սա իբրև է որ, որքան որ ալ անդամաւորձ էր, եզրայր
Կօռէնֆլօ Նիքօլա Գաւիթին անանկ ջղապիւնդ հրեց, որ այս
վերջինը սենեկին մէջ տեղը թաւալիլ սկսեց:

Բայց կատաղութեամբ ոտքի ելաւ, և իր երկայն սուրին
վրայ ցատկելով, զօր Պէռնուլլէթ աեսուն պատին վրայ Գա-
ւիթին իր հանդերձիցը տակ կախուած տեսած էր, պատեա-
նէն դուրս քաշեց և անոր ծարրը արեղային ձախն կրթնցնե-
լու սկսեց, որ իր թափած չափազանց ճիւղերէն սպառած իր
թիկնաթոռին վրայ ինկած էր:

— Կարգը քեզ եկաւ, կամ կը խոտովանիս կամ կը մեռ-
նիս, ըսաւ խուլ ձայնով մը:

Կօռէնֆլօ այս ցուրտ զէնքին իր մարմնոյն վրայ անհաճօյ
ճնշու մէջ կատարելապէս սթափելով վիճակին ծանրութիւնը
հասկցաւ:

— Ո՛հ, ուրեմն հիւանդ չէի՞ք, ուրեմն այս նախապատրաս-
տուած ոգեվարութիւնը կատակերդութիւն մ'է եղեր:

— Կը մտնաս որ հարցնել քեզ չը պատկանիր, այլ միայն
պատասխանել, ըսաւ փաստաբանը:

— Ի՞նչ պիտի պատասխանեմ:

— Ինչ որ քեզ հարցնեմ:

— Հարցուցէք:

— Գու ո՞վ ես:

— Արդէն կը տեսնաք, ըսաւ արեղայն:

— Ստի պատասխան չէ, ըսաւ փաստաբանը սուրը աստի-
ճան մ'եւս ամուր կոխելով:

— Եւ զարմանալի բան է, ուշադրութիւն ըրեր ուրեմն
էթէ պատասխանելէ յառաջ զիս սպաննէք, բնաւ բան մը չը-
պիտի կրնաք սովրիլ:

— Իբրև ունք ունիս, անո՞ւնդ:

— Եզրայր Կօռէնֆլօ:

— Ուրեմն ստուգապէս վարդապետ մ'ես:

— Ի՞նչ ըսել է ստուգապէս խիտ ըս կը հաստատմ:

— Ինչո՞ւ համար Վիտի մէջ կը գտնուիս:

— Արովհետեւ արտորուած եմ:

— Քեզ ո՞վ այս պանդոկը բերաւ:

— Բազդը:

— Քանի՞ օր է ՚ի վեր հոս ես:

— Տասն և վեց օր:

— Ինչո՞ւ զիս կը լրտեսէիր:

— Ձեզ չէի լրտեսէր:

— Ինչէ՞ն գիտէիր որ ես թղթեր ընդունած եմ:

— Ինձ այնպէս ըսին:

— Ո՞վ ըսաւ:

— Ս, յն որ զիս ձեզ քով դրկեց:

— Ո՞վ դրկեց:

— Ահա ատոր չեմ կրնար պատասխանել:

— Եւ սակայն պիտի պատասխանես:

— Ո՛հ մի, գոչեց արեղայն: Մե՛ծդ Աստուած, կը կան-
չեմ, կ'աղաղակեմ:

— Ես ալ կ'աղանձեմ:

Արեղայն աղաղակ մը բրբոց, փաստաբանին սուրին ծայ-
րը կաթիլ մ'արիւն տեսնուեցաւ:

— Իր անո՞ւնը, հարցուց:

— Ս՛հ, ճշմարիտ շատ վատթար, ըսաւ արեղայն, որ-
չափ որ կրնայի պահեցի:

— Ս, յո՛, հրամմէ՛, քու պատիւդ կատահօվցնեմ, ո՞վ
քեզ խրկեց ինձ:

— Ղրկողը. ը. ը. . . .:

— Կօռէնֆլօ կակաղեց, բարեկամութիւնը ատելը սուղի
պիտի նստէր:

— Եո՛ւտ, լինցուր, ըսաւ փաստաբանը ոտքովը զարնելով:

— Ճշմարիտ, վատթար բան, Շիքօն է:

— Թագաւորին խեղկատակը՞:

— Նոյն ինքն:

— Ո՛ւր է:

— Հոս եմ, ըսաւ ձայն մը:

Եւ Շիրօ ինքը դռննաւ, հանդարտ և սուր 'ի ձեռին մեր-
կացած դրան վրայ երեւցաւ :

ՔԻՆՈՒՅ Զ.

ՇԻՔՕ ԳՈՏԻՒԿՈՆՈՎ. ԾԱԿ ՄԸ ԲԱՆԱՍԷՆ ՅԵՏՈՑ ՄԵԿ Մ՝ԱՂ. ԻՐ
ՍՐՈՎԸ ԲԱՑՅԱԻ

Նիրօյա Գաւիթ տեսուչը երբ ասի տեսաւ, որուն իր մա-
հացու թշնամին ըլլալը դիտէր, ինքզինքը չկրնալով բռնել զար-
հուրելի շարժում մ'ըրաւ :

Կօռէնֆլօ այս շարժումէն օգուտ դադելով ժամանակ դը-
տաւ անոր քովէն մեկդի նետուելու և վատտաբանին սրոյն ու-
իր պարանոցին մէջ դռնուած դժին ուղղութիւնը խարամնելու :

— Հասի՛ր, ինձի հասիր, օգնութիւն, օգնութիւն, սղ-
ջիւ բարեկամ, պաշտպանէ՛ զիս՝ աղաղակեց :

— Ա՛հ, ո՛հ, սիրելի պարոն Գաւիթ, դուք է՛ք ուրեմն :

— Այո՛, անտարակոյս, մրմնաց Գաւիթ, ես եմ, այո՛ :

— Ձեզ հանդիպելուս զարմացած, կրկնեց Կասրօնացին :
Յետոյ դեպ յարեղային դառնալով :

— Իմ բարի Կօռէնֆլօս, ըսաւ, իբր արեղայ մը հոս քու
ներկայութիւնը խիստ հարկաւոր էր այս կետին, երբ կը կար-
ծուէր թէ պարոնը կը մեռնի, բայց հիմայ պարոնը խիստ քա-
ջովք է, ուստի ալ ոչ թէ խստովանաւօճօր մ'այլ օգնուականի
մը հետ տեսնուելու պետքն ունի :

Գաւիթ հեզնական ծիծաղ մ'ընելու ջանաց :

— Այո՛, ազնուականի մը հետ, ըսաւ Շիրօ. որ ցոյց
պիտի տայ քեզ թէ ազնուական սերունդ մ'է : Սերելի Կօ-
ռէնֆլօս, շարայարեց, արեղային ուղղուելով, շնորհ ըրէք
սանդուխին զուլիը երթալ պահպանելու և բնաւ ո՛ր և իցէ
մէկը չթողու որ մեր պարոնին հետ ունենալիք փոքրիկ խօ-
սակցութիւննիս չդայ խանդ արելու :

Կօռէնֆլօի համար Նիրօյա Գաւիթէն հեռանալէն դեղե-
ցիկ բան չկար :

Որմէն կարելի եղած տեղերն հոս հոն կրթնելով մէկդի
քաշուելու պէտքը լրացնելէն յետոյ երբ մինչեւ դուռը հա-
սաւ, դուրս ցատկեց այնչափ արագ աչարժ՝ որ հարիւր ոսկի-
էն աւելի թեթեւ և ներս մտած ժամանակէն աւելի շոյտ կե-
րուար :

Շիրօ դուռը վրայէն դոցեց, և միշտ միեւնոյն հանդար-
տութեամբ նիզը դրաւ :

Գաւիթ առջի բերան այս նախնական դարձուածքներն
աչքէ անցնելու տագնապ մը կ'զգար, որ այս յանկարծական
տեսիլներէն կը բղխեր, բայց անմիջապէս զինուց մէջ իր ու-
նեցած զօրութեանը վստահութեամբ և խորհելով որ Շիրօ
մինակ է իրեն հետ վերջապէս հանդարտ կեցաւ, իսկ Կաս-
րօնացին երբ դուռը դոցելէն վերջը իրեն դարձաւ տեսաւ
որ զինքը ձեռքին մէջ և ժպիտը չրժանցը վրայ անկողնոյն
ուտրին յենած էր :

— Հագուեցէ՛ք պարոն, ըսաւ Շիրօ, ձեզ պատեհութիւն
և ժամանակ կուտամ, վասն զի ձեր վրայ առաւելութիւն մը
ունենալ չեմ ուզեր : Գիտե՛մ որ քաջ սուսերամարտ մ'էք և
Լէքլէքքի պէս սուրը ձեռքերնուդ խաղալիկ մ'է, բայց ատի
ինձ համար բան մը չէ :

Գաւիթ խնդալ սկսեց :

— Գեղեցիկ կատակ, ըսաւ :

— Այո՛, պատասխանեց Շիրօ, ինձ ալ այնպէս կը թուի,
զէթ անոր համար որ խօսողը ես եմ, և հիմայ աւելի դեղե-
ցիկ պիտի երեւայ ձեզ, որ ճաշակի տէր անձ մ'էք : Գիտե՛ք
թէ ինչու հոս եկայ, Նիրօյա տեսուչ :

— Այն խաղաղանի հարուածոց մնացորդներն ինդրելու,
չորս պատուհանէն ամենայն ճարպիկութեամբ ցատկած՝ օրդ
յանուն Մայելէն դքսին ձեզ կը պարտէի :

— Ա՛յ, պարոն, այդ հայիւր դիտե՛մ, ասոնք փոխարինե-
լը մարդու չեմ ձգէք, հանդարտ եղիք : Ես պարզապէս Բիէս
Գ. — 5

Ածուխի առանց ինքն իսկ բերածը գիտնալու Ավինն օճէն ձեզ բերած և ձեզ յանձնած ազդարանութիւնը ինդրելու եկայ :

Գաւիթին դոյնը նետեց :

— Ի՛նչ ազդարանութիւն, ըսաւ :

— Տ. տը Կիզինը, զոր ինչպէս դիտէք, ուղիակի Գերմանեայէն կիջնայ :

— Հա՛, հա՛, ըսաւ գաւիթ, ուրեմն լրտես մ'ալ էք, պարոն, ես միայն խեղկատակ մը կը կարծէի :

— Միրելի պարոն Գաւիթ, այս պարագային մէջ, եթէ հարկ ըլլայ, երկուքն ալ եմ, լրտես ձեզ կախազանելու համար, խեղկատակ ժպտեցնելու համար :

— Ախ կախազանելու :

— Կախազանին վրայ, պարոն : Կարծեմ գլխատուելու միտք չունիք, ախ ազնուականաց համար գեղեցիկ բան է :

— Ինչպէ՞ս կրնաք ընել առի :

— Օհ, առկէ գիւրին ի՛նչ կայ, ճշմարտութիւնը կը խօսիմ, ահա ընդամենը աս է : Միրելի պարոն, պէտք է ձեզ իմացնեմ, որ նախորդ ամսուն Սէնթ ժընէվիէվ վանքին մէջ տեղի ունեցած հերետիկոսական ժողովին առեն ԼԼ. Ա. Ա. ՍՍ. ՄՄ. տը Աիզին և Տիկին Մանրանէի մէջ տեղը նըստած էի :

— Դո՛ւք :

— Այո՛ խոտովարանի մէջ ճիշտ ձեր դէմը նստած էի, խիտո գէշ է այնպէս չէ՞. և գէթ իմ հաշոյս համար այնչափ դէշ որ պարտաւորած էի ամենքն աւարտի և որ վերջնաւոր ըլլաւ երկար տեւեց : Հետեւապէս Պ. Մանորոյի և Հիւսիէտի առեւտրութեանց նպատաւոր խօսեցայ, մանաւանդ ուրիշ արեղայի մը, որուն անունը թեպէտ չեմ գիտեր բայց կը խօստովանիմ որ խիտ ճարտարախօս կերեւոր : Պ. մ'Անժուի պակադրութեան տեղեակ եմ, որ բաւական գուարճալի դնաց, բայց յետոյ ինդիքը ներդամտութեան փոխուեցաւ, կարող Տ. տը Լօսէնի ազդարանութեան եկրո՞մ առեն, երբ տեսութիւններ ըլլալ սկսեցին այն մտովն, Ափ-

քօլա Գաւիթ աւելցուց, սրբազրեց զանի : Ասի չափազանց նենդութիւն մ'էր. որուն միայն Նորին Սրբութեան վաւերական ձեռագիրը կը պակսէր :

— Ահ, ուրեմն գիտե՞ք ազդարանութիւնը, ըսաւ Գաւիթ հաղիւ. ինքզինք զսպելով և բարկութենէն շրթունքներն կամծնտելով :

— Այո՛, ըսաւ Ելքօ, և խիտ հնարագիտական գտայ, մանաւանդ կանանց զահակալութիւնն արգիլող «—է—» օրինադրքին մէջ : Միայն թէ ասանկ բանի մը վրայ այնչափ միտք հոգնեցնելը դժբաղդութիւն մ'է : Կախազանի պատճառ կըլլայ և իմ սիրտս չախազանց կը շարժէ այդ տեսակ ինչպէ՛ս, պիտի կրնամ թողուլ որ Պ. Գաւիթ, այդ քաջ անձը, ամենագուարճալի զինակիր տեսուչ մը, առաջին կարգի փատաւարան մը, վերջապէս իմ ընտիր բարեկամներէս մին կախազան ելլայ, քանի որ ընդ հակառակը ոչ միայն զինքը չղթայէն ազատելու, այլ և իրեն, այս ճարտար փատաւարանին, այս ազնիւ տեսչին, այս մեծարոյ բարեկիտոյն, իմ կրօնակիս բնութեան յանդէպ իմ սրտիս զգացում ներշնչող առաջին անձին երջանկութեանն ալ պատճառ ըլլալու կարող եմ. ո՛չ, անկարելի բան է : Ուստի ճամբորդութեան վրայ խօսելու հիդ լսելով առաջարկեցի առանց վարանման ձեզ հետ այսինքն ձեր ետեւէն ճամբորդելու : Պօստելի դռնէն դուրս ելլաք այնպէս չէ՞, ես ձեզ կը լրտեսէի զարանակալութեամբ, զիս չիրջաք տեսնալ, ասոր չեմ զարմանար զի խիտ զգուշութեամբ պահուած էի, այն առեն ելլայ հետքերնիդ ըրանեցի և հաւատացէք մերթ ձեզ աչքէս վրիպելով, մերթ կրկին դռնալով չափազանց նեղութիւն կրեցի, վերջապէս Աիոն հասանք. հասանք կըսեմ, վասն զի ձեռնէ ժամ մը յետոյ ես ալ եկայ մի և նոյն պանդոկն լիւեւանեցայ, ոչ միայն մի և նոյն պանդոկը, այլ նոյն իսկ ձեր սենեկին կիցը օթեւանեցայ, տե՛ս, ահա ասոր մէջ, որ ստիպապէս պարզ ասխատակամով մը ձեր սենեկին բաժնուած է, թերեւս կար-

ձէք թէ դձեզ հոս տեսութենէս վրիպեցնելու Փարիզէն
 Լիօն ձեզ դիտելով եկած չէի: Այ, փոքրիկ ծակ մը բացի,
 որոյ օգնութեամբը ձեզ ուզածիս չափ նշմարելու պատեհու-
 թիւն ունեցայ, և կը խոստովանիմ որ շատ անգամ այս զը-
 ւարճութեամբ կանցունէի: Աերջապէս հիւանդացար, պան-
 դոկապետն ձեզ դուրս ձգել կուզէր, Սիներաբլա Քօսի
 մէջ Բիէն Կօնտիին ժամադիր եղած էիք, կը վաճնայիք որ
 կ'դայ դձեզ հոս չգտնար: Կիսով չափ խարուեցայ ձեր հի-
 ւանդութեանը, սակայն՝ ընդհանրապէս խորհելով կրնայի՞ր
 նաև իբր մարդ մահկանացու, մեզ նման հիւանդ ըլլալ, ճըշ-
 մարտութիւն մը որ հիմայ պիտի համոզուիք. քաջ արեղայ
 մը, իմ բարեկամս ու ընկերակիցս ձեզ զրկեցի որպէս զի
 դքեզ զըլման և ապախարութեան կոչէ, բայց դուք որ խըս-
 տասիրտ մեղաւոր մ'էք, ձեր դաշոյնովն զանի սպաննելու
 յանդգնեցաք առանց երբէք միտք բերելու Աւետարանին սա
 առակը թէ՛ որ անցէ, նովաւ սուսնցի՛: Ռատի, սիրելի
 պարոն Գաւիթ, ես եկայ և ահա կրտեմ քեզ, տեսնաք, վա-
 դեմի ծանօթ և հնօրեայ բարեկամ ենք իրարու, կարգադ-
 րենք ինչիբը միասին, օն, ըսէք, այս վարկենիս, որ կեն-
 դանի էք, կուզէ՞ք կարգադրել զայն, ինչի՞բը:

— Եւ ի՞նչ կերպով:

— Այն կերպով, ենչ կերպով որ պիտի կարգադրուէր ե-
 թէ իրօք հիւանդ ըլլայիք, Կօնտիֆլօ բարեկամս ձեզ խոս-
 տովանցնէր, և դուք ալ պահանջած թղթերն յանձնէիք ա-
 նոր: Այն ատեն ձեզ կը ներէի, և բոլոր սրտով ձեզ համար
 էջեա՞ * մը կըրէի: Է՛հ, հոգ չէ, ես աւելի մեռեալէ մը կը
 պահանջեմ, քան կենդանի է մը, և ահաւասիկ սա է ձեզ
 ըսելիքս թէ, պարոն Գաւիթ, դուք կատարեալ մարդ մ'էք,
 սուսերամարտութիւնը, ձին, հնարխմայութիւն, արուեստը
 ահադին քսակով զբոզանդ ամիտփող, վերջապէս ամեն բա-
 նի տէր անձ մ'էք: Դառն բան է որ ձեզ նման մեկը աշխար-
 հէս յանկարծ աներեւութանայ, ուր փառաւոր ճակատագրի

* Լատինաց մեկ աղօթքն է:

մը տիրանալ պատեհութիւնն ունի: Է՛հ, սիրելի պարոն Գա-
 ւիթ, ալ ապստամբութիւն մի՛ ընէք, ինքզինքնիդ ինձ վըս-
 տահեցէ՛ք, գժտեցէ՛ք Կիզերուն հետ, ինձ յանձնեցէ՛ք ձեր
 թղթերը, յանուն ազնուականութեանս որ ձեզ թաղաւորին
 հետ կը հայտեցնեմ:

— Իսկ ընդ հակառակը, եթէ այդ թղթերը ձեզ չը տա-
 ը՞ւ ըլլամ, հարցուց Նիքօլա Գաւիթ:

— Ա՛հ, եթէ ինձ չտաք, այդ ուրիշ ինչիբը է: Յանուն
 ազնուականութեան կերդնում որ զձեզ կ'սպաննեմ, Միշտ
 մի և նոյն նենգաւորութիւնը սիրելի Գաւիթ:

— Հետզհետէ, պատասխանեց փաստաբանն իր թուրը
 քայքայելով:

— Բայց, շարունակեց Եիքօ, եթէ ինձ տալու ըլլաք պի-
 տի մոռցուէք, սիրելի պարոն Գաւիթ, դուք վատթար բը-
 նաւորութիւն մ'ունենալով և կարծելով թէ ատելութիւնը՝
 երկաթին մէջ ժանգը մշտապէս մնացածին պէս իմ սրտիս
 մէջ արմատացած ըլլայ, ինձ չպիտի հաւատաք թերեւս Ռչ,
 զձեզ կատեմ, ասի իրաւ է, բայց Պ. տը Մայենը ձենէ ա-
 ւելի կատեմ, Պ. տը Մայենը կորանցնելու մասին հարկ ե-
 ղածը մի՛ զլանաք և ես զքեզ կը փրկեմ, եւ կուզէ՞ք որ ձեզ
 անհաւատալի ուրիշ խօսք մ'ալ ընեմ: Դուք որ անձնամոլ
 մեկն էք, լաւ, ահա սա է որ ես թագաւորը կը սիրեմ, որ-
 չափ որ ուրացած, որչափ որ ապականած, որչափ որ այլա-
 կերպուած ալ է՝ ինձ արտօնութիւն և պաշտպանութիւն շը-
 նորհած է ձեր արիւնարբու տը Մայենին դէմ, որն որ զե-
 շերը տան և հինգ աւազակի զուլին անցած Լուվրի հրա-
 պարակին մէջ մէկ ազնուական մը մեռուցած է: Դուք կը
 հավնաք անշուշտ թէ խօսքս որու համար է, կը յեշէք Սէն
 Մէկրէնը, դուք ալ անոր զահիճներէն մէկը չէ՞ք: Ռչ, շատ
 աղեկ ես այն ատեն հասկցայ, բայց հիմայ աւելի լաւ հա-
 մոզուեցայ: Հը, իսեղճ Հէնրիս, կուզեմ որ ամենայն խա-
 ղազութեամբ թագաւորէ, դիտնալով նաև որ ասի Մայեն-
 եաններուն և Նիքօլա Գաւիթի աղգահամարներուն նայելով

անկարելի է : Աւրեմն ինձ յանձնեցէք սա ազգաբանութիւնը, ճշմարիտ, յանուն ազնուականութեան պատուոյն կը վատահեցնեմ ձեզ որ անուանիդ կը լռեմ և ձեզ կերպանկացնեմ :

Իր դազաբարձրերու մէջ այնքան երկարելը միայն իր մեծ նպատակին համար էր : Եիքո Գաւիթը խոհական և հաստատուն մարդու մը տեղ դրած էր : Իր բոլոր ուշադրութեան հակառակ և ոչ մեկ անդամ փաստաբանին կայծակնացայտ աչիւրը լարող և ոչ մեկ պողպատեայ նրբալեկին մեղմանալն ու անհետելը չկրցաւ նշմարել, բնաւ մեկ դեղեցիկ խորհուրդ մը իր դիմաց մթադնեալ գծերը չկրցաւ ըստաւորել, և ոչ մեկ սրտի զեղում մ'իւր խորշովեալ ձեռքն իր սրտն վրայէն չկարողացաւ հեռացնել :

— Արդ, ըստ Եիքո, կը տեսնամ որ բոլոր խօսածներս ձեզ համար անօդուտ ճարտարախօսութիւններ են և ինձ բնաւ չէք հաւատար, ուստի հիմայ ինձ կը մնայ նախ ձեր առ իս ունեցած ձեր մեկ հնօրեայ սխալանաց տարիքը տամ ձեզ, երկրորդ երկիրը ազատեմ այնպիսի անձէ մը որ ոչ հաւանականութեան և ոչ ալ մարդկութեան հաւատք կը նծայէ :

Ահա ձեր կախադանը պատրաստել տալու կերթամ : Մընար բարեաւ, պարոն Գաւիթ :

Եւ Եիքո կրնկան վրայ գեպ ի դուռը քայլ մ'ըրաւ առանց փաստաբանն իր աչքէն հեռացնելու :

Աս ալ անոր առջեւը ցատկեց :

— Եւ դուք ալ կը կարծէք թէ ձեզ երթալու պիտի թողում, դոչեց փաստաբանը, երբէք, իմ գեղեցիկ լրտես, երբէք : Եիքո, բարեկամս, սվ որ ազգաբանութեան այս տեսակ գազմեղծները դիտէ պէտք է մեռնի : Ավ որ Նիքօլա Գաւիթին կ'ապաւնայ, պէտք է մեռնի : Ավ որ ձեզ պէս հոս կը մանայ պէտք է ողջ դուրս չ'ըլայ :

— Ճիշդ իմ ուղածս ալ այդ է, ըստ Եիքո միշտ միեւնոյն հանդարտութեամբ ձեզ մեռցնելու կարողութեանս վրայ անկասկած ըլլալուս, չէի համարձակեր : Քո իյէն, ինձ հետ երկու ամիս յառաջ ղ կենամարտութեան ելլալով միայն սրոյ

մէկ մասնաւոր հարսած մը, լոկ մեկ հատ մը ինձ սովորեցուց, անի բաւական է, յանուն պատուոյ : Օ'ն. բե'ր առդին սա թղտերը, ապա թէ ոչ քեզ կը մեռցնեմ և այն ալ կը հասկըցնեմ թէ ինչպէս : Ձեր իմ Կուէնֆլօ բարեկամիս ըրածին նման արիւնը կոկորդներնէդ դուրս ժայթքեցնելով :

Եիքո դեռ իր խօսքը չաւարտած, Գաւիթ յանկարծ վայրագ ծիծաղով մը վրան յարձակեցաւ : Եիքո սուր ի բռին գանի ընդունեց :

Այս երկու հակառակորդք զբեթէ համաչափ հասակ մը ունէին, միայն թէ փաստաբանին բարձր, նուրբ և դիւրաբէկ հասակին անքօղութեանը հակառակ Եիքօյի իր հանգեբններն իւր վատութիւնը կը ծածկէին : Գաւիթ երկայն օձու մը կը նմանէր, որչափ իւր բազուկը դիտուն վրայ կը դարձնէր, այնչափ աւելի իր արագաչարժ թուրը եռապատիկ տէգի նման կը շողար : Բայց, ինչպէս Եիքօ ըսած էր անոր անգամ մը դժնդակ հակառակորդի մը հետ արդէն ճակատուէր էր : Եիքօ ստեպ կայսեր հետ զինամարտութեան փորձեր ըրած ըլլալով տերութեան ամենաճարտար զինաչարժներէն մին էր և ահա այս պատճառաւ է որ Նիքօլա Գաւիթ զանի յաղթելու համար ինչ որ ըրաւ, որ կողմ որ դարձաւ իր հակառակորդին զէնքը իր գանձերուն և հնարից դիմակալեց :

Ես ետ ընկրկում մ'ըրաւ :

— Հա՛, հա՛, հիմայ կղզար, այնպէս չէ՛, ըստ Եիքօ, տեսնանք անգամ մ'եւս, թղտերը :

Գաւիթ իբր պատասխանի վերստին Կարօնացւոյն վրայ յարձակում մ'ըրաւ և առջինէն աւելի երկար ու կատարի պատերազ մը սկսաւ և Եիքօ բաւական համարելով երկրորդ հարուած մ'ալ տալու միտք չունէր :

Այս երկրորդ մրցումն ալ առջինին պէս փաստաբանին մէկ ընկրկումովը վերջացաւ :

— Հա՛, հա՛, ըստ Եիքօ, հիմայ կարգը իմն է :

Եւ գեպ ի յառաջ քայլ մ'ըրաւ :

Երբ սա կը յառաջանար, Նիքոլա Գաւիթ զանի կասեցը- նելու դիմադրաւեց, Շիքո առաջին սուսերամարտի մ'առաջին դերն առաւ, իր հակառակորդին թուրը հարուած հարուածի վրայ հասցնելով պարաւանդեց և յետոյ թող տալով առջի դիրքին մէջ ձգեց և իւր երկար սրոյն կէսը անոր կոկորդը մխեց :

— Ահաւասիկ հարուածը, ըսաւ Շիքո :

Գաւիթ չպատասխանեց, ընդունած հարուածէն՝ բերանայիւր արիւն մը թքնելով Շիքոի ոտքերուն վրայ գահալիժեցաւ :

Շիքո դէպ'ի յետ յետ քայլ մ'ըրաւ : Օձը որբան որ մահացու կերպով վիրաւորուած ալ ըլլայ, տակաւին կարող է ուղղուել ու խածնել :

Բայց Գաւիթ բնական շարժումով մը դէպ'ի իւր անկողինը երթալ ջանաց ընդ-քարշ իր գաղտնիքը ձեռք չտալու վերջին ճգամը :

— Ա՛հ, ըսաւ Շիքո, քեզ խորամանկ մէկը կը կարծէի, բայց կը տեսնամ որ Գերմանացի զօրակաւի մը պէս ապուշ մէկն ես, Ես թղթերը պահած տեղերնիդ բնաւ չէի դիտէր, և ահա այդ ընթացքովդ ինձ կը սովորեցնես :

Եւ մինչդեռ Գաւիթ ողբկարութեան շղաձգութեանց մէջ կը գալարէր, Շիքո անկողնոյն վրայ վազեց, անկողինը վերցուց և սնարին տակ մագաղաթեայ պատատ մը գտաւ, որ Գաւիթ իր կեանքին սպառնացող աղետից ցնորումէն լաւ մը պահել չէր խորհած :

Մի և նոյն վարկենին, երբ Շիքո իր բնուած թուղթն աչքովը տեսնաւ և ապահով ըլլալու համար պատատը կը քահէր, Գաւիթ մղեղնութեամբ ելլալ սիտեց, բայց յանկարծ ինչպով իր վերջին հառաչանքն կարձակէր :

Շիքո ուրախութեան և հպարտութեան փայլակներով շողափայլ աչքերը վեր վար շրջեց և հարեւանցի մը կարգաց Բիէռ Կոնտիի Ավինեօնէն բերած մագաղաթը :

Հոովմայ Պապին դահակալութենէն 'ի վեր անոր քաղաքականութեամբը ամենահաւատարիմ՝ եկեղեցական գաւառապետը հետեւեայը դրած էր :

— Թոյ ըլլայ էնդէն որ կ'սկսու Մարտի, Մարտի ըրաւ յոր- րոյն էր... :

— Ահաւասիկ Պապ մ'որ, ըսաւ Շիքո, ամենաքրիստոնեայ թագաւորի մը հետ բաւական վատութեամբ կը վարուի :

Մագաղաթը ծալլեց և զգուշութեամբ մը ամենէն ապահով տեղ մը պահեց, այսինքն իր այն գրպանին մէջ դրաւ, որ իր կուրծքին կը յենու միշտ :

Յետոյ փաստաբանին մարմինը առաւ, ու երեսը դէպ'ի պատին դարձնելով իր անկողնոյն մէջ տեղաւորեց, որն որ՝ վէրքին բնութիւնը արիւնը ներսի կողմը զեղլով գրեթէ առանց երբէք արիւն հոսելու անշնչացած ու մեռած էր, դուռը բանալով Կոնէնֆլօն կանչեց :

Կոնէնֆլօ ներս մտաւ :

— Որպիսի՛ դժգոնեած էք, ըսաւ արեղայն :

— Այո՛, ըսաւ Շիքո, այս թշուառ մարդին օրհասական վարկեաններն զիս բաւական շարժեցին :

— Մեռա՛ւ ուրեմն, հարցուց Կոնէնֆլօ :

— Ամենայն մասամբ այդպէս հաւատալու իրաւունք ուսնիմք, պատասխանեց Շիքո :

— Քիչ մ'առաջ խիստ առողջ կերեալար :

— Խիստ առողջ, Գժուարամարս բաներ ուտել ուզեց և Անակրէնի պէս, շեղակի ուտելով մեռաւ :

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ Կոնէնֆլօ, սրիկայն զիս խեղդել կուզէր, զիս, եկեղեցական անձ մը դաւաճանել, անշուշտ այսպէս պիտ'ըլլար իր վախճանը :

— Ներեցէ՛ք իրեն, հայր իմ, դուք Քրիստոնեայ էք :

— Կը՛նքերեմ, ըսաւ Կոնէնֆլօ, թեպէտև ինձ սոսկալէ սարսափներ աղդեց, սակայն դարձեալ կը ներեմ իրեն :

— Միայն ներելը բաւական չէ, ըսաւ Շիքո, նաև հարկ է որ մոմերը վառէք և իր դիակին վրայ քանի աղօթքներ մըմնջէք :

— Ի՞նչ համար :

Կը յիշեն անշուշտ ընթերցողք որ ասի Կոնէնֆլօի խօսքն էր :

— Ի՛նչ, ինչու՞ համար կըսէք, Մարգասպանի մը պէս ձեր-

բակալ ըլլալով քաղաքին բանտը չառաջնորդելու համար :

— Ե՛ս , ես այս մարդուն դատաճանճը , գնա՛ բանդ , ինքը զիս խեղդել ուզեց :

— Աստուած իմ , այո՛ այդպէս է : Բայց չէ կրցած յաջողիլ , որով արիւնք դարձեր է և հետեւաբար իր կուրծքին մէջ անօթ մը պայթած ըլլալու է : Կը հասկնաք հիմայ թէ ի՞նչ է իրութիւնը , Կօռէնֆլօ , իր մահուան պատճառը դուք էք : Մննդ պատճառ , ասի ճշմարիտ է , բայց ի՞նչ օգուտ : Մինչեւ որ քու անմեղութիւնդ ճանչցուի , ձեզ բաւական չաքրեք կը հասցնեն :

— Իրաւունք ունիք , կը համուղու իմ , պարոն Շիքօ , ըսաւ արեղայն :

— Եւ աւելի , որ այս երկրին , Լիօնի մէջ կաշիներես պաշտօնեայ մը կայ :

— Յիսուս , մրմնջեց արեղայն :

— Ուտի ինչ որ քեզ կըսեմ , շուտով կատարէ , հայր իմ :

— Ի՞նչ ընել պէտք կ'իմ :

— Հոս կեցիք . շերմեռանդութեամբ մը գիտցած ու չը գիտցած աղօթքներդ կարդա՛ . երբ երեկոյ ըլլայ ու մինակ մնաս , այն ատեն պանդոկէն ե՛լ առանց դանդաղելու և առանց իսկ գլորելու : Փողոցին անկիւնը աշխատող պայտաբը գիտէ՞ք :

— Անտարակոյս , երկի զիշեր ինէ հարուած ընդունողը ճիշդ անի է , ըսաւ Կօռէնֆլօ իր սեւածիր աչքերը ցուցնելով :

— Բարի , ես պէտք եղած հոգը կը տանիմ , որպէս զի ձեր ձին հոն պատրաստ գտնաք , կը հասկնաք : Առանց մեկուս բան մը յայտնելու կը հեծնաք , ապա , որ ժամանակ որ սրտերնիդ ուզէ , Փարիզի հրապարակուղին կը ճանչէք , Արլընէօլլը Ռօաի մէջ ձին կ'իծախէք և Բանիւսժը կրկին կ'առնուք :

— Ա՛հ , այդ ազնիւ Բանիւսժը , իրաւունք ունիք , եթէ զանի տեսնա՞մ շատ երջանիկ պիտի ըլլամ , վասն զի խիստ կը սիրեմ : Բայց , յարեց արեղայն հեզ ձայնով մը , ասկէց մինչեւ հոն ինչպէս պիտի սպրիմ :

— Երբոր կ'տամ , կ'տամ բաւ Շիքօ և չեմ՝ ձգ էր որ բարեկամս ներս մտնան ինչպէս որ կընեն Ս. ժընէվիէ վճանքին մէջ կեցիք :

Եւ այս ըսելով իր դրպանէն բուռ մի դրամ հանեց և արեղային խոշոր ափին մէջ լեցուց :

— Բարեկիրտ մարդ , ըսաւ Կօռէնֆլօ , մինչեւ յարտասուս խանդաղատելով , թո՛ղ որ քեզ հետ մնամ Լիօնի մէջ : Լիօնը բաւական կը սիրեմ , անի տէրութեան երկրորդ մայրաքաղաքն և հիւրասէր երկիր ո՛ր է :

— Բայց չէ՞ք հասկնար թէ ինչ կայ . անիմ անտուն , ես չպիտի մնամ , պիտի մեկնիմ . պիտի մեկնիմ այնչափ արագ որ ետեւէս դաշնակից . ալ չեմ՝ յօժարիր :

— Եղիցին կ'անք ձեր , պարոն Շիքօ , ըսաւ Կօռէնֆլօ հըրաժարական ձեւով մը :

— Կանուխ , ըսաւ Շիքօ , կը տեսնա՞ս ահա որ քեզ կը սիրեմ հայր իմ :

Արեղայն անկողնոյն քով ձգեց , պանդոկապետին քով իջաւ , և զանի մեկուսի տանելով .

— Պէտե՞սյէթ տեսուչ , ըսաւ , ձեր տան մէջ մտքերնեզ չանցած իրողութիւն մը տեղի ունեցաւ :

— Պա՛հ , ի՞նչ կայ ուրեմն , պատասխանեց պանդոկապետն խոտկայող աչերով :

— Այդ մընչիւն արքայականը , կրօնի այդ թշնամին , Կաթլինականաց այդ դարչնէլի դաւակը . . . :

— Լա՛ւ :

— Լաւ , այս աւտու Հառվէական թղթաբերի մ' այցելութիւնն ընդունեց :

— Արդէն դիտեմ , որովհետեւ ասի ձեզ ըսողը ես էի :

— Լաւ , մեր սրբազան քահանայապետը , ում այս աշխարհիս մէջ բոլոր արդարութիւն և քաղաքական իրաւունք յանձնուած է , մեր սրբազան հայրը , կսեմ , զանի ուղղակի չար դաշնաւորին կը գրկելը , և ամենայն հաւանականութեամբ , միայն դաշնաւորն լսկ ինք չէր տարակուսեր թէ ինչ նպատակի համար է :

— Եւ ի՞նչ նպատակի համար կը շրկէր :

— Ձեր վարձաւանակին սենեակն ելէ՛ք, Պէրնուլէթ տեսուչ, իր վերմակը քիչ մը վերուցէք, անոր պարանոցն շրջապատը դիտեցէք և այն ատեն կը հասկնաք :

— Աւա՛ղ զիս կը սարսափեցնէք :

— Ձի չափազանցեցի : Այս արդարութիւն հոս ձեր տան մէջ կատարուեցաւ, ասի մեծ պատիւ մ'է որ Պապը ձեզ ըրաւ :

Յետոյ տասը ոսկի սպրդեցուց կամացուկ մը իր պանդոկապետին ատին մէջ և ակոսն մտաւ, երկու ձի դուրս հանեց :

Սակայն պանդոկապետն թռչունէ մ'աւելի արադաթեւ սանդուղներէն վեր սահելով Նիքօլա Դաւիթին սենեակը մը տած էր :

Հոն Կօռէնֆլօն աղօթի մէջ դտաւ :

Անկողնոյն մօտեցաւ, և իր ընդունած հրահանգներուն համեմատ վերմակը վերցուց :

Վէրքը նշանակուած տեղն էր տակաւին կենդանի կերպով բայց մարմինը արդէն սառն էր :

— Սատկի՛ն այսպէս բոլոր Ս. Կրօնի հակառակորդներն, ըսաւ Կօռէնֆլօն իմացութեան նշան մ'ընելով :

— Ամե՛ն, պատասխանեց արեղայն :

Այս արկածներն գրեթէ ճիշդ այն ժամանակ տեղի կուներային ուր Պիւսի Տիանայ տը Մեռիտորն պեւոր գայէկին բաղկացը մէջ դարցուց. զոր մեռած կը կարծէր :

Տ՛ ԱՆՃՈՒ ԴՈՒՔՍԸ ՏԻԱՆԱ ՏԸ ՄԷՈՒՔՅՈՒՆ ՈՂՁ ԸԼԼԱԼԸ ԿԻՄԱՆԱ

Ապրիլի վերջին օրերն հասած էին :

Շարժութի մայր եկեղեցին սպիտակ սաւանով մը քողարկուած մարդակներուն վրայ տերեւազարդ ոստեր (որոնք այս թուականին մէջ տակաւին չքնադապէս կերեւէին) այո՛, կը սենք, ծաղկանց յաջորդող տերեւազարդ ոստեր կը կրէր :

Թագաւորը Շարժութի դռնէն մինչեւ ներս բոկոտն գալով ներկայից մէջ կը կենար և մերթ ընդ մերթ դուրսը շրջելով իր շուրջը կը դիտէր հասկնալու համար թէ իր բոլոր գրանեկներն ժամադրութեան հաւատարիմ գտնուած էին : Բայց ումանք փողոցի սալապատակէն սկիթուած կոշիկներնին կրկին հազած էին. ոմանք խոնչ և վատտակ և ոմանք սովացած և նօթի, գաղափարողի կերպիւ փողոցի պանդոկներուն մէջ կամ հանդիստ կառնուին և կամ կը ճաշէին, և փոկրիկ խումբ մը միայն եկեղեցւոյ խոնտ սալապատակին վրայ ապաշաւանաց երկար վերարկուին տակ մերկ ազդրերով կայնելու համար ձակած էին :

Կրօնական արտորդութիւնը որ Բարդիոյ թագին ժառանգորդ մը տալու նպատակը իր շարժառիթն էր, արդէն աւարտելու մօտ էր. Նօթի-Տամի երկու շապիկներն որ շատ օրհներդութեանց և պատգամներու գործի մ'ըլլալով իր ծընդդադործական առաքինութեանը կամ յատկութեանը մասին ընաւ տարակոյս չկար, իրենց ոսկէարկղէն հանուած էին և այս հանգիստին, փութացող խումբը երկու պատմութեաններն հանուած միջոցին սրբութեան խորանէն գուռ ջրացող ճառագայթներու հրոյն տակ կը խոնարհէր :

Այս միջոցին ընդհանուր երկիւղածական լուրսութեան մէջ Հէնրի Գ. տարօրինակ աղմուկ մը բեց, աղմուկ մ'որ հեղձմուղձ

չյուսին կը հմանէր, և իւր սովորականին համեմատ դիտել սկսեց տեսնալու համար թէ արդեօք Շիրքօն ալ եկած է որ այսպիսի վայրկենի մը իսկ ծիծաղելու կը յանդգնի :

Այս երկու նուիրական պատմութեան տեսարանին վրայ ինդացողը Շիրքօն չէր, վրան զի, աւա՛ղ, Շիրքօն բայցակայ էր, թողաւորն ամենէն աւելի սրտմեցնող բանն սա էր որ, ինչպէս ընթերցողը կը յիշեն, անի Պօնթէնէպոլլի ճամբուն վըրայ յանկարծ աչքին առջեւէն տներեւութանայէն ի վեր այլ ևս անոր վրայ խօսք մը չէր խօսուեր : Այս ծիծաղող հանքք ասպետ մ'էր որ տեսաքիրտն ձին և կեղեցւոյ դուռը կապելէն վերջը ցլատատ հանդերձով ու կոշիկներով կ'ուզար ճամբայ կը բանար և իրենց գլխուն վրայ ձգած ապաշաւանաց քուրջերուն տակ, բայց դարձեալ ամեն ձեւի մէջ բուկազդը պալատականաց մէջէն կանցնէր :

Տեսնալով որ թողաւորը ետին կը դառնայ . հսկայօրէն և յարդական կերպարանօք երգեսկցաց դասուն մէջ կանդ առաւ . վրան զի զինքը պարուրող հանդերձից պերճութենէն աւելի իւր կերպարանքը կը ցուցնէր որ այս ասպետը պալատական մ'էր :

Հէնրի, ասոր այսպէս ուշ տուն դալով ազմուկ հանելուն և այսպիսի նուիրական ժամու մը սովորութեան ու վայելչութեան հակառակ աղտերի հանդերձներով երևալուն վըրայ աժդո՛հ ու դժկամակ, յանդիմանական և նախատական ծանր ահնարի մը նետեց ասպետին վրայ :

Նորեկը չտեսնալ ձեւացաւ, և իւր կայնած տեղէն, ուր վարդապետական դասը իրենց շարժական հողաթափները ճոխնչելով (ըստ ժամանակի նորաձեւութեան) արձանացած էին, քանի մը սաղաքար յառաջ անցաւ և Պ. տ'Անժու դքսին թաշեայ ակտոնին քով ծնրագրելու դնաց, սրն որ աղօթքներէն աւելի իւր խորհուրդներէն գրաւուած ըլլալով իւր շուրջը դարձած իրութեանց ամենախորք ու շաղկապ թիւն անդամ չէր ընէր :

Սակայն, երբ սոյն նորեկին մերձուին զգաց, մէկէն և

տին դարձաւ և կամայուկ մը հնչեց :

— Պիւսի :

— Բարեւ, տէր իմ, պատասխանեց ազնուականը այնպիսի եղանակաւ մ'որպէս թէ դուքէն դեռ առաւօտուն բաժնուած ու իր բաժնուելէն վեր կարեւոր դէպք մը պատահած չէր :

— Բայց, ըսաւ իշխանը, միթէ կատղեցար :

— Ինչո՛ւ այդպէս, տէր իմ :

— Եղած տեղերնիդ ձգելով Շարթուի մէջ Նօթր—Տամի շապիկները տեսնալ դաշերնուդ համար :

— Տէր իմ, ըսաւ Պիւսի :

— Պատճառն այն է որ ձեզ հետ ստիպողական խօսելիք ունիմ :

— Բայց ի՛նչ պատահեցաւ որդեօք, երեք շարաթ է ձեր աներեւութանայէն վեր :

— Ահա ճիշդ այդ բանին համար ձեզ հետ խօսիլ կուզեմ :

— Պահ, պետք է մինչեւ եկեղեցւոյ աւարտը սպասեք :

— Աւա՛ղ, այո՛ խիստ անհրաժեշտ է, և ասոր համար է որ կը զայրանամ արդէն :

— Սո՛ւս, ահա աւարտը . համբերեցէք, և միտին բնակարանը դառնանք :

— Ես ալ ատ կը մտածեմ, տէր իմ :

— Արդարեւ թողաւորն իր անօր շապիկն վրայէն Նօթր—Տամի բաւական խոշոր շապիկն անցունել սկսեց, որուն օրինակին հետեւելու կըբաղէր նաեւ թագուհին :

Հուսկ ապա թողաւորը ծնրագրեց, թագուհին ալ անոր համակերպեցաւ, որոնցմէ իւրաքանչիւրն սրբութեան ընդարձակ հովանոցի մը տակ վարկեան մը լռիկ իրենց սրտին խորէն աղօթքներ կը մրմնջէին, մինչդեռ ասոխն բազմականներն թողաւորին ծառայութիւն մ'ըրած երեւալու համար ճակատնին դետին կը ծեծէին :

Պահէ մը թողաւորն ոտքի ելաւ, սուրբ պարեգտան հանեց, արք եպիսկոպոսը բարեւեց, թագուհին բարեւեց և դէպ ի Մայր եկեղեցւոյ դուռն ուղեւորեցաւ :

Բայց ճամբուն վրայ կանկ առաւ, Պիւսին աչքին դիպաւ :
— Ա՛հ, պարոն ըսաւ, կերեւայ թէ մեր ջերմեռանդու-
թիւնը եւ ուխտը ձեր ճաշակին անախորժ կը թուէր, վասն
զի ոսկիէն ու կերպասէն չէիր կրնար անցնել, մինչդեռ ձեր
թագաւորը խոշոր ասուիններն ու նոր մտաբարեաններն հազ-
ուած էր :

— Տէր արքայ, պատասխանեց Պիւսի արժանաւորու-
թեամբ, բայց մակակետին տակ անհամբերութենէն դունա-
տելով, տէր արքայ, ձեզ ծառայելու մասին ոչ որ իմ սիրտս
չ'ունի, նոյն իսկ այն անձանց մէջ որ հեզութեան վեղարը կը
կրեն, և իրենց ոտքերն աւելի պատուած են, երկար և տա-
ժանելի ճանապարհէ մը եկած բնաւ չէի դիտէր թէ ձեր վե-
հախառութիւնն այս առտու Ետտթըր պիտ' երթայ : Հինգ
ժամուան մէջ քսանհինգ մղոն ճամբայ կտրեցի, տէր արքայ,
Ձեր վեհափառութեան դայ միանալու դիտաւորութեամբ և
ասոր համար է որ բնաւ ժամանակ չունեցայ հաղուստներս
փոխելու, ուստի Ձեր վեհափառութիւնը այնպէս չպիտի դա-
տէ թէ իմ մաղթանքներս իր աղօթից հետ խառնելու տեղ
Փարիզ մնացած ըլլամ :

Թագաւորն այս իրաւանց վրայ բաւական կերպարանքով
երեւցաւ, բայց բարեկամները նկատած ատեն՝ երբ նշմարեց
որ անոնցմէ ոմանք Պիւսիի խօսքերու վրայ ուսերնին կը
թոթվէին, դուշացաւ որ իր եղբոր ազնուականին հետ քաղց-
րութեամբ վարուելովը զանոնք չդառնայնէ և մեկդի զնայ :

Պիւսի թողուց որ առանց տեսնելու թագաւոր անցնի :

— Հը, ինչո՞ւ չես տեսնար, ըսաւ դուքսը :

— Ի՞նչ :

— Որ Աքոնպերի, Քելիւս և Մոթիրոն ձեր խօսքերուն
վրայ ուսերնին թոթվեցին :

— Եղածը, Տէր իմ, ամենքն ալ տեսայ, ըսաւ Պիւսի ա-
մենայն հանգարտութեամբ :

— Լաւ ուրեմն :

— Լաւ ուրեմն, կը յուսայի՞ք որ իմ նմաններս՝ մանուսնդ

եկեղեցւոյ մէջ խեղդելու չափ վատ մ'ըլլամ : Ես բարեպաշտ
քրիստոնեայ մ'եմ այդ մասին :

— Ա՛հ, շատ լաւ, ըսաւ տ'Անժու դուքսը զարմացմամբ,
ես կը կարծէի թէ չտեսար կամ չտեսնալու զարկիք :

Պիւսի ասոր վրայ իր ուսերը թոթվեց և եկեղեցիէն դուրս
ելլալու միջոցին իշխանը մեկուսի առնելով,

— Ձեր տունը, այնպէս չէ՞, տէր իմ, ըսաւ :

— Անմիջապէս, վասն զի ձենէ շատ տեղեկութիւններ առ-
նուլ կուզեմ բոս ձեր խոստման :

— Այո՛, արդարեւ, Տէր իմ, այնպիսի տեղեկութիւն-
ներ, որոց վրայ տարակոյս չունիք, քաջ դիտեմ :

— Դուքսը ապշութեամբ Պիւսիին նայեցաւ :

— Այո այսպէս է, ըսաւ Պիւսի :

— Լաւ ուրեմն, զիս առանձին թող որ թագաւորը ող-
ջունեմ և ձեզ կը դառնամ իսկոյն :

Դուքսն իր եղբոր հրաժեշտի ողջոյնը տալու գնաց, որն որ
անտարակոյս Նօթթր-Տամի մեկ մասնաւոր շնորհէն ներշնչելով,
քաղցրութեամբ մը թոյլտուութիւն շնորհեց անոր ուղած
ատենը Փարիզ երթալու :

Ապա ամենայն ձեւով գէտ ի Պիւսին դալով և անոր հետ
պանդակին մէջ իրեն բնակութեան յատկացած սենեկին մէջ
փակուելով,

— Տեսնե՞ք, բնկեր, ըսաւ, նստէ՛ հող, պատմէ՛ ինձ այս-
կաներդ, դիտէ՛ք որ ձեզ մեռած կը կարծէի :

— Կը յուսամ Տէր իմ :

— Գիտէ՞ք որ բոլոր արքունիքը ձեր կորստեան խնդու-
թեամբ ապիտակներ հաղաւ և շատ կուրճեր ալ ձեր սուր
բունել դիտանալը հասկնալիքն 'ի վեր ասալին անգամ ազատ
չունչ մը առին, բայց խնդիրը հոս չէ, նայի՛նք, անձանօթ դե-
զուհիի մը հետեւելու համար զիս ձգեցիք, ո՞վ էր այդ կի-
նը, և ի՞նչ լուր ունիս ատոր մասին :

— Ինչ որ ցանկեցիք զայն պիտի հնձէք, տէր իմ, այսինքն
մեծ անօթ մը :

— Հաւա՛ն է, բրաւ դուքսը, որ այս տարօրինակ խօս-
քերէն աւելի Պիւսիին անպատկառելի ձայնին վրայ կը զար-
մանար :

— Հարկաւ ձեր տէրութիւնը լրած ըլլալու է, ըսաւ Պիւ-
սի սառնութեամբ, ուստի կրկնեալ անօգուտ է :

— Բայտարեցէք ինձ, սպարոն, և առեղծուածական, բա-
ռական ու նշանադրական շրջումներն Շիրօին թողէք :

— Մ՛հ, ատկեց հեշտ ի՛նչ կայ, Տէր իմ, շատ դձգ պիտի
ըլլամ զանի ձեզ յիշեցնելովս :

— Բայց ո՞վ էր այդ կինը :

— Ար կարծէի թէ տէրս զանի կը ճանչէ :

— Ուրեմն ի՛նքն էր, դձեց դուքսը :

— Ա,յո՛, Տէ՛ր :

— Տեսա՛ք :

— Ա,յո՛ :

— Քեզ հեա խօսեցա՛ւ :

— Անշուշտ : անխօս միմիայն ողիներն են : Բաց յայտ-
մանէ, տէրս թերեւս իրաւունք ունէր զանի մեռած կարծելու
ի՛նչպէս կը յուսայիք :

Դուքսը դեղնեցաւ, և իր դրանիկն եզող անձին ասից
սաստկութենէն խորտակուեցաւ :

— Հը լաւ, այո՛, Տէր, շարունակեց Պիւսի, թեպէտեւ
դուք անտուգարմ՝ օրիորդ մը մարտիրոսութեան մղեցիք, ին-
քըն այդ նահատակութենէն զերծաւ, բայց դեռ մի չնչիք,
դեռ զձեզ անպատասխանատու և ազատ մի՛ կարծէք տա-
կաւին, վասնզի ապրելովը մահէ աւելի ստակալի դժբաղդու-
թեան մը ենթարկուած է :

— Արնէ այդ ուրեմն, ի՛նչ սրտահեցաւ արդեօք իրեն,
հարցոց դուքսը դողդաղով :

— Տէր՛, պատահածն այս է որ մարդ մ՛անոր պատիւը
պաշտպանած է, մարդ մ՛անոր կեանքը ազատած է, բայց
այս անձը իր ամենասիրելի ծառայութիւնը այնպիսի վարձք
մ՛ընդ աւնած է որ զանի հասուցանողին մեծ սխալ կարգէ :

— Լինցո՛ւր, օն, տեսնենք :

— Հը լաւ, Տէր, ար Մեռխտօր օրիորդը տ՛Անժու գրախն
ահդէն իրեն տարածուած գրկէն ազատելու համար, որուն
սիրուհին ըլլալ չէր հաճէր, ար Մեռխտօր օրիորդը օտար մար-
դու մը բազկացը մէջ նետուած է, զոր կը գործածէ :

— Ի՛նչ կ'ըսես :

— Կըսեմ որ Տիանա ար Մեռխտօրն այսօր Տիկին Մոնտրօ
կ'անուանուի :

Այս խօսքին վրայ, դժգունութեան տեղ, որ արդէն Յը-
ռանսուայի այտերը շարունակ բռնած էր, արեւնն այն սա-
տիճան սաստկութեամբ իր գեմքին վրայ եկաւ, յուզեցաւ, որ
կարծեա թէ աչքերէն դուրս պիտի ժայթքէր :

— Արիւն Քրիստոսի՛, գոչեց իշխանը կատաղութեամբ,
բոլորովին ճշմարիտ է արդեօք ասի :

— Մեծդ Ատուած, օրովհետեւ ես ըսի, յարեց Պիւսի
իր բարձր հնչումովը :

— Ըսել ուզածս այս չէ, յարեց իշխանը, ձեր օրինաւո-
րութեան վրայ ընաւ տարակոյս չունէի, Պիւսի, միայն սա-
ղիս կը զարմացնէ թէ իմ անտուականերէս մին, Մոնտրօ մը,
ինչպէս՝ կարելի է եղեր, որ իմ սիրոյս հակառակ իմ սիրովս
պատուած մեկ կիինս պաշտպանելու յանդիմութիւնը կուսենայ :

— Եւ ինչո՞ւ չէ ըսաւ Պիւսի :

— Ուրեմն դո՛ւ ալ ըրածես անոր պէս, դո՛ւ :

— Աւելի լաւը, Տէր, ձեզ ազգարարութիւն մ՛ըրի թէ պա-
տիւնիդ վտանգի ենթարկուելու մօտ էր :

— Վարկեան մը, Պիւսի, ըսաւ դուքսը հանդարտած,
վարկեան մը մտիկ ըրէք, և թէ կը հաճիք, կը հասկնար սի-
բեղիս, որ զիս չեմ ջատաղուէր :

— Եւ կը սխալիք, իշխանս, վտանգի ամեն անդամ որ խըն-
դիրը ողջամտութեան վրայ կայանայ դուք պարզ ազնուական
մ՛էք :

— Լաւ ուրեմն, ահա ատոր համար կաղաչեմ զձեզ որ Պ-
տր Մոնտրօին դատար որ կուսոյնիք :

— Ե՛ս :

— Այո՛, դուք, և ի՛նչ ըսելու թէ ասի նեկու թիւն մը չէ՛, նեկու թիւն ինչ գէտ :

— Ձեզ գէտ :

— Ինչ, որուն դիտաւորութիւններն կը ճանչնար :

— Եւ ձեր տէրութեան դիտաւորութիւններն միթէ՛ . . . :

— Անտարակոյս Տիանա տը Մեռ խօսքէն սիրուելն :

— Դո՛ւք, սիրուիլ :

— Այո՛, բայց առանց որ և է պարադայի մը մէջ բռնութիւն դորձածելու և առանց բռնաբարելու :

— Ասոնք էին Ձեր դիտաւորութիւնը, տէր, ըսաւ Պիւսի ժպիտով մը :

— Անտարակոյս, և այս դիտաւորութիւնքը, ասոնք մինչեւ վերջին վարկերին պահպանած եմ, մինչդեռ ընդհակառակը Պ. տը Մանտրօ իր բոլոր կորովամտութեամբն անոնց գէտ զինեցաւ :

— Տէր, Տէր, ի՛նչ կը խօսիք, այդ մարդը Տիանան անպատուելու յանդգնութիւնը ձեզ գէտ դորձած է :

— Այո՛ :

— Իր խորհուրդներովը :

— Իր նամակներովը : Կուզե՞ս անոնց մէկ օրինակը տեսնայ :

— Ո՛հ, գոչեց Պիւսի, եթէ կարենայի հաւատալ :

— Մանրերկրորդ մը սպասէ և պիտի տեսնաս :

Եւ դուքսը վազեց մեկ փոկրիկ արկղէ մը քով զոր ամեն օր մանկլատիկ մը կը հսկէր, և անկեց տուն մը հասնելով Պիւսիին տուտա և :

— Կարգա՛, ըսաւ, որովհետեւ իշխանիդ խօսքերուն վրայ ձը վարանիս, կարգա՛ :

Պիւսի վարանումէ գողգղացող ձեռքով մը տունն առաւ և կարգաց :

« Տէր :

« Թո՛ղ Ձեր տէրութիւնը սպասուի ըլլայ . այն ձեռնարկն

առանց վտանգի գլուխ պիտ'ելլայ, վասն զի մանկամարդն այս երեկոյ եօթ օրուան բնակելու համար մօրաքրոջ քով կերթայ, որ Լիւթի դղեակը կը բնակի, ուստի ես վրաս կառնում հարկ չկայ որ դուք ատոր մասին անհանդիստ ըլլաք : Իսկ գալով օրիորդի անձկութեանց, վտահ եղիք որ Ձեր Տէրութեան ներկայութեան վերջը պիտի նուազին տակաւին :

« Հուսի յետոյ, կը գործեմ . . . և այս երեկոյ . . . Պօժէ դղեակը պիտ'գտնուի :

« Ձեր բարձրութեան յարգարար ծառայ

ՊՈՒՅԵԱՆ ՏԸ ՄՕՆՍՈՐՕ

— Լաւ ուրեմն, ի՛նչ կըսէք ատոր, Պիւսի, հարցուց իշխանը արնուականին, երբ ասի նամակը երկրորդ անգամ մը ալ կարգաց :

— Կըսեմ, որ գեղեցիկ ծառայութիւն մը վայելեր էք, տէր իմ :

— Ընդ հակառակն, աշխնքն անարդուած եմ :

— Ա՛հ, ատի իբա՛ւ է, հետեւանքը կը մտնայի :

— Խա՛ղ, ա՛հ թշուառական, զիս համուցեց թէ մեռած է կէն մը . . . :

— Ձոր կուղէիք. արդարեւ զիդուածը խիտ սեւ է, բայց, յարեց Պիւսի երգիծական հեղնութեամբ մը, բայց տը Մանտրօյի սէրը ներում մ'է :

— Ա՛հ կը հաւատար, ըսաւ դուքսը իր ամենադառն ժըպիտովը :

— Արդարեւ, կրկնեց Պիւսի, ասկեց անդին կարծիք մը չունիմ, կը հաւատամ, եթէ դուք կը հաւատար ատոր :

— Դու իմ տեղս ըլլալով ի՛նչ կընէի, բայց կեցիք, ինքն իր կողմէ բան մ'ըբա՛ծ է :

— Մանկամարդ օրիորդին հօրն այնպէս հասկցուցած է թէ իր դատեր յախշտակիչը դուք էք : Ինքզինքը նեցուկ մը ճանցուցած է : Մեռիտօրի Աստանկին մէկ նամակաւ Պօժէ դղեակը ներկայացած է վերջապէս դղեկին պատուահաններուն տակնաւ մը մտնեցուցած և այսպէս բանտարկեալ օրիորդը

փախուցած է, յետոյ զանի ձեզ ծանօթ տան մէջ փակելով
ան ընդ ահ մինչև իր կինն ընելու յանդրնած է :

— Եւ միթէ ատի վատանուն նենգութիւն մը չէ, զոչեց
դ ուրք :

— Չերինն տակ ապահովուած, Տէր իմ, պատասխանեց
աղնուականը իր սովորական համարձակութեամբը :

— Ահ Պիւսի . . . պիտի տեսնայ թէ ինչպէս վրէժս լու-
ծել զիտե՛մ :

— Դուք վրէժ ինդրե՛ք, դե՛ս՝ բանդ, բնաւ այդպիսի բան
մը չէք կրնար ընել :

— Ինչպէ՛ս :

— Իշխանները, Տէր իմ, վրէժ չեն ինդրեք այլ կը պատ-
ժեն : Դուք այդ Մանսրոյի վատանունութիւնը պէտք է յան-
դիմանէք և զինքը պատժէք :

— Եւ ի՞նչ կ'երպով :

— Տը Մեռիտօր օրիորդին երջանկութիւնն իրեն դարձը-
նելով :

— Եւ կրնամ միթէ :

— Անտարակոյս :

— Ինչպէ՛ս :

— Աղատութիւնն իրեն դարձնելով :

— Տեսնենք, բացատրէ ինձ :

— Անկէ հետո բան չկայ, ամուսնութիւնը բռնի եղած է,
ուստի այս ամուսնութիւնը ոչինչ է :

— Իբրաւնք ունիս :

— Խորտակեցէք ուրեմն այդ ամուսնութիւնը, և դուք,
Տէր իմ, բարի աղնուական մը և երեւելի իշխան մը պաշտ-
պանած պիտ'ըլլաք :

— Ահ, ահ, բնաւ կասկածոտ իշխանը, ի՛նչ տաղնայ
և եռանդ, ուրեմն տակէ պէտք ունիք, Պիւսի :

— Ետ երբէք և ոչ իսկ հիւլի շափ, ինձ օգտաւոր եղածը, տէր
իմ, սա է որ չբռուի թէ Լուի տը Բլէրմենը, Պիւսի կոմսը խախ-
տառակ իշխանի մ'ու անսրատու մարդու մը հետ կը տեսնուի :

— Բարի՛ . կը տեսնես : Բայց այս ամուսնութիւնն ի՛նչպէս
ջնջելու է :

— Ատկէ պարզ ի՛նչ կայ, հայրը կը գրգռէք :

— Մեռիտօրի Ռատանի՞կը :

— Ա, յո՛ :

— Բայց Անժուի խորերը կը գտնուի :

— Հոս է Տէր իմ, հոս, այսինքն Փարիզի մէջ :

— Բուքո՞վ :

— Ոչ, իւր դատեր քով : Խօսեցէք իրեն, Տէր իմ, յայտ-
նեցէք թէ կրնայ ձեզ վտահել, թէ իր ցայտօրեայ կարծիքը
սխալ է, այսինքն թէ դուք իրեն թշնամի չէք, այլ պաշտ-
պան մը . որով, ինքը, որ ձեր անունը անդադար կանխիծեր,
պիտի պաշտէ բարի ոգիի մը պէս :

— Այդ մարդն իր երկրին մէջ մեծ ազդեցութեան տէր
մեկն է, բնաւ դուքսը, կըսուի թէ բոլոր նահանգին մէջ հը-
զօր մեկն է :

— Ա, յո՛, Տէր իմ, բայց սա կետը ամէն բանէ յառաջ լաւ
յիշել պէտք էս թէ ինք հայր մ'է, թէ իր դասերիկին թըլ-
ուառութեամբն ինք եւս տարաբաղդ է ու թշուառ :

— Եւ ե՞րբ զինքը կրնամ տեսնել :

— Փարիզ վերադարձե՛դ անմիջապէս վերջը :

— Լաւ :

— Ուրեմն պտտած է, այնպէս չէ՞, Տէր իմ :

— Ա, յո՛ :

— Յանուն աղնուականութեան :

— Յանուն իշխանութեան :

— Եւ ե՞րբ պիտի մեկնիք :

— Ա, յո երեկոյ, կտրասն'ս ինձ :

— Ոչ, ես կանխաւ ճամբայ կելլամ :

— Գնա՛, և պտորատ կեցիր :

— Ամենայն անձնութեամբ, Տէր իմ : Ուր պիտի դըտ-
նամ Չեր Բարձրութիւնը :

— Վաղը, կայսեր արթնցած առեմ, կէս օրին մօտ :

— Կէտ առ կէտ , Տէր իմ , մնաք բարեալ :

Պիւսի վայրկեան մ' իսկ չ'իխախուց , և այն սւղին , զոր դուքան իր դեպակին մէջ քնանալով և տասն և հինգ ժամու մէջ ըրաւ , սիրտը սիրով և ինքութեան զեղուն երիտասարդը հինգ ժամուան մէջ կարեց Փարիզ գարձած ատեն բուպէ մ' առաջ մխիթարելու Ռատանիկն , որուն իր օգնականութիւնը խօստացած էր , և Տիանան , որուն իր կենաց կէտը նուիրելու սխած էր :

Գ Լ Ո Ւ Ն Բ .

ՇԻՅՑ ԼՈՒՎՐԸ ԿՐ ՎԵՐԱԳՈՒՆԱՅ ԵՒ ՆԷՏԻ Գ .

ԹԱԳԱՆՈՐԷՆ ԿՐՆՊՈՒՆՈՒԻ :

Այլ Լուվր քնոյ մէջ ընկզմած էր , վասն զի գեռ ժամը առաւօտեան տասն և մեկն էր , արքունեաց պահակներ , կարծես պղտը թեամբ կը քայլէին . ասպետներն որ դիչերապահ գնդին կառաջնորդէին , հետի կը քայլէին :

Թագաւորն իւր ուխտադնացութենէն խոնջ և վաստակ հանդիստ կ'աւնուր :

Այն ատեն Լուվրի մեծ դրան տակ երկու մարդ ներկայացաւ , մին՝ անհամեմատ թարմութեամբ խրանջակ երկվարի մը և միւրն բոլորովին վրոխրայից անտալուզեան ձիւ մը վրայ նստած էին :

Գրան ճակատին դիմացը կանգ առին և դիտեցին , վասն զի , երկու հակադիր ուղիէ դալով հոն առանձին միմեանց հանդիպեցան :

— Պարն տը Շիրքո , գոչեց ողջունելով ամենէն երիտասարդը , ինչպէ՛ս էք այս առաւօտ :

— Հը՛ , կոմս Պիւսին է : Բայց , ի՛նչ սքանչելիք , պարոն պատասխանեց Շիրքո այնպիսի հեշտամտօրէն և բարեսիրաւ

կան եղանակաւ , որ աշնուականը ոչ այնչափ իւր որպիսութեանը համար ըլլալ՝ որչափ որ իր մեծ տէրն և իր փախուկ մարդն իրեն զգացնելը կիմանար :

— Թագաւորին արթնութիւն տեսնալ կը ա՛ք , պարոն , հարցոց Պիւսի :

— Դո՛ւք ալ , կը գուշակեմ :

— Այ : Ես ա՛րձնժու դուքան տէրը ողջունելու կ'ըամ : Գիտե՛ք որ , պարոն Շիրքո , յարեց Պիւսի ժպտելով , ես Նորին Վեհափառութեան կուսակիցներէն ըլլալու երջանկութիւնը չունիմ : Թագաւորն յանդիմանել կուզեմ և ոչ ձեզ , Պարոն :

Պիւսի ծռեցաւ ,

— Եւ հեռուներէ՛ կըսք , հարցոց Պիւսի : Կըսէին թէ ճանապարհորդութեան մէջ էք :

— Այո՛ , պարոն , կ'որոսայի , յարեց Շիրքո : Բայց , ոչ ապաքէն դուք ալ կը ճանապարհէիք :

— Սրդարեւ , նահանքին մէջ արչաւանը մ'ըրի , հիմա , պարոն , շարունակեց Պիւսի , ինձ ծառայութիւն մը մատուցանելու չափ բարի կրնաք ըլլալ :

— Ինչպէս չէ՞ , ամէն անգամ որ պարոն Պիւսի որեւէ բանի մը համար զիս ուզէ , ինձ մեծ պատիւ ըրած պիտ' ըլլայ , ըսաւ Շիրքո :

— Բարի , Լուվրը կը մտնաք , դուք այս առաւելութիւնը ունիք , մինչդեռ ես նախատեսեալը միայն կրնամ մտնալ , ուրեմն հաճեցէք ա՛րձնժու դքսին ազդարարելու որ զինքը կսպասեմ :

— Պ . դուքս ա՛րձնժու Լուվրն է , և անշուշտ Նորին Վեհափառութեան արթնութեանը կ'սպասէ , ի՛նչ պատճառաւ ինձ հետ չէք մննար ներս , պարոն :

— Թագաւորին դատան դէմքէն կը ստակամ :

— Պա՛հ :

— Սրդարեւ , մինչեւ ցարդ օր մը զիս իր շնորհալից ժըպիտներուն սովորեցուցած չէ :

— Քիչ ատենէն , անհող եղիք , քիչ ատենէն ամէն բան պիտի փոխուի :

— Հա՛, հա, ուրեմն կախարդ մը կամ մեռելահարցուկ մ'էք, պիրոն Եիքօ :

— Երբեմն : Օն , քաջալերուե՛ցէք, եկէք, պարոն Պիւսի :

Արդարեւ ներս մտան , մին դէպ 'ի տ'Սնժու դքսին բնակարանը որ , կարծենք թէ առաջին անգամ մ'ըսած պիտ' ըլլանք , այն սրահն էր , ուր երբեմն Մարգարիտ թագուհին բնակած էր , խկ միւտը դէպ 'ի թագաւորին սենեակը ուղղուեցան :

Հէնրի Պ . քունէն կարթննար , մեծ հնչակը դարկած և ծառաներու ու բարեկամաց խումբ մը կայսերական սենեկէն ներս աճապարած էր , արդէն հաւամսի արդանակն , համեմեալ դիմին և մայից կարկանդակներն պատրաստ էին , Եիքօ , որ իր օգոստափառ տիրոջ քով բոլոր համարձակութիւն ուներ , ներս մտաւ և բարի ըյս ըսելէ յառաջ սկսեց պնակէն ուտել և՛ ոսկի դաւաթէն խմել :

— Ստանան զրկեց , գոչեց կայսրն դարմացմամբ , թեպէտեւ բարկացաւ , կարծեմ , խեղկատակ Եիքօն է , վախըստական մը , թափառական մը , մահապարտ մը :

— Ի՛հ , աղեկ , աղեկ , ի՛նչ էս եղեր ի՛նչ ունիս , տղեկս , ըսաւ Եիքօն իր փոշոտ կոշիկներով անտարբեր կերպով ոսկեայ և մանիշակագոյն ծաղիկներով զարդարուն և ամենալայն դահուռ մէջ նստաւ , ուր արդէն Հէնրի Պ . ինքն ալ նրստած էր , չը մոռնանք ուրեմն Քոյսնեպէն այն փոկրիկ դարձը , ուր եղջերուներ որսալու ելած էինք , մինչդեռ Քոլոնեւացի աւագանիք ալ շուներու որսորդութեան ետեւէ էին : Թայե՛օ , թայե՛օ * . . . :

— Տե՛ս , ահա դժբաղդութիւնը նորէն գլխուս վրայ կը ցուցուի , ըսաւ Հէնրի , ալ բոլոր լսելիքներս անհաճոյ բաներ պիտ' ըլլան , երեք շաբաթ է ի վեր բաւական հանդիստ էի , եկաւ խաղաղութիւնս վրդովեց , թշուառականք :

* Գաղղիացիք շիկրէ որսալու ատեն երբ որբ կոնսնան պրպէս կը պողան :

— Պա՛հ , պա՛հ , ըսաւ Եիքօ , դու միշտ կ'ողբաս , քու հըպատակներէդ մեկուն տեղ պիտի կարծեն քեզ , սառսնան զիս հոս ձգեց , տեսնենք , իմ բացակայութեանս միջոցին ի՛նչ ըրիր իմ փոքրիկ Հէնրիկս , Քաղղիոյ այս դեղեցիկ տէրութիւնն արդեօք ծաղրելի ըլլալու չափ կառավարեցիք :

— Պարոն Եիքօ :

— Հասարակութիւնը լեզու ելա՛ւ , հէ՛ :

— Խեղկատակ :

— Արդեօք այս նորասէր փոքրիկ պարոններէն մեկը կախել տուի՞ք :

— Ս՛հ , կը ներէք , պարոն Քելլուս դքեղ չտեսայ :

— Իբրբու հետ չաւրուինք , պարոն Եիքօ :

— Վերջապէս մեր կամ Հրէից արկղերուն մէջ դրամ մնաց :

— Գեշ չէր ըլլար , զուարճութեան բաւական պէտք ունինք , չարածճի՛ , բաւական մեծ դումար մը պէտք ունի այս կենցաղաւարտութիւնը :

Եւ ախտէին մէջէն ոսկեղօծ պապակին մայից կարկանդակներն լափելէ դադրեցաւ :

Թագաւորը ծիծաղել սկսեց , միշտ այս ծիծաղով կը վերջանար :

— Տեսնենք , ըսաւ թագաւորը , այս երկար բացակայութեանդ միջոցին ի՛նչ գործեր կատարեցիր :

— Երեք արարուածի բաժնուած , փոքր դերի մը յատակադիժը յղացայ , ըսաւ Եիքօ :

Ալարուած առաջին . - Լոկ չապիկ և վարտիք հագած ապախարոյններ մազերնին փետտելով և զիրար կուփելով Լուվրէն Վօնմարթըր կելլէին :

Արարուած երկրորդ . - Միեւնոյն ապախարոյնները մինչև մէջքերնին մերկ և եղեւնեայ փշոտ ձողերով ինքզինքնին խաբաղանելով Վօնմարթըրէն Սէնթ ժէնըվիէյի արալայարանը կիջնան :

Արարուած երրորդ . - Վերջապէս սոյն այս միեւնոյն ապախարոյնները բոլորովին մերկ՝ խտրազանակներով և նուրբ

ու երկար փոփելով միմեանց քամակոսկրին ստակալի հարուած
ներ տեղալով Անթ-ժընէվիէվի արքայարանէն դէպ 'ի Լուվ
րի պալատը կը դառնան :

Արդէն շատ մտածէր էի որ, յանկարծ բազդը փոխուածի
մը պէս, զանոնք կրուէվի հրապարակէն անցունեմ, ուր դա
հիճը անոնց առաջինէն մինչեւ յետինը խորոյիով իսպառ
այրեց, բայց խորհելով որ Տէրը երկնից մէջ սակաւ ինչ Սո
դոմի ծրծումբէն և սակաւիկ մ'եւս Գոմորի կուպրէն պահած
էր, հաւատաքնութեան խարոյիկի կասկարան հաստատելու
հաճոյքն անոր ձեռքէն խլել չէի ուզէր :

— Հաս, պարնաչք, այս նշանաւոր աւուր սպասելով զը
ւարճանանք :

— Եւ նախ տեսնենք թէ ի՞նչ ես եղեր, գիտես որ դքեղ
Փարիզի բոլոր անպատիւ անզուանքը փնտռել տուի :

— Լուվրն ալեկ մը խուզարկեցի՞ր :

— Անտառակ մը, քու բարեկամը, քեզ յարքունիս գրուած
ըլլալու է :

— Ատի անկարելի բան է Հենրի : Բոլոր անառակներն
յարքունիս գրաւողը դու ես :

— Ուրեմն խարուած եմ միթէ :

— Է՛հ, Աստուած իմ, այո, ինչպէս ընդմիջու և ամեն բա
նի վրայ :

— Ձեր ալ սպաշխարելը սլտտի տեսնենք :

— Ստուգիւ, դոյզն ինչ հաւաքի եկած եմ անոր ինչ ըլ
լալը հասկնալու համար և կերդնում որ վերահասու կրցայ
ըլլալ : Բաւական ալ արեղաներ ունիմ : Կործնցար զազիր
կենդանիները :

Այս միջոցին Պ. աբ Մոնտրո թաղաւորին քով գնաց և
ամենայն ակնածութեամբ ազլունեց :

— Ա՛հ, դուք էք, պարոն արքան որտղապետ, ըսաւ
Հենրին, միզի ե՞րբ զիղեցիկ որսեր պիտ' ընել տաք, աեսնենք :

— Երբ որ Ձեր Վեհախառութիւնը հաճի, լուր կառնում որ
Ան-ժէրմէն-ան Լէի մէջ վարալներ որսալու չափ ոյժ ունինք :

— Խիստ վտանգաւոր է վարալի որտղու թիւնը, ըսաւ
Շիրօ : Կը յիշեմ որ Կարոլոս Թ. որ մը վարալի որտղու
թեան ելած ժամանակ մահու ընէ հազիւ պրծաւ, երկրորդ
որտղական սուխններն խիստ կարծր են, և մեր ձեռքերուն
մէջ պաշարներ կը հանեն, այնպէս չէ՞ տղեկս :

Պ. աբ Մոնտրո դժեղակ նայուածք մը նետեց Շիրօին :

— Յիշէ, ըսաւ Կասքօնացին Հէնրիին, դեռ շատ ժամա
նակ չընք որ որտղապետ գայլու մը հանդիպեցաւ :

— Ինչո՞ւ այդպէս :

— Որովհետեւ Արիստոֆանի բանաստեղծութեան բշթա
յակն ամպին պէս դէմք մը և մանաւանդ աչք մը սոյց տը
ւած է, զարհուրելի բան է :

Պ. աբ Մոնտրո դարձաւ և դունաստ կերպարանօք՝ Շի
րօին ըսաւ :

— Պարոն Շիրօ, խեղկատակութեանց մէջ դեռ խակ եմ,
վասն զի պալատան մէջ քիչ միջոց մը կեցած եմ, և կան
խաւ ձեզ կիմայնեմ որ իմ թաղաւորին ներկայութեանը բս
տորն ալ չեմ ուզեր բնաւ, մանաւանդ՝ խնդիրը երբ իրեն
ծառայելու մասին կը դառնայ :

— Է՛հ լաւ, պարոն, ըսաւ Շիրօն, դուք բոլորովին մեր
հակառակն էք, մինք որ պալատական ենք, վերջին խեղ
կատակութեան վրայ մենք ալ շատ ծիծաղեցանք :

— Եւ ո՞րն է այդ խեղկատակութիւնը, հարցուց Մոնտրօն :

— Ձեզ որտղապետ անուանած է, կը տե՞մաք որ, եթէ
ինէ՛ նուազ խեղկատակ է, դէ՛թ ինէ՛ աւելի յիմար է այո սի
րելի Հէնրիիկիս :

Մոնտրո աչքելի նայուածք մը լարեց Կասքօնացւոյն վրայ
Արդ, օն ուրիմն, ըսաւ Հէնրի, որ վէճ մը կը գուշակէր,
օն ուրիմն քիչ մ'ալ ուրիչ բաներու վրայ խօսիմք :

— Շիրօ՛, ամբարշտութիւն պէտք չէ, ըսաւ թաղաւորը
յանդ խնամական ձայնով :

— Ամբարշտութիւն, ե՛ս, ըսաւ Շիրօն, զնա՛ բանդ, զիս
և կեղեցողիմնի մը աւել կը դնես, մինչդեռ ես զինու մարդ

մ'եմ : Ընդհակառակը ես ձեզ բանէ մը զգուշացնել պէտք եմ տղաս :

— Եւ ինչ բանէ :

— Այն է որ Նօթր-Տամ-տը Շարթրի հետ դէշ կը վարուիս , Հէնրի , ասկեց մեծ գէշութիւն չըլար :

— Ի՞նչպէս այդ :

— Անշուշտ , Նօթր-Տամը երկու շապիկ ունի , որոնք միշտ մեկտեղ գտնուելու սովորութիւնը ունէին զօրք դու զատեցիր իրարմէ : Բու տեղդ ըլլայի , Հէնրի , զանոնք կը միացնէի , և այս բանն ալ կատարուելու համար գրեթէ հրաշք մը պէտք է :

Այս անասնային ակնարկութիւնը որ թագաւորին ա թագուհոյն բաժան մնալին կիմացնէր , թագաւորին բարեկամներուն ծիծաղը շարժեց :

Հէնրի զգայուելով թեւերը բացաւ , աչքերը շիեց և ծիծաղիլ սկսաւ :

— Ալ այս անգամ , չարածծի խեղկատակը իրաւունք ունի , ըսաւ և ուրիշ բանի վրայ խօսիլ սկսաւ :

— Պարոն , ըսաւ յաժ ձայնով Մոնտրօ Եիթօին , կը հաճիք երթալ ինձ սպասել պատուհանին ետեւն առանց նեղանալու :

— Ինչպէ՛ս չէ , Պարոն , ըսաւ Եիթօ , մեծաւ հաճութեամբ :

— Ի՛հ լաւ , ուրեմն մեկդի քաշուինք :

— Սթէ կարելի է , անտառի մը խորը , Պարոն :

— Ձդէ կտտակը , ալ ատոնք անօգուտ են , որովհետեւ ալ անոնց վրայ ծիծաղող մարդ չկայ , ըսաւ Մոնտրօ պատուհանին ետեւ խեղկատակին միանալով , ուր ասի զինքը կանխած էր :

— Երես առ երես եկած ենք , պէտք է ձեւորութիւնը խտտովանիլ , պարոն Եիթօ , պարոն յիմար , պարոն խեղկատակ , ազնուական մը գրեզ կարգելէ , այս բոլոր կը հասկնա՞ք , կարդիւն գձեզ իր վրայ ծիծաղելէ , և անտառին մէջ ժամագրութիւնն ընելէ յառաջ կը հրաւիրէ գրեզ լաւ մը խորհիլ , վասն

զի այդ անտառը , ուր հիմայ զիս առաջնորդել կուզէիք , շարժուն և ուրիշ զանազան բիրեր կը դանուին , որոնք Պ . տը Մայնի կողմէն կրամ խիստ տանջանքներու շարունակութեանը ծառայելու խիստ յարմար են :

— Ա՛հ , ըսաւ Եիթօ առերեւոյթիս առանց յուզմունք մը ցուցնելու , թէեւ իւր սեւ աչքը աղօտ փայլ մ'արձակեց : Ա՛հ , պարոն , կը յիշեցնէք ինչ որ պարոն Մայնին կը պարտիմ , ուրեմն կուզէիք որ անոր եղածիս նման ձե՞զ ալ պարտական ըլլամ , և ձեզ միեւնոյն շարքով յիշողութեանս մէջ գնեմ և իմ երախտագիտութեանս ձեզ ալ հաւասար մաս մը պահեմ :

— Պարոն , ինձ կը թուի թէ ձեր փոխատուներուն գըլխաւորը հաշուել կը մտնաք :

— Այդ զիս կը զարմացնէ , պարոն , վասն զի ես սուր յիշողութիւն մ'ունենալուս վրայ կը պարծիմ , որն է ուրեմն այդ փոխատուն , կաղաչեմ :

— Նիքոյա Պաւիթ տեսուչը :

— Ա՛հ , ատոր համար , կը խարուիք , ըսաւ Եիթօ գժընդակ ծիծաղով մը , ես անոր պարտք չունիմ ընաւ , վըճարւած է :

Այս մեջոյնի երրորդ խօսակից մը զայով բանակցիլ սկսաւ Պիւսին էր :

— Ա՛հ , պարոն Պիւսի , ըսաւ Եիթօ , քիչ մը օգնութեան հասի՞ք : Սհաւասիկ պարոն տը Մոնտրօն զիս խոռված է՝ ինչպէս կը տեսնէք՝ և կուզէ ճիշդ եղջերուի մը նման հալածել , ըսէր իրեն թէ կը սխալի Պարոն Պիւսի , երբ վարազի մը գէժ ելլալ կուզէ և հասկցար թէ վարազը զինքը հալածողին վրան կը յարձակի :

— Պարոն Եիթօ , ըսաւ Պիւսի , կարծեմ որտորդապետին գէժ կը մեղանչէք , երեւակայելով թէ ձեզ ազնուականի տեղ չը գնէր : Պարոն , շարունակեց Պիւսի՝ խօսքն առ կոմսն ուղղելով , պատիւ ունիմ ձեզ խնայնելու որ Պ . Կ'Սնթու գուրքը ձեզ հետ խօսակցիլ կը փախազի :

— Ի՞նչ հետ, ըսաւ Մոնսորո անհանդիստ կերպիւ :

— Այո՛, ձեզ հետ, պարոն, ըսաւ Պիւսի :

Մոնսորո իւր խօսակցին այնպիսի նայուածք մը նետեց, որով կարծես անոր սրտին խորը թափանցել կուզէր, բայց ինքզինք բռնելու ստիպուեցաւ տեսնելով որ Պիւսին աչերն ու ժպիտը պարզութեամբ լի էին :

— Ինչ հետ կընկերանա՞ք, պարոն, հարցուց որսորդապետն աղնուականին :

— Ո՛չ, պարոն, ես հիմայ պիտ' երթամ Կորին Բարձրութեան իմացնելու որ դուք իր հրամանին պիտի համապատասխանէք քանի որ դուք ալ անկեց արտօնութիւն խնդրելու պէտքն ունիք :

Եւ Պիւսի եկածին պէս ալ վերադարձաւ իւր սովորական ճարպիկութեամբը պաշտօնականաց խմբին մէջ սորոսկելով :

Դուքս տ'Անժու իրօք իւր դրասնեակը կ'սպասէր և այն նամակին ը' թերցումը կը կրկնէր ու կը կրկնապատկէր զոր ընթերցողը կը յիշէ :

Դրան ճոնչիւնը լսելով կարծեց թէ Մոնսորոն իր հրամանին կը հնազանդի և նամակը պահեց :

Պիւսին երեւցաւ :

— Լա՛ւ, ըսաւ, դուքսը :

— Լա՛ւ, ահաւասիկ ինքը Տէր իմ' :

— Ամենեւին կասկած մը չընէք :

— Քանի որ կ'զուշանայ ինչպէ՛ս կրնայ կասկածիլ, ըսաւ Պիւսի, ո՛չ ապարէն ձեր արարածն է նա : Զեղումի իբր յօնչէ տոնղձուած՝ չէ՞ք կրնար ոչնչացնել զինքը :

— Անտարակոյս, պատասխանեց դուքսը մտազբազ դէմքով մը զոր միշտ մօտալուտ արկածից վերահաստան իր վրայ կը ներդրածէ փոխանակ հոն հանճար մը պատկերացունելու :

— Երեկունէ նուազ պատժապարտ կը կարծէք :

— Հարիւրապատիկ աւելի, իւր ոճիքներն այն կարգէն են որոց վրայ մարդ որչափ որ խորհի այնչափ ստուկի կերեւան :

— Այլ նաեւ, ըսաւ Պիւսի, այս ամենը մեկ կէտի վրայ կը կայանայ, նա աղնուական օրիորդ մը առեւանդած է նենդութեամբ և աղնուականի մ'անվայել եղանակաւ իբր պոռնիկի մը՝ անոր հետ ամուսնացած է, այս ամուսնութեան լուծումը կամ նոյն իսկ ինքը պիտի պահանջէ և կամ դուք անկէց պիտի պահանջէք :

— Այդպէս ըլլալ կ'մնայ :

— Յանուն հօր, յանուն մանկամարդ օրիորդին, յանուն Մեռիտոր գղեկին և յանուն Տիանայի վատահ ըլլամ ձեր խօսումն :

— Վատահ եղի՛ք :

— Մտածեցէք որ ատոնք խմանելով մեծաւ անձկութեամբ ձեր այդ մարդու հետ տեսութեան հետեւանքն հասկնալ կուզեն :

— Օրիորդը պիտ' ազատի, Պիւսի, դրսու կը դնեմ այսպէս :

— Ա՛հ, ըսաւ Պիւսի, եթէ այդ բանն ընէք, իրօք երեւելի եղխան մ' եղած կըլլաք, Տէ՛ր իմ' :

— Եւ դըսին ձեռքը բռնելով, այն ձեռքը որ շատ մ' ապարդիւն խօստուսներ ըրած, և շատ մը երդումներու դըրժած էր, մեծաւ յարգանք համբուրեց զանի :

ձիշտ այս միջոցին գաւթին մէջ ոտնաձայն մը լսուեցաւ :

— Ահա կ'դայ :

— Պ. ար Մոնսորոն ներս հրամցուցէք, դուշեց Յուսնուա խօսութեամբ, որմէ, Պիւսի մեծ հաճոյք զգաց :

Իսկ այս անգամ, աղնուական երխտասարդը, դրեթէ վերջապէս իւր բազձայած նպատակին հասնելու ապահով, Մոնսորոն բարեւելու առնն իր նայուածքը թեթեւ հեղնական և դուող խոժոռք մը ցուցնելէ չլքցաւ զսպել : Որսորդապետը փոխադարձաբար Պիւսին բարեւեց, այն ապակէնման նայուացքով, որուն ետին իր հոգոյն զգայմունքներն թաղուած էին անառիկ ամբողջի մ'ետին պահուածի նման :

Պիւսի դարձեալ տանը նոյն նրբուղիին մէջ սպասեց, ուր Մոլ, դիչեր մը, կարլոս իններորդէն, Հէնրի երրորդէն,

տ՝Ալէնսոն և ալ Ալիզ դըբերէն Մայր Թագուհոյն բազմահան-
դոյց լարովը խեղդուելէ հազիւ կրցաւ ազատիլ : Այս նրբու-
ղին որ զցապաւանեչի մը կը նմանէր , այն միջոցին դըբին , ի-
րենց յարգանքները մատուցանելու փութացող աշուական-
ներով խախտուած էր :

Պիւսին ալ ասոնց հետ բազմեցաւ , ուր ամեն մեկը աճա-
պարեց իւր տեղն անոր հրամցնելու անքան յարգանք , որ
ի շնորհս տ՝Անժու դըբին , նոյն խկ անոր քով մատուցուած-
ներէն ալ կրկնապատիկ էին : Ազնուականը բոլոր այս յար-
գանաց անզգայ երեւցաւ , և իւր սրտին մէջ կեղըրոնացող
յուզմանց և ոչ մին անոնց չզգացունելով , այս արքայաժողո-
վին ելիցը կապատէր , որմէ իւր բոլոր ապագայ երջանկու-
թիւնը կախուած էր :

Խօսակցութիւնը հետզհետէ կը տաքնար , Պիւսի հետա-
քրքիր կերպով կապատէր թէ մի՞ դուցէ Պ . ալ Մոնսորո բա-
նակաւի մը հանէ : Բայց , վերջապէս , տեսաւ որ նա ձեռքը
միայն տ՝Անժու դըբին տալով շտտացաւ և եթէ չխոնարհէր ,
է՛հ լաւ , այն ատեն փոթորիկ մը պիտո՞ սկսէր :

Յանկարծ իշխանին ձայնը թնդաց , որ , կարծես , կը հը-
րամայէր , Պիւսի ուրախութենէն հիացաւ :

— Ա՛հ , ըսաւ , ահաւասիկ դուքսը իր խոտուամը կը պահէ :

Բայց այս ձայնը չկրկնուեցաւ , և որովհետեւ ամեն մարդ
անհամբեր ոգւով լռիկ մնլիկ վասնանը կը դիտէր , անմի-
ջապէս պալատականաց մէջ խորին լուսթիւն մը տիրեց :

Իւր երազոյ մէջ խռովայոյզ և անհանդիստ , այս վարկե-
շին յուսոյ տեղատուութեան և երկիւղի մտկնթացութեանց
մէջ տարուբեր , Պիւսի քառորդի մը չափ բոպէ առ բոպէ
ժամանակի սահումն գրաց :

Պըբին սենեկին դուռը յանկարծ բացուեցաւ և սենեակին
խորը վարագոյցներուն մէջէն ուրախութեան ձայն մը լսուեցաւ :

Պիւսի քաջ դիտէր որ դուքսն ու որսորդապետն առանձին
էին , և եթէ խօսակցութիւնն իւր սովորական ընթացքն ալ
չարուսակէր , տակաւին ինչ ութիւն րան մը չկայր :

Այս փոփոխութիւնը զինքը սոսկացուց :

Չայնէրն հետզհետէ մտտեցան , վարագոյցը բացուեցաւ ,
Մոնսորո յետ յետ երթալով և բարեւելով դուքս ելաւ :

Դուքսը զայն մինչեւ սենեկին դուռն առաջնորդեց ը-
սելով .

— Երթար բարեաւ , բարեկամդ իմ , պատշաճ եղածն
ալ այս էր :

— Բարեկամդ իմ , քրթմնչեց Պիւսի , երկիւղ , ի՞նչ կը
նշանակէ այս :

— Այսպէս , Տէր իմ , ըսաւ Մոնսորո . միշտ դէպ' իշ-
խանը դառնալով , ասի բուն խկ Ձեր Բարձրութեան խոր-
հուրդն է . հիմայ այս ամենալաւ միջոցը հրապարակելն է :

— Այո՛ , այո՛ , ըսաւ դուքսը , բոլոր այս դաղանիքներն
աղայական խաղեր են :

— Աւրեմն , ըսաւ որսորդապետը , այս երեկոյն շուտը
չկայ , թողաւորին պիտի ներկայայնեմ' զինքը :

— Քալէ՛ առանց երկիւղի , ևս ամեն բան կը պատրաստեմ' :
Դուքսը որսորդապետին ծռելով անոր ակամկէն վարքանի
մը բառ բառ :

— Սմեն բան լմացած է , Տէր իմ , պատառխանեց միւսը :
Մոնսորո վերջին անգամ' ալ բարեւեց դուքսը , որ բազ-
մահանները կը դիտէր առանց տեսնելու Պիւսին , որ վարա-
գոյրի մը ծայրերուն մէջ պահուած' չիյնալու համար զանոնք
ամուր մը բռնելու կը ջանար :

— Պարոնայք , ըսաւ Մոնսորո ազնուականներուն դառ-
նալով , որ իրեն կարգին կապատէին և արդէն կը խոնարհէին
բաղդաւորին առջեւ , որոյ քայլերուն տակ , կարծես , Պիւսի
իսաւքը կը նսեմանար , Պարոնայք , ներեցեք որ ձեզի լուր
մը հաղորդեմ' , Մոնսինեօն ինձ արտօնութիւն կ'ուսայ Տիմաս
ալ Վեախտորի հետ ամուսնութիւնս հրապարակեմ' , որն որ
ամիսէ մ' ի վեր արդէն իմ կ'լնու է , և զոր ապշակալանութեան
պատրուանօք այս երեկոյ արքունեաց պիտի ներկայայնեմ' :

Պիւսի գողգոսց , թէեւ հարուստն արդէն տնակնկալ չէր ,

բայց և այնպէս այն աստիճան ուժգին էր՝ որ կարծեց թէ զինքը պիտի խորտակէ :

— Եւ ահա այն ատեն գլուխն երկնցուց և դուքան ու ինք իրարու բոլորովին ներհակ զգացմամբք սատոխի դունատած՝ երկուստէք Պիւսիի կողմէն անարգանաց և տ'Անժու դքսին կողմէն ալ սարախանաց ակնարկներ փոխանարկուեցան :

Մոնսորո ակնուակնանաց խռմբը ճեղքեց յարգանաց և շընորհակալութեան ցոյցեր ընդունելով իր շուրջերէն :

Իսկ Պիւսի դքսին երթալու շարժում մ'ըբաւ, բայց դուքսըն այս շարժումը տեսնելով արդիւնց վարագոյրը ձգելով, միւեւեւոյն միջոցին վարագոյրն ետեւէն դուռը դոցուեցաւ և բանալիին իր կշարանքին մէջ դառնալու ճոնչիւնը լուեցաւ :

Նոյն միջոցին Պիւսի իւր արեան իր դանքերուն և սրտին մէջ շերմագին և խռովալիւր շրջանն զգաց : Չեռքը մէջքէն կանխուած դաշոյնին պատահելով՝ մերկնայօրէն կէս մը պատուանէն դուրս քաչեց զայն, որովհետեւ այս մարդուն քով կիբքը որչափ որ ուժգնայոյզ և անդիմադրելի էր, բայց և այնպէս սէրը՝ որ զինքն այս աստիճան կատաղեցուցած էր բոլոր իւր զօրութիւնը անդամալոյժ ըրաւ . դառն, խորին և սուր կսկիծ մ' իր բարկութիւնը խեղդեց, որով փոխանակ սիրտը զայրանալու՝ իջաւ :

Այս երկու ընդդիմամարտ կրից մէջ երկուստարդին աշխոյժը մարեցաւ, նման այն երկու կատաղի ալեաց, որ իրար կ'բաղխեն շարունակ մինչեւ որ իրենց վերջին աստիճանը բարձրանան, այնպէս որ կարծես մինչեւ երկինք հասնիլ ուզելու ատեն կ'իշնան :


Պիւսի հասկցաւ որ եթէ տակաւին հոն մտար, իւր անխորհուրդ վիշտը տեսարան մը պիտ' ըլլայ, ուստի նրբուղիին գիծը բռնեց, թաղուն սանդուխին գլուխն հասաւ, պարսպին դազանի դռնէն Լուլքի պարան իջաւ, թռաւ ձիուն վրայ, և քառարչաւ Անթ-Անթուան փողոցին ճամբան բռնեց :

Ստանիկն ու Տիանան Պիւսիի խոտացած պատասխանին կ'սպասէին, հեռուէն նշմարեցին երկուստորդը, որ գունատ,

տխրադէմ՝ և հրացայտ աչերով յառաջ կ'դար :

— Տիկի'ն, ատեցէ՛ք զիս, նախատեցէ՛ք զիս, ես այս աշխարհէս մէջ ինքզինքս բան մը կը կարծէի, բայց հիւլէ մ'եմ եղեր, ես կը կարծէի թէ ձեռքէս բան մը կ'դար, բայց սրտիս անգամ չեմ կրնար իշխել : Տիկի'ն, դուք Պ. տը Մոնսորօի իսկ կիսն էք, իւր օրինաւոր կիւնը որ դեռ նոր հրապարակուեցաւ, և այս երեկոյ պիտի ներկայանաք իրր ամուսինը : Բայց ես օղորմելի յիմար մ'եմ, անմիտ և անխորհուրդ թըշուառ մը, մանաւանդ թէ, այո՛, ինչպէս որ կըսէիք, Պարոն ստանիկ, ահա տ'Անժու դուքսը մեղմ և վատ անձ մ'է :

Իսկ Պիւսի, թողով հայրն ու աղջիկն զարհուրած, վիշտէն ցնորած, կատաղութեամբ զինովցած դուրս ելաւ սենեկէն, սլացաւ ասպատաններուն վրայ, ցատկեց ձիուն վրայ, իր երկու ճանաչները զարկաւ ձիուն փօրին և առանց ուր երթալիքը գիտնալու, սանձարձակ արշաւել սկսեց իր կուրծքին բաբախմունքը հանգարտեցնել ճգնելէ զատ ուրիշ բանի ուշ չ'տալով, հեռացաւ և աներեւութացաւ իւր հետքերուն վրայ կարծես սոսկում և ցնօքք սփռելով :



Յ Լ Ո Ւ Ն Թ .

ԻՆՁ ՈՐ ՏԵՂԻ ՌԻՆԵՅԱԻ ՄԹԵՍԻՆԵՅՈՐ ԴՈՒՐՍ Տ'ԱՆՅՈՒԻ ԵՒ ՌՍՍՈՐԻԱՊԵՏԻՆ ՄԷՁ ՏԵՂ,

Հիմայ ժամանակն է որ Պիւսիի նկատմամբ տ'Անժու դքսօսին վարմանց մէջ տեղի ունեցած յանկարծական փոփոխութիւնը յայտնենք :

Դուքսը՝ երբ Պ. տը Մոնսորոն ընդունեց իւր ակնուակնին յորդորները ընդունելէ յետոյ, անոր առաջարկութեանց ամենանպատաւոր արտաբերութեանց աջաւիհած էր :

Իւր դիւրագրգիւ բարկութիւնը հետզհետէ միեւնոյն իր սրտին մէջ հակադէմ կրքերէն կը բորբոքէր . դքսին անձնական պատիւնն արդէն իր վէրքն ընդունած . փոթորիկ մ'երկխլուղը որով Պիւսի Պ. աը Մեռիտօրի անուամբ կապաւնայր . կարծես թէ Ֆռանսուաի բարկութիւնն աւելի վշտագին կերպով կը հարհրէր :

Սրբարեւ , այս ընտելեամբ երկու զգացումներ իրար շաղխուելով անտարակոյս պայթում մը կուտան , երբ սիրտ մը զանոնք վառօթով յտիրած ումից նման կը ներփակէ բաւական հաստատութեամբ և ինք իրմով բաւական անդուութեամբ խցուած պատրաստ կըլլայ , որպէս զի ճնշումն իր աստիճանը կրկնապատկէ :

Ուրեմն Պ. ա' Սքէնսօն որսորդապետն ներս ընդունեց այն խիտտ կերպարանօք , որ արքունեաց մէջ ամենէն անբիւղականն անգամ կը սարսափեցնէ . վասնզի Ֆռանսուաի վըրէժիմնորութեան հետեւանքներն ամէն մարդ զխտէր :

Ձեր Ռարձրութիւնը զիս կանչերէ , ըսաւ Մոնսորօ յետին ծայր հանդարտութեամբ և օթոյներուն վրայ ակնարկ մը ձեռքելով . վասնզի այս մարդը , որ իշխանին հոգին շոյափելու վարժ էր , այն սառ երեւոյթներուն տակ ընածին հուրը կը դուշակէր , և մեկը կրնար ըսել թէ կենդանի էակի դէմքը անդգայ առարկաներու փոխակերպելու համար էր որ սրահին մէջ տիրոջ դիտաւորութեանց վրայ հաշիւ կընէր :

— Մի վախնաք ընաւ Պարոն , ըսաւ դուքը հասկնալով , այդ օթոյներուն ետին մարդ չկայ , կրնանք համարձակօրէն և մանաւանդ ազատօրէն խօսակցիլ :

Մոնսորօ ծռեցաւ .

— Վասն զի դուք աշնիւ սպասաւոր մ'էք , պարոն Որսորդապետ , Ֆռանսուայի և առ իս համակրանք մ'ունիք :

— Կը հաւատամ , Տէր իմ :

— Ես ատր վստահ եմ , Պարոն , դուք էիք , որ բազում ասիթներով ինձ դէմ մեքենայուած գաղտնի դարանն ինձ իմացուցիք , դուք , միշտ ձեր շահը մտնարով , իմ ձեռ-

Նարկութեանցս օգնեցիք :

— Բարձր . . . :

— Գիտեմ : Վերջին անգամ դալով , պիտ' որ ձեզ յիշեցնեմ , վասնզի , ճշմարիտ խօսելով , դուք այնպիսի փափկութիւն մ'ունիք որ ընաւ ձեր վրայ ոչինչ ակնարկութիւն , և ոչ իսկ անուղակի՝ ձեր մատուցած ծառայութիւններն ակն յայտնի չեն ցուցնէր : Վերջին անգամ այն տարարաղբ արկածին համար . . . :

— Ի՞նչ արկած , Տէր իմ :

— Օրիորդ աը Մեռիտօրի այն առեւանգութիւնը , խեղճ աղջիկ :

— Եղովկ մրմնջեց Մոնսորօ , այնպիսի եղանակաւ մ'որ պատասխանը Ֆռանսուայի խօսքերուն խմաստին իսկապէս մօտ չէր :

— Կողբաք զանի , այնպէս չէ՞ , ըսաւ այս վերջինը զանի ապահով կողմ մը կանչելով :

— Միթէ՞ դուք չէիք ողբար , Տէր իմ :

— Ե՛ս , ո՛հ , դուք զիտէք թէ այս աղետալի հաճոյց վրայ որչափ մորմոքեցայ : Եւ տեսէք որչափ է առ ձեզ ունեցած բարեկամութիւնս , որչափ ձեր ծառայութեանէն պէտք ունիմ որ առանց ձեզի մանկամարդը շառեւանդեցի :

Մոնսորօ հարուածն զգաց :

— Տեսնե՛նք , ըսաւ ինքնիրեն , պարզապէս խղճի խայթելուն ատնք :

— Տէր իմ յարեց , ձեր բնածիր բարեսիրտութիւնը զձեզ խիտտ կը վրդովէ , դուք այն օրիորդին մահուան վրայ դեռ խօսք մը չըրէք , ես ինքնին . . . :

— Ինչպէ՞ս :

— Անտարակոյս , դուք բանութիւնը մինչև օրիորդ աը Մեռիտօրի մահը մղելու դիտաւորութիւնը չունէիք :

— Ո՛հ , ո՛չ :

— Ուստի , դիտաւորութիւնը միայն ձեզ կարդարացնէ , Տէր իմ , առի դժբաղդութիւն մ'է , դժբաղդութիւն մ'որ միշտ զիպուածը կը բերէ :

— Եւ, նախ և առաջ, ըստ դուքսը, իր ակնարկը Մոնսորոի սրտին մէջ թաղելով, մահն ամէն բան իր յաւիտենականին մէջ փակեց . . . :

Իբ ձայնին մէջ բառական ճօճումներ ունեցան, այնպէս որ Մոնսորո յանկարծ աչքերը վերցնելով ըստ ինքնիրեն .

— Սսոնը խղճի խայթեր չեն . . . :

— Տէր իմ, կրկնեց, կուզէք որ Ձեր Բարձրութեան հետ ազատ խօսիմ :

— Ինչո՞ւ համար կ'ակնած էիք, ըստ անմիջապէս իշխանը, մեծամտութեան հետ խառնուած զարմանքով մը :

— Յիրաւի, չեմ գիտէր թէ ինչո՞ւ կ'ակնած էի ըստ Մոնսորո :

— Ի՞նչ ըսել կուզէք :

— Ա՛հ, Տէր իմ, ըսել կուզեմ թէ իր սրտի աղնուութեան հետ հանճարովի ալ հոյակապ իշխանի մը քով համարձակութիւնն այս խօսակցութեան մէջ իրը գլխաւոր տարր մը պէտք է դառնաի այսուհետեւ :

— Ս, յա՞նճետեւ . . . Ի՞նչ կը նշանակէ :

— Սա է որ, յառաջ, Ձեր Բարձրութիւնը այս համարձակութեամբ ինձ հետ վարուելու հարկը չդատեց :

— Ստուգիւ, պատասխանեց դուքսը, յարմար կերպիւ այնպիսի ծիծաղ մը փրցունելով որ ահաղին, բարկութիւն մը կը դուշակէր :

— Լսեցէք ինձ Տէր իմ, ըստ Մոնսորո հեղօրէն, կը հասկրնամ ինչ որ Ձեր Բարձրութիւնն ինձ ըսել կուզէր :

— Խօսեցէք ուրեմն, ուրի՞շ :

— Ձեր Բարձրութիւնն ինձ իմացնել կուզէր թէ օրիորդ տը Մեռեսորո թերեւս մեռած չըլլայ, և թէ իր կարծեցեալ դատաճանները խղճի խայթերէն ազատ թողած ըլլան :

— Ա՛հ, որպիսի ժամանակի մէջ այդ սիրտիչ յայտնութիւնն ընել տուիք ինձ : Հաւատարիմ ծառայ մ'էք դուք ճշմարիտ, զիս տխուր և վշտալից տեսար, այդ կենոյ մահւանէն ՚ի վեր ըրածս դառն երազներուս վրայ խօսեցար ինձ :

ինձ, որոյ զգայունութիւնը դուհիկի չէ, փասք Սսոնոյ . . . և զիս այսպէս սպրեւու թող տուիք, մինչդեռ մինակ այդ տարակուսանօք ինձ չափազանց տարապանքներ կրնայիք առթել . . . : Ի՞նչ անուն պէտք է տամ այդ ընթացքին, Պարոն . . . :

Գուքսն բարձր այս խօսքերը հեղձամղձուկ բարկութեան մ' երեւութովը արտասանեց, որ պոթկալու շատ մօտ էր :

— Տէր իմ, պատասխանեց Մոնսորո, լսեցի որ Ձեր Բարձրութիւնն ինձ դեմ ամբաստանութիւն մը կընէ . . . :

— Նենդաւոր, դոչեց յանկարծ դուքսը, դէպ' որսորդապետը քայլ մ'ընելով, կամբաստանեմ և կը պնդեմ . . . : Ձիս պատրեցիք, իմ սիրած կինս ձեռքէս յափշտակեցիք :

Մոնսորո սարսափելի կերպիւ տժգունեցաւ, բայց ընաւ իւր հանդարտ և գրեթէ խրոխտ դիրքը չը շիտեց :

— Ճշմարիտ է, ըստ :

— Ա՛հ, ճշմարիտ է . . . լի՛րը, խաբեքայ :

— Հաճեցէք քիչ մը կամաց խօսիլ, Տէր իմ, ըստ Մոնսորո միշտ միեւնոյն հանդարտութեամբ : Ձեր Բարձրութիւնը կը մոռնայ որ աղնուականի մը, սիրելի ծառայի մը հետ կը խօսի :

Գուքսն ջգածդօրէն ծիծաղիլ սկսեց :

— Թագաւորին սիրելի ծառայի մը հետ, շարունակեց Մոնսորո աւելի հանդարտ և առանց կրից քան ինչ որ էր այս սոսկալի սպառնալիքը լսելէ յառաջ :

Գուքսը մինակ այս խօսքին վրայ կանդ առաւ :

— Ի՞նչ ըսել կուզէք, քրթ մայեց :

— Ըսել կուզեմ, կրկնեց Մոնսորո, քաղցրութեամբ և յարգական եղանակաւ, որ եթէ Ձեր Տէրութիւնը կը հաճի ինձ մտիկ ընել, պիտի հասկնայ որ ես նոյն կինը աններու կարողացայ, որովհետեւ Նորին Բարձրութիւնն ինք զայն առնուլ կուզէր :

Ս, յապիսի յանդգնութենէ ապշած դուքսը ոչինչ պատասխան մը տալու չկրցաւ դտնալ :

— Ահաւասիկ իմ պատասխանատուութիւնս, ըստ իտ . . .

նարհարար որսորդացեան, օրիորդ տը Մէոխտօրն չափազանց կը սիրէի . . . :

— Ե՛ս ալ, պատասխանեց Յռանսուա աննկարելի արժաւաւորութեամբ մը :

— Ստոյգ է, Տէր իմ, դուք իմ տէրս էք, բայց օրիորդ տը Մէոխտօրն զձեզ չէր սիրէր :

— Եւ քեզ կը սիրէ՞ր :

— Կարելի է, մըննջեց Մոնտորո :

— Կը ստե՛ս, սուա կը խօսիս, իմ բռնադարածիս պէս դուք ալ զանի բռնաբարեցիք : Միմիայն, ես, Տէր, ես սխալեցայ, դու, ծառայ, դու յաջողեցար : Ես միայն զօրութիւն տւնիմ, մինչդեռ դու դաւաճանութիւն մ'ունիս :

— Տէր իմ, կը սիրէի :

— Ի՞նչ հոգս, ե՛ս :

— Տէ՛ր . . . :

— Սպառնայի՛ք, օ՛ձ :

— Տէր իմ, զդուչացիք, ըսաւ Մոնտորո գլուխը կախելով վաղբի նման որ իւր ոյժին վրայ կը մտածէ : Կը սիրէի, կը սիրեմ, ձեզ, և ես, ձեր քիչ մ'առաջ ըսածին պէս, ձեր ծառաներէն մեկը չեմ : Իմ կինս իմ կարուածիս պէս իմն է, ոչ որ զայն ինէ չկրնար կողոպտել, և ոչ իսկ թագաւորը : Արդ, ես այդ կինը առնուլ ուղեցի և առի :

— Ստուգիւ, ըսաւ Յռանսուա դէպ ՚ի գրասեղանին վրայ գրուած արժաթեայ հնչակն ոստերով, առ իր, շատ աղէկ, պիտ' առնուս զայն :

— Կը խարտիք, Տէր իմ, դուչեց Մոնտորո դէպ ՚ի գրասեղանը դահաւիթեւով որպէսզի իշխանն զանգակն հնչելէ արդիլէ : Հեռացուցէք այդ վատ գաղաքարը որ զիս սեւցնել կուզէ՛ք, վասնզի եթէ անդամ մը հնչէիք, եթէ անդամ մը հրապարակաւ զիս նախատէիք . . . :

— Ես պիտի դարձնես այդ կինը, կըսեմ քեզ :

— Ես դարձնե՛լ, ինչպէ՛ս . . . : Ստի իմ կինս է, առաջի Սասուծոյ հեան ամուսնացած եմ :

Մոնտորո այս խօսքէն արդիւնք մը կը յուար, բայց իշխանն իր ցամախըր գէրքը երբեք չիփխեց :

— Եթէ առաջի Սասուծոյ քու կինդ է, ըսաւ, պէտք է ամենուն ներկայայցես զանի :

— Ամէ՛ն բան գիտէ ուրեմն, մըմուտց Մոնտորո :

— Այո՛, ամէն բան գիտեմ : Այդ ամուսնութիւնը պէտք է խորտակես, պիտի խորտակեմ, բոլոր երկնից տիրող աստուածոց առջեւ դրաւ կը դնէ՛ք հարիւր անդամ :

— Ա՛հ, Տէր իմ, կը հայհոյեք, ըսաւ Մոնտորո :

— Վաղը, օրիորդ տը Մէոխտօր պէտք է իւր հօր վերահաւանայ, վաղը, ձեզ սրոշած օքսօցս պիտ' երթար : Մեկ ժամուան մէջ, յանձն առած որսորդապետութիւնդ պիտի ծախես, ահա իմ ընթացքս, սոպ թէ ոչ, զդուչացիր, սա ապակին խորտակածի նման դքեզ կը խորտակեմ :

Եւ իշխանը, գրակնտիկանիւ արծնած ակնվանի մը ձեռքը դարձով, որ Սււարիոյ աբբի դքսին նուիրածն էր, կատարի նման դէպ ի Մոնտորոն լարեց, որն որ ինքզինքն իր թեւերուն տակ ծածկեց :

— Աչ կինը ետ պիտի դարձնեմ, ոչ պաշտօնս պիտի ձքեմ և ոչ Գաղիայէն դուրս պիտ' ելեմ, կրկնեց Մոնտորո զարհուրած կերպով Յռանսուայի վրան վազելով :

— Ինչո՞ւ համար այդպէս . . . անիծեալ :

— Արովհետեւ իմ շնորհս Գաղիոյ թագաւորէն կսպասեմ թագաւոր է մը, որ Մէնթ-ժէնըրվիէվի արքայարանէն ընտրուած է և որ վերին նախահնամուժեան օգնութեամբն այս նոր, հզօր, բարի, երջանիկ և մանուսնդ նորոտիր թագաւորը, քաջ զիտեմ որ, իրեն ներկայացուած առաջին աղերսազ իրն ընաւ չպիտի մերժէ :

Մոնտորո այս ահարկիւ բառերը աստիճանաբար շեշտած էր, իր աչքերուն բոցը տակաւ առ տակաւ իր բաւերուն անցած էր, որ կը շողային :

Յռանսուա իր կողմէն գունատեցաւ, դէպ ՚ի յետ քայլ մ'ըրաւ, մտից դրան ծանր օթոցը քաշելու դնաց, յետոյ

Մոնստրօին ձեռքը բռնելով ըսաւ իւրաքանչիւր բառ այնպէս կցկաւուր թոթովելով, որպէս թէ իր զօրութեանց ծայրն եղած ըլլար :

— Լաւ է . . . լաւ է . . . կոմս, լաւ է այսպէս զերան, ցած ձայնով մ'ինձ ներկայացուր ատի . . . ձեզ մօտիկ կ'ընեմ :

— Խոնարհաբար պիտի խօսիմ, ըսաւ Մոնստրօ, որ մեկէն ի մէկ հանդարտած էր, խոնարհաբար, ինչպէս Ձեր Բարձրութեան ամենախոնարհ ծառաներէն մեկուն վայել է :

Ֆռանտա ընդարձակ սենեկին մէջ ծանր շրջան մ'ըրաւ և քանի որ օթոյներուն ետին տեսնալու կը մօտենար, ամեն անգամ կը նայէր : Ս,յնպէս կը թուէր թէ Մոնստրօի խօսքերը չլսուելուն չէր կըրնար հաւատալ :

— Կըսէիք թէ, ըսաւ :

— Կըսէի թէ, Տէր իմ, աղետալի սէր մ'ամէն բան ընել առաւ : Մէրը, Տէր իմ, կրից ամենէն խրոխտ տեսալին է . . . Ձեր Բարձրութեան Տիանայի աչք ունենալը ինձ մոռցնելու համար պէտք էր որ ես իմ անձին տէրը չըլլայի :

— Կըսէի ձեզ թէ, կոմս, ասի նենդութիւն մ'է :

— Չիս մի՛ մեղադրէք, Տէր իմ ահա կը տեսնաք թէ ի՞նչ գաղաբար դիս պաշարեր է :

Չձեզ հարուստ, երիտասարդ և երջանիկ կը տեսնայի, դձեզ աշխարհի առաջին քրիտոնեայ իշխանը կը դատէի :

Դուքսը շարժում մ'ըրաւ :

— Սրբէն այնպէս էք . . . մոռնալեց Մոնստրօ դքսին ականջն ի վայր, այս վերագոյն կարգին և ձեր մէջ միայն մէկ ստուեր մը կայ, ստուեր մը դիւրայնդին . . . Ձեր ապագային բոլոր պայծառութիւնը կը տեսնայի, և այդ անհուն բաղդը իմ փառասիրութեան դուզնաբեայ առարկային հետ բաղդատելով ձեր ապառնի ճաճանչներէն շլացած, որ դրեթէ հէզ փոքրիկ ծաղիկը, տեսնայէ կ'արդիլէր, ես, որ ձեր մօտ ոչինչ եմ, Տէր իմ, ես ըսի ինքնին : Թողունք իշխանն իր փայլուն երազներուն, իր շողշողուն յատակազծերու հրապուրին, հոն իւր նպատակը, ես որոնեմ իմինս ստուերի մէջ . . . Հալիւ պիտի

տեսնայ նենդութիւնս, հալիւ պիտի զգայ փոքրիկ և աննշան մարդարտին սահումը, զոր ես իւր արքայական ապարօշնբուն մեջէն կը գողնամ :

— Կոմս, կոմս, ըսաւ դուքսը ընդհակառակն անոր այս մոգական նկարագրութենէն հրապուրուելով :

— Կընելէ՛ք ինձ, այնպիս չէ՞, Տէր իմ :

Ս,յս վարկենին դուքսն աչքերը վեր վերցուց : Ռակեզոժ կաշիով դրուագուն պատին վրայ Պիւսիի պատկերը տեսաւ, որուն երբեմն նայելը կը սիրէր, ինչպէս երբեմն կը սիրէր նա յիլ Մօլէի պատկերին : Ս,յս պատկերը այնպիսի վեհ նայւածք մը, այնպիսի բարձր գիրք մը, իր բազուկը տապալին վրայ բոլորածու դրուած այնպիսի վեհութիւն մ'ունէր որ դուքսը՝ նոյն իսկ կենդանի Պիւսին իւր հրապառ աչերովը տեսնալ կարծեց, Պիւսի՛ քաջալերութիւն ներշնչելու համար որմէն դուքս կուգար :

— Ո՛չ, չեմ կրնար ներել ձեզ, ըսաւ, խստութիւն բանեցնելը Ս,ստուած դիտէ ինձ համար չէ, ասի սգաւոր հօր մը շարաչար կերպով խորդաւանուած հօր մը համար է, նա իւր աղիլիկը կը պահանջէ, կ'նոյ՛ մը, ձեզմով բունի ամուսնութեան դատապարտուած կ'նոյ՛ մը համար է, որ ձեզ դէմ վրէժ կը գոչէ, վերջապէս, մէկ խօսքով, անոր համար է որ իշխանի մը առաջին պարտաւորութիւնը արդարութիւնն է :

— Տէ՛ր :

— Իշխանի մը, կըսեմ ձեզ, առաջին պարտաւորութիւնն է, Ռեստի արդարութիւն ընել պէտք եմ . . . :

— Եթէ, ըսաւ Մոնստրօ, արդարութիւնը իշխանի մը առաջին պարտաւորութիւնն է, երախտագիտութիւնն ալ թագաւորի նախնական պարտաւորութիւնն է :

— Ի՞նչ կըսէք :

— Կըսեմ թէ թագաւոր մը երբէք պէտք չէ մոռնայ այն անձը որուն խօր պատկը կը պարտի . . . : Սրբ, Տէր իմ . . . :

— Ի՞նչ . . . :

— Պսակն ինձ կը պարտիք, Տէ՛ր արքայ :

— Մոնսորո, գոչեց դուքսը ևս աւելի մեծ ստեղծմով,
դուն որ առջին անգամներուն որսորդապետին հետ դիմամարտե-
տելովն ըրած էր, Մոնսորո՛, կրկնեց ցած և դողդոջոյն ձայ-
նով, ուրեմն իշխանի մը դէմ նենգաւոր գտնուելուդ նման,
թագաւորի մը դէմ ալ նենգաւոր կըլլաք :

— Զիս հոգացողին հետ կը կապուիմ միայն, շարունակեց
Մոնսորո հետդհետէ բարձրահնչուն ձայնով մը :

— Թշուառակա՛ն :

Եւ դուքսն անգամ մ'ալ Պիւսիին պատկերը դիտեց :

Ձեմ կրնար, ըսաւ . . . : Գուք օրինաւոր աշնուական մ'էք,
Մոնսորո, կը հասկնար որ ձեր ըրածին չեմ կրնար հաւանու-
թիւն տալ :

— Ինչո՞ւ համար ատի, տէր իմ :

Վասնզի ասի՛ անվայել գործ մ'է թէ ձեզ և թէ ինձ . . . :
Հրածարեցեք այդ կինէն : Կ'հ, իմ սիրելի կոմս . . . այս զոհը
տակաւին սիրելիք իմ կոմս, ևս անոր փոխարէն, միշտ ինչ որ
պահանջէք, պիտի հատուցանեմ . . . :

— Ուրեմն Ձեր Բաճրութիւնը Տիանայ տը Մեռիտորն կը
սիրէ՞ տակաւին, ըսաւ Մոնսորո նախանձէն դժոխուած :

— Ա՛հ, ոչ, կերդնում, ոչ :

— Ի՛հ լաւ, այն ատեն ո՞վ կրնայ արդիլել Ձեր Բարձրու-
թիւնը : Նա իմ կինս է, ևս բարի աշնուական մը չեմ, ո՞վ
կրնայ իմ կենացս դադտնեաց մէջ թափանձել :

— Բայց զձեզ չը սիրէր :

— Ձեզ ի՛նչ կը վերաբերի :

— Ինձ համար ըրէ՛ ատի, Մոնսորո :

— Ձեմ կրնար :

— Ուստի ըսաւ . . . դուքսը ստեղծող վարանման մը մէջ ըն-
կըմելով . . . ուստի :

— Տայտնեցէ՛ք, Տէր արքայ :

Գուքսն իր ճակատին քրտինքը սրեց, զոր հոն կը թորէին
կոմսին արտասանուած այս տխրոտը :

— Զիս պիտի հրապարակէ՛ք :

— Ձեզ համար գահնկեց թագաւորին, այո՛, Ձեր Վեհա-
փառութիւնը, վասնզի, և թէ նոր իշխանն իմ պատիւս և իմ
երջանկութիւնն վերաւորէր, ևս նախնոյն պիտի դառնայի :

— Վատութիւն է :

— Ըջմարիտ է, Տէր արքայ, վատ ըլլալու չափ ալ կը
սիրեմ :

— Մեղիութիւն է :

— Այո՛, Ձեր Վեհափառութիւնը, բայց մեղի մ'ըլլալու
չափ ալ կը սիրեմ :

Գուքսը դէպ ՚ի Մոնսորո շարժում մ'ըրաւ : Բայց ասի
զինքը կեցուց մեկ ակնարկով, և մեկ ծիծաղով :

— Զիս սպաննելով բան մը չէիք շահէր, Տէր իմ, ըսաւ,
կան գաղտնիքներ որ կմախքներու հետ երեւան կեւլին : Գաղ-
րինք ալ, դուք գթութեամբ լի, թագաւոր մ'իտի ևս Ձեր
խոնարհ հպատակներէն մին :

Գուքսն իր մասներն կրարու վրայ ճնշելով խորտակեց,
եղունգներովը զանոնք կը պատուէր :

— Օն, օն, իմ ազնիւ Տէրս, քեզ այնքան բաներու մէջ
հաւատարմարար ծառայող անձի մը բան մ'ընէք :

Յուանուա տարի ելաւ :

— Ի՞նչ կը խնդրէք, ըսաւ :

— Որ Ձեր Վեհափառութիւնը . . . :

— Թշուառակա՛ն, թշուառակա՛ն, ուրեմն կուզէք որ
ձե՞ք պակասը լրացնեմ :

— Ա՛հ, Տէր իմ :

Եւ Մոնսորո խոնարհեցաւ :

— Ը՛մէք, մշմուայ Յուանուա :

— Տէր իմ՝ պիտի ներէ՞ք ինձ :

— Այո՛ :

— Տէր իմ օրիորդ տը Մեռիտորի հետ ամուսնութեան
դաշնագիրը պիտի ստորագրէ՞ք :

— Այո՛, ըսաւ դուքսն հեղձամղձուկ :

— Եւ այն օրը, սր կինս թագուհոյն ներկայացնելու պա-

տիւր ունենալ կուզեմ, գուր ալ մէկ ժպիտով պիտի պատ-
ւէ՞ք զանի :

— Այո, ըսաւ Ֆռանսուա, այս է ամէնը :


— Բոլորը, Տէր իմ :

— Գացէ՛ք, կը խօստանամ :

— Եւ դուք, ըսաւ Մոնսորո դ. քսին ականջին մօտենալով,
պիտի վայելէք այն դահը, ուր ձեզ բաճրացուցի : Մ'ապ բար-
եաւ, Տէր արքայ :

Այո անդամ այնքան կամացուկ հնչեց, որ այս բառին
ներդաշնակութիւնը խիստ քաղցր թուեցաւ իշխանին :

— Հիմայ բան չմնաց, ըսաւ Մոնսորո, բայց եթէ զիտնալ
թէ դուքան ուրկէ ներշնչուած էք :



ԳԼՈՒԽ Ժ .

Միեւնոյն օրը, տ'Անժու դ. քսին յայտնած բաղձանաց հա-
ճեմատ Պ. Մոնսորո իւր կինը Մայր-Թադուհոյն և թագու-
հւոյն ակմբին ներկայացուց :

Հէնրի իր սովորականին համեմատ մտատանջ, յաջորդ օր-
ւան տեղի ունենալիք ընդհանուր ժողովոյ պէտքը Պ. Մօր-
վիլիէէն իմանալուն վրայ ննջելու կը պատրաստուէր :

Հէնրի դիւանապետին հարցում մ' իսկ չըբաւ, երկոյնին
մօտ էր, Նորին Վեհափառութիւնը ննջելու պէտք ունէր,
Թագաւորին թէ քունը թէ հանդիսորը չը խանդարելու հա-
մար դիպող ժամանակ մ' որոշուեցաւ :

Այս բարի մազեւորոսն իւր տէրը լաւ կը ճանէր, զիտէր
որ Գիլիպ տը Մասէտուէնի հակառակ՝ թագաւորը նօթի կամ
ք. քուն եղած ատեն հաղորդելիք տեղեկութիւններն ըստ օրինի
մտիկ չը պիտի ընէր :

Ղիտէր նաեւ որ Հէնրի, որուն դժնութիւններն միշտ ան-
պակաս էին, — ամեն անոնց, որ այլոց քունը հսկելու համար

ինքն անքուն մնալ կը պարտի, այս է սերհական վիճակը, —
գիշերուան մէջ պահանջուած ատեանի մասին պիտի մտա-
ծէր և խնդրոյն ծանրութիւնէն մղուած հետաքրքրութեամբ
մը պիտի կազմէր զանի :

Պ. Մօրվիլիէի զեկուցածին համեմատ ամեն բան անցաւ :

Երեք չորս ժամ աւելին քունը քաշելէ յետոյ Հէնրի արթըն-
ցաւ, դիւանապետին ազդարարութիւնն յիշեց, անկողնոյն
մէջ նստեցաւ, սկսեց խորհիլ, և մենիկ խորհիլէ լքեալ՝ ան-
կողնոյն երկայնութիւնը սողաց, վար իջաւ, մետաքսեայ վար-
տիքն անցուց, և հողաթափներն հագաւ, և առանց իր գիշե-
քայլին զարդերն փոխելու, որոնք զինքն ուրուականի մը պէս
կը ներկայէին, դէպ' իր լամպարի լուսովը, որոնք Անժուի
մէջ Ան-Լիւքի կողմէն Յախտենականութեան շունչը անց-
նելէն իվեր տակաւին չէր մարած, դէպ է Եիքօի սենեակն
ուղղուեցաւ, այն սենեակն, ուր օրիորդ տը Պրէսարի առա-
գասաններն ամենայն երկութեամբ կատարուեցան :

Կատրօնացին խորունկ կը քնանար և գարբնոցի նման
չը խուկար :

Հէնրի առանց արթնոյնէլ կարենալու երեք անդամ թե-
ւէն քաշեց :

Բայց երրորդ անգամուն՝ թագաւորն իր մնացած ձայնը
միացուցած՝ բոլոր զօրութեամբ Եիքօ կանչելովը՝ Կատրօնացին
մեկ աչքը բացաւ :

— Եիքօ, կրկնեց թագաւորը :

— Ղեւ բան կա՞յ, հարցուց Եիքօ :

— Ի՛հ, բարեկամս, ըսաւ Հէնրի, երբ քու թագաւորդ կը
հսկէ դու ատանկ ի՞նչպէս կը քնանաս :

— Ա՛հ, Աստուած իմ, դո՛ւնց Եիքօ ձեւով մ' որ կարծես
թէ թագաւորը չճանչեց, արդեօք Նորին Վեհափառութիւնը
անմարտելի բան մը կեբաւ :

— Եիքօ, բարեկամս, ևս եմ, ըսաւ Հէնրի :

— Ղու ո՞վ ես :

— Ես, Հէնրին :

— Ստուգիւ, որդեակ իմ, ջրական կոտորանքն դքեզ կը խեղդեն, սակայն ես ձեզ կանխազգուցի, երեկ երեկոյ խիստ շատ կերար անոնցմէ ինչպէս խեցդեանին մտի թանէն ալ:

— Ա՛չ, ըսաւ Հէնրի, վասնզի հազիւ ճաշակեցի:

— Ուրեմն, ըսաւ Շիրքօ, քեզ թունաւորած ըլլալու են: Ի՛նչ տարաբաղդութիւն, ս՛րբան ալ դունատ ես, Հէնրի:

— Ատի իմ սովորական դիմակս է, բարեկամս, ըսաւ թագաւորը:

— Ուրեմն հիւանդ չէ՞ք:

— Ա՛չ:

— Հապա, զիս ինչո՞ւ կ'արթնցնես:

— Վասնզի վիշտը զիս կը հալածէ:

— Վի՛շտ ունիս:

— Եստ:

— Ի՛հատ բարի:

— Ինչպէ՞ս խիստ բարի:

— Այո՛, վիշտը արթնութիւն կ'տայ, և այս արթնութիւնը անշուշտ դուք ալ պիտ' ունենաք գիտնալու համար որ առաւօտեան ժամը երկուքին պարկեշտ մարդ մը՝ միայն աւոր ընծայ մը տալու համար կարթնցնեն, Ի՛նչ բերիք ինձ, տեսնենք:

— Ոչինչ, Շիրքօ, քեզ հետ խօսակցելու եկայ:

— Ատի բաւական չէ:

— Շիրքօ, երեկ երեկոյ Պ. Մօրվիլիէ արքունիքն եկաւ:

— Վատ ընկերութիւններ կ'ընդունիս, Հէնրի, և Ի՛նչ ընել կուզէ:

— Ատեան լսնդրելու եկած էր:

— Ահա՛, սպրբելու եղանակը գիտցող մարդ մը, նա ձեզ նման առանց զգուշութեան՝ առաւօտեան ժամն երկուքին ուրիշներու սենեակը մտնող մեկը չէ:

— Արդեօք Ի՛նչ կ'ընայ ըլլալ ինձ ըսելիքը, Շիրքօ:

— Ի՛նչ, թշուառական, գոչեց կասքօնացին, ստի հարցունելու համար զիս արթնցնելու եկար:

— Շիրքօ, բարեկամս, գիտես որ Պ. Մօրվիլիէ իմ օրէնքներուս կը հսկէ:

— Ճշմարիտ կրտսմ, ոչ, ստի ընաւ չէի դիտէր:

— Շիրքօ, ըսաւ թագաւորը, ես, ընդհակառակը կը տեսնամ որ Պ. տը Մօրվիլիէն միշտ նոր ուսմամբ լեցուած անձ մ'է:

— Եւ, ըսաւ կասքօնացին, ես կը խորհիմ որ այդպիսի բարբառմանք մը մտիկ ընելու տեղ կ'ընայի քսանալ:

— Գիւսանապետին հսկողութեանը վրայ կը տարակուսիս, հարցուց Հէնրի:

— Այո՛, չարածձիկ, կը տարակուսիմ, ըսաւ Շիրքօ, և իբրաւուք ալ ունիմ:

— Ի՛նչպէս:

— Եթէ քեզ օրինակ մը ստամ գոհ պիտ' ըլլաս:

— Այո՛, եթէ իրաւացի է:

— Եւ յետոյ զիս հանդիստ պիտի թողուս:

— Անշուշտ:

— Լաւ ուրեմն, օր մը, ոչ, իրիկուն մ' էր:

— Այդ բան մը չէ:

— Ընդհակառակը, կարեւորագոյն ալ այս է, լաւ ուրեմն իրիկուն մը ֆուտաւամանթէլ փողոցին մէջ ձեզ հետ մարտընչեցայ, Քելիւսն ու Սքօմպերի քեզ հետ էին . . .

— Ինձ հետ մարանչեցար . . .

— Այո՛, ձաղկեցի, ձաղկեցի, երեքնիդ ալ:

— Ի՛նչ պատճառաւ:

— Իմ՝ մանկ լաւիկս թշուամանցիք: Հարուածներն ընդուներկը և Պ. Մօրվիլիէ ընաւ քեզ բան մը չխնայուց:

— Ի՛նչ, միթէ դո՞ւ էիր չարագործ, գուցե Հէնրի, գուէկը միթէ, սրբապի՛ղծ:

— Ես ինքօ, ըսաւ Շիրքօ ձեռքերը շփելով, լաւ կ'հարուածեմ երբ հարուածելու կսկսիմ, այնպէս չէ՞, զաւակս:

— Թշուառական:

— Ուրեմն կը խօսողանիս որ իրաւ է:

— Քեզ խարազանել պիտի տամ, Շիրքօ:

— Խնդիրը հող չէ, ըսէ՛ թէ ճշմարիտ է, այո՛ կամ ոչ, միայն այս կը հարցնենք:

— Քաջ գիտես որ ճշմարիտ է, թշուառական:

— Պ. Մօրվիլիէն միւս օր կանչել տուի՞ր:

— Ս. յո՛, անոր եկած միջոցին դու ալ հոն էիր:

— Քու բարեկամներէդ մեկ ազնուականին զարթնում պատճառող զայրայիր եղելութիւնը պատմեցիր իրեն:

— Ս. յո՛:

— Պատժապարտը գտնալ պատուիրեցիր:

— Ս. յո՛:

— Պատա՛ւ:

— Ո՛չ:

— Հը լաւ, գնա՛ պառկէ ուրեմն, Հէնրի, կը տեսնաս որ օրինացդ հսկողութիւնը գէշ վիճակի մէջ է:

Եւ երեսը պատին դառցնելով, առանց նախապէս պատասխանել ուզելու սկսեց խորդալ այնպիսի անհնթեթ ազմուկով մ'որ թաղաւորին՝ զանի երկրորդ արթնութեան առան արթնցնել կարենալու բոլոր յոյսը տուաւ:

Հէնրի հառաչելով իր սենեակը մտաւ, և ուրիշ խօսակից մը չունենալուն, լայր սկսեց իր Նարդեպիտի որսական բարակաւր, այն է, թշուառութիւնը, զոր թաղաւորը՝ ճշմարտութիւնն իրենց հաշուէն դուրս այլոց համար չըխանալովն միշտ ժառանգած են:

Հետեւեալ օրն ժողովը կազմուեցաւ: Թաղաւորին փոփոխ բարեկամութեանց պէս կը փոփոխուէր: Տասն ամիսէ յետ Քէլիսէն, Մօժիրօնէն, Էրերնօնէն և Սքօնպերկէն՝ այս չորսին ի նպաստ կը բաղկանար ժողովը:

Եիբօ սեղանին վերի ծայրը նստած թղտեայ նաւեր կը ձեւէր, և վանոնք, ինչպէս ինք կըսէր, ամենաբաթօլիք թաղաւորին նաւատորմի օրինակին նման, Նորին ամենաբարիատանեայ Վեհախառութեան նաւատորմի մը պատրաստելու համար իրար կը միացունէր:

Պ. Մօրվիլիէ արտասանեց:

Պաշտօնաւորն աւելի նսեմ ձեւ մը և աղօտ կերպարանք առաւ: Եիբօի կողմէն իրեն մատուցուած ողջոյնն ընդունելէ վերջը թաղաւորին մտեցաւ:

— Ձեր Վեհախառութեան խորհրդոյն ներկայութեանը կը գտնուիմ, ըսաւ:

— Ս. յո՛, իմ ազնիւ բարեկամացս ներկայութեանը: Խօսեցէք:

— Լաւ, Տէր արքայ, ապահովութիւն կը պահանջեմ, որուն պէտք ունիմ: Խնդիրը Ձեր Վեհախառութեան խիստ վտանգաւոր դաւադրութեան մը համար է:

— Դաւադրութիւն մը, գոչեցին բոլոր բազմականներն: Եիբօ ակննչները անկեց և երկզլխեան դետական նաւակի մը յօրինուածքը, որով նաւատորմին ծովակալ նաւը շինել կուզէր, առժամանակ մի մեկզի թողուց:

— Դաւադրութիւն մը, այո՛, Վեհախառ Տէր, ըսաւ Պ. Մօրվիլիէ, ձայնը այն խորհրդաւոր եղանակաւր ցածցունելով, որ ահռելի գաղտնիքը կանխաւ գուշակելը կ'իմացնէ:

— Ո՛հ, ո՛հ, ըրաւ թաղաւորը: Տեսնե՛ք, արդեօք սպանիական դաղտնի միաբանութիւն մ'է:

Ս. յս վայրկեանին Պ. դուրս տ'Սանժու, որ խորհուրդի կանչուած էր, սրահը մտաւ, որուն գոներն անմիջապէս գոցուեցան:

— Կը լսէք, եղբայր իմ, ըսաւ Հէնրի հարկ եղած ընդունելութիւնն ըլլալէ վերջը: Պ. Մօրվիլիէ երկրին ապահովութեանը դէմ կազմուած գաղտնի միաբանութեան մ'էութիւնը կը ծանուցանէ:

Դուքնն յամբարբար բոլոր ներկայ անուականաց վրայ այն բոլոր և կասկածական ակնարկը նետեց, որ նորա յատուկ լլլալն արդէն գիտենք:

— Սխիթէ կարելի՞ է... մըմնջեց:

— Եզուկ, այո՛, Տէր իմ, ըսաւ Պ. տը Մօրվիլիէ, այո՛, սպառնալի միաբանութիւն մը, սեւ դաւադրութիւն մը:

— Նկարագրեցէք մեզ ատի, յարեց Եիբօ, իր աւարտած

գետային նաւակն սեղանին վրայ դնուած վանակնայ կոն-
քին մէջ դնելով :

— Այո՛ , թոթովեց տ' Անժու դուքսը , նկարագրեցէք ,
պարոն գիւանապետ :

— Մտիկ կ'ընեմ , ըսաւ :

Գիւանապետն իր ամենաքողուն ձայնը , իր կոր գիրքը և
իր բազմահոգ նայուածքը առաւ :

— Տէր արքայ , ըսաւ , երկար ժամանակէ վեր քանի մը
տրանջացողներու նենգամտութիւնը կը հալածէի . . . :

— Ո՛հ , ըրաւ Եիքօ . . . քանի՞ մը . . . : Դուք խիստ հա-
մեստ էք , Պ . Սօրվիլիէ . . . :

— Անխորհուրդ մարդիկներ , շարունակեց գիւանապետը ,
խանութպաններ , արհեստաւորներ , կամ աստիճանաւոր կղե-
րիկոսներ . . . աստ , անդ արեղաներ և դպրոցականներ էին :

— Ատոնք երեւելի իշխաններ չեն , ըսաւ Եիքօ կատար-
եալ հանդարտութեամբ և նոր երկղլխեան մակոյլ մը ըս-
կսելով :

— Ահա կը տեսնենք , Տէր արքայ , ըսաւ գիւանապետը :
Քաջ գիտէի որ տրանջացողներն ընդհանրապէս երկու գլխա-
ւոր պատճառէ օգուտ կը խորհէին , պատերազմ և կրօնք . . . :

— Խիստ հանճարեղ , ըսաւ Հէնրի : Յետո՛յ :

— Գիւանապետն այս դրուատիքէն դժ և երջանիկ , հե-
տեւցուց :

— Բանակին մէջ Ձեր Վեհափառութեան անձնուէր պաշ-
տօնակալներ ունէի , որոնք ամեն գարձուած ինձ կը հաղոր-
դէին , կրօնի մասին , ասի խիստ դժուար է : Ուստի գիւղերը
մարդեր հանեցի :

— Ամենքն ինչ խիստ հանճարեղ , ըսաւ Եիքօ :

— Եւ վերջապէս , շարունակեց Սօրվիլիէ , իմ յանձնարա-
րականներովս Փարիզի վերին դատաւորներէն մին յօժա-
րեցուցի . . . :

— Ի՛նչ ընելու , ըսաւ թագաւորը :

— Քարգիչները կրտսելու , որոնք ժողովարդը Ձեր Վե-

հախառութեան դէմ՝ գրգռել կ'ուզեն :

— Ո՛հ , ո՛հ , մտածեց Եիքօ , արդեօք բարեկամս պիտի
ճանչցուի :

— Այս անձինքը միշտ ներշնչութիւն կընդունին ոչ թէ
Աստուծմէ , Տէր արքայ , այլ թագին ամենաթշնամի խմբին
մեկ մասէն : Այս մասն ալ հասկցայ :

— Խիստ բարի , ըսաւ թագաւորը :

— Խիստ հանճարեղ , ըսաւ Եիքօ :

— Եւ իրենց յոյսերն ալ գիտեմ , աւելցուց Սօրվիլիէ
յաղթական կերպիւ :

— Աքանչիի դորձ , գոչեց Եիքօ :

Թագաւորը՝ Եիքօին լուութեան նշան մ' ըրաւ :

Տ՛ Անժու դուքս հրապարակասօսն բնաւ իր աչքէն չհե-
ռացուց :

— Երկու ամիսէն աւելի է , ըսաւ գիւանապետն , այլևայլ
տեղեր շատ մը մարդոց Ձեր Վեհափառութեանն ուճիկներ
կը խօստանայի , ամէն կերպ քաջասրտութեան , անյագ ցան-
կութեան վրայ կը խօսիմ , ասի ճշմարիտ է այն պայմանաւ՝
որ թագաւորը պաշտպանելու հոգը ունենան , վասնզի այսպէս
առատօրէն վճառելով պիտի կրնայի յաջողիլ : Երկու անձ սով-
րեցայ , որոց մեծագումար հաշիւ մը զոհելով դաշնակիցնե-
րուն ժամադրութիւնը կրնայի հասկնալ :

— Այս կտորը գեղեցիկ է , ըսաւ Եիքօ , հանդարտէ՛ թա-
գաւորս , հանդարտէ՛ :

— Ի՛հ , ինդիլը հոգ չը կայանար , գոչեց Հէնրի : Տես-
նենք . . . գիւանապետ , այդ միութեան նպատակը , այդ դաշ-
նակցաց յոյսերը :

— Տէր արքայ , բանը բնաւ ուրիշ կետի վրայ չէ , այլ մի-
այն երկրորդ Սէն-Պարթէլլմիի վրայ կը կայանայ :

— Որո՞ւ դէմ :

— Վալվինակնաց դէմ :

Բազմականներն զարմացմամբ իրարու նայեցան :

— Ատի ո՛րչափի նստաւ ձեզ գրեթէ , հարցուց Եիքօ :

— Եօթանասուն հինգ հազար մեկ կողմէն, հարիւր հազար միւս կողմէն :

Շէքօ դէպ 'ի թագաւորը դարձաւ :

— Եթէ կամիս, հազար սկուտով Պ. ար Մօրվիլիէի դադարներն ես քեզ կրսեմ, դոչեց Ասարօնացին :

Մօրվիլիէ զարմացական շարմու՛մ մ'ըբաւ, տ'Անժու դուքան այնպիսի պատուական կերպարանք մ'աւաւ, որ իրմէն բնաւ չէր յուսացուէր :

— Ըսէ՛, կրկնեց թագաւորը :

— Ասի անբիժ և պարզ Ռաշնաւորութիւն մ'է, ըսաւ Շէքօ, Ռաշնաւորութիւն մ'որ տասը տարիէ ի վեր սկսած է : Պ. ար Մօրվիլիէ այնպիսի դադանիք մը կը յայտնէ, զոր ողջ վարկական արուարձաններն իրենց հարկին պէս դիտեն :

— Պարոն . . . ընդ միջեց դիւանապետը :

— Ճշմարտութիւնը կը խոստովանիմ . . . և ըսածս պիտ'ապացուցանեմ, դոչեց Շէքօ փաստաբանական ձայնով մը :

— Այդ, ըսէ՛ք ինձ դաշնաւորաց միութեան տեղին :

— Ամենայն յօժարութեամբ, Ա. Ժողովրդային հրապարակը, Բ. Ժողովրդային հրապարակը, Պ. Ժողովրդային հրապարակները :

— Պարոն Շէքօ ծիծաղիլ կը փախադի, ըսաւ դիւանապետը դէմքը ծումակելով, որն է իրենց դաշնաւորութեան նշանը :

— Փարիսեցիներու նման հագուած են և քալած ատեննին ազգերենին կը շարժեն, պատասխանեց Շէքօ ծանրութեամբ :

Ընդհանուր ծիծաղի մը թնդիւնն այս բացադրութիւնը խեղդեց : Պ. ար Մօրվիլիէ կարծեց թէ յախշտակուել ցոյց տալը հաճելի պիտի թուի, այլոց հետ ծիծաղեցաւ : Բայց յետոյ ինքզինք ժողվեւով :

— Վերջապէս, ըսաւ, իմ լրոսեստ անոնց աթոռներէն մէկուն վրայ նստաւ և այս ալ այնպիսի տեղ մ'որ Պ. Շէքօ չէ չանչեր :

Տ'Անժու դքսին գոյնը նետեց :

— Ո՛ր տեղը, ըսաւ թագաւորը :

— Սէնթ-Ժընէվիէվ արքայարանի մէջ :

Շէքօ իր ձեռքէն թղեկայ վառեակ մը թող տուաւ, որ ծովակալի շողենաւուն մէջ կ'աւարտեր :

— Սէնթ-Ժընէվիէվ արքայարանը, ըսաւ թագաւորը :

— Անկարելի բան է, միմուսց տ'Անժու դուքոր,

— Գործին վերջնական արդուները նշանակուած է, ըսաւ Մօրվիլիէ և յաղթական կերպով բոլոր ժողովը դիտելով :

— Եւ ի՞նչ բրին, պարոն դիւանապետ, ի՞նչ որոշեցին, հարցուց թագաւորը :

— Այն որ դաշնաւոր հրամանատար պիտ'անուանուին, իւրաքանչիւր անդամ պիտի զինուորի, իւրաքանչիւր նահանգապետութեան արքայակոստէ մը առաքելալ պիտ'ընդունի, Նորին Վեհափառութեան սիրելի բոլոր Ազգայնականներն, ինչպէս նոքա կանուանեն . . . :

Թագաւորը ծիծաղեցաւ :

— Որոշեալ օրն պիտի կոտորածին :

— Այս է ամենը, հարցուց Հէնրի :

— Անե՛ք, ըսաւ Շէքօ, կերեւայ թէ դու գտնօթիկ ես :

— Լ'մնցաւ, ըսաւ դուքոր :

— Ո՛չ, Տէր իմ . . . :

— Բարէ՛, կը հաւատամ որ դեռ շատ բաներ բլբարու են Եթէ ասի 175,000 ոսկոյ առնուի, թագաւորը պիտի թուէր :

— Խօսեցէ՛ք դիւանապետ, ըսաւ թագաւորը :

— Հրամանատարներ կան . . . :

Շէքօ դքսին վրայ անոր բաճկանակին շարժիլը տեսաւ, որ բաղխււններ կը հանէին :

— Կեցի՛ր, կեցի՛ր, գաղտնի միաբանութիւն մ'որ իրեն հրամանատարներ ունի, ատի խիստ զարմանալի բան է : Սակայն, մեր 175,000, ոսկիին համար սակաւին իրեր պէտք են մեզ :

— Այդ հրամանատարները . . . իրենց անուններն, հար-

ցուց թագաւորը : այդ հրամանատարներն ինչպէս կ'անուա-
նուին :

— Նախ , բարոզիչ մը , կրօնամոլ մը , դիւահար մ' որուն
անունը 10,000 ոսկոյ գնեցի :

— Եւ շատ լաւ ըրիք :

— Գէնովարեան Կօռէնֆլօ եղբայրը :

— Խեղճ մարդ , ըրաւ Շիքօ անկեղծ կարեկցութեամբ մը :
Կրտուէր որ այս արկածն իրեն համար յաջող չ պիտ' երթայ

— Կօռէնֆլօ' , ըսաւ թագաւորն այս անունը դրելով , բա-
րի . . . յե'տոյ . . . :

— Յետոյ . . . ըսաւ դիւանապետն կակազմամբ , բայց Տէր
արքայ ընդամենն այս է . . . :

Եւ Մօրվիլիէ անդամ մ'ալ իւր խուզարկու և խորհրդա-
կան ակնարկը ժողովոյն վրայ չըլեց , որ , կարծես , ըսել
կուզէր .

— Եթէ Ձեր Վեհափառութիւնն առանձին ըլլար , ուրիշ
շատերն ալ պիտի լսէր :

— Ըսէք , դիւանապետ , հոս միայն իմ բարեկամներս կը
գտնուին . . . ըսէք :

— Ոհ , Տէր արքայ , այն' որ իւր անունը արտասանելու
կը վարանիմ , այն ալ զօրաւոր բարեկամներ ունի . . . :

— Ի՞նչ մօտ :

— Ամենուրեք :

— Ինձմէ աւելի զօրաւոր են , գոչեց Հէնրի բարկութե-
նէն և խռովմունքէն դժգունած :

— Տէր արքայ , գաղտնիկ մը բարձրաձայն չկրնար խոստո-
վանուիլ : Ձիս մի' մեղադրէք , պաշտօնակալ մ'եմ :

— Իրաւացի է :

— Հանճարեղ է , ըսաւ Շիքօ , բայց ամենքնիս ալ պաշտօ-
նակալ ենք :

— Պարոն , ըսաւ տ'Անժու դուքսը եթէ խօսելիքնիդ մեր
ներկայութեան չկրնար ըլլալ , մենք մեր ամենախոնարհ յար-
գանքները թագաւորին մատուցանել կսկսինք :

Պ . տը Մօրվիլիէ կը կմկմար : Շիքօ մինչեւ ամենամանր
շարժումները իսկ կը նկատէր , վախնալով որ դիւանապետը ,
որ բոլորովին աննենգ կերեւար , նախկին յայտարարութիւննե-
րէն աւելի պարզ իրերը յայտնելու չ համարձակիր :

Թագաւորը դիւանապետին իրեն մերձենալու , տ'Անժու
դքսին իր տեղը նստելու , Շիքօին լսելու , և երեք բարեկամ-
ներուն ունկնդրութիւնին հեռացնելու նշան ըրաւ :

Պ . տը Մօրվիլիէ անմիջապէս թագաւորին ականջն հակե-
ցաւ բայց ըստ սովորական կանոնի հազիւ իւր ասուլի գիրքը
կանոնաւորած էր , յանկարծ Լուվրի պարսպէն ներս աստիկ
աղաղակ մը փրթաւ : Թագաւորն անմիջապէս ոտքի ե-
լաւ Պ . Ֆելիւան ու տ'Էքերնոն գէպ 'ի պատուհանը վազեցին
Պ . տ'Անժու ձեռքն իր սուրին երկնցուց , որպէս թէ բոլոր
այս սպառնական ազմուկն ու աղաղակներն իրեն գէմ ուղ-
ղուէին :

Շիքօ ոտքերուն վրայ բարձրանալով պարսպին ու սենեկին
մէջ կը նայէր :

— Կեցիք , Պ . տը Կիզը , գոչեց առաջինը , Պ . տը Կիզը
Լուվրը մտնայ :

Թագաւորը շարժում մ'ըրաւ :

— Ճշմարիտ է , ըսին ազնուականներն :

— Գուքս տը Կիզը , թաթովեց Պ . տ'Անժու :

— Ահա ճիւղալութիւն մը . . . այնպէս չէ՞ , ճիւղալութիւն
մ'որ տը Կիզ դուքսը Փարիզ կը գտնուի , ըսաւ թագաւորը յամ-
բօրէն , որ Պ . տը Մօրվիլիէի գրեթէ ապուշ ակնարկներուն
մէջ կարդալ սկսեր էր այն անունը զոր այս վերջինն իրէն ա-
կանջէն վար ըսել կուզէր :

— Արդեօք ձեր ինձ հաղորդելիք անունը տը Կիզ բառին
չը համապատասխանէ՞ , հարցուց Մադիսարոսին ցածուն
ձայնով :

Այո' , տէր արքայ , նոյն ինքն է որ միութեան ժողովոյն
մէջ գահերէց կը բաղմէր , պատասխանեց դիւանապետը
միեւնոյն ձայնով . . . :

— Եւ միւսիններն

— Սնկեց զատ ուրիշը չեմ ճանչնր

Հէնրի ակնարկով մը Նիքօէն խորհուրդ հարցուց :

— Երանելի , դուչեց Ասարօնացին վնհափառօրէն տեղաւորուելով , ներս մտցնւր ար Նիլդ հօրեղբօրորդիս :

Եւ դէպ 'ի Հէնրին ծռելով .

— Սհա անոնցմէ մին , ըսաւ անոր ականջն 'ի վար , որուն անունը քեզ արդէն ծանօթ ըլլալով , կարծեմ , ցանկին մէջ նշանակելու հարկ չկայ :

Բարապանները դռները շառափամբ բացին :

— Մեկ հատը , պարոնայք , միայն մեկ դուռը , երկու յեղիկ միայն թագաւորին համար կը բացուի ըսաւ Հէնրի :

Տը Նիլդ դուքսը այս խօսքերը լսելու չափ սրահին մէջ բաւական յառաջ անցած էր , բայց իւր ժպիտը երբէք չը փոխեց , որով թագաւորին մօտենալ առաջադրած էր :

ՅԼՈՒՆՍ ԺԱ .

ԻՆՁ ՈՐ Պ . ՏԸ ԿԻՁ ԼՈՒՎՐԻ ՄԵՁ ԸՆԵԼ ԿՊԱՐ

Պ . ար Նիլդի ետեւէն խուռն բազմութեամբ պաշտօնատարներն , հաւատարիմները , ազնուականները և այս շողջողուն պահապան ուղեկցաց ետեւէն ժողովուրդը կուգար , ուղեկցութիւնը թեպէտ ոչ այնքան շողջողուն , բայց և այնպէս աւելի ապահով և մանաւանդ աւելի կասկած ելի էր :

Միայն ազնուականները պալատը մտած էին , իսկ ժողովուրդը դուռը կսպասէր :

Այս ժողովրդեան մեջէն էր , որ նոյն իսկ դուքս տը Նիլդի իրենց անտութենէն աներեւութանալով դաւիթը մտած ատենըն ալ ազազակներ կելլէին :

Ս.յն ամեն փողոցներուն մէջ , ուր այս փաթիլինի դուցալնը այս բանակը առ ի պատիւ անոր ետեւէն կընկերանար պահակներն իրենց զէնքերն առին , և , իրենց քաջ դասակերտին ետին շարուած՝ ժողովրդեան վրայ սարաւանական նայւածքներ կը լարէին , 'ի յաղթիւթիւն համբ հրապարներու :

Կիլ այս զինուորներու կերպարանքը նշանակած էր , որոյ Գոլիօն կը հրամայէր , շտրհալիր ողջն մ'ուղղեց այս դասակերտին որնոր , սուր 'ի բռին , այս մարդիկներէն շորս քայլ յառաջ կը կենար և իր արհամարհոտ անշարժութեան մէջ անզգայ և բրտօրէն ցուցուած մնաց :

Իր ամենայն հաստատութեամբ վաւերացուած զօրութեանը դէմ մարդու մը և գնդի մը ապստամբութիւնը դուքսը խուզեց , իր ճակատը վարկեան մը մթադնեցաւ , բայց քանի որ թագաւորին կը մօտենար ճակատը կը պարզուէր , և հետզհետէ այնքան կը զուարթանար որ , ինչպէս Հէնրի Պ . ի խուցը հասած ժամանակ տեսանք , ժպտիլով ներս մտաւ :

— Սհ , դուք էք , հօրեղբօրորդիդ իմ , ըսաւ թագաւորը , ինչ ահագին աղմուկ կը ճդէք : Շիփորաները չե՞ն հնչեր , ես այնպէս լսել կարծեցի :

— Տէր արքայ , պատասխանեց դուքսը , Փարիզի մէջ շտրաները միայն թագաւորին համար , և դաշտի վրայ հրամանատարին համար կը հնչեն , և ես արքունեաց և միանդամայն բանակներուն հետ ունեցած մտերմութեամբս խիստ դժուարաւ կրնամ խաբուիլ : Շիփորայք բաւական աղմուկներ կրնայն հանել , իսկ հոն վայրն իշխանի մը համար երբէք բան մ'ընել չեն կարող :

Հէնրի շուրթները խածաւ :

— Ես'տ բան , ըսաւ աչքերովը լորինեան դուքսը կրանելու պէս պահ մը լուռ կենայէն վերջը , հօրեղբօրորդիդ իմ , այսօր խիստ զուարթ կերեւաք , արդեօք Եստիթիկ պաշարումէն դու նոր կը դառնար :

— Ս.յսօր , դուռ նոր , այո՛ , Տէր արքայ , պուրասխանեց դուքսը թեթեւ շառաղնու մով մը :

— Ստուգիւ, ասի մեծ պատիւ է մեզ, հօրեղբորդիդ իմ, սցս ձեր այցելութիւնը մեծ պատիւ է, մեծ պատիւ է :

Հէնրի, Գ. խօսքերը կրկրկներ, մինչդեռ պահելու շատ մը գաղափարներ և պէտքեր ունէր : Ինչպէս գնդակեց մարտկոցին առջիւ ստուարացող ու խտացող զինուորաց զուճերը, որոնք միայն որոշ վարկենի մը մէջ պէտք է երեւան ելլին :

— Մեծ պատիւ, արձագանքեց այնպիսի միշտ արտասանութեամբ և ելեւէջի նմանութեամբ, որ կ'կարծուէր թէ այս երկու բառերը կրկնողը կրկին թագաւորն է :

— Տէր արքայ, ըսաւ դուքսը, Ձեր Աեհափառութիւնն անսարակոյս հեգնել կը կամի, իմ այցելութիւնս ինչպէ՞ս կարելի է պատիւ ըլլալ անոր, ուրիշ ամէն պատիւ միայն կրնայ բղխիլ :

— Ըսել կուզեմ, պարոն տը կիզ, յարեց Հէնրի, բոլոր բարեպաշտ գաթօջիկները սովորութիւն մ'ունին որով դաշտէ վերադարձերնէն յետոյ որ և է տաճարի մէջ նախ Աստուած երթալ տեսնել պէտք է, թագաւորը Աստուծմէ վերջը կ'գայ : Իմ հօրեղբորդիդ, սա ըստ մասին կրօնական և ըստ մասին քաղաքական առածը դիտէր անշուշտ « պատուէ զԱստուած, ծառայէ՛ կայսեր » :

Գուքս տը կիզի շառագնումն այս անգամ աւելի զգալի կերպով փայլեցաւ, թագաւորը, որ խիստ 'ի մտոյ դքսին երեսն 'ի վեր նայելով կը խօսեր, այս կարմրութիւնը աչքէն չվրիպեց, և իւր ակնարկը, որ անցած ու դարձածը հասկնալու որոշիչ շարժումէ մը մղուած ըլլալը կը ցուցներ, դուքս տը կիզէն դուքս տ'Անժուին վրայ անցած ըլլալով, զարմացմամբ տեսաւ որ իր բարի եղբայրն ալ գեղեցիկ իւր հօրեղբորդոյն կարմրութեանը հակառակ գեղնած էր :

Երկուստէք՝ այս հակադեր երեւոյթներու տեսիլը զինքը սարսափեցուց : Ճշգրտարանքով մ'աչերը իրեն քայեց և նկուն ձեւ առաւ, ոչ որ երբ պաւլին տակ կը պարուրի ոչ երբէք Հէնրի Գ. ի նման իւր արքայական ճիրանները պահելու ճարպիկութիւնն ունի :

— Սմէն պարագայի մէջ, դուքս, ըսաւ, երբէք այնքան բերկրանք չեմ զգար որքան ձեր՝ պատերազմական բաղդէ չարատիպ պատահարներէն զերծ և անվասնդ դարձի մասին կ'զլամ, թէեւ, ինչպէս կը լսեմ, յանդուգն կերպով զձեզ վտանգին բերանը կը նետէք : Սակայն, իմ հօրեղբորդիդ, վտանգն զձեզ կը ճանչէ, ձենէ խոյս կ'տայ :

Գուքսն այս ձեւերուն առջիւ խնամարեցաւ :

— Սա ևս կսեմ ձեզ, իմ հօրեղբորդիդ, մահկանացու տագնապններու նկատմամբ այդչափ փառասէր մ'ըլլաք, ըստ որում մեզպէս ծոյլ և մեղկ անձերու համար ճշմարիտ խիստ գաժան և անըմբերելի պիտի թուի ասի. մեզ, որ կը ննջենք կ'ուտենք, կ'որսանք, և եթէ աշխարհակալութիւններն իր կատարն հասցնենք, տակախն նոր եղանակներ և նոր խընդրուածներ ու մաղթանքներ կը հնարենք :

— Այո՛, տէք արքայ, ըսաւ դուքսն այս վերջին բառին վրայ կանդ առնելով, զիտենք թէ դուք լուսաւորեալ և բարեպաշտ իշխան մ'էք, և թէ սլինչ հաճոյք չեն կարող Աստուծոյ փառքն ու եկեղեցւոյ շահը ձեր տեսութենէն վրիպեցնել : Ասոր համար է որ վտահոթեամբ վի՛ Ձեր Աեհափառութեան եկած ենք :

— Տե՛ս ուրեմն, Հէնրի, քու հօրեղբորդ վտահոթութիւնը, ըսաւ Շիքո՝ թագաւորին ցոյց տալով անուականներըն, որոնք, առ 'ի յարդանս, սրահէն դուրս կազատէին, անոնցմէ կարդ մը սենեկիդ դուռը և ուրիշ երկու կարդ ալ Աուլրի դուռը եկած է :

— Վստահութեամբ, կրկնեց Հէնրի, միթէ մինչեւ հեմայ վտահոթեամբ չէիր դար իմ քովս, հօրեղբորդիդ իմն :

— Տէ՛ր արքայ, կը լսեմ, այն վտահոթութիւնը, որոյ վրաս յով խօսեցայ, ձեզ ընել մտադրածս առաջարկութեան նկատմամբ է :

— Հա՛, հա, ինձ առաջարկելիք խնդիրներ ունիք, իմ հօրեղբորդիդ : Ուրեմն խօսեցէք վտահոթեամբ, ինչպէս դուք բսիք, բոլոր վտահոթեամբ : Մեզ առաջարկելիք ինչ ունիք :

— Սմենագեղեցիկ դարձարներէն միայն արդիւնաւորութիւնը , որ խաչակրութիւնը անկարելի ըլլալէն ՚ի վեր տակաւին բոլոր քրիստոնեայ աշխարհ անոր վրայ կը խանդադատի :

— Խօսեցէք ուրեմն :

— Տէր արքայ , շարունակեց դուքսը , բայց այս անգամ մինչեւ նախասնեակը լուրերու չափ ձայնը բարձրացնելով՝ Տէր արքայ , ըսաւ , ~~անհարկութեամբ~~ ~~բռնաբար~~ տխուր ոչինչ բան մը չի : կրօնի պաշտպանութեանը մասին բոցեւանդ հուր մ'ունենալ կը պարտաւորէ : Եկեղեցւոյ անդամիկ որդին , ինչպէս դուք այս տխուր արգէն կը կրէք , միշտ իւր մօրը պաշտպանութեան պատրաստ ըլլալ կը պարտի :

— Այցիւր , ըսաւ Շիրք , իմ հօրեղբորորդիս , որ մեծ ու երկար թուր մը մէկ կողմը և սաղաւարդ մը գլուխը կրելով կը քարոզէ , քիչ ծաղրական չէ , ասի զիս չի զարմացնէր այնքան , որքան որ արեղաներու պատերազմիլ խնդրելին , Հէնրի , կռօնֆլօի համար ձեռն բանակ մը կը խնդրեմ :

Դուքսը զսել ձեւացուց , Հէնրի իւր ազգերը խառնեւ իրարու վրայ դրաւ , արմուկը ծնդան կրթնցուց և իւր վերջարկուն ձեռքին մէջ աղուց :

— Սարկենացոյմէ եկեղեցւոյն սպառնալիք մը կայ , սիրելի դուքս , հարցուց , թէ ոչ այնպէս ըստքմաց Երուսաղէմայ . . . թագաւորին տխուրսին կը յանկաւք :

— Տէր արքայ , կրկնեց դուքսը , իմ անուն օրհնելով ետեւէս եկող ժողովրդեան այդ մեծ հոսանքը ոչ թէ զիս , այլ , հաւատացէք , այս ընդունելութեամբ հաւատոյ տարածման մասին իմ ունեցած եւանդա պատուել կուզէ : Արդէն Ձեր Վերահիւանութեան գահակալութեան յառաջ ձեզ հետ խօսելու պատիւ ունեցած մէկ առթիւս բոլոր ճշմարիտ գաթօյիկներու մէջ դաշնաւորութեան ծրագրի մը վրայ խօսէր էի :

Այո՛ , այո՛ , ըսաւ Շիրք , ես կը յիշեմ դաշնագրութիւնը , երանելի Հէնրի , Մէն Պարթէլըմէի դաշնագրութիւնը , ճրը-

մարեալ , թագաւոր իմ , խիստ մտուցկոտ մէկն ես տղաս , այսպիսի յաղթական դաւախար մը բնաւ չես կրնար յիշել . մուսակուս ես :

Դուքան այս խօսքերուն ազմուկին դարձաւ , և քամահական ակնարկ մը թողուց զանոնք արտասանողին վրայ , առանց դիտարու թէ այս խօսքերը թագաւորին ողուոյն վրայ կապարի ծանրութեամբ կը կշռէին , վասնզի Պ . ար Մօրվիլիէի բրած յատնութեանց նոյնանման կրկնումն կամ նորոգումն էին :

Այս մասին տ'Անժու դուքան ինքն ալ շարժեցաւ և մատին մէկն իր շրթանց վրայ դնելով անքթիթ տը կիլ գրքին յառեց՝ Զգուշութեան տրձանին պէս դռնաա և անշարժ :

Այս անդամ յօգուտ երկու իշխանին՝ իրեն մէջ դարձած խոհեմութեան նշանը ընաւ թագաւորը չէր նշմարեր , բայց Շիրք , իր գլխադրե սուտակնեայ շղթայիկներուն մէջ հասիկներէն մին շտկելու կեղծ եօք ականջին մօտենալով կամացուկ մը ըսաւ .

— Տես եղբայրդ , Հէնրի :

Հէնրի աչքն խկոյն վեր ելաւ , դքսին մատն ալ գրեթէ նոյն արագութեամբ ցածցաւ , բայց շատ . Հէնրի շարժումը տեսած և պատուէրը դուշակած էր :

— Տէր արքայ , շարունակեց տը կիլ դուքսը , որ Շիրքի ըրածը տեսած էր , թեպէտ խօսածը չէր կրցած լսել , արդարեւ գաթօյիկներն այս ընկերութիւնը սուրբ Պաշաւորութիւն անուանած են , և որոյ գլխաւոր նպատակն է դահը կալուխականաց իւր մահացու թնամեաց դէմ՝ պահպանել ու ամբոջնել :

— Գեղեցիկ ասացուած , դռնց Շիրքուրդ ուղեմէնէն . . .

— Բայց , յարեց դուքսը , որքան որ ալ ամբաստինք , այս մտութիւնը , այս ընկերակցութիւնը տակաւին պէտք եղածին չափ ընդարձակ չէ , պատարագ մ'ընելու չափ դորստոր չէ . պէտք է անոր վարչական ձեւ մը և ոյժ մը տալ : Գողղիոյ պէս ակնութեան մը մէջ մինչեւ որ թագաւորը չ'ուխտէ , միլիւ-

նաւոր մարդիկ դիւ եւս չեն միանար համամտօրէն :

— Միլիոնաւոր մարդիկ , ըսաւ Հէնրի իւր զարմացումը պատրուակելու ճիգ մը չընելով , որ իրաւամբ իբր սոսկում կրնար թարգմանուիլ :

— Միլիոնաւոր մարդիկ , արձադանդեց Շիքօ , դժգոհու թեան ամենախորք կորից մը յեթե ճարտար ձեռքերով ցանւած է , որուն անկասկած եմ , զնայելի պտուղներ պիտի յարուցանէ :

Այս անդամ դքսին համբերութիւնը ծայրը հասած կ'ըլլէր . իր քամահոտ շուրթները ճզվեց և մէկ տորովը երկիրը սաստիկ ճնշեց երբեք ուր չէր համարձակեր զարնել :

— Այլ զարմանամ , Տէր արքայ , ըսաւ , կը զարմանամ ոչ Ձեր Վեհափառութեան հետ խօսելու պատիւ ունեցած առնեն սաէպ զիս կրնդ միջէ , որով կը թախի թէ կը նեղանայ :

Այս ցոյցին վրայ , որուն իրաւացի ըլլալն լիովին զգացած կերեւար , Շիքօ մօլեդին աչքերն իր շուրթը դարձուց և ժողովոյ բարասլանին ունական ձայնին նմանցնելով .

— Առութիւն , արդ , գոչեց , ապա թէ ոչ , չարածճի , հիմայ ինքզինքս ցոյց կ'տամ :

Միլիոնաւոր մարդիկ , կրկնեց թագաւորը , որ թիւն հաղի կրնար մարտել , դաթօլիկութեան համար , փաղարշանք մ'է ասի , ըսայ միլիոնաւորներէ բաղկացած բնկերութեան մը դէմ . իմ տէրութեանս մէջ քանի՞ հատ բողբոջական կրնայ դանուիլ :

Գուքան հաչիւ ընել երեւցաւ :

— Չորս , ըսաւ Շիքօ :

Այս ճարտար դիւտը թագաւորին բարեկամներուն ծիւծաղը շարժեց . Աիդ յօնքերը պառտեց և նախասննկի ազնուականները կապճօնացւոյն դէմ բարձրաձայն քրթ մնջելակսեցին :

Թագաւորը յամբօրէն դէպ 'ի քրթ մնջիւններ հանող դուռը դարձաւ , և Հէնրի , ինչպէս ուզած ասնն կ'ընէր , այնպիսի վեհ և պատկառելի նայուածք մ'ըրաւ որ չուկները դադրեցան :

Յետոյ առանց սր եւ է փոխակերպութեան միւսնոյն ակ-

նարկը դքսին վրայ դարձնելով .

Տեսնենք , Պարոն , ըսաւ , ի՞նչ կը խնդրէք . . . : Նպատակին . . . նպատակին . . . :

— Այր խնդրեմ , Տէր արքայ , վանդի թագաւորիս ժողովուրդը թերեւս իմինէս աւելի ինձ սիրելի է , կը խնդրեմ որ Ձեր Վեհափառութիւնը յայտնապէս ցոյց տայ թէ բոլոր որիչ իրերէ աւելի իւր վեհ երանող միայն դաթօլիկ կրօնքին համար կը վառի , և այսպէսով պատերազմներ յարուցանելու դժգոհութեան ողջ պատճառանքներն անհետացնէ :

Ահ , հօրեղբօրորդիդ իմ , ըսաւ Հէնրի , եթէ խնդրը միայն պատերազմի վրայ կը կայանայ , բանակներ ունիմ , և կարծեմ , այն դաշտին վրայ , զոր ճգելով այս նշանաւոր խորհուրդներն ինձ հաղորդելու փութացիք , ձեր հրամանին տակ քսան հազարի մօտ մարդիկներ ունիք :

— Տէր արքայ , պատերազմին վրայ խօսած աստե՛նս կարելի է բացատրութիւն տալու պարտաւոր եմ :

— Բացատրեցէ՛ք , հօրեղբօրորդիդ իմ , դուք երեւելի զօրագլուխ մ'էք , և տարակոյս մի ունենաք որ ձեր այս օրինակ իրերու վրայ ճառելը հաճութեամբ մտիկ կ'ընեմ :

— Տէր արքայ , լսել կուզէի թէ՛ սահող ժամանակին հետ թագաւորը երկու պատերազմ յարդարելու կոչուած են , պատերազմ բարոյական և պատերազմ քաղաքական . եթէ այսպէս կրնամ բացատրել , պատերազմ դադարեցնելու և պատերազմ մարդկանց դէմ :

— Օհ , ի՞նչ սքանչելի բացատրութիւն :

— Ատէ՛ , յիմար , ըսաւ թագաւորը :

— Մարդիկ , շարունակեց դուքը , մարդիկ տեսնելէ , չօշտիելի եւ մահկանացու են , անոնց հետ վարուիլ , պատերազմիլ եւ զարնել , եւ զարնելէ յետոյ իրենց դատը տեսնել եւ առաւել լաւը , զանոնք կախել կարելի է :

— Այո՛ , ըսաւ Շիքօ , առանց դատերնին տեսնելու կախաղան կը հանենք , ասի աւելի կարճ և արքայական եղանակն է :

— Բայց՝ դադարեալները, շարայարեց դուքսը, այս վիճակին մէջ չենք կրնար ըմբռնել: Վաղափարները, Տէր արքայ, անտեսանելի եւ թախանջիկ կերպիւ կը սահին ու կը սպըրդին, մանաւանդ զիւրենք նուաճող աչքերէն կրնան վրիպել ու սքողել, հողիներու յատակը կրթնած՝ հոն խոր արմատներ կարճակեն, եւ անոր ծլած ու ուճացուցած անխոհեմ սուտերն որքան արտաքուստ հարթեա ու կոտորես, ներքնապէս այնքան աւելի կ'աճին, կը զօրանան: Վաղափար մը, Տէր արքայ, հսկայ թզուկ մ'է, որ պէտք է գիշեր եւ ցերեկ հսկել, վասնզի, Տէր արքայ, դադար մ'որ երէկ ձեր ոտքերուն տակ կը սողար ու կը զեռար, վաղը ձեր գլխիւ կ'ելլայ եւ կը տիրէ: Վաղափար մը, Տէր արքայ, կայծակ մ'է որ խողանին վրայ կ'իջնայ, կը պայթի՝ ամբողջ օրը հրդեհէն սկիզբները պէտք է դիտել, դուշակել եւ պահպանել ամենայն աշարժութեամբ, եւ ահա ասոր համար է որ մկրտնաւոր հսկողներու կարեւորութիւնը կ'զգանք:

— Ահա՛ բոլոր Վաղդիոյ չորս սատանորդի Կարվենականներն, դաչեց Շիքօ, խեղճ մարդիկ, կողբամ զձեզ:

— Եւ ես, շարունակեց դուքսը, այս սուրբ միաբանութեան վրայ լաւ հսկել կարենալու համար առաջարկեցի Ձեր Վեհափառութեան վրանին գլուխ մը կարգել:

— Դուք այնպիսի բան մ'ըմբռնէ՞ք, հօրեղբայր իմ, հարցուց Հէնրի գրսին:

— Այո՛, Տէր արքայ, եւ առանց դարձուածքի, ինչպէս որ Ձեր Վեհափառութիւնն արդէն կարողացաւ տեսնել:

Շիքօ զարհուրողին կերպով հեծեց, մինչդեռ ընդ հակառակն դուքս տ'Սնտօռի դիմաց վրայ սոսկումի հետք մը անդամ մնացած չէր, եւ Լօրէն իշխանին երեսն ՚ի վեր կը խնդար:

— Աղէկ, ըսաւ թագաւորը զինքը շրջապատողներուն դառնալով, դուք ի՞նչ կը խորհիք ասոր վրայօք, պարոնայք:

Շիքօ առանց երբէք պատասխան մը տալու իր փեղդոյն ու գաշտոյնը առաւ, յետոյ առիւծի մորթի մը պոչն ուսին վրայ

առնելով որահին մէկ անկիւնը քաշեց ստորաւ եւ տակը մտնելով պառկեցաւ:

— Ի՞նչ կ'ընէք, Շիքօ հարցուց թագաւորը:

— Տէր արքայ, ըսաւ Շիքօ, գիշերը կը կանխէ, նա գեղեցիկ նշանակութիւն մ'ունի: Ինչո՞ւ համար կը կանխէ, վասնզի գիշերը կը քնանան. քնանալ կուզեմ, Տէր արքայ, եւ վաղը հանդարտ գլխով տը Կիլ հօրեղբորդուոյս պատասխան պիտի տամ: Եւ մինչեւ կենդանիին ձերանները թաղուեցաւ:

Դուքսը Կապրօնացուոյն կատաղի հայեացք մ'ըրաւ, որոյ՛ի պատասխանի այս վերջինն ալ աչքին մին բանալով կայծակի ուրտման պէս խուլում մը հանեց:

— Հիմայ, Տէր արքայ, հարցուց դուքսը, Ձեր Վեհափառութիւնն ի՞նչ կը խորհի այս մասին:

— Ես, ինչպէս ընդմիջտն, կը խորհիմ որ իրաւունք ունիք, հօրեղբորդիդ իմ, յորդորեցէ՛ք ուրեմն ձեր դաշնաւորները, անցէք անոնց գլուխը, եւ կրօնի համար հարկաւոր եղող անձը ես կ'ընտրեմ:

— Եւ ե՞րբ, հարցուց դուքսը:

— Վաղը:

Եւ այս վերջին բառն արտասանելով՝ ճարտարօրէն իւր ժըպիտը բաժանեց: Առաջին մասը տը Կիլ գրսին ինկաւ, իսկ երկրորդ մասը տ'Սնտօռ գրսին:


Այս վերջինն արդէն պալատէն դուրս ելլելու վրայ էր, բայց գեռ առաջին քայլը չ'առած:

— Սպասեցէ՛ք, եղբայր իմ, ըսաւ Հէնրի, ձեզ հետ խօսելիք ունիմ:

Դուքս տը Կիլ վայրկեան մ' իր ձեռքը ճակտին դրաւ, որպէս թէ հոն մտածութեան աշխարհ մը կազմել ուզէր, եւ իր բոլոր հետեւակներուն հետ մեկնելով կամարներուն տակ աներեւոյթ եղան:

Վայրկեան մը յետոյ ամբոխին աղաղակները լսուեցան, որ իւր Լուվրէն ելքը կ'ողջունէին, ինչպէս արդէն մուտքն ողջունած էին:

Շիրք անընդհատ կը խորհայր, բայց չենք համարձակիր բսել թէ կը քննարար :



ԳԼՈՒԽ ԺԲ.

ԳՍԱՏՈՐ ԵՒ ԲՈՒՆԻԲՍ

Թագաւորն իւր եղբայրը վար դրած միջոցին մնացեալ բո-
րը բարեկամացն հրաժեշտի ողջոյնը տուած էր :

Տ Անժու դուքան, որ բոլոր նախընթաց տեսարանաց դար-
ձած ատեն՝ բաց ՚ի Շիրքին ու տը կիզ դ.քսին աչքերէն՝ ան-
տարբեր անձի մը բոլոր յաջողակ դերը կատարած էր . ա-
ռանց վարանման Հէնրիի հրաւերն ընդունեց : Կառքնացւոյն
թագաւորին իւր վրայ նետել տուած տխարակի մասին, որով
իւր նշանատու մատին իւր շրթանց մօտ շարժիլը կռահած էր
նա, ինք բնաւ տեղեկութիւն չունէր :

— Եղբայր իմ, ըսաւ Հէնրի, Շիրքէն դատ սենեկին մէջ
մարդ չըլլալու մասին վստահ, և դռնէն դէպ ՚ի պատահանը
մեծաքայլ երթեւեկելով, եղբայր իմ, դիտէք թէ ի՞նչ եր-
ջանիկ իշխան մ' եմ :

— Տէր արքայ, ըսաւ դուքսը, Ձեր Ահհախառութեան
երջանկութիւնն այն աստիճան իրական եւ ստոյգ է, զոր եր-
կինք իբր վարձատրութիւն իւր արժանեաց՝ Ձեր Ահհախա-
ռութեան կը պարտի :

Հէնրի իւր եղբօրը նայեցաւ :

— Այո՛, խիստ երջանիկ, կրկնեց, վասնզի՛ երբ հասուն
եւ նշանաւոր գաղափարներ ես չեմ կրնար յղանալ, գտնէ
զիս շրջապատողները յղանալով իմ տեղս կը լեցնեն : Տը կիզ
հօրեղբօրորդւոյս գաղափարը յղացած մեծ խորհուրդ մ' է :

Դուքան նշան հաւանութեան խոնարհեցաւ :

Շիրք աչքին մէկը բացաւ, որպէս թէ երկու աչերը միան-
դամայն մտկած ըլլալով չէր լսէր, եւ որպէս թէ թագաւորին
խօսքերը լաւ մը հասկանալու համար նորա դէմքը տեսնելու
պէտք ունէր :

— Սրբարեւ, շարունակեց Հէնրի, ընդհանուր քաթօլի-
կութիւնը միեւնոյն մէկ դրօշի տակ միացնել. Եկեղեցւոյ տէ-
րութիւն մը հաստատել : Ֆիլէմէնին, Սպանիան ու Սնդ դիան
սպառազինութեան երբէք անկարող ընելու չայի՛ Բալէէն սկը-
սելով մինչեւ Լանկաթը, Բրիտանիան սկսելով մինչեւ Պուր-
կոնը, բոլոր Գաղղիոյ առանց պատկերանալու, Սնդգիոյ,
Ֆիլէմէնիի և Սպանիոյ վրայ ասպատակելու պատրաստ բանակ
մ' ունենալ, դիտէք, Ֆուանտա, ասի միառաւոր խորհուրդ
մ' է, եւ խիստ միառաւոր :

— Հայտա՛, այնպէս չէ՛, Տէր արքայ, ըսաւ տ' Անժու դուք-
սըն, իր դաշնակիցը՝ դուքս տը կիզի տեսութեանց վրայ իւր
եղբօրը սրտի զեղումը տեսնալէն յափշտակուած :

— Այո՛, եւ կը խոստովանիմ՝ որ սրտիս խորէն ներքին
զգացում մ' այսպիսի գեղեցիկ ծրագրի մը հեղինակն անհու-
նապէս վարձատրելու մըլումը կը ներշնչէ ինձ :

Շիրք երկու աչքերն ալ բացաւ, բայց անմիջապէս փակեց
զանոնք, թագաւորին դէմքին վրայ տեսաւ այն անզգալի ժը-
պիտանքէն մին, որ միայն իրեն համար տեսանելի էր, ըստ
որում ինքն իւր Հէնրիին ամենէն աղէկ կը ճանչէր, ուստի այս
Ժպիտն իրեն կը բաւէր :

— Այո՛, շարունակեց թագաւորը, կը կրկնեմ, այսպիսի
ծրագիր մը՝ վարձատրութեան արժանի է, և այս վարձատ-
րութիւնը բոլոր վտայելութեամբը պիտի հատուցանեմ իւր հե-
ղինակին, Ֆուանտա, այս չքնաղ գաղափարին կամ այս գե-
ղեցիկ գործին հայրը ճշմարտապէս տը կիզն է, վասնզի
գործն արդէն սկսուած է, այնպէս չէ՛ :

Դուքսը նշան մ' ըրաւ, որ իրաւամբ գործն իւր հալածման
սկիզբն ընդունած էր :

— Տակաւ սու տակաւ, յարեց թագաւորը : Քիչ մ'առաջ

ըսած էի թէ երջանիկ իշխան մ'եմ, պէտք էր ըսէի թէ ամե-
նաներջանիկ եմ, որովհետեւ այս դադարներն իմ մերձա-
ւորներս ոչ միայն կը յղանան, այլ նաեւ իրենց թագաւորին
եւ իրենց ազգատոհմին օգտակար ընելու միտքով կը տնօրինեն
զանոնք, բայց սիրելի Ֆռանսուսա, ինչպէս քիչ մը վերն հար-
ցուցի, ըսաւ Հէնրի ձեռքը եղբօրն ուսին վրայ դնելով, ինչ-
պէս ձեզ հարցուցի, գիտնալ կողեմ թէ այս արքայական
խորհրդոյ միտարէն իմ երախտագիտութիւնս ուզգակի իմ
հօրեղբորորդւոյս կը պարտիմ:

— Ա՛հ, Տէր արքայ, Լորէնի Պ. կարդինալն արդէն քսան
տարիէ աւելի կայ որ յղացած է, եւ միայն Սէն-Պարթէլըմի
անոր գործադրութենէն զինքն արգիլած է կամ մանաւանդ ա-
նօգուտ բեր մ'ունեցած է:

— Ա՛հ, Լորէնի Կարտինալին մահն ինչ դժբաղդութիւն
է, ըսաւ Հէնրի, Ն. Ս. Գրիգոր ԺԳ-ի. տեղ զինքը Պապ կը
նստեցնէի, բայց ստոյգ է որ, շարունակեց Հէնրի այնպիսի
պարզմտութեամբ մ'որ զինք իւր տէրութեան առաջին կատա-
կերգակը կը ներկայացնէր, շատ ստոյգ է որ իւր քեռորդին
իւր դադարարին ժառանգորդն ու նորա արդասաւորդն է:

Գժբաղդաբար ես զանի Պապ ընել չեմ ուզեր, բայց պիտ'ը-
նեմ. . . : Ի՞նչ կրնամ ընել, Ֆռանսուսա, որ չըլլայ:

— Տէր արքայ, ըսաւ Ֆռանսուսա իւր եղբօր խօսքերուն կա-
տարելապէս հաւատալով ու խարուելով, դուք ձեր հօրեղ-
բորորդւոյն արժանիքներն ինտո կ'առաւելուք, դադարարը
ժառանգութիւն մ'է, ինչպէս ուրիշ անգամ արդէն ձեզ ըսած
եմ, եւ անձ մ'այս ժառանգութեան մշակութեանը չափա-
զանց նպաստած է:

- Իւր Կարդինալ եղբայրն, այնպէս չէ:
- Անշուշտ, անով զբաղած է, սակայն միմիայն նա ալ չէ:
- Աւրեմն Մայե'նն է:
- Ա՛հ, Տէր արքայ, չափազանց պատիւ կ'ընէք իրեն:
- Ճշմարիտ է: Ար զարմանամ թէ այսպիսի քաղաքական
դադարար մը անգութէ մ'ինչպէս կը բղիթ: Սակայն չեմ

դիտեր ճշգրտիւ թէ իմ ար Աիզ հօրեղբորորդւոյս 'ի նպատա-
գրուած այս խորհրդոյն միտարէն ո՞ւմ կը պարտիմ իմ երախ-
տագիտութիւնս:

— Ինձ, Տէր արքայ, ըսաւ դուքսը:

— Ձե՛զ, ըսաւ Հէնրի, որպէս թէ զարմացմամբ գեղ-
ւած էր:

Միքօ կրկին իւր մէկ աչքը բացաւ:

Գուքսը խոնարհեցաւ:

— Ինչպէ՛ս, ըսաւ Հէնրի, մինչդեռ բարդ աշխարհ ինձ դէմ
ապստամբած կը տեսնելի, մինչդեռ քարոզիչներ իմ մար-
թեանցս դէմ, բանաստեղծներ ու գրագէտներն իմ հեզնու-
թեանցս դէմ, քաղաքագէտներն իմ թերութեանցս դէմ կը
մռնչէին, մինչդեռ բարեկամներս իմ ապիկարութեանցս վը-
րայ կը ծիծաղէին, մինչդեռ երկրացիս այն սատիճան կաս-
կածոս էր՝ որ ամէն նկատելուս կը ծիւրէի, եւ ամէն օր մա-
ղերս կը ձեռակէին, խոտովանիլ կը պարտաւորիմ (իմա մար-
դըն ապիկար եւ թագաւորները կոյր կն) որ միշտ ձեզ ինձ
բարեկամ չէի կարծէր: Ա՛հ, Ֆռանսուսա, ո՞րչափ մեղա-
պարտ եմ:

Այս լսելով Հէնրի մինչեւ յարտատու շարժեցաւ և իւր
ձեռքն եղբօրն երկնցուց:

Միքօ երկու աչքերը բացաւ:

— Ա՛հ, բայց, շարունակեց Հէնրի, յղացումը ինտո յաղ-
թական է. Ոչ առանց դժգոհութեան տուք կրնայի պա-
հանջել, ոչ առանց արտուելի և աղմկի բանակ կրնայի հա-
նել, ոչ կրնայի զբօսնուլ, ոչ ննջել, ոչ առանց ծիծաղեցնե-
լու սիրելի և ահաւասիկ եղբայր իմ, Պ. ար Աիզի կամ նոյն
խոյն ձեր մէկ խորհօրդն ինձ միանգամայն բանակ, գրամ,
բարեկամներ և հանդիստ կը չնորհէ: Հիմա, Ֆռանսուսա,
այս հանգստութեան տեւողութեանը միմիայն մէկ բան մը
հարկաւոր է:

Ի՞նչ բան:

— Հօրեղբորորդիս այս ընդհանուր շարժման գլուխ մը ու-

բոշկու մասին խօսք կ'ընէք քիչ մ' առաջ :

— Այո՛, իրաւունք ունիք :

— Այս գլուխը, կը հասկնաք անշուշտ, Ֆռանսուա, բնա-
խմ մտերիմներէն չկրնար ըլլալ, ոչ, ոչ, այսպիսի հոյակապ
բաղդի մը կարեւոր՝ ոչ գլուխն և ոչ սիրտն ունին : Քեիւս
քաջ է, բայց թշուառականն իր սիրուհիներուն զբաղած է,
Մօժիրօն արի է, բայց այն նանրասէրն ալ միայն իւր պըճ-
նազարդութեան ետեւն ինկած է, Աքօնպէրի քաջ է, բայց
այն ալ, ինչպէս իւր սրտակից բարեկամները կը վկայեն, խո-
հական անձ մը չէ : Տ' էքէրնօն քաջ մ'է, բայց յայտնի հա-
մարձակ կեղծաւոր մ'է, որուն թեպէտ միշտ հաշտ և քաղցր
ակամբ կը նայիմ, սակայն ինքզինք վայրկեան մ' իսկ անոր
չեմ կրնար վտահել : Բայց դիտէք զինք, Ֆռանսուա, ըսաւ
Հէնրի աճեցուն լքուսով մը, թագաւորաց՝ անդադար չողու-
քորթուիլ ստիպուիլն իրենց ամենածանր բեռներէն մին է :
Մտիկ ըրէ՛, այնպիսի վայրկեանի մը մէջ կը գանտիւր, ուր բոլոր
սիրտս քեզ կրնամ մերկանալ, ա՛հ, դոյլն ինչ հոգի կառնում :

Երբ երկու աչքն ալ գոցեց :

— Հը, բարի, շարունակեց Հէնրի, ըսել կուզէի որ, ար
կիզ հօրեղբորդուդ այդ դաղափարը, դաղափար մ' որուն
մէջ դուք եւս նշանաւոր մաս մ' ունիք, իրեն կը մնայ արդիւ-
նաւորել, Ֆռանսուա :

— Ի՞նչ կ'ըսէք, Տէր արքայ, դոչեց Ֆռանսուա անհան-
գրտութենէն շնահատ :

— Կ'ըսեմ որ այսպիսի շարժում մ' ուզդելու համար երե-
ւելի իշխան մը պէտք է :

— Չգուշացիք, Տէր արքայ :

— Հարտար պարագլուխ մը, ճարպիկ և հմուտ միջնորդ մը :

— Մանաւանդ ճարպիկ միջնորդ մը, կրկնեց դուքսը :

— Բարի, Ֆռանսուա, տեսնեք ուրեմն թէ այս իրութիւնը
երբէ՞ր Պ. ար կիզին չպականիր :

— Եղբայր իմ, ըսաւ Ֆռանսուա, Պ. ար կիզ արդէն խիստ
զօրաւոր մէկն է :

— Այո՛, անտարակոյս, բայց իւր զօրութիւնն է որ ինձ
ոյժ կը ներշնչէ :

— Տը կիզ դուքսը բանակն ու քաղաքացիքը կ'առնու,
Լորենի կարգինալն ալ եկեղեցին, Մայենը երկու եղբարց
ձեռքերուն մէջ դործիք մ'է, միեւնոյն մէկ տան մէջ նշանաւոր
զօրութիւններ իրար կը յօդէք :

— Ճշմարիտ է, ըսաւ Հէնրի, այդ բանն արդէն խորհած
էի, Ֆռանսուա :

— Եթէ կիզեաններն գաղղիացի լոյսաններ ըլլային, յայտ-
նի բան է որ իրենց շահը Պաղղոյ տունը մեծցնելը պիտ' ըլլար :

— Մտարակոյս, բայց ընդհակառակը բոլորն ալ Լորէ-
նացի են :

— Մերոյն հեռ միշտ մրցող ստիւ ընտանիք է :

— Թողէ՛ք, Ֆռանսուա, վերքը կը նորոգէք, ճշմարիտ,
դճեզ այսբան քաղաքագէտ չէի ճանչեր. ահաւասիկ, իրապէս
այդ կէտն է որ զիս կը վշտացնէ, մազերս կ'սպիտակացնէ,
կը լսէք, Ֆռանսուա, Լորէնացի տան այդ ստիւութիւնը ան-
ընդհատ մեզ գրակից եղած է, երբէք որ մը դիպած չէ, Ֆր-
ռանսուա, ինչպէս կը տեսնուի, որ այս երեք կիզեաններն
չատ գեղեցիկ ըսիք որ՝ ամէն բանի կը տիրեն. — Այո՛, որ
մ' եղած չէ, որ կամ դուքսը կամ կարգինալն և կամ Մայ-
եհէնը, վերջապէս ասոնցմէ մին թէ յանդգնութեամբ թէ յայ-
տարարութեամբ, թէ բռնութեամբ և թէ խորամանկութեամբ
իմ զօրութեանս վրայ պատուածք մը, իմ նախապատուու-
թենէս մասնիկ մը չհաննն ու չձգեն, և այս՝ առանց իմ կող-
մէս իրենց դէմ շարժում մը տեսնելու, իմ կողմէս տկար ու
ապիկար, հէզ և ձենացած անձ մ'եմ : Ա՛հ, Ֆռանսուա, ըս-
տոյդ կըսեմ, այս ըտպէիս ձեր սրտին մէջ կարդացած վտա-
հութիւնս ու ապաւինութիւնս ժամանակ յառաջ կարգալու կա-
րող եղած ըլլայի, ինչ որ ցարդ չէի կրցած ընել պիտ' ընէի,
պիտի դիմադրէի, սակայն եղով կը տեսնէք որ շատ ուշ է :

— Ինչո՞ւ այդպէս :

— Ըստ որում ասի մաքառում մը ըսել է, և ճշմարիտը խօ-

սերով ես ալ միշտ մաքառման առջեւ կ'ընկճեմ, ուստի զանի
Դաշնաւորութեան գլուխ պիտ' անուանեմ :

— Եւ ասով սխալ մը գործած պիտ' ըլլաք, եղբայր իմ,
ըսաւ Գուանսուա :

— Բայց զով կ'ուզէք որ անուանեմ, Գուանսուա, այս վը-
տանդալեր պաշտօնն ո՞վ պիտ' ընդունի : Այո՛, վտանդալեր
կ'ըսեմ, վտանգի չտեսա՞ք թէ Ի՛նչ է դ.քսին գաղափարը . նա
կուզէ որ ինքը Դաշնաւորութեան գլուխն ըլլայ :

— Ի՛նչ կ'ընայ ըլլալ :

— Սա, որ ո՛րք եւ իցէ այդ պաշտօնը յանձն առնողին գէ՛մ
պիտի թշնամանէ :

— Այնպիսի զօրաւոր անձ մ' ընտրեցէք, որ ձեր բազկին
յեկնով երբէք այդ երեք միացեալ Լորէնցիներուն ուժէն ու
զօրութենէն երբէք երկիւղ եւ ակնածութիւն չ'ունենայ :

— Հը՛, աղջիւ եղբայրս, ըսաւ Հէնրի վհատ ծայնով մը,
բնաւ չեմ յիշեր այնպիսի անձ մ' որ ձեր ըսած յատկութիւնն
ու դիրքն ունենայ :

— Եւրջերնիդ նայեցէք անդամ մի, Տէր արքայ :

— Իմ շուրջս Չենէ եւ Եիքօն զատ ոչ որ չեմ տեսներ, որ
իմ անկեղծ բարեկամս ըլլան :

— Ա՛հ, ո՛հ, միմուսց Եիքօ, արդեօք ինչ տարօրինակ խաղ
խաղալ կ'ուզէ ինձ դէմ :

Եւ երկու աչերն ալ փակեց :

— Ի՛հ, ըսաւ դուքսը, դեռ չհասկցա՞ք, եղբայր իմ :

Հէնրի ա՛՛ Սնժու դ.քսին այնպէս նայեցաւ, որպէս թէ քօլ
մ' իր աչերուն վրայէն վար կը ձգէր :

— Եւ ինչ բան, գոչեց :

Գուանսուա գլխովի շարժում մ' ըրաւ :

— Բայց ոչ, ըսաւ Հէնրի, դիտեմ որ բնաւ չպիտի հաճիք
այս օրինակ առաջարկութեան մը, Գուանսուա՛ : Գործը խիստ
տաժանելի է, անշուշտ քաղաքացիքը հրահանդ ել տալ չպիտի
ուղէիք դուք, անշուշտ նոցա քարոզչաց բեմբասացութիւններն
ձեզ անհաճոյ պիտի թուէին եւ անոնց ունկնդրելու ձանձրու-

թեան չպիտի տանէիք, պատերազմի միջոցին լքեալ ու վը-
հատեալ՝ Փարիզի փողոցներուն մէջ արիւն քարչնել չպիտի
երթայիք, Պ. տը կիդի նման երբորդութիւն մը կազմուած
ըլլալ պէտք է, ունենալ ալ բազուկ մ' որ Եպրը կոչուի,
ձախ մ' որ Լուի անուանուի : Այդ դուքսը Սէն-Պարթէլըմի
օրը խիստ շատ չարդ տուած ըլլալու է, Ի՛նչպէս կը կարծէք,
Գուանսուա :

— Խիստ շատ :

— Այո՛, թերեւս : Բայց, Գուանսուա, երբէք իմ հարց-
մանցս չպատասխանեցիք, ինչու՞. ձեզ յայտնած խորհրդոյս վը-
րայ առարկելն ակորժեւ պէտք էիք. ապուշեքէն խորտակ-
ւած զրահներուն ու սաղաւարտի նման գլուխ դրուող պոյս-
ներուն հետ դո՞ք մ' ունէիք : Ի՛նչ, դուք ժողովուրդը զըր-
զըւե՞լ կուզէք, միթէ դուք որ մեր արքունեաց վերագոյն
պաշտօնեայն էք, սեւ ըլլայ օրս, եղբայր իմ, մարդս ինչպէս
կենացը հետ կը փոխուի :

— Այ թէ ինձ, այլ թերեւս ձեզ համար այդպիսի բան
մ' ընել կը կամէի, եւ ասոր ալ վտանգ կ'ընաք ըլլալ :

— Աղջիւ եղբայր, յարգելի եղբայր, ըսաւ Հէնրի իւր մա-
տին ծայրիւ արտասուք մը սրբելով, որ բնաւ պատահած չէր :

— Աւրեմն, ըսաւ Գուանսուա, ասի ձեզ շատ անհաճոյ չը-
թուի՞ր, Հէնրի, որ Պ. տը կիդի վտահաջած պաշտօնը ես
յանձն առնում :

— Ի՛նձ, ինձ անհաճոյ թուի՛լ, գոչեց Հէնրի : Ստատնին
ակամջը խլանայ, ոչ, ինձ անհաճոյ չէ ատի, ասի ընդհակա-
ռակը զիս կ'ուրախացնէ : Այսպէս, դուք ալ Դաշնաւորու-
թեան վրայ խորհած էք : Խիստ բարի, ճշմարիտ, խիստ բարի :
Այսպէս ուրեմն, այդ գաղափարին մէջ դուք ալ փոքրիկ մաս
մ' ունէիք, ը՛հ, ի՛նչ կ'ըսեմ թէ փոքրիկ մաս մը, ոչ, մեծ
մաս մը : Բայ ՚ի ասիէ բոլոր ձեր ըսածներն ալ սքանչելի են,
կերդնում այսպէս : Ես, ճշմարիտ որ վեհ հանճարներէ շրջա-
պատուած եմ եւ ես իմ տէրութեանս մեծ աւանակն եմ :

— Ո՛հ, Ձեր Վեհախառութիւնը կատակ կ'ընէ :

— Եւ, Ատոռեած չընէ, խնդիրը շատ ծանր կերպորանք մ' ունի: Ինչպէս որ կը խորհէի այնպէս ալ խօսեցայ, Ֆռանսուա, դուք զիս մեծ հոգէ մը կազատէք, այնքան առաւել մեծ կրտսմ, որ, Ֆռանսուա, ինչպէս կը տեսնէք, երկար ժամանակէ վեր հիւանդ եմ, զօրութիւնս և ոյժս կսպառին: Միւրօն միշտ այս բանն ինձ կը յայտնէ: Բայց տեսնենք, կարելոր լնդրոց դառնանք, երբ ևս ձեզմով կրնամ լիով բուսկանանալ, իմ խորհրդոցս ի՞նչ պէտք ունիմ: Բսենք ուրեմն որ զձեզ Գաշնաւորութեան հրամանատար կանուանեմ, հէ՛:

Ֆռանսուա ուրախութենէն դողդղայ:

— Ո՛հ, եթէ, ըսաւ, Ձեր Ահհախառութիւնը զիս այդ վտահութեան արժան կը համարէ:

— Ատահութիւն, ա՛հ, Ֆռանսուա, վտահութիւն, այս վայրկենիս, ուր հրամանատարը Պ. տը Աիզը չէ, ալ որմէ՞ կատկած եղս կուզէք, նոյն ինքն Գաշնաւորութենէ՞ն, արդեօք կըրնայ ըլլալ որ Գաշնաւորութիւնը զիս վտանդի տակ դնէ: Խօսէ՛, ազնիւ Ֆռանսուա, ըսէ ինձ ամէն բան:

— Ո՛հ, Տէր արքայ, ըսաւ դուքը:

— Որքան յիմար եմ, կրկնեց Հէնրի, այս պարագայիս մէջ եղբայրս հրամանատար չպիտ' ըլլայ, կամ, ըսաւ եւս այնպիսի միւրջի մը մէջ պիտ' ըլլայ որ երբէք վտանդի մը կատկածը տեղի չունենայ, հէ՛, ասի քաղաքականութիւն մ' է, այս և մեր բանագէտը մեր ստակը մենէ դողցած չէ, ոչ. ճշմարիտ, ոչինչ կատկած չունիմ: Ես իս, շատ մ' ալ զինու մարդիկներ կը ճանչեմ Գաղղիոյ մէջ, որոնք Գաշնաւորութեան ինձ թիկունքներ տուած օրը ասննայն թիութեամբ անոր դէմ տուր կը մերկանան:

— Ըշմարիտ է, Տէր արքայ, պատասխանեց դուքը դրեթէ իւր եղբօր ջոյց տուածէն աւելի պարզութեամբ, թագաւորը միշտ թագաւոր է:

Երբօ աչքին մին կրկին բացաւ:

— Յաւալ Ատոռեած, ըսաւ Հէնրի: Բայց դժբաղդարար ես ալ դատարար մը կը յղանամ, այսօր անհաւատարի կը թուի ինձ թէ ինչպէս այսքան օրերէ ետք հագիւ միտքս կուգայ:

— Ի՞նչ դաղախար, եղբայր իմ, հարցոց դուքը որ արդէն անհանդիստ ըլլալ սկսեր էք, որովհետեւ չէք կրնար հաւատալ որ այնպիսի փառասոր երջանկութիւն մ' առանց արգելքի գլուխ ելլայ:

— Է՛հ, մեր տը Աիզ հօրեղբորդին, այս հնարագիտութեան հայրը, կամ գրեթէ կարծեցեալ հայրը, մեր տը Աիզ հօրեղբորդին, կըսեմ, հաւանականաբար գործին գլուխ սահմանած է ինքզինք ըստ ինքեան: Հրահանգ եւս պիտի խնդրէ:

— Հրահանգ, Տէր արքայ:

— Անտարակոյս, առանց որ և է դոյզն կաժկածանաց, հաւանականաբար գործը սնուցած է որպէսզի անկէ օգուտ մը քաղէ: Ըշմարիտ է որ կրտսք թէ դուք ալ իրեն հետ միտախն սնուցած էք: Զո՞ ոչաջիք, Ֆռանսուա, նա իր ձեռնարկին մէջ ինքզինք զրհոյ մարդ չէ, գիտեք Արգգելիտը. Ա. յո՞ւն, Բաշնաւորութիւնը, որ ինչ չէնէ բոյն:

— Ո՛հ, Տէր արքայ:

— Ֆռանսուա, կը պնդեմ որ այսպէս կը խորհն: Զեախիտ անհոգ դիտէ:

— Այո՛, բայց Ձեր կառն իրեն յայտնած կէտերնէդ տեղե պիտի տայ:

— Կամ տեղի տալ պիտի կեղծէ: Եւ արդէն ըսի ձեզ, զոչաջիք, Ֆռանսուա, տը Աիզ հօրեղբորդիս երկայն բազուկ մ' ունի: Աւելի պիտ' ըսեմ, պիտ' ըսեմ որ երկար բազուկներ ունի, այնպէս որ տէրութեան մէջ ոչ մին և ոչ նոյն իսկ թագաւորն չկրնար անոր պէս դաննը տարածելով մէկ ձեռքն Սպանիա և միւսն Սեպիլիա հասցունել, մէկ ձեռքով Աւստրիան տն թիւանը և միւսովը Եփրատէթը շարժել: Պարկոնյեր թեպէտ տը Աիզ հօրեղբորդոյս բազկէն թիչ մ' աւելի երկար թուր մ' ունէր, սակայն Ֆռանսուա Ա. մեր հաւուն շատ չարիք հասուց:

— Բայց, ըսաւ Ֆռանսուա, և թէ Ձեր Ահհախառութիւնը զանի այսքան վտանգաւոր կը դառնէ, աւելի եւս իրաւունք

կունենայ որ Գաշնաւորութեան հրամանատարութիւնն ու հրաշանդն ինձ տայ, զանի իմ և ձեր զօրութեան մէջ կապելու համար, և այնուհետեւ յանդիմութիւն մ'ընելու առաջին քայլափոխն առնելու միջոցին իւր դատը տեսնելու համար:

Շիրք միւս աչքն ալ բացաւ:

— Իւր դատը, Ֆռանտուա, իւր դատը կրտէք, աստի Լու դովիկոս մեռատաներորդի համար դէշ չէր ըլլար, որ դատ վարելու և խարոյկ ու կախադան հանելու համար թէ զօրաւոր էր և թէ հարուստ, սակայն ինձ համար, ևս բոլոր սեւ վերարկուներն, որոց պէտք կրնամ ունենալ, այսպիսի պարագայի մը մէջ գնելու չափ ստակ անդամ չունիմ:

Հէնրի այս խօսքերն ըսելով, որ իւր անձին վրայ ունեցած զօրութեան ու վստահութեանը հակառակ, դժուարաւ կըրցած էր ողևորիլ, մէկ նայուածքով մը թախանցեց, որուն իմաստը դուքսը չկրցաւ հաւաքել:

Շիրք երկու աչերը կրկին փակեց:

Վայրկեան մ'երկու իշխանաց մէջ լռութիւնը տիրեց:

Զանի առաջին անգամ թաղաւորն ընդմիջեց:

— Ուրեմն պէտք է խաղառ հոգալ սիրելիք իմ Ֆռանտուա, ըսաւ, ոչ քաղաքական պատերազմներ, ոչ իմ հպատակացս մէջ վէճեր պէտք չէ անտես ընել: Ես պատերազմիկն Հէնրիի և խորագէտն Քոթիերիին զուտկն եմ, ևս իմ բարի մօրս խորամանկութենէն մտո մը ժառանգած եմ, որ Արիզ դուքսը հիմայ կանչել կ'տամ, իրեն շատ մը փառաւոր խօստումներ կ'ընեմ, որպէսզի քու գործդ բարեկամօրէն կարգադրենք:

— Տէր արքայ, գործդ տ'Անժու դուքսը, հրամանատարութիւնն ինձ արժան կը դատէք, այնպէս չէ:

— Մեծապէս կը յուսամ:

— Արդէն եղածին վրայ հաստատ էք:

— Խիստ շատ:

— Կը հաճիք վերկայէս:

— Իմ ամենամեծ բաղձանքս այդ է. բայց և այնպէս չեմ

ուզեր նաեւ որ այս բանն իմ տը Արիզ հօրեղբորդոյս ալ անհաճոյ թուի:

— Բարի, անհոգ եղիք, ըսաւ տ'Անժու դուքսն, եթէ իմ անուանակոչութեան արդեւրը միայն այդ մտածմունքնիդ է, ևս յանձն կառնում դքսին հետ խնդիրը կարգադրել:

— Եւ ե՞րբ:

— Այս վարկենիս:

— Ուրեմն զինքը դոնալ կերթաք, իրեն այցելութիւն տալ կու գէք: Ո՛հ, եղբայր իմ, այդպէս ըրէք, պատիւ խիստ մեծ է:

— Ո՛չ, Տէր արքայ, զինքը դոնալ չլիտ' երթամ ընաւ:

— Հասցա՞մ:

— Արդէն ինձ կ'սպասէ:

— Ո՛ւր:

— Իմ տունս:

— Քո՞ւ տունդ: Լուսլրէն դուքս ելած ասան զինքն ողջունողներու ազգակիները լսեցի:

— Այո՛, բայց մեծ դոնէն դուքս ելլելէն յետոյ պարսպին դադոնի դոնէն ներս մտած պիտ' ըլլայ: Թագաւոր տը Արիզ դքսին առաջին այցելութեան, իսկ ևս երկրորդ այցելութեանն իրաւունք ունիմ:

— Ս՛հ, եղբայր իմ, ըսաւ Հէնրի, երբեմն մեր առաջնութեան պատիւն այսպէս պահենիդ զիտեմ ու ինչպէս լքանելու ակարութիւնն ունիմ: Պեացէք, Ֆռանտուա, և յարմարուցէք:

Գուքսն իւր եղբոր ձեռքը բռնեց և համբուրելու համար ծռեցաւ:

— Ի՞նչ կ'ընէք, Ֆռանտուա, բազկացս մէջ սրտիս վրայ, հոն է ձեր ճշմարիտ տեղը:

Եւ երկու եղբայրներն կրկին և կրկին գիրկընդխառնեցան, յետոյ վերջին անգամ մ'ևս զերար սեղմելէ զինի, տ'Անժու դուքսն իւր եղբոր բազկաց մէջէն ելած՝ խուցէն դուքս ելաւ, արագութեամբ սրահները ձգեց և իւր բնակարանը դիմեց:

Իւր սիրտը՝ առաջին նաւարկուի մը նման չզթայէ ու պողպատէ շրջանակուած պէտք էր ըլլալ ուրախութիւնը շյայտանելու համար :

Թագաւորը՝ տեսնելով որ իւր եղբայրը հեռացած է՝ բարկութեան մանչիւն մ'արձակեց, և Մարիլիա աը Նալարի սենեակին առաջնորդող դաղանի նրբուղին սահելով տեսակ մը գլան դտաւ, ուրկէ, ինչպէս Տընի իւր դիտարանէն իր բանտարկեալներուն խօսակցութիւնն, և այս ալ աը Աիլ և մ'Անժու գ.քսերու խօսքերն ամենայն դիւրութեամբ կընար ընել :

— Չարածճի, ըսաւ Շիքօ իւր երկու աչերը մեկէն բանալուն հետ մէկտեղ կընակին վրայ կըթնելով. ընտանեկան տեսարանն ինչ սրտաշարժ բան է : Այլըկեան մ'ինքզինքս Աղիւ՛ պոսի վրայ տանաւայ բաժանումէ մ'ետք իրար միացող Գասթօրի և Բօլլիւքի ներկայ կարծեցի :



ՅԼՈՒԽԾ ԺԳ .

ՓՈՐՔՈՒՄԵՒԹԵ ԼՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՏԻԿ ԸՆՆԵԼ ԱՄԵՆԷՆ
ԼԱՒԱԳՈՅՆ ՄԵՋՈՅՆ Է

Դուքս մ'Անժու իւր բնակարանը և Նալար թագուհոյն սենեակին մէջ, ուր երբեմն Աէառնէն ու Մույ ցած ձայնով և բերան ականջի դրած՝ իրենց վախտեան յատակագիծն եղծած էին, աը Աիլ դուքսը գտաւ : Խոհեմն Հէնրի քաջ դիտէր որ Լուվրի մէջ չկայր ուրիշ յարմարագոյն սենեակ մ'որ ասոր նման որ նոյն իսկ կիտաձայն հնչուած խօսքերն մտիկ ընելու պէտքն ունեցող անձին ականջն ի վար կաթեցնելու օգնէր : Տ'Անժու դուքսն այս պատմութեան բոլորովին անտեղեակ չէր, սակայն իւր եղբոր պարզմտօրէն խօսելն այն-

քան դժբաւուած էր որ ամէն բան մուսցաւ կամ ընաւ կարելորութիւն չտուաւ :

Հէնրի Գ. ինչպէս քիչ մ'առաջ ըսինք, ճիշդ իւր եղբոր սենեակը մտած կէտին ինքն ալ իւր լաբանը մտաւ, որով երկու խօսակցաց և ոչ մի բառը ուշադրութեան չվրիպեցաւ :

— Է՛հ բարի, Տէր իմ, հարցուց դուքս աը Աիլ եռանդեամբ :

- Է՛հ բարի, դուքս, ժողովը վերջացաւ :
- Մա՛տիկ դունտամ էիք, Տէր իմ :
- Զգա՛լըպէս, հարցուց դուքսն անհանգստութեամբ :
- Ինձ համար, այո՛, Տէր իմ :
- Արդեօք թագաւորը չտեսա՞ւ :
- Նրբէք, գէթ ևս այնպէս կը կարծեմ, և Նորին Վ. Է. հափառութիւնը Ձեր Բարձրութիւնը վար գրաւ :

— Տեսա՛ք, դուքս :

— Անտարակոյս իրեն ընելու եկած առաջարկութեանն մտան խօսելու համար :

— Այո՛, Պարոն :

Այս միջոցին բաւական շիտթ լուութիւն մը եղաւ, որ բուն իմաստն Հէնրի Գ. հասկցաւ, որ նոցա խօսակցութեանն բառ մ'անգամ չկորսնցնելու գրից մէջ կը կենար :

— Եւ ի՞նչ ըսաւ Նորին Վ. հափառութիւնը, հարցուց դուքս աը Աիլ :

— Թագաւորը դաղախորին հաւանեցաւ, բայց դաղախորը քրքան որ մեծ և նշանաւոր է, նոյնքան ևս առաւել ձեզ նման մէկ մը այսպիսի գործի գլուխն անցունելը վտանգաւոր կը թուի իրեն :

- Ըսել է յոյսերնիս ՚ի դերեւ. կելլայ :
- Աը կատկածիմ, սիրելիդ իմ դուքս, և ինձ կը թուի թէ Գաշնաւորութիւնն ջնջուած է :
- Սեւ բազդ, ըսաւ դուքսն, ատի ծնելէ յառաջ մեռնիկ, սկսելէ յառաջ աւարտել ըսել է :
- Երկուքն ալ իրարմէ աւելի վարպետօրդի են, ըսաւ

ցածուն և սեղմեալ կերպով Հէնրիի ականջն 'ի վար խոնարհելով անոր լարանին մէջ որոտացող մարդու մը ձայնը :

Հէնրի յանկարծ ետին գարձաւ և Շիքօի կրօնացեալ խոշոր խոնարհեալ, որ մտիկ ընելու համար իւր ծակուն վրայ ծռած էր :

— Ետեւէս եկար, անառակ, ըսաւ թագաւորը :

— Լուէ, ըսաւ Շիքօ, ձեռնացի շարժում մ' ընելով, լուէ, դաւակաւս. մտիկ ընելէ զիս կարդիլես :

Թագաւորն ուսերը թօթփեց, բայց ամենայն մասամբ վշտահոլութեան արժանի Շիքօէն զատ որ և մարդկային էակ մը չգտնուիլն հասկնալով սխտեց վերստին ունկնդրել :

— Դուքս տը Կիզ խօսելու կ'սկսէր :

— Տէր իմ, կ'ըսէր, ինչ կը թուի թէ թագաւորն այս պարագային խաղաւիւր մերժումն յայտնեց, բոլոր իւր խորհուրդըն ինձ յայտնելու համար բաւական անարժան ընդունելութիւն մ' ըրաւ ինձ : Արդեօք զիս իմ իրաւունքէս զրկել կ'ուզէ :

— Կարծեմ, ըսաւ իշխանն կակաղումով :

— Այնպէս է նէ գործը պիտի աւերէ :

— Աներկբայ. ըսաւ տ' Անժու դուքսն, և ձեր պայմանածին հասեմատ գործին մէջ բոլոր ջանիւքս զիս երկրորդելու շանացի և յաջողեցայ ալ :

— Ի՞նչ բանի մէջ, Տէր իմ :

— Սա՛ որ թագաւորը գրեթէ զիս տեսուց կարգած է Գաշնաւորութիւնը կամ կենդանոցներու կամ խաղաւիւրդներու :

— Եւ ի՞նչպէս, ըսաւ Լորինացի դուքսն ' որու աչաց բերերն իրեն հակառակ փայլակիլ սկսան :

— Մտիկ ըրէ. քաջ գիտէք որ այս բանը վարչութեան գլխաւորներուն հաւանութենէն կախումն ունի : Եթէ՛ գձեզ մերժելու և Գաշնաւորութիւնը քակտելու տեղ գործին նըպատաւոր դուրս մ' անուանէր, եթէ՛ տը Կիզ դուքսն այս պաշտօնը բարձրացնելու տեղ տ' Անժու դուքսն ընտրէ՛ր :

— Ա՛հ, ըրաւ տը Կիզ դուքսն, որ ոչ իւր ազդակը խեղդելու և ոչ իւր դիմաց վրայ տարածուող արիւնը զսպելու չկրցաւ կարողանալ :

— Լա՛ւ, ըսաւ Շիքօ, երկու դամբուներն իրեն սակրին համար կուռիլ կուզին :

Բայց Շիքօի, մանաւանդ թագաւորին՝ որ Շիքօի չափ բանին տեղեկութիւն չունէր, զարմանքը մեծ եղաւ, երբ տեսան որ անմիջապէս տը Կիզ դուքսն շուարումէն ու զայրութեն խաղաւիւրդած՝ հանդարտ և գրեթէ ուրախալիւր ձայնով մը .

— Տէր իմ, ըսաւ, եթէ այդ բանն ընողը դուք էք պիտի ըսէի թէ շատ վարպետորդի քաղաքազէտ մ' էք :

— Ես եմ, պատասխանեց դուքսը :

— Այդչափ սրազ :

— Այո՛, բայց պէտք է ըսել որ պարագան ինձ կ'օգնէր, ես ալ անկէ նպատաւորեցայ. ամեն անգամ, սիրելիք իմ դուքս, յարեց իշխանը, ամեն անգամ ձեզ տեսնելէ յառաջ բան մը կատարուած կամ բան մ' արդիւրեւած չէ :

— Ի՞նչպէս, Տէր իմ :

— Որովհետեւ չեմ գիտէր տակաւին թէ աս բանն ինչի պիտի ծառայէ մեզ :

— Ես խիստ լաւ գիտեմ, ըսաւ Շիքօ :

— Ասի փոքրիկ գաւաղբութիւն մ' է, ըսաւ Հէնրի ժպտելով :

— Եւ որոյ վրայօք Պ. Մօրիլիլիէ, որ միշտ քու դուշակածդ քեզ պատկերացնելու յաջողակ է, ընաւ բան մը չէր խօսէր. բայց թող մեզ մտիկ ընելու, ասի շահաւոր պիտի ըլլայ մեզ :

— Ի՛նչ լաւ, ես ձեզ կըսեմ ահա, Տէր իմ, ոչ այս բանը մեզ ինչի ծառայել կարենալն, ըստ որում այդ կէտն միայն Աստուած գիտէ, այլ թէ մեզ կրնայ ծառայել, կրկնեց տը Կիզ դուքսը. Գաշնաւորութիւնը երկրորդ բանակ մ' է, արդքանի որ ես առաջինը և կարգինալ եղբայրս ալ Եկեղեցին կը հրամայէ ու քանի որ մենք միութեամբ կապրինք որ և է մէկը մեզ գիմնագրելու անկարող պիտ' ըլլայ :

— Ասանց հաշուելու որ ես, ըսաւ տ' Անժու դուքսը, պատկին մերձաւորագոյն ժառանգորդն եմ :

— Ա՛հ, ա՛հ, ըրաւ Հէնրի :

— Իրաւունք ունի, ըսաւ Շիրքօ, այդ սխարմունքոյդ է, ամեն աստիճանի Նօթի-Տամի երկու շապիկնեք, իրարմէ կը բաժնէք :

— Նաեւ՝ Տէր իմ, որքան որ ալ թագին մերձաւոր ժառանգորդն ես, վատթար պատահարներն պէտք է անդամ մը հաշուէք :

— Գուքս, կը կարծէք թէ դործն արդէն լմնցած չէ, և միթէ հարիւր անգամէն աւելի ասոր վրայ չե՞մ խորհած :

— Նախ և առաջ՝ Նախարի թագաւորը կայ :

— Օհ, ստի երբէք հող չե՞մ ընէր, նա իւր Գօտօյի սիրով ու հրապոյրներովն զբաղած է :

— Նա միայն, Տէր իմ, նա պիտի մըցի ու մտքառի մինչև ձեր քսակի բերանակապը, մաշած, վտխ ու սոված է, կը նմանի այն տանեաց կատուններուն, որ մկան մ' ամենապարզ մէկ հասն առնելով ողջ գիշերներ լանցոյցի եղբը կը սպասեն. մինչդեռ ասդին պտարտ, գեղեցկամարդ և ընտիր հանդերձներով պատուտեալ կատուն՝ որքան որ ալ իւր թաթն խոշոր ըլլայ՝ զանի իւր վերարկուն մէջէն դուրս չկրնար հանել. որ Նախար թագաւորը ձեզ կը դիտէ, ժամապահ դարձնակալութեամբ ձեզ կ'սպասէ. ոչ ձեզ և ոչ ձեր եղբայրն ամենեւին իւր տեսութենէն վրիպեցուցած չունի. ձեր գահուն նօթին ու ծարուն է : Սպասեցէք որ վերը նստողին դիպուած մը պատահի, այն ատեն պիտի տեսնէք որ վտխ կատուն իւր ձիւրնը ձեզ ցոյց տալու համար Բօէն Փարիզ մէկ ստուամով միայն չպիտի ցատկէ, կը տեսնէք, Տէր իմ, կը տեսնէք :

— Դիպուած մ' անոր որ գահուն վրայ նստած է, կրկնեց Գոտնուա յամբօրէն իւր հարցախոյզ աչերն ար Ալիզ վրան յաւելով :

— Հը, հը, ըրաւ Շիրքօ, մտի՛լ ըրէ Հէնրի, սա Ալիզը կըրթական բաներ կըսէ կամ ըսելու կ'սկսի, և այդ մասին յօդուս քո քեզ հետ պիտի խորհրդակցիմ :

— Այո՛, Տէր իմ, կրկնեց դուքս տը Ալիզ : Դիպուած մը : Մեր ընտանեաց մէջ պատահարներ հազուադիւս չեն, ասի

դուք ալ ինձ պէս դիտէք, և կարելի է ինձէն ալ լաւ դիտէք, որ քաջաուղղ իշխան յանկարծ չտկարանար, որ տարեւոր անձ քանի մը ժամ եւս ապրելու միջոց չ'ունենար :

— Ար ըսե՞ս Հէնրի, կը ըսե՞ս, ըսաւ Շիրքօ թագաւորին ձեռքը բռնելով որ դողդաղով պաղ քրտինք մը կը սրբէր :

— Այո՛, ստոյգ է, ըսաւ մ' Անժօս դուքսն այն աստիճան խուլ ձայնով մ' որ թագաւորն ու Շիրքօ վայն ըսելու համար իրենց ուշադրութիւնը կրկնապատկելու տորպուեցան. ստոյգ է, իմ սերնդեան իշխաններն աղետալի ներշնչութեան մը տակ կը ծնին, բայց Հէնրի Գ. եղբայրս, փա՛ւք Աստուծոյ, առողջ և սրբակեցիկ մէկն է. երբեմն պատերազմի տքնութիւնները կրած ու դիմացած է, հիմայ աւելի իրաւամբ դէմ պիտի տայ, զի իւր կեանքը վերածնութեան ու վերաստեղծութեան մէկ հետեւանքն է. վերածնութիւն կամ վերաստեղծութիւն որ ուրիշ անգամ դիմացածին պէս հիմայ ալ կը դիմանայ և կը տանի :

— Այո՛, բայց, Տէր իմ, բան մը կայ, կը յիշէք : կրկնեց դուքսը, վերածնութիւններն, որոնցմով որչափ որ Պապը իոյ տիրող թագաւորներն կ'ազատին, տակաւին վտանգէ ապահով չեն, օրինակի ազալաւ ձեր հայրը՝ Հէնրի Բ. ինչ կերպով մեռաւ, որ բարեբաղդարար պատերազմի վտանգներէն զերծուած ու այդ խօսածը վերածնութեան միայն կը վրձակէր : Մօնթիօմէրիի նիզակին երկաթը բարեդէպ զէնք մ' էր, ասի ճշմարիտ է, բայց ճշմարիտ է զրահն մը և ոչ այքի մը նկատմամբ, Հէնրի Բ. ալ մեռած է, և ահա այս պատահարը կը մտածեմ ես : Գուք ինձ պիտ' ըսէք թէ տասն և հինգ տարի վերջն այս դէպքն, որ կանխադրուածեան շնորհիւ լի կը կարծուէր, առիթ եղած է որ Մայր թագուհին Մօնթիօմէրիին կախել ու զլխատել տուած է : Ճշմարիտ է ստի, բայց թագաւորն այդպէս մեռած չէ : Պալով ձեր եղբորը, հանդուցեալ Գոտնուա թագաւորին. կը տեսնէք ինչպէս իւր տկարանութիւնը զինքը սխալեցուց ժողովրդականութեան ողբոյն մասին այս բարի իշխանն ալ տարաբաղդարար մեռած է : Ար

խոստովանիք հարկաւ, Տէր իմ, որ ականջի յաւ մ' ունէր, որ շարն սատանան պատահարի մը տեղ պիտի բռնէ: Սակայն ուրիշ մ' ալ և ակելի ծանրը կայ: Քաշտին ու պալատին մէջ ալ քանի անգամ լսած եմ ըսուիլը թէ այս մահացու հիւանդութիւնը Ֆռանսուա Բ. ի ականջին մէջ՝ ուր երբեմն բազդը գուռուելու սխալմանը կանխելու համար արմատացած և ասի ակելի կրնանք դիւրաւ հետեւցունել իւր մեծ հանրածանօթ անունէն:

— Պո՛ւքս, մրմուռաց Ֆռանսուա կարմրելով:

— Ս, յո՛, Տէր իմ, այո՛, շարունակեց դուքսը, թագաւորին անունը ժամանակէ մ' ի վեր դժբաղդութիւն ունի. որ Բոնապարտէն ասացեալ, կը կոչուի: Տեսէք, Սնթուան տը Պուրպօնը, խկապէս թագաւորին այս անունն է որ հրացանի հարուածն իւր ուսին վրայ կանչած է, պատահար մ' որ երբէք թագաւորի մը համար մահացու չէր եղած, բայց և այնպէս վերջապէս անոր վախճանը մահն եղաւ: Աչքն, ականջն և ուսն Քաղցիոյ մէջ մեծ սուղ ձգած են, և ասի ինձ կը յիշեցնէ նոյն իսկ ձեր Պ. Պիւսիի գեղեցիկ մէկ ոտանաւորն որ սոյն նկատմամբ շինած է:

— Ա՛ր ոտանաւորն, հարցուց Հէնրի:

— Գնա՛ բանդ, ըսաւ Շիքօ, չէք գիտէր:

— Ո՛չ:

— Աւրեմն իրաւամբ ճշմարիտ թագաւոր մ' ըլլալու ես, որ մարդ այս բաները քենէ պահէ: Ահա ես բռեմ և դու մտիկ ըրէ:

Աչքով, ուսով և ականջով՝ Քաղցիան,

Քաղաղ դրաւ սգով երէկ իւր արքայն.

Ուսով, աչքով և ականջով մահապէճ,

Մեռուց երեք թագաւորներ Կօլի մէջ:

— Բայց սո՛ւտա, սո՛ւտա, լռէ, ինձ այնպէս եկաւ որ կարծեմ եղբայրդ մեզ ակելի օգտակար մ' ալ ըսելու կ'ըսկսի:

— Բայց վերջին ոտանաւորը:

— Օր մը ձեզ կարգամ, Պ. Պիւսի իւր վեց տողեան ըս-

տիքերովը երկրտասանի վերածէ:

— Ի՞նչ ըսել կուզես:

— Ըսել կուզեմ թէ երկու ընտանեկան ցանկէն երկու անձ կը պակսի, բայց, ուշ դիր, Պ. տը Կիզ խօսելու կ'ըսկսի, և ինք չպիտի մոռնայ զանոնք:

Արդարեւ սոյն պահուստ խօսակցութիւնը կրկին սկսեցաւ:

— Սուանց թուելու, Տէր իմ, կրկնեց տը Կիզ դուքսն, որ ձեր ազգականաց և դաշնաւորներուն պատմութիւնն ամբողջապէս Պիւսիի տաղաշարութեանցը մէջ ամփոփուած չէ:

— Երբ զայն քեզ ըսէի, ըսաւ Շիքօ արմուկովն Հէնրին հրելով:

— Յովհաննա տ' Սլարէն, Պէտուեի մայրը կը մոռնար, որ զոյգ մը հոտաւէտ ձեռնոցներ հոտոտելով քթէն մեռաւ, զորս Սէն-Միշէլի կամուրջն Ֆլորանտցիէ մը գնեց, խիտ առանկակալ և այնպիսի աշխարհ զարմացնող պատահար մ' է որ այս բոլորէիս քանի քանի անձինք այդ օրինակ մահու մեծ հարկաւորութիւն ունին: Այնքա՛ր ժխտել Տէր իմ, որ այս մահը ձեզ որչափ զարմանալի կը թուի:

Պուքսը յօնքերը պոստելէ զատ ուրիշ պատասխան մը չտուաւ. որնոր իւր խորասոյզ աչերուն աջօտ ճնշում մ' եւս տուաւ:

— Կարողոս Թ. ի պատահարն որ Ձեր Բարձրութիւնը կը մոռնայ, ըսաւ դուքսը, բայց և այնպէս ահա ուրիշ մ' ալ որ արդարեւ յիշատակութեան արժանի է: Ոչ աչքէն, ոչ ականջէն, ոչ ուսէն և ոչ քթէն, այլ ինք ալ բերանէն պատահարուած է:

— Կը հաճի՞, ըսաւ Ֆռանսուա:

Եւ Հէնրի երրորդ ճանչող տախտակամածին վրայ իւր եղբոր քայլերուն դիրքիւնքը լսեց, որնոր սարսափումէն յետո կնկրկէր:

— Ս, յո՛, Տէր իմ, բերանէն, կրկնեց տը Կիզ, որսորդութեան գրեանքն վտանգ պիտի են, վասնզի իրենց տերեւներն իրար մածուած ըլլալով մարդ ամէն վայրկեան իւր մատը բերանը տարուբերելով միայն կրնայ թողտատել, ասի ձերունի

խոյրերուն լորձունքն կապականէ և որ և է մարդ մը, նոյն իսկ թագաւորը հեռուն չերթար եթէ իւր լորձունքն ապականած է:

— Գ՛նւքս, դ՛նւքս, կրկնեց իշխանն երկու անգամ, կարծեմ մեղքեր հնարելն հաճոյք կազդէ ձեզ:

— Մեղքե՛ր, հարցուց տը Աիզ, հը՛, ո՞վ ձեզ մեղաց վրայ կը խօսի: Տէր իմ, ևս պատահարները կը նկարագրեմ, այս միայն բրաճս, պատահարները, լաւ կը լսե՛ք: Հիմայ խընդիրը միմիայն պատահարի և դիպուածոց վրայ է: Միթէ՛ որտեառն Աարդուս Թ. ի դիպած արկածն ալ պատահար մը չէ՛:

— Աեցէք, բաւ Նիքո, ահա քեզ համար դարձեալ որսորդ մ'ալ, Հէնրի, լսէ, լսէ, ասի շատ հետաքրքրական բան պիտի բլայ:

— Ինչ որ կայ գիտեմ, բաւ Հէնրի:

— Ա, յո՛, բայց ես չեմ գիտեր, ևս տակաւին արբունիքը ներկայացած չէի, ուստի թող զիս, գաւախ, որ մտիկ ընեմ:

— Գիտէք, Տէր իմ, ո՞ր որսորդութեան ակնարկել կ'ուզեմ, շարունակեց Արեւնայի իշխանը, կը խօսիմ այն որսորդութեան վրայ, ուր, բոլոր ուշադրութիւն ձեր եղբոր վրայ յարձակող վարազն ստտակելու տուած, այնպիսի դահավիժութեամբ կրակ մ'ըրիք որ ձեր կէտն պատակին հասցնելով կենդանին խաւարեցնելու տեղ ձեր դիտանչանէն դուրս եղողն մարեցիք: Ա, յս հրացանի հարուածն, Տէր իմ, գործառական դաս մը կ'տար գեղեցիկ կերպիւ սովորեցնելու թէ ինչպէս ամեն բանի մէջ պատահարներէ կասկածելու է: Արդարեւ՝ բոլոր աշխարհ՝ արբունեաց մէջ ձեր ճարտարութիւնը կը ճանչէ, Ձեր Բարձրութիւնն երբէք իւր հարուածները չինայեց և պարտաւորեցաք զարմանալու որ ձերայինք անտարբեր կեցան ու խնայեցին. մանաւանդ երբ թշնամական չարակամութիւնն այնպէս հռչակ տարածեց որ Ձեր Բարձրութեան նորա քովէն պակասած առեն՝ եթէ տը Նավար թագաւորն բարեբաղդաբար վարալը ստտակեցուցած չըլլար, թագաւորին՝ իւր ձիուն ներքեւ իյնալն կընար անոր մահ պատճառել:

— Աղէկ, բայց, բաւ տ' Անժու դուքը վերստին ապա-

հով ըլլալով որ տը Աիզ դ. քսին հեղնութիւնն անդ թարար թամբն իւր գնտակներով կ'ոճել ու քանդելու կ'սկսէր, ուրեմըն՝ Ի՛նչ շահ ունէի թագաւորէն, այն է իմ եղբորս մահուանէն, քանի որ Աարդուս իննեըրորդի յաջորդն Հէնրի երրորդ անուանել կը պարտէր:

— Անգամ մը միտ գնեմք, Տէր իմ, արդէն թափուր դահ մ' ունէր, այն է Բօլժոնեան: Աարդուս իննեըրորդի մահը անոր քով ուրիշ մ' ալ կաւեցնէր, այս ալ Ֆուանտուան է: Մնտարաւ կոյս, քաջ գիտեմ որ ձեր անդրանիկ եղբայրն առանց երկրայութեան և առանց հակառակութեան Ֆուանտայի գահէն սրոյնց, Բայց Բօլժոնիոյ գահոյն գէմ ալ ամենէն աւելի վաւարակ յետին չորութիւն մ' էր, շատ մ' անձինք կան որ՝ ինչպէս ստոյգ աղբիւրներէ կը լսեմ, տը Նավար թագաւորին փոքրիկ աղքատիկ դահիկը ելլել կը վառասիրեն: Երկրորդ, ստով նոխասպէս աստիճան մը ձեզ կը մերձենար նա. և որովք դիպուածներն ձեզ համար նպատաւոր կը համարուէին: Հէնրի երրորդ թագաւորը տասն օրուան մէջ Աարչավիայէն իսկոյն վերադարձաւ, այս դիպուածական պարագաներուն մէջ ինչու Հէնրի երրորդ թագաւորին բրաճները դուք չ'ըրիք:

Հէնրի երրորդ Նիքոն գիտեց, և առ ալ թագաւորը գիտեց, բայց ոչ թէ այն չարիմացութեամբն ու եպերական հեղնութեամբ որ հասարակօրէն յիմարին աչքին մէջ կը կարդացուէր, այլ գրեթէ այնպիսի գորովալիը նպատաւորութեամբ մ' որ կարծես իւր պղնձեայ կերպարանաց վրայ միջորէի արեւոյն վրձինովը դժագբուած էր:

— Ի՛նչ կը սահմանէք, դ՛նւքս, բաւ այն ստեն տ' Անժու դուքան այս խօսակցութեանց վերջ տալով կամ վերջ տալու ջանալով, որոց մէջ անընդհատ տը Աիզ դ. քսին դժգոհութիւններն կ'զգար:

— Տէր իմ, սա կը խորհիմ որ իւրաքանչիւր թագաւոր իւր պատահարն ունի, ինչպէս քիչ մ' առաջ արդէն ըսինք: Արդ դուք ալ Հէնրի երրորդ թագաւորին անխօսելի պատահարն էք, մանաւանդ՝ եթէ դաշնաւորութեան ալ հրամանատար

եղած էք, վասնզի Պաշտօնորութեան գլուխ ըլլալովն գրեթէ
թագաւորին վրայ թագաւոր ըլլալ լսել է, առանց խորհելու
որ դճեղ Պաշտօնորութեան գլուխ ընտրելովն Ձեր Բարձրու-
թեան մերձակայ թագաւորութեան այն է Պէարնէի պատա-
հարներն պիտի ջնջէք ու սրբէք :

- Մերձակայ, կը լսե՞ս, հարցոց Հէնրի երրորդ :
- Տէ՛ր ողորմեա՛, կարծեմ կը լսեմ, ըսաւ Շէքօ :
- Ա, յապէ՞ս . . . ըսաւ աը Կիզ դուքսը :
- Ա, յապէս, կրկնեց ա՛ Սնթու դուքսն, կ'ինդունիմ, ասի
ձեր դադախարն է, այնպէս չէ՞ :
- Ինչպէ՞ս ուրեմն, ըսաւ լորենացի իշխանը, կաղաչեմ
դայն ընդունենիդ, Տէր իմ :
- Եւ դո՞ւք, այս երեկոյ :
- Օ՛հ, անհող եղիր, այս առաւօտէն 'ի վեր իմ կուսա-
կիցներս դաչան և այս երեկոյ ողջ Փարիզ հետաքրքրութեամբ
պիտի մտնի :

- Ա, յո երեկոյ ի՞նչ կ'ընեն Փարիզի մէջ, հարցոց Հէնրի :
- Ի՞նչ, չե՞ս գուշակէր :
- Ո՛չ :

— Ո՛հ, որչափ անմիտ ես, որդեակա, այս երեկոյ հրա-
պարակաւ Պաշտօնորութիւնը կը կնքուի, կը լսուի, վասնզի
մինչեւ հիմայ քու ուխտագրութեանդ սպասելով ծածկաբար
կ'ըստորագրէին, կ'որոչէին ու կը վերորոչէին, մարդ չէր լը-
սէր, դու այս առաւօտ ուխտդ կատարեցիր և այս երեկոյ
Պաշտօնորութեան գործը կը կատարեն, արդէն կը տեսնես,
չարածճի, կը տեսնես քու արկածներդ, վասնզի երկու հաս
ունիս դու . . . պատահարներդ ժամանակ չեն կորսնցնէր :

- Եսա լսա, ըսաւ ա՛ Սնթու դուքսն, այս երեկոյ, դուքս :
- Ա, յո՛, այս երեկոյ, ըսաւ Հէնրի,
- Ի՞նչ, յարեց Շէքօ, քաղաքին փողոցներն այս երեկոյ
ասողատակե՞լ կը յօժարիս :
- Անտարակոյս :
- Կը սխալիք, Հէնրի :


- Ինչո՞ւ համար :
- Չգուշացիր պատահարներէն :
- Անհող եղիր, օրինաւոր լսելով մը կեղնեմ, դուք իմ
հետ եկէք :

— Պե՛ս՛ բանդ, դիտ բողբոսկանի մը տեղ կը դնես, վա-
ւակս, երբէք : Ես ուղղափառ քաղօյիկ մ՛ եմ, և Պաշտօն-
որութիւնը կնքել կ'ուզեմ, և ասի ոչ թէ մէկ այլ տասն, ոչ
թէ տասն այլ հարիւր անգամ :

Պուքս աը Կիզի և դուքս ա՛ Սնթուի ձայները մարեցան :

- Խօսք մ՛ ալ, ըսաւ թագաւորը Շիքօն կայնեցնելով,
որ երթալու կը ձգտեր : Ի՞նչ կը խորհիս այս ամէնուն վրայ :
- Սա կը խորհիմ որ իւրաքանչիւր նախորդներդ իրենց
պատահարները չեն ճանցեր, Հէնրի երկրորդ աչքը չ'զգու-
շացուց, Փռանտուս երկրորդ ականջը չ'զգուշացուց, Անթուան
աը Պուրպօն աւր չ'զգուշացուց, Յովհաննա ա՛ Սլալլէ քեթի
չ'զգուշացուց, Կարոլոս իններորդ բերանը չ'զգուշացուց : Ու-
րեմն դուք անոնց վրայ մեծ առաւելութիւն մ՛ ունիք, վա-
սնզի, ի՞նչ հարկ, դուք ձեր եղբայր հարկաւ կը ճանչէք,
այնպէս չէ՞, Տէր արքայ :

— Ա, յո՛, ըսաւ Հէնրի, յառաջ Ատուած, թիչ մ՛ առաջ
ատոր փորձը պիտի տեսնեն :



ՔԻՆՈՒՆ ԺՅ.

ԳԱՇՆԱԿՅՈՒԵԱՆ ԽԻՆԿՈՒՆԵՐ

Այժմեան Փարիզի հանդէսներուն մէջ տեսնուած և լրուած է միայն շահնդն և ազմուկ, և երբեմն խիստ խուռնեւորամ, երբեմն ոչ այնչափ խուռն բազմութիւն մը. առաջուան Փարիզը առեկի հարուստ էր այս մասին: Խիստ զեղեցիկ բան էր տեսնել այն նեղ մտղոցները, պատշգամաւոր և ուրիշ հրնութեան ու մեծ բազմադիմի ձեւերով նշանաւոր տուները, բիւրաւոր մարդիկ որ իրար կը հրմշտէին ամենն ալ մի և նոյն տեղ մ'երթալով, կամ ճամբուն վրայ կանգ կ'առնուին զիրար կը զխտէին, կը զարմանային, աչքերուն անհաճոյ երեւցող մարդերու դէմ կը պոռային և սոսկալի ազմուկ կը հանէին վանդի տառաջուան փարիզցոց զգեստները, զէնքերը լեզուն, մարմնոյ գնացքն և շարժուացքը, ձայնը ամենն ալ հետաքրքրութիւններով լի էին, և այս ամեն հետաքրքրութիւնները բնականապէս հանդէսներուն մէջ անոնց միահամուռ տեսքը խիստ հաճոյ, խիստ շահաւէտ բան մը կըլլար:

Արդ՝ ահա այդ Փարիզն այն հանդիսանման օրուան մէջ ուր, ժամն իրիկուան ութնին, Պ. տը Աիզ դուքըր, թաղաւորին հետ տեսնուեցն և Պ. ա' Անժու դըքսին հետ խօսակցեցէն ետք, ուղեց որ թագաւորութեան մեծ մայրաքաղաքին մէջ ստորագրութիւն բանայ ՚ի նպատտ Պաշնակցութեան:

Պիւլապիներու զինուորեալ խուռն բազմութիւն մը եկեղեցիները կը վազէին, ամենէն լաւ զգեստնին հազած էին որպէս թէ ածի մը պիտ' երթային, նոյնպէս ամենէն լաւ զէնքերնին առած էին որպէս թէ զօրահանդէսի կամ պատուքազմի մը պիտ' երթային: Ամենն ալ մէկ զրացմամբ կ'ըզգածուէին, ամենն ալ միեւնոյն նորտակի մը պիտի հասնէին. կերպարանքին, մանաւանդ բարապարներու և թիկնա-

պահներու առջեւ, ծիծաղկոտ և սպառնակուն էր: Պ. տը Մորիլիէ թերեւս այս կերպարանքէն, մանաւանդ ազմուկէն և դուռով դաշտմանքէն խուսուէր, բայց նա բաւական աղէկ կը ճանչէր Փարիզը այն բարի, բազցը, առանց արանձին գրգմանց, ուրիշներուն զրգուութեանը տապալելու երբէք չսովորած Փարիզցիները:

Բազմութեան մէջ ամենէն աւելի ազմուկի պատճառները, նա և զանիկայ ամենէ աւելի զխտոյութեան արժանի ընողն այն էր որ ամեն կարգէ և ամեն սեռէ մարդ կը գտնուէր հոն կիներն և տղաքները կամ այնպիսի մեծ օրուան մը մէջ չկրնալով տանիլ դռներնին՝ յօժարակամ և կամ նոյն իսկ ամուսնոյ կողմանէ բռնութեամբ հանդիսին տարուէր էին, մանաւանդ այն մանկիկներն որք հօրերնուն սոսկալի հրացաններուն, հսկայական դաշայններուն և ահագին զեղարդներուն կապուած էին: Փարիզի ստամբակը ամեն ժամանակ, ամեն թուական և ամեն դարուց մէջ սիրեց ձեռքը զէնք մ'ունենալ թէ և առանց գործածել զխոնալու, և զարմացաւ ձեռքերնին ունեցողներուն մէջ երբ ինք իրենին մէջ չունէր:

Ժամանակ ժամանակ բազմութեան մէջ խուսմը մը միւս խուսմբէն աւելի ստատիկ եռանդը վառուելով սուրերնին պապեանէն կը հանէին և օգոյ մէջ կը տարածէին. այս թըշնամական ցոյցը կը կատարուէր մանաւանդ երբ կայունական տան մ'առջեւ հանդիպէին: Այն ատեն մանկուհիք բոլոր ուժովն կը պոռային. Սուրբ-Բարթոլոմէոս. Սուրբ-Բարթոլոմէոս. . . : Հայրերն ալ կը կանչէին. Հո՛ւր հերետիկոսներուն վրայ, հո՛ւր, հո՛ւր:

Ապուինականի տունը, պատուհաններուն մէջէն, այս խօսքին վրայ կը տեսնուէին ձերտնի ազախներու և սպասաւորաց գունատ դէմքերը, որ վայն իւր ամեն նիգերովը, ազխերովը ամբարփակ կը դոցէին: Երեսկանները՝ լա Գոնգէկը նապատակին նման՝ իրենցմէ աւելի վախկոտ մարդօց երկրի ազգերնուն վրայ հպարտացած և դո՛հ կը շարունակէին իրենց յաղթական ճամբայն, և ուրիշ տեղեր հնչեցունել կու-

տար իր ազմկալից բայց առերևոյթ սարսնայիբը :

Բազմութիւնն ամենէն առաւել խուռն և անհանդարտ էր Արարը—Աէդ փողոցին մէջ, անունը մեզ արդէն ծանօթ պանդոկի մ' առջև որոյ դուխը, տախտակի մը վրայ, այս անունը կը կարգացուէր. Պանդոկ Քեղեցիկ—Սատեղ: Քառակուսի բամպակեայ գլխանոցով, որովհետեւ այն ժամանակի գլխանոցի տարազն այս էր, քառակուսի գլխանոցով մարդ մը, կ'ըսենք, պանդոկին սեմին վրայ կանգնած խուժանին բարձրաձայն կը քարոզէր և կ'ուսուցանէր: Իսկ ձեռքերը՝ մէկը սուր մը կը շողացունէր և միւսը արձանագրութիւն մը կը բարձր որոյ կէտն արդէն ստորագրութիւններով սեւցած էր:

— Եկէ՛ք, եկէ՛ք, կ'աղաղակէր նա, արի կամ ոչիկեայք (ուղաղաբաւ). Քեղեցիկ—Սատեղ պանդոկը մտէ՛ք, հոն լաւ գինի և բարի գանդոկապան կը գտնէք. եկէ՛ք, յարմար ժամանակ է այս. այս գիշեր բարի անձինք չարերէն պիտի բաժնուին. վազն առաւօտ պիտի ճանչցուի թէ որն է բնտիր ցորենան և որումը. եկէ՛ք, Պարոննե՛ր, դրե՛կ զիտոյոյնիդ եկէ՛ք և գրուեցէ՛ք, դրե՛կ չգիտոյոյնիդ նոյնպէս եկէ՛ք և անունիդ տուէք կամ ինձ՝ տէր Լա Հիւրիէրիս, կամ Պ. Քըրոզուանդէն գործակալիս:

Արդարեւ Պ. Քըրոզուանդէն Բերիկօրի այս երիտասարդ յիմարը՝ Ելիսաբեթի սպիտակ գլխատուց նման աղիտակ զգեստներ հագած, մէջքը դանակ և գրչաման մ' իրեն եկող քաղաքակցաց անունները կը դրէր, նոյնպէս արձանագրութեան տետրի մը մէջ, բայց նախ իւր մեծայարդ տիրոջ և յետոյ անոնցը, կարգաւ:

— Պարոննե՛ր, պատարագի համար է այս, կոկորդը պատուելու աս բիճանի բարձր ձայնով կը պոռար. Քեղեցիկ—Սատեղ պանդոկապետը, պարոնայք, սուրբ կրօնից համար է այս:

— Կէցցէ՛ սուրբ կրօնքը, Պարոնայք, կեցցէ՛ պատարագը... կէցցէ՛:

Եւ պոռալէն ու հոգնութենէն ձայնը կը խղզուէր, վասնզի խեղճ գինեպանը ցերեկուան ժամը չորսէն ի վեր անդադար

կը պոռար՝ մի միայն իւր կրօնական աւիւնէն դրաւուած:

Այս ձայնէն դրդուած՝ շատ մարդիկ կուզային Լա Հիւրիէր վարպետին մատենին մէջ կտորագրելին՝ եթէ գրել գիտէին, իսկ եթէ չէին գիտեր իրենց անունը կիմացունէին:

Գործը լա Հիւրիէրի համար այնքան գգուելի էր որ Անթէոմէն—Օկղէրուտի մերձաւորը իրեն հետ կը մըցէր, բայց բարեբաղդաբար սոյն թուականին հաւատարմներն բազմաթիւ էին, և երկու հաստատութիւններն իրարմէ ցրտանալու տեղ աւելի կը յողաւորէին, անոնք որ տեսչական սեղանին վրայ անուննին ստորագրելու համար եկեղեցւոյ դռնէն ներս սպրդելու կարող չէին եղած, մինչեւ սիւնին տակն ի վեր սողալու կը ջանային, ուր լա Հիւրիէր վարպետը իւր զոյգ քարտուղարներովը կը նստէր, և անոնք որ Լա Հիւրիէրի քարտուղարներէն ի դերն կեցելին. Անթէոմէն—Օկղէրուտի երջանիկ ըլլալու յոյսը կը տածէին:

Երբ լա Հիւրիէրի ու Քառքանթէնի, երկուքին ալ մատուաններն ընցուեցան, Քեղեցիկ—սատեղ տեսուչը անմիջապէս երկու հատ ալ ուղեց, որպէս զի ստորագրութիւններն չընդհատին, և կոչումներն աւելի գեղեցիկ կերպիւ կատարուիլ ըսկտեցին թէ պանդոկապետին և թէ իւր տիրոջ կողմէն, վրասա՛հ ըլլալով վերջապէս որ այս կերպիւ լա Հիւրիէր տեսուչը կը պարտաւորէր իւր երկարօրեայ բազմանաց համբաւաւ Պ. տը Ելիզի սրտին մէջ իրեն բարձր դիրք մը բռնել տալ:

Քանի որ նոր մատենից ստորագրութիւններն ալ նոր ժըրութեամբ և եռանդազին յառաջ կ'երթային ու հետզհետե կը յաճախէին, և ամբողջ մէկ փողոցէն միւսը, այս թաղէն այն թաղը կը մղուէր, բազմութեան մէջէն՝ հրացանի և ոտքի հարուածներով խուսնը ալ ու ձախ հրելով ճեղքելով բարձրահասակ մարդ մը կ'անցնէր կ'զար, ճիշդ Քառքանթէնի մատենին քով:

Երբ տեղը հասաւ, քաղաքավար գաւառացիի մը պէս գրիչը ձեռքն առաւ, որպէս զի պերճ դողոյ՞լ զարդագծով ստորագրէ, և իւր անունը կէս ամենասպիտակ մէկ երեսին

վրայ ստորագրեց ու յայտերով զարդարուած և Տէգալի Լա-
բիւրինգտին պէս մանուածոյ դարձուածներով դիւցազնա-
կան զարդագիծ մը շինելով գրիչն իւր ետին պոչի պէս
կեցող հետամուտ անձի մը տուաւ :

— Եիքօ, կարդաց այս վերջին ստորագրողը :

ԱՅ. հպարտ պարոն մը՝ որ դուռըբար կը գրէ իւր ա-
նունը :

Եիքօ, ինչպէս ըսած ենք, Հէնրիի հետ մնալ չուզելով
յատկապէս իւր անձնական շահուն համար Պաշտարութեան
ետեւէն կ'ընթանար :

Եիքօ, Պ. Քուօքանթէնի մատենին մէջ իւր ներկայութիւնը
իմացնելու գործը կատարելէ յետոյ անմիջապէս Լա Հիւրիէ՛՛՛՛՛՛
տեսչին գնաց : Ասի անոր փառաւոր ստորագրութիւնը աւ-
սած ու այդպիսի գեղեցիկ և շքաւոր զարդագիծ մը ունենա-
լուն նախանձած էր : Աւտի Եիքօ ընդունուեցաւ ոչ թէ բաց
բազուկներով, այլ բաց մատենով մը ու Պէթիկի փողոցին
գեղմնավաճառներէն մէկուն ձեռքէն դրիչն առնելով երկրորդ-
անգամ և առջինէն հարիւրապատիկ փառաւոր զարդագիծով
իր անունը գրեց, և ասկէ յետոյ հարցուց Լա Հիւրիէրի թէ
երրորդ մատենն մ'ալ ունի՞ :

Լա Հիւրիէն կատակ մտիկ րնող մարդ չէր. ասի իւր աշ-
խարհաւանդէն դուրս վատ պանդոկապետ մ'էր :

Աչքին տակէն խողորելով Եիքօին նայեցաւ, Եիքօ ալ ա-
նոր երեսը նայեցաւ :

Լա Հիւրիէն ամբարշտի անունը մըմտաց. Եիքօ ալ գծուծ
խահարապետին անունը տուաւ. Լա Հիւրիէն մատենը
ձգեց՝ ձեռքը թրին տանելու համար : Եիքօ ալ նոյնպէս իւր
սուրն իր պատեանէն հանելու համար գրիչը վար դրաւ.
վերջապէս, ամենայն հաւանականութեամբ, տեսարանը քա-
նի մը սուրի հարուածներով վերջանալու վիճակին հանելու
մտա էր. որուն Պեղեցիկ — աստեղ պանդոկապետն, անտա-
րակոյս, մէկ ձախող վաճառականն կը լլար, երբոր իւր ար-
մուկէն հարուած մը զգաց և ետ դարձաւ :

Ձինքը հարուածողը թաղաւորն էր, որ հասարակ դիւզա-
ցիկ մը պէս պարզութեամբ ծպտեալ՝ ու իւր հեռ և ճիշդ
իրեն նման կերպախոխուած Քէյլունն ու Վօթիլունն ունենա-
լով մօտեցած էր, որոնք երկայն թրէ զատ ուսերնուն վրայ
մէյմէկ հրացան ունէին :

— Աղէկ, աղէկ, ըսաւ թաղաւորը. ինչ կայ, ճշմարիտ,
երկու բարի քաթօլիկներու համար իրարու հետ վէճ ընել
դովելի որինակ չէ :

— Իմ պնուականս, ըսաւ Եիքօ առանց Հէնրին ճանչ-
ցած ըլլալը զգացնել ուզելու, նայէ իրաւունքը որ կողմն է.
ահա ստահակ մ'որ, երբ անցորդներն մատենն ստորագրել
կ'զան կը շողակրատէ և երբ կատորագրեն ու կանցնին, ե-
տեւէն աւելի բարձր ձայնով կը բարբանջէ :

Նոր սիրողներու համար Լա Հիւրիէրի ուշադրութիւնը
ուրիշ կողմ շրջեցաւ, և մէկ ստիպում մը Եիքօն, թաղա-
ւորն ու մանկաւիկներն կրօնամոլ պանդոկապետին ընակա-
բանէն հեռացուցին, որոնք դրան մը սեւամին վրայ կ'ըլլելով
ժողովը տեսնելու յաջողեցան :

— Ինչ բոց, ըսաւ Հէնրի, և այս երեկոյ կրօնի համար
բաղաքին փողոցներուն մէջ ինչ գեղեցիկ բաներ պիտ' ըլլան :

— Այո՛, աէր արքայ, բայց հերետիկոսներու համար որ-
քան աղետալի բան. և Ձեր վեհախառութիւնը գիտէ թէ
մ'ամ համար կը լլայ ատի : Չախակողմն ալ նայեցէ՛ք, հոն,
լա զիտեցէք, զո՞վ կը տեսնէք :

— Ա՛հ, ա՛հ, Պ, Սայէնի լայնադիր երեսն ու կարդի-
նալին սրածայր կ'ընթեր :

— Մոտաւ տէր արքայ, ստուգիւ մարդ կուրախանայ երբ
առանց մեր եղած տեղը գիտցուելու մենք մեր թշնամեաց
եղած տեղը կը գիտնանք :

— Ի՛նչ, կը կարծես թէ վախնալու բան մ'ունիմ :

— Է՛հ, տէր Աստուած, այս տեսակ ամբոխի մը մէջ մարդ-
բան մը չ'կրնար պատասխանել. Իւր դրպանին մէջ մերկ դա-
նակ մ'ունի. այս դանակը մօտեցողին փորը կը խօթուի մէ-

կէն առանց դիտարելու . զարնուողը միայն հայհոյանք մը կ'ընէ և հողին կը վիչէ : Աւրիչ կսղմ գառնանք , տէր արքայ :

— Սրդեօք տեսնուեցա՛յ :

— Չեմ՛ յուսար . բայց տարակոյս չունիմ որ եթէ քիչ մ'աւելի հոս մնաք , անշուշտ պիտի տեսնեն զձեզ :

— Կեցցէ՛ պատարագ , կեցցէ՛ պատարագ . աղաղակեց ժողովուրդին մէջէն խումբ մը , որ վերելակող մակնթացութեան պէս հրապարակէն դէպ 'ի յՍրպրը — Սէ փողօյը կը խուճապէր :

— Կեցցէ՛ Պ . տը Կիզ , կեցցէ՛ Կարգինալ , կեցցէ՛ Պ . տը Մայէն , պատասխանեց բազմութիւնը Լա Հիւրիէրի դրան առջև կանկ առնելով , որն որ երկու լորենեան իշխանները զրեթէ ճանչցած էր :

— Օ՛հ , օ՛հ , այս ի՞նչ աղաղակներ են , ըսաւ Հէնրի Պ . յօնքերը պոստելով :

— Այս աղաղակները փորձի՞ համար են թէ արդեօք իւրաքանչիւք որ հաստատուն կերպիւ իւր տեղը գտած ու կեցած է , Պ . տը Կիզ փողօյներուն և դուք ալ Լուվրի մէջ պէտք էք . օ՛ն , Լուվրը դացէք , տէր արքայ , Լուվրը դացէք :

— Դու ալ ինձ հետ կ'գա՛ս :

— Ե՛ս , ո՛հ , երբէք . ինձ պէտք չունիս , զաւակս , քեզ համար պահապաններ ունիս : Օն , յառաջ , Քէլիւս , յառաջ , Մօթիրօն , ես տեսարանին մինչև վախճանը դիտել կուզեմ , վասն զի խիստ հետաքրքրական կը թուի և կամ ըսենք զըւարճալի երեւոյթ մ'ունի :

— Ո՛ւր կերթաս :

— Անունս միւս մատենից մէջ ալ արձանագրելու կերթամ : Կուզեմ որ վաղը մինակ իմ ձեռամբս զրուած հազար ստորագրութիւն ըլլայ . ահաւասիկ սալայատակին վրայ ենք , դիչեր բարի , աշակողմն գնա՛ , ես ալ դէպ 'ի ձախ պիտի չունեմ , իւրաքանչիւրս իւր ուղին , ես Սէն — Մէրիի մէջ հրուշակաւոր քարոզիչ մը մտիկ ընելու կերթամ :

— Օ՛հ , օ՛հ . այս ի՞նչ նոր աղմուկ է , ըսաւ յանկարծ թա-

ղաւորը , և ինչո՞ւ համար այսպէս թօն — Նէօֆի կողմէն կ'գան :

Եիքօ ոտքին մատներուն վրայ ելաւ կայնեցաւ , բայց մաս մը ժողովուրդէ դաս ուրիշ բան չ'տեսաւ , որոնք կ'աղաղակէին կը կաղկանձէին , ու կը ցատկաւտէին և այնպէս կը թըւէր թէ յաղթական դործ մը կատարած էին :

Յանկարծ ժողովրդային հոսանք մ'արձակելով Լափանտիէս փողօցի երեսն աջ ու ձախ բռնեց ճիշդ այն վայրկենին որ սալայատակն արդէն բացուած էր , որոյ մէջէն , հեղեղատի մղումով մը մինչև Հիպօլիտի ստոր ձգուող հրէչին պէս և այս խառնակող տեսարանին պարազուլի կարծուած անձ մը այս մարդկանց ծփանքէն մղուելով ինկաւ մինչև թագաւորին ոտքը :

Ս . յս անձը աւանակի մը վրայ նստած աբեղայ մ'էր , որ կը խօսէր ու մէկ կողմէն շարժումներ կ'ընէր :

Աւանակը կը զուար :

— Վանդըը տը պիչ (զուարճատէր Հէնրիի մասնաւոր մէկ հայհոյանքն է) ըսաւ Եիքօ տեսնելուն պէս մարդն ու աւանակըն , որ մէկն միւսին վրայ նստած տեսարան կ'գային , Սէն — Մէրիի մէջ բեմբասայութիւն ընող հռչակաւոր քարոզիչ մը վըրայ կխօսէի . քեզ , հիմայ հեռուն երթալ պէտք չէ քիչ մը մըմտիկ ըրէ՛ ատոր :

— Աւանակին վրայ քարոզիչ մը ըսաւ Քէլիւս :

— Ինչո՞ւ չէ , տղաս :

— Բայց Միլէնն է աս , ըսաւ Մօթիրօն :

— Քարոզիչը ո՞րն է , ըսաւ Հէնրի , երկուքն ալ միեւնոյն ժամանակ կը խօսին :

— Տակինը աւելի ճարտարաբան է , ըսաւ Եիքօ , բայց վրայինը ընտիր դաղղիներէն կը խօսի , մտիկ ըրէ , Հէնրի , մըտիկ ըրէ :

— Լուութիւն , գոչեցին ամեն կողմէ , լուութիւն :

— Լուութիւն , պօռայ Եիքօ ալ բայց այնպիսի ձայնով մը որ բոլոր միւսներն յաղթեց :

Ամեն մարդ ըւեց : Աբեղային ու աւանակին շուրջը շարուեցան : Ս բեղայն յառաջարան մ'առաւ :

— Եղբարք իմ, ըսաւ, Փարիզ հռչակաւոր քաղաք մ'է, Փարիզ Գաղղիոյ տերութեան հպարտութիւն է, և Փարիզեան ժողովուրդն ալ ողբելից անձինքննք են, երգը զայս կը հաստատէ:

Եւ արեղայն սկսաւ աղաղակել ու երգել:

Մ բարեկամդ իմ Փարիզեան

Ո՛հ ի՛նչ հանճար քեզ դիտութեան,

Բայց այս խօսքերուս վրայ կամ լաւ եւս է ըսել այս եղանակին վրայ, աւանակն այնպէս մ'անոր ընկերացաւ և այնպէս կոկորդալիք ու աշխուժիւ երգակցեցաւ որ իւր ասպետին խօսքն ընդմիջեց:

Փողովուրդը ծիծաղ մ'առաւ:

— Ղաէ՛ դուն, Բանիւռժ, պօռայ արեղայն, դու ալ ի՛նչ պէս պիտի խօսիս, բայց ձգէ՛ նախ ես խօսիմ:

Աւանակը լռեց:

— Եղբարք իմ, շարունակեց քարոզիչը, երկիրը վշտաց հովիտ մ'է, ուր մարդ երկար ժամանակներ միայն արտասուաց մէջ տապալելով իւր օրերը կ'անցունէ:

— Բայց չափազանց գինով է, ըսաւ թաղաւորը:

— Հէ՛, հարկա՛ւ, ըբաւ Ե՛քօ:

— Ես որ ձեզ կը խօսիմ, շարունակեց արեղայն, ինչպէս որ զիս կը տեսնաք, Երբայեցւոյ պէս արթորանքէ կ'գամ և եօթ ութ օրէ՛ ի վեր ողորմութեամբ ու զրկանքով կառքինք, երկուքնիս ալ, Բանիւռժն ալ, ես ալ:

— Բանիւռժն ո՞վ է, հարցուց թաղաւորը:

— Ամ'նայն հաւանականութեամբ, իւր վանուց մեծաւորն ըլլալու է, ըսաւ Ե՛քօ: Բայց թող որ մտիկ ընեմ, ապուշը սիրտս կը շարժէ:

— Ո՞վ ըբաւ ինձ այսպէս, բարեկամք, Հերովդէս՞ը: Գիտէք թէ խօսքս ո՞ր Հերովդէսին կ'ակնարկէ:

Եւ դու ալ, որդեակ, ըսաւ Ե՛քօ նշանազբաց կարգի փոփոխումը քեզ ալ բացատրած եմ:

— Խեղ կատակ:

— Ո՞ւմ կը խօսիս, ի՛նչ, արեղային թէ աւանակին:

— Երեքիդ ալ:

— Եղբարք իմ, շարունակեց արեղայն, ահա ապիկ աւա. նակս ալ այս է, զոր դառնուկի մը պէս կը սիրեմ, հիմայ ձեզ պիտի ըսէ թէ այս երեկոյ փառաւոր հանդէսին ներկայ դանուելու համար Ալիքեօյ լը Ռօայէն Երեք օրուան մէջ հոս հասանք և թէ ինչպէս եկանք:

Քսակ դատարի

Արկոր ցամաք,

Բայց ոչ Բանիւրժին և ոչ ինձ երկուքնուս ալ բան մը չեղաւ:

— Բայց սա անիծեալ Բանիւրժն ի՛նչ կը նշանակէ, հարցուց Հէնրի, վասն զի այս հետաքրքրական անունը բաւական զինքը կըբազկեցնէր:

— Սրբ եկանք, շարունակեց արեղայն, եղած ու անցածը տեսնալու համար հասանք, մինակ պիտի նայինք, բայց երբէք չպիտի ընդմիջենք: Ի՛նչ կանցնի կը դառնայ, եղբարք իմ, Հէրովդէս այսօր պիտի նստի, եղբայր Հէնրին այսօր վանք պիտի դուռի:

— Մ՛հ, Մ՛հ, ըսաւ Քէյլիւս, սա անհեթեթ տակաւոր ծակելու մեծ նախանձ մը կ'իմանամ ներսիդիս, արդեօք Մօծիւրօն ի՛նչ կ'ըսէ այս բանիս:

— Աա՛հ, ըսաւ Ե՛քօ, այսպէս փոքրիկ ըսնի մը համար կը բարկանաս, Քէյլիւս: Թագաւորն ալ վանքի մը մէջ ամեն օր այս ընթացքին մէջ չէ. հաւատա՛ ինձ Հէնրի, եթէ այս չըլլայ թշուառ չես, այնպէս չէ՛, Բանիւրժ:

Աւանակն իւր անունը արտախը ըսելով, ահա նիւ կերպիւ զալ ոկեց:

— Ո՛հ, Բանիւռժ. ո՛հ, ըսաւ արեղայն, ի՛նչ ցանկութիւններ ունիս: Պարօծննք, շարունակեց, Փարիզէն երկու ուղեկիցներով դուրս ելայ, մին Բանիւռժն, որ իմ աւանակս է, միւսն Պ. Ե՛քօն, որ Նորին Ա. հակաառութեան խեղկատակն է: Պարօծայք, իմ Ե՛քօ բարեկամիս ի՛նչ ըլլալուն նկատմամբ լուր մը չէ՛ք կրնար տալ:

Ե՛քօ գէտիք ծումակեց:

- Ո՛հ, քու բարեկամք է, ըսաւ թագաւորը :
- Քէլիսս և Մօծիբօն ծիծաղիլ սկսան :
- Բարեկամիդդ, ըսաւ թագաւորը, զեղեցիկ և մանաւանդ յարդեղի է, ի՞նչ է անունը :
- Կօռէնֆլօ է, Հէնրիկո՛ս, կը յիշես այն սիրուն Կօռէնֆլօն, որոյ մասին Պ.Մօրվիլէէ քեզ մէկ երկու խօսք խօսած է :
- Սէնթ-Ժէնըվիէվի հրձի՞ղն է :
- Նոյն ինքն :
- Հիմայ ատի կախել կուտամ :
- Անկարելի բան :
- Ինչո՞ւ համար :
- Որովհետեւ պարանոց չունի :
- Եղբայրք, շարունակեց Կօռէնֆլօ, եղբարք իմ, կը տեսնաք ահա ճամբրիտ մարտիրոս մը : Եղբարք իմ, իմ պատճառաւ է կամ բոլոր բարեպաշտ Քաթօլիկներուն պատճառաւ է որ այս բոպէիս ամէն ոք կը շարժի : Չէ՞ք դիտեր նահանգին մէջ ինչ բաներ կըլլան, և կալինականներն կը մեքենայուին : Անոնցմէ մին, որ ապստամբութիւն կը քարոզէր, Լիօնի մէջ մնուցնելու ստիպուեցանք, քանի որ բոլոր Ֆռանսայի մէջ անոր մէկ թուխն գտնուի շերմուանդ սորտերն երբէք խաղաղութիւն չպիտի կարենան վայելել : Վերջայններ ուրեմն, շնչենք սա բողոքականներն : Ի զէ՛ն, եղբարք իմ, ի զէ՛ն :

Անհամար ձայներ արձագանք տուին — Ի զէ՛ն :

— Ճշմարիտ ըսաւ թագաւորը, երկրորդ Սէն-Պարթէլըմիլ մը պատճառ պիտի լինի ապա թէ ոչ լռեցո՛ւր սա զինեմոյը :

— Սպասէ՛, սպասէ՛, ըսաւ Եիքօ : Եւ Քէլիսի ձեռքէն շեխորայ մ՛առնելով արեղային ետեւն անցաւ և բոլոր զօրութեամբ քամակասիրին սոսկալի հարուած մը տուաւ սյդ խոռոչաւոր և հնչիւն գործիքով :

— Մարդասպանութիւն, աղաղակեց արեղայն :

— Ի՛նչ, դու ես, ըսաւ Եիքօ իւր զլուխն արեղային թեւին տակ անցնելով, ի՛նչպէս ես, վեղարաւոր :

— Պղնու թիւն, Եիքօ՛, օգնութիւն, պօռայ Կօռէնֆլօ, հաւատոյ ոտխններն դիս ապանել կուզեն, բայց մինչեւ ձ այնս ըսելի չըլլալ չպիտի մեռնիմ : Այալինականութիւնն, ի հո՛ւր, Պէառնեյին ՚ի խարո՛յի :

— Չե՞ս լռէր, անբա՛ն :


— Վար անցնին կասքօնայիք, շարունակեց արեղայն :

Այս անդամ երկրորդ հարուած մ՛ալ ցուպով Կօռէնֆլօի միւս քամակին եկաւ, որ այս անդամստուգապէս վըշտաղ ին ճիչ մ՛արձակեց :

Եիքօ զարմանօք իւր շուրջը նայեցաւ, բայց ցուպէն զստ ոչ որ և ոչինչ չտեսաւ, հարուածը եղբայր Կօռէնֆլօի ուղղութե՛լ յետոյ անծանօթ մէկու մը ձեռամբ ընդհատեցաւ, որն որ արդէն ամբոխին մէջ աներեւութանալ սկսած էր :

— Մ՛հ, օ՛հ, ըսաւ Եիքօ, որ ստատման այսպէս մենէ վըրէժ կը ուժէ : Արդեօք տեղացի տղայքներէն են, թէ ոչ ուրիշ մէկը, վերջապէս պետք է ստուգեմ :

Եւ ցուպ ունեցող անձին ետեւէն վազել սկսեց, որն որ բնկերի մը ուղեկցութեամբ սալայատակէն ՚ի վեր կը սահեր կերթար :



ԳԼՈՒԽ ԺԵ .

ՖԵՐՐՕՆԸՐԻ ՓՈՂՈՅԸ

Եիքօ սրնթայ սրունքներ ունէր, որով Կօռէնֆլօին զարնող մարդուն ետեւէն հասնելու մեծ գիւրութիւն ունէր, բայց անոր և մանաւանդ ընկերօջը կռնակին վրայ այնպիսի տարօրինակ նշաններ տեսաւ որ բուռական եղան իրեն հասկըցնելու թէ մէկէն ՚ի մէկ ձայն տալ կամ գրդուելը վտանգաւոր կրնար ըլլալ : Արդարեւ երկու փախտականներն յայտնապէս ամբոխին մէջ աներեւութանալ կը ջանային շարունակ

փողոցներու անկիւններն դառնալ ու ոլորուելով՝ վտահ ըլլալու համար թէ ալ ետեւեն հալածող չկայ :

Շէքօ խորհեցաւ որ անոնց ետեւէն չվազելու մէկ միջոց մը կայ, այն է առաջին կտրելու : Սրիտքն ալ Մօնէ և Թիբէլար փողոցներէն Սէնթ Մնօրէ փողոցը սպրդեցան, այս վերջինին անկիւնէն պանոնք կահխեց, և շարունակ վազելով Պուռտօնէ փողոցին ծայրը գարանամտելու դնաց :

Սրիտ մարդիկը, փեղոյրին մինչև յօնքերնուն վրայ կըրթընած և վերարկունին մինչև աչքերնուն վրայ հանած ու պատած ցոբերի վաճառանոցի աներուն երկայնութիւնն ի վեր սուղելով Սէնթ - Մնօրէ փողոցէն վեր կիլէին և շուտափոյթ քայլերով կարչուէին : և կը թուէր թէ Յէրրօնը ըի վազոցը զինուորական գործ մ'ունէին : Շէքօ տակաւին կախատէր անոնցմէ անցնելու :

Յէրրօնը ըի փողոցին անկիւնը հասած ստոննին երկու փախտապահաններն իրենց բոլորտիքն նայուածք մ'ալ դարձունելու համար կանկ աւին :

Այս միջոցին Շէքօ ջանաց հրապարտին ձեռք ձգել և արդարև փողոցին մէջ տեղն հասաւ :

Փողոցին և հնօրեայ ու աւերակութեան մօտ տան մը մէջ տեղը երկու ձուլածոյ ձիերու լծուած դեռպակ մը արձանացած էր : Շէքօ իւր շուրջն ակնարկ մը նետեց, տեսաւ որ առաջ նորոգք առաջակողմը կը քնանար, և միւս կողմէն վըրդօղուն ու նախանձաբէկ գիմք կին մը կար : այնպէս գուշակեց թէ դեռպակը երկու փախտապահանայ կապատէր, ասոր ետեւի կողմը դարձաւ, և իւր ու տամը ստուերին տակ ծածկըւելով քարեայմեծկակ բազմոցի մը ներքեւ սպրդեցան, որուն վրայ ընդամադաւներն իրենց վաճառքները կը զետեղէին, վասն զի այն թուականին Յէրրօնը շարաթը երկու անգամ մասնավաճառ կը բացուէր :

Հապիւ հոն կ'ըստելով, յանկարծ ձիերոն գլուխը երկու անձինքները տեսաւ, որք անհանդարտ կերպիւ կանկ մ'ալ աւին :

Նոյն միջոցին, երկուքէն մին դեռպակավարն արթնցուց որն որ այնքան խոր կը քնանար որ ուժղին կերպով Մ...-ը բռն մը ձայնեց, իսկ ասղիէն միւս ընկերն բոլորովին համբերութիւնն հատած դաշունին ծայրով կը մտորակէր որ արթննայ :

Օհ, օհ, ըսաւ Շէքօ, ուրեմն չէի սխալած հայրենակից հն եղեր, ալ կօւնէնփլօ այդչափ խտալու պատճենուն վրայ չեմ զարմանար, վասն զի կառքօներու համար միշտ կ'չարախօսէ :

Երիտասարդ կինն ալ իւր սպասած մարդիկը ճանչելով իսկոյն անհեղեթ մեքենային դռնակէն դուրս սողաց, որով Շէքօ աւելի որոշ կը տեսնար զոնի, որ քսան կամ քսան երկու տարեկան կար, խիտ գեղեցիկ ու դժգոյն էր, և եթէ ցերեկ ըլլար, իւր սակեղոյն խարտեաշ մաղին խոնաութեանէն, և աչքին բոլորը ծիր կապող սեւութեանէն, իւր ձեռքերուն ազօտ սպիտակութեանէն, իւր բոլոր մարմնայն պարտասուն կացութեանէն մարդ կրնար հետեւցնել որ հիւանդութեան մը ճանկերուն մէջ բռնուած էր, որոյ զաղտնիքն իւր հասակին բոլորակութիւնն ու իւր յաճախակի թալուկները շուտով կը մերկանային :

Բայց բոլոր այս բաներուն մէջ Շէքօ զլխաւոր երեք բան զիտեց. նա երիտասարդ, դժգոյն և խարտեաշ էր :

Երկու մարդիկը կառքին մօտեցան և բնականաբար անոր ու նստարանին մէջ տեղը ինկան, որոյ ներքեւը Շէքօ պահուած էր :

Այս երկու անձանց մեծը տիկնոջ սպիտակ ձեռքն իւր երկու ձեռքովը բռնեց, զոր կինը կառքին ծակէն իրեն կերկնցնէր, և ոտքը պատուանդանին և երկու թեւերը գրանակին վրայ դնելով :

— Ե՛, տարբաճուող իմ, հարցուց կնոջ, իմ փոքրիկ սըրտիկս, իմ սիրունիկս, ի՞նչպէս էք :

Կինը գլուխը թոթվելով՝ տխուր ժպետով և աչին սրուա կը ցոյց տալով պատասխանեց :

— Տակաւին տկարութիւններ զիս կը պաշարեն, չարա-
ճըճի ճանճկէն : Եթէ ձեր զիս յանդիմանելու քաղցքիկ հի-
ւանդութիւնը չունենայի, ազնիւ սիրահարս, այսպէս հիւանդ
ըլլալ միթէ կը յօժարէի :

— Եւ ինչո՞ւ տիկինը Փարիզ բերիք, ըսաւ խտուրթեամբ
միւս մարդը, ճշմարիտ, ատի անէծք մ'է ձեզ, որ միշտ ձեր
բաճկանակին վրայ կոճկէն մը կարկոտած լաթ հաղնելու ըս-
տիպուած ըլլաք :

Է՛հ, իմ սիրելի Ադրիպպաս, ըսաւ երկու անձերէն ա-
ռաջին անդամ խտուրդ, որն որ տիկնայ ամուսինը կամ տար-
փածուն կը կարծուէր, իւր սիրածէն բաժնուիլը մարդուս հա-
մար անտանելի վիշտ մ'է :

Եւ կի՞նչ հետ սիրազեղուն նայուածք մը փոխանակեցին :

— Չարմանալի բան, ստուգիւ գուք զիս կը դատապար-
տէք ձեր խօսակցութիւնը մտիկ ընելու, միթէ սիրահարու-
թիւն ընելո՞ւ համար Փարիզ եկաք, կրկնեց դառնութեամբ
ընկերը, լաւ քննող ես եղեր կանանց, սակայն ինձ կը թը-
ւի թէ Պէտուն ձեր զգայուն շրջադայութիւններուն համար
բաւական մեծ է, հարկ կ'ըլլայ զանոնք մինչեւ Բարելոն տանիլ,
ուր դուք քսան անգամ գիշերը կէս ընելու ստիպուելով հա-
զիւ կրցաք կատարել : Վար գացէք նորէն, եթէ կառքին
վարագայրներուն տակ կուզէք քծնիլ վար ծուեցէք, բայց հոս,
տէր իմ, քաղաքական յեղափոխութենէ զատ ուրիշ յուզ-
մունք մի հանէք :

— Եիբօ այս տէր բառին վրայ գլուխը վեր վերցնելու շատ
փափաքեցաւ, սակայն այսպիսի շարժում մ'առանց երեւնա-
լու չէր կարող ընել, ուստի համբերեց :

— Չղեցէք սա քրթմնոյիւնը, սիրելիս և եղած ու ըսուած
բաները հոգ մի՛ ընէք : Արծեմ թէ նա ալ ձեզ նման պիտի
հիւանդանայ, և եթէ այլ ևս չքրթմնէր, ձեզ նման լա-
նաւ և թալուկ երեւոյթ մը պիտի ունենար :

— Բայց դոնէ, բարեկամ, ձեր ըսածին պէս ալ գանդ-
րագործը գոչեց, եթէ Տիկինին գորովանքներ ցոյց տալ կը

կամիք ելէք ուրի՞ն կառքին մէջ, որով նաև առկէ աւելի ա-
պահով կըլլաք չտանուելու մասին :

— Իրաւունք ունիս, Ադրիպպաս, ըսաւ սիրահար Աստ-
քօնացին : Եւ կը տեսնաք, սիրուհիդ իմ, որ տուածը գէշ
խորհուրդ չէ : Տեղ պատրաստէ հոն ուրի՞ն և այն, քանի
որ միշտ ձեր ծնդայը վրայ չպիտի կարենաք զիս զրկել, գոնէ
ձեր քովը նստելու ներեցէք :

— Այ միայն կընե՞րեմ, տէր արքայ, ըսաւ երկուսսարդուհին,
այլ բոլոր հոգւովս ալ կը փափաքիմ նաև :

— Տէր արքայ, քրթմնչեց Եիբօ, որ անխորհուրդ շարժ-
ման մը մղուելով ուղեց գլուխը միայն վեր վերցնել և որով
գլուխը քարեայ բազմոցին զարնուելով սաստիկ մարմնքեցաւ
բայց տակաւին կը կրկնէր, տէր արքայ, ի՞նչ կը նշանակեն
այս բառերը :

Սակայն այս միջոցին երջանիկ տարիաւորն իրեն արուած
թոյրտուութենէն օգուտ կը քաղէր, տախտակամաճին նոր
ծանրութեան մը տակ կ'անչիլը կը լուռէր :

Յետոյ այս կողման յաջորդեց համբոյրներու երկար և
գորովալիլը շուկ մը :

— Տէր աստուած, գոչեց դահաւորակին դուրսն սպասող
ընկերը, արդարեւ այս մարդը խիստ ապուշ կենդանի մ'է,

— Եթէ, մյմնաց Եիբօ, առկէջ բան մը հասկնամ, կու-
զեմ կախուիլ իսկ. բայց սպասենք, բուն համբերել և ըս-
պասելու կէտը հասած է բանը :

— Ա՛հ, որչա՞ փ երջանիկ եմ, շարունակեց առանց երբէք
գոնէ իւր բարեկամին անհամբերութենէն խուզելու, որով
յայտնի եղաւ թէ այս սովորութիւնն բազմաժամանակեայ
գործ մէր, այն տէր արքայ կոչուող անձին համար, այսօր
գեղեցիկ օր մ'է, ունիմ այնպիսի բարի Փարիզեաններ որ,
բոլորովին ինէ կը զզուին ու կը գարշին և եթէ ուր ըլ-
լալըս գիտնան, անտարակոյս կուզան զիս կխեղդեն, նոյն-
պէս նաև այնպիսի Փարիզեաններ ալ որ իրենց բարեարտու-
թեամբը կաշխատին դահուս ճանապարհն ինձ յարդարելու

և ես սիրած կենա բազկացս մէջ կընդգրկեմ, ուր ենք, ո՛հ, ո՛ւր եմ, տ Ծպլինիէ, երբ թագաւոր ըլլամ, նոյն իսկ այս ճամբուն վրայ Պէտանցիկ ոգւոյն արձանը պիտի բարձրացնել տամ: — Պէտանցիկ :

Երբօ կանկ առաւ, երկրորդ անգամ մ'ալ կունակը վեր առաւ:

— Ֆերրօնըրի փողոցին մէջն ենք, տէր արքայ, լաւ չը հոտիր, ըսաւ տ Ծպլինիէ, որ, միշտ վատաբարոյութեամբ երբ մարդ կանց հետ իյնալու կը տկարանար, ալ ասանկ խնդիրնրը բանի տեղ կը դնէր ու բան կը զրգռէր:

— Ս.յնպէս կերեւայ ինձ, շարունակեց Հէնրի, վասն զի մեր՝ դրադէտներն անշուշտ արդէն հապարայի թագաւորը ճանցած են, ինձ այնպէս կը թուի թէ ամբողջ կեանքս բաւարայայտ ինձ կերելի, թէ ինքզինքս թագաւոր մը կը նկատեմ, թէ դահուն վրայ կզգամ, ուր այս բոպէիս բազմած չեմ, այլ զիս զորաւոր և հզօր կզգամ և թէ իմ նայուածքս ապագային յատակը մինչեւ մահուանս ժամը կը հասնի ու կը տեսնէ:

Ո՛հ, սէրքդ իմ, անգամ մ'ալ կրկնեցէք ինձ, թէ կը սիրէք զիս, ձեր մագական ձայնին մէջ հոգիս կը հալի:

Եւ մեղամոզձայնիս զգացումով մը, որ երբեմն զինքը կը նուազեցունէր, հառաչանք մը հանելով, զլուխը տիրուհւոյն ուսին վրայ ձգեց:

— Ո՛հ, Աստուած իմ, ըսաւ մանկամարդ կինը սարսափու մով մը, ի՛նչ եղաք, արդեօք աբուեցա՞ք, տէր արքայ:

— Բարի, միայն աս պակաս էր որ, ըսաւ տ'Ծպլինիէ, գեղեցիկ զինուոր մը գեղեցիկ հրամանատար մը, գեղեցիկ թագաւոր մ'ալ նուազի:

— Ա՛յ, սիրուհիս, ըսաւ Հէնրի, ապահով եղիր քանի որ քու զիրկդ կը մարիմ երջանիկ եմ:

— Սրդարև, տէր արքայ, ըսաւ տ'Ծպլինիէ, չեմ գիտէր թէ ինչո՞ւ Հէնրի սը Նավար կատրադրէք, մինչ աւելի օրինաւորն Ռօնասը կամ Քլէման Մարօ քաղաքը: Գար-

մանայի՛ բան, ուրեմն տիկին Մարիօի հետ ինչպէս այս ընտանութիւնը կընէք, որոց երկուքն ալ բանաստեղծութեան մէջ խիստ հռչակաւոր և դորովախանդ են:

— Ո՛հ, տ'Ծպլինիէ. չտրո՛հ, իմ կնոյն վրայօք մի՛ խօսիր, սիրեղիս, չիս յիշեր առակը, եթէ անոր հանդիպէի՞նք:

— Մինչև և իսկ եթէ Նավարի մէջ ըլլայ, այնպէս չէ՞, ըսաւ տ'Ծպլինիէ:

— Սիրեղիս, միթէ հիմայ հոն ալ ներկայ չե՞մ, կամ գէթ հոն ըլլալս միտքես չե՞մ անցուցած: Ահեղի՛ր, Ազրիպպաս, դուն ինձ սարսափ ազդեցիր, ե՛լ, վերադառնանք:

— Ըջմարիտ որ չէ, ըսաւ տ'Ծպլինիէ. քալեցէք, ես ձեր ետեւէն կուգամ, ձեզ արգելք և նեղութիւն կը պատճառեմ, և յուսն այն է որ դուք ինձ նեղութիւն պիտի տայիք եթէ այսպէս չըլլար:

— Գոցէ ուրեմն դանակը, ա՛րջդ Պէտանի, և ինչ որ կուզես ըրէ, ըսաւ Հէնրի:

Ապա կառավարին դառնալով,

— Ղավարէ՛ն, ուր որ պիտ երթանք գիտես, ըսաւ:

Կառքը յամբօրէն հեռացաւ տ'Ծպլինիէի ետեւէն, որն որ բարեկամը կշտամբելով ու սանձա՛տրելով Թագաւորին վրայ հսկել կուզէր:

Այս երթը Երբօն ստիպի կասկած է մը ազատեց, վասնզի Հէնրիի հետ այս օրինակ խօսակցութիւն մը ընելէ վերջը ալ այս անխոհեմը հանդիստ ապրելու թողող մարդ մը չէր ինչպէս որ լսած էր:

— Տեսցո՛ւք, ըսաւ Երբօ իւր բաղմոյնն տակէն չորս թաթիկներուն վրայ բոլորովին դուրս ելլելով, պէ՛տք է որ Վալթան բոլոր դարձածներն իմանայ:

Եւ Երբօ իւր երկայն ազդրերուն կարկամած շղերուն առաձգութիւն տալու համար ուղղուեցաւ:

— Ինչո՞ւ համար գիտնայ, կրկնեց Կասքօնային, մենախօսութիւնը շարունակելով. երկու մարդ որ ինքզինքնին կը կը ծածկեն և մի կին որ յղի է: Ըջմարիտ, անպատուու-

Թիւն պիտի ըլլայ : Այ . ձայն չպիտի հանեմ , բան չպիտի ըսեմ և յետոյ , պէտք է կաղմ և պատրաստուած ըլլամ , այս է . որովհետեւ ամեն հաշոյն գլուխը վերջապէս թաղաւորողը ես եմ :

Եւ Եիքօ ինքնիրեն ուրախութեան ոստում մ'ըրաւ :

— Վերջեցիկ բան է , սիրահարներ . Եիքօ շարունակեց , բայց տ' Օպինիէ իրաւունք ունի , միշտ չափազանցութեամբ այս սիրելի Հէնրի տը Նավարը օտար աշխարհի թագաւորի մը տեղ կը սիրէ : Տարի մը կայ որ տիկին տը Սովի համար Փաբիզ կուգար , խակ այսօր միեւնոյն բանը այս փոքրիկ և զուարթ արարածին համար կընէ որն որ սիրովը կը թալկանայ :

Որ սատանան այսպէս կրնայ ըլլալ , հաւանականաբար Ծօնէզը . Նան կը մտածեմ որ եթէ Հէնրի տը Նավար խիստ հետամուտ մէկն է , եթէ այս խեղճ տղան էական դահուս կը անձկանայ , Պէլաֆրէն , տը կիղիկարդինալը և ասօսիրելի տը Մայէն դուքսը , իւր ոխերիմները կործանել կը պարտի : Է՛հ աղեկ ես ալ կը սիրեմ Պէաուէն և վտահ եմ որ օր մը չէ օր մը այդ Լորենցի սոսկալի մագործն որ եւ է վատ խաղ մը պիտի բանայ : Ինչպէս որ հարկը կը պահանջէ , տեսածիս ու լսածիս նկատմամբ երբէք բառ մ'անգամ չպիտի հանեմ բերնէս :

Այս միջոցին դաշնաւորաց արեւեցեալ խումբ մը , կեցցէ պատարագ , մեռցի Պէաուէն խորոյկ փողոքականաց , կախաղան հերետիկոսաց , աղաղակելով անցաւ :

Սակայն դեռպակն Սէն-Ջինտարն դերեղմանոտան պարբային անկիւնը դառնալով Սէն-Տընի փողոցին խորերն ի վար կ'անցնէր յառաջ :

— Տեսցուք , ըսաւ Եիքօ , համառօտակի մը երկրորդներ , որ տը կիզ կազինալը տեսայ , տը Մայէն դուքսը տեսայ , Հէնրի տը Վալթա թագաւորը տեսայ , Հէնրի տը Նավարը տեսայ , այս դուամբմանս մէջ մինակ մէկ իշխան մը կը պակսի , տ'Անժու դուքսը , որոններ մինչեւ որ աս ալ գտնանք : Տեսնանք , ո՛ւր է իմ Ծռանսուա երկրորդս , երանելին , զինքը այս

արժանաւոր Միահեծան իշխանը տեսնալու որքան կը կարօտիմ :

Այս ըսելով Սէն-ժէրմէն լ'Օկզէսուա եկեղեցւոյն ճամբան ձեռք առաւ :

Տ'Անժու դուքսը տեսնալու փափաքող և անոր բացակայութենէն խռովող մինակ Եիքօն չէր , կիզեանները իրենք ալ զանի ամենուրեք կ'որոնէին , բայց Եիքօին բազմին արժանացած էին : Պ . տ'Անժու անխոհմաբար դործի մէջ նետուող մարդ մը չէր , և 'ի մօտուտ պիտի տեսնանք թէ զանի իւր բարեկամներէն մէկուսացնողն ի՛նչ զգուշութիւն էր :

Վայրկեան մը Եիքօ այնպէս կարծեց թէ դտաւ զանի Պէլիդի փողոցին մէջն էր , և բաղմաթիւ ամբողջ մը դինեւ վաճառի մը դրան առջեւ հաւքուած էր . Եիքօ այս ամբողջին մէջ Մոնսորօն ու Պէլաֆրէն ճանցեց :

— Լաւ , ըսաւ ահա եքինէխներն , անշուշտ շանաճուկն ալ ասոնցմէ շատ հեռու չէ :

Եիքօ կը սխալէր , Պ . տը Մոնսորօն ու Պէլաֆրէն սաստիկ զինովցած հրապարակասօսի մը զեղուն բաժակներ պարպել տալով անոր թոթով ճարտարախօսութիւնը կը հրարհրէին :

Սոյն հրապարակասօսը զինեւոյ կօռէնֆլօն էր , կօռէնֆլօն իւր դէպ 'ի Լիօն ճանապարհորդութիւնը , և կալվինական ահարկու դործակատարի մը հետ իւր մենամարտութիւնը կը պատմէր :

Պ . տը կիզ այս պատմութեան ականջ կուտար , յուսալով որ Նիքօլա-Վալիթի հետ լուսութեամբ միմեանց ամենախորին մտադրութիւններն ալ կը լուէ :

Նոյնպէս Պէլիդի փողոցը բաղմութեամբ լեցուած էր , շատ ազնուական դաշնաւորներ սոյն թուականին փողոցներու մեծագոյն մասին մէջ տեսնուած տեսակ մը մանեկաձեւ օղակներուն իրենց ձիերը կապած էին : Եիքօ սոյն մանեկաները շրջապատող ամբողջին ծայրը կայնած ականջ կ'տայր :

կօռէնֆլօն անգագար փրփրելով , պտուտելով , բորբոքելով վեր ի վայր կործանելով , և Բանիւսթի թամբէն աւելի հաստատուն կերպիւր բեմբին վրայէն գլորակելով , թէպէտ թափ-

Թըրխուկ կերպով, բայց դժբաղդարար վերջապէս խօսելովն ալ դըքսին ժառութեանն ու Պ. Մանսորի ինդուլթեան շարժառի-
թըն ու ծաղու խաղալիկն էր, որ անկէ իրաւանց հատակու
տորներ և ուխտի բեկորներ և պիտանացու մասունքներ կը
քաղէին :

Այս օրինակ խոստովանութիւն մը կարծօնացին իր ուն-
կընդրութեանց մէջ ստակացուց ու սառեցուց, մանաւանդ սա
կէան ալ կար որ տը Նաւար Թագաւորը Փարիզի մէջ ներկայ
էր : Արնկատէր որ կը մերձենար այն վայրկենը, ուր կօռէնֆ-
լօ իր անունը բերնէն պիտի փախցնէր և այս անունը աղե-
տալից աղօտ լուսոյ ողջ գաղտնիքը կրնար լուսաւորել ու մեր-
կանալ : Շիրօ ժամանակ չի կորուց, ձիերուն սանձերը վերթ-
ցուց կամ քակեց, որոնք այն ժանեկաձեւ իրերու խանութ-
ներուն արքանեակները կը շոյէին . այս ձիերուն երկու երեք
մտրակներու ուժգին հարուածներ իջեցնելով բազմութեան
մէջ թող տուաւ, որոնք իրենց կաքաւններովն ամբողջ ճեղ-
քեցին ու ցերուցան ըրին :

Կօռէնֆլօ Բանիւռօ ին աղնուականք՝ իրենց ձիերուն և պա-
յուսակներուն և շատերն ալ նոյն իսկ իրենց անձերուն համար
վախցան, ժողովուրդը բացուեցաւ, ամեն ոք ծակերն անե-
րեւութացաւ : Սղաղակը, ի հո՛ւր, դղրդեց և երկոտասան
անդամ կրկնուեցաւ : Շիրօ ամբոխին մէջէն կայծակի արա-
դութեամբ անցաւ և դնաց կօռէնֆլօին քով այնպիսի բոցա-
վայլ աչերով որ սկսեց արբեցութենէն սթափիլ, Բանիւռօ ին
սանձը բռնեց և ամբոխին հետեւելու տեղ ետին դարձաւ .
այնպէս որ այս երկու հակառակ շարժումով կօռէնֆլօի և տը
կիզ դըքսին մէջ աշաղին բացակայութիւն մը թողուց, միջա-
վայր մը որ քիչ մը վերջը հետաքրքիրներու ճեպովին վազել
գալովը նոյնժաման լեցուեցաւ :

Այն տան Շիրօ դողդոջուն արեղայն Սէն-Փէրմէն-Ն Օկ-
դէրուա Յկեղեցւոյն աւագ խորանէն ու կամարէն յօրինուած
նուրբ և անել փողոցի մը մէջ քայեց և Բանիւռօ ին հետ,
անդրիադործի մը հարթ քանդակ մը կճովք քարի մը մէջ

դըրուագել ուղած ատենը կ'ընէ, այնպէս պատին կու թնցներով :

— Ա՛հ, գինով, ըսաւ անոր, ա՛հ հեթանոս, ա՛հ նենդաւ-
ւոր, ա՛հ ուրացո՛ղ, ուրեմն միշտ այդպէս աման մը դի-
նին քու հաւատքէդ վեր պիտի դասես :

— Ա՛հ, Պարոն Շիրօ, թո՛թովեց արեղայն :

— Ի՛նչ, ես քեզ սնուցի, խայտառակ, շարունակեց Շիրօ,
կերպուցի, խմցուցի, դըպաններդ ու սատմքսդ լեցուցի և
դու հիմայ քու տէրդ կը թնամանես :

— Ա՛հ, Շիրօ, ըսաւ արեղայն ողբաւոր կերպով :

— Թշուառակա՛ն, իմ գաղտնիքներս կը պատմես :

— Սիրելի՛ բարեկամ :

— Լաէ՛, դու խաբերայ մէկն ես, պէտք է որ պատժոյ
արժանանաս :

Արեղայն որքան որ եզան մը պէս զօրաւոր, ուժեղ, անհե-
թեթ և յոյր ու կարճ, ի վերայ այսր ամենայնի զեղջուճով և
մանաւանդ գինիով նուաճուած ըլլալուն առանց Շիրօի ձեռ-
քէն ելլելու կը դողդղար, որ օդալիւր օդապարիկի մը պէս
կը ցնցէր :

Միմիայն Բանիւռօ իւր բարեկամին եղած այս բռնու-
թեան դէմ զանի կը պաշտպանէր շարունակ կից նետերով, զոր
ոչ ոք չէր կրնար հանդարտեցնել, միայն Շիրօ, գաւազանի
հարուածներ կ'իջեցնէր :

— Ինձի պատիժ, կը մըմնջէր արեղայն, ձեր բարեկամը
պատժե՛լ, սիրելի պարօն Շիրօ :

— Այո՛, այո՛, պատիժ, այո՛, և հիմայ պիտի տեսնաս ըսա-
ծըս, ըսաւ Շիրօ :

Եւ կասկոնացւոյն ցուպը իշուն բաշերէն արեղային լայն
ու մտեղ ուսերուն անցաւ :

— Ո՛հ, եթէ անօթի փորանց ըլլային, ըսաւ կօռէնֆլօ բար-
կութեան շարժում մ'ընելով :

— Զխ կը ծեծէիր, այնպէս չէ՞, ապերախտ, զիս որ բարե-
կամդ եմ :

— Դուք իմ բարեկամս, Պ. Շիրօ և զիս թոյնամա՞հ կ'ընէք :

- Ով որ սաստիկ կը սիրէ սաստիկ ալ կը սպառօժէ :
- Վերջուր հիմայ կեանքս ուրեմն , պուռաց Կօռէնֆլօ :
- Եստ ուշ չքէր :
- Ոհ , եթէ անօթի փորով լինէի կրկնեց արեղայն խորին մռնչիւնով մը :

— Ատի արդէն ըսիր :

Եւ Եիքօ հէզ գէնովարեանին հետ մտերմական փորձը կրկնապատկեց , որն որ բոլոր ուժովն կը բառալէր ու կը փչէր :

— Օն , եղէն վերջը ահա ընջիւղ մը դարձար , օն երթանք , ըսաւ Կառքօնացին : Հոս , արի , հիմայ , որպէս զն Բանիւռօժին պլլուիս ու Քօրն-տ՝ Աստուտանսի մէջ վայելուչ կերպով նընջելու երթաս :

— Այլ եւս ճամբաս չեմ տեսներ , ըսաւ վարդապետը , վասն զի աչերէն խոշոր խոշոր արտասուքներ կը վազէին :

— Ահ , ըսաւ Եիքօ , եթէ խմած զինիդ կուլաս , կարելի է որ դինիէն սթափիս , բայց ոչ , հարկ է որ ձեզ առաջնորդութիւն ընեմ :

Եւ Եիքօ սկսեց աւանակին սանձէն քաշել , մինչդեռ արեղայն երկու ձեռքով համետին պլլուելով բոլոր ուժով կաշխատէր ծանրութեան կեդրոնին վրայ հաւասարակշռուելու :

Այսպէս Մէօնիէ կամուրջը Մէն-Պարթէլըմի փողոցը , Բըթի-Բօնը անցան և Մէն-Ժազ փողոցն ելան . արեղայն , տակաւին կուլար և Կառքօնացին դեռ կը քաշէր :

Երկու տղայ , Պօնօմէի օգնականներն ըստ հրամանի Եիքօին արեղայն աւանակէն վար իջեցունելով արդէն մեր ընթերցողին ծանօթ խուցն առաջնորդեցին :

— Եղաւ , ըսաւ Պօնօմէ վարպետը ետ դառնալով :

— Պառկած է , հարցուց Եիքօ :

— Կը խորդայ :

— Եստ բարի : Բայց եթէ օր մը արթննայ , կը յիշէք չեմ ուզեր որ իր ինչպէս հոս գալն իմանայ , բառ մ'անգամ մի խօսիր , բնաւ բացատրութիւն մի տար ատոր վրայօք , նաեւ աւելի լաւ կըլլայ որ մինչեւ անգամ այնպէս կարծէ թէ այն

նշանաւոր գիշերէն ՚ի վեր , ուր իւր վանքին մէջ փոթորկայեց կռիւն ըրած և անջրպետի մէջ եղած դարձուածքն երազ մը կարծած է , տակաւին դուրս ելած չէ բնաւ :

— Բաւ է , աղինւ Եիքօ , պատասխանեց պանդոկապետը , բայց այս խեղճ արեղային գլխօն ինչ եկեր է :

— Մեծ դժբաղդութիւն մը , այնպէս կը թուի թէ Լիօնի մէջ Պ . Մայէնի կողմէ զրկուած մէկու մը հետ կռուած ու սպանած է զանի :


— Ոհ , Ատուուած իմ . . . գոչեց պանդոկապետը՝ այնպէս որ . . . :

— Այնպէս որ Պ . Մայէնը , ինչպէս կերեւայ , անուոյն տակ կենդանուոյն ձգվելու կամ իւր անունը կորսնցնելու երդմնած է , պատասխանեց Եիքօ :

— Անհոգ եղէք , ըսաւ Պօնօմէ , որ և է պատճառաւ մը դուրս չլինար ելլել ասկէ :

— Եստ աղէկ . և հիմայ , շարունակեց Կառքօնացին . հսկէ Կօռէնֆլօի վրայ . անհրաժեշտ պէտք է որ ա՛նձու դուրսը դանեմ , որոնհը :

Եւ քայլերն դէպ ՚ի Ֆռանսուա երրորդի Վեհախառուութեան պանդոկն ՚ի վեր ուզողեց :



ԳԼՈՒԽ ԺԶ .

ԻՇԽԱՆՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ

Ինչպէս տեսանք , Եիքօ դաշնաւորութեան երեկոյթին ունայնը որոնեց ա՛նձու դուրսը Փարիզի փողոցներուն մէջ :

Անշուշտ կը յիշեն ընթերցողք , որ աը Կիզ դուքսն իշխանը հրաւիրած էր որ դուրս ելլէ . այս հրաւերն նորին կասկածոտ բարձրութիւնն խռոված էր : Ֆռանսուա խորհած ու խորհելէ վերջը խոհեմութեամբ օճը կը դերազանցէր :

Սակայն, ինչպէս իւր անձնական շահը ինքնին կը պահանջէր որ յատկապէս այն երեկոյեան տեղի ունենալիք անցքերըն բուն իսկ իւր աչքերովը տեսնայ, հրաւերն ընդունելու զիջաւ, բայց միևնոյն ժամանակն այնպէս որոշեց որ առանց լաւապէս և ըստ արժանւոյն ընկերակցելու երբէք ոտքը պաւտան սեամէն դուրս չ'դնէ :

Ինչպէս որ ամեն երկչոտ մարդիկ զէնք մ'իրենց օգնութեան կը կանչեն, այսպէս ալ դուքսն իւր թուրը գտնալու զնաց :

Այս թուրը Պիւսի-տ' Սմայուակն էր :

Գուքսին այս ընթացքը կատարել տալու համար, պէտք էր որ երկիւղը զինքն սաստիկ հալածէր այսպէս : Պ. տը Մոնտրօի ճամբուն վրայ իւր պատրանքէն 'ի վեր, Պիւսի դէմքը կը կախէր և Ֆռանսուա ինքնին Պիւսիին տեղը և մանաւանդ Պիւսի իւր տեղը բռնած ենթադրած միջոյնն տեսնալով որ իւր ոյժը վրան կ'գայ, ինքնին կը խոտովանէր և հաւաստի կը լլբոր որ իշխանին եղած կշտամբանքէն աւելի զանի չափազանց անգթութեամբ ատած է :

Իսկ Պիւսի, ինչպէս բոլոր ամենագինը բնութիւններն, վիշտը աւելի կենդանի հոգւով կ'զգար քան հաճոյքը, հաղուա գիւտ բան է որ վտանգի դէմ անվեհեր, հրոյ և սրոյ դէմ հանդարտ և պաղաբիւն մարդ մը հակառակութեան մը յոյզերու մէջ ալ դիւրութեամբ չը յաղթուիր :

Կանանց հեշտութեամբ լացուցած մարդիկն, անոնք են որ մարդիկներէն կը վախնան :

Սանկ ըսենք թէ Պիւսի իւր վշտաց մէջ կը նիրհէր, Տիանան՝ իրրեւ Մոնտրօի կոմսուհին Լուիզա թագուհւոյն կողմէն պաղատան մէջ ազնուական կանանց կարգն ընդունուիլը, հաղարաւոր հետաքրքիր նայուածոց այդ մրցող և նախանձ, ընդդէմ գեղեցկութիւնը կլանելու դարձուածքները տեսած էր, այն գեղեցկութիւնը, որ համարեն թէ շիրիմէն ծնած ու ելած էր, ուր բաղդը զինքը դիպատած էր : Ազջոյն զիշերն իւր սիրտոց աչերը անոր վրայ յառած էր, որն որ իւր

թմրած ու ճանրացած բիւերն երբէք վեր չէր առած, և բոլոր այն տօնական հանդիսին ուրախութեանց միջոցն, Պիւսի բոլոր ճշմարիտ և անկեղծ սիրահարաց պէս անիրաւ, անցեալը մոռնալով և իւր մտաց մէջ անցելոյն յանած երջանկութեան ամեն ցնորքներն ինքնին եղծանել ու ջնջելով, Պիւսի, կրսնք, չէր խորհէր թէ ինչպէ՞ս Տիանա անընդհատ իւր աչերը խոնարհեցընելու կը համբերէր. այն որ այնչափ անտարբեր կամ անմիտ ու վեր 'ի վերոյ հետաքրքիրնրու մէջ գոնէ ինքն իր դէմը կընայ գիտութեան ամպ մը քաշել իւր կերպարանաց վրայ :

— Ահ, ըսաւ Պիւսի ինքնիրեն տեսնալով որ ընդունայն կպատէ նայուածքի մը, ո՛հ, ըսաւ, կանայք միայն այն ժամանակ ճարտար և զթասիրտ են, երբ կարգը խնամակալ մը, ամուսին մը կամ մայր մը խաբելու եկած է, սակայն երբ երախտագիտական պարտք մը հատուցանելու դայ կէտը, անյաշող վրցուն, մեղկ և անհոգ են. սիրահարուներն յայտնուելէ այնքան կ'երկնչին, իրենց ամենախորը շահուն վերաբերեալ բան մը այնքան կը մեծցունեն որ բնաւ չեն նայիր, չեն գիտէր թէ ի՞նչ է իրենց արժեքն ու արժանիքը որ կը համարձակին իրենց դէմն ելլողին սիրտը խորտակել : Տիանա կընար ազատօրէն ինձ ըսել, ձեռնէ տեսածներէս չնորհակալ եմ, Պարոն Պիւսի, բայց զձեզ չեմ սիրեր : Հարուածէն մեռայ կամ անկէ առողջացայ, Բայց ոչ, անողուտ կերպիւ զինքը սիրելու նախամեծար կը սեպէ, բայց բան մը չահած չունի. վասն զի ալ բնաւ չեմ սիրեր, միայն կ'ատեմ :

Եւ կատաղութիւնը սրտին մէջ արքայական շրջանակէն հեռացաւ :

Այս վայրկենին ալ եւս այն ազնուական ու վեհ դէմքը չէր երեւար որուն բոլոր կանայք սիրով և բոլոր արք սոսկուամով կը նայէին, այլ նաեմ ճակատ մը, մարտեալ աչք մը և կամակոր ժպիտ մը, միայն այս էր ամենը :

Պիւսի, դուրս ելած ատեն, տեսաւ որ Ա. կենտիկեան հայելոյ մ'առջեւէն կանցնի և հոն հայելին իրեն ճանրատաղտուկ բան մ'երեւցաւ :

Բայց յիմար եմ, ըսաւ, ի՞նչպէս զիս առող անձի մը համար հարիւրաւոր զիս խնդրողներուն զգուելի կը թուեցնեմ զիս : Բայց ինչու՞ համար, որո՞ւ համար զիս կ'ատէ :

Միթէ՞ այն լերկադէմ կմակերին համար է որ միշտ իրմէ տասը քայլ հեռու կենալով անդադար իւր նախանձոտ նայւածքներովը կը խանդաղատի վրան . . . և որ ինք ալ զիս չը տեսնել կը կեղծէ : Եւ դարձեալ ըսել է որ, եթէ ուզէի մէկ քառորդի մէջ սրտին տասը սրոյ հարուած տալով ոտքերուն տակ անշունչ և կիսամեռ կը լինէի, ըսել տակաւին որ եթէ ուզէի, այդ սպիտակ հանդերձները պաճուճող անձին արևունը կրնայի հոն հեղուլ, ըսել որ եթէ ուզէի, սիրելու չըյաջողած ատենս դոնէ ահռելի և ատելի կրնայի երեւալ :

— Ահ, իւր ատելութիւնը, իւր ատելութիւնը, իւր անտարբերութենէն առաւել մանաւանդ իւր ատելութիւնը :

— Այո՛, բայց ասի յո՛ւրի և խոտան ընթացք մ'է, այսպիսի բան մը, եթէ Քէլիւս ու Վօթիբօն սիրել զիտնային, միայն անոնց կը վայէր ընել : Սւելի լաւագոյն այն է որ առանց զլուխ ուխտի մը տակ դնելու և առանց սրտունջ մ'ուողը մ'ընելու իմ սքանչանացս առարկայ եղող Պլուտարքոսին ու սիրոյ ձեռքէն սզեվար ինկող Անթիօքիւսի պիտի հետեւիմ : Այո՛, պիտի լռեմ : Այո՛, ես որ այս դարուս բոլոր ահռելի քաջաց հետ իրան առ իրան մենամարտած եմ, ես որ Քրիլլօնը, նոյն իսկ քաջն Քրիլլօնը իմ դէմն սպառազինեալ տեսած ու վերջապէս իւր կիւանքը ալիս մէջ առած եմ, այո՛, ես իմ վիշտերս ալ պիտի մարեմ և հողոյս մէջ պիտի խնդդեմ՝ զանոնք ճիշդ ինչպէս Հէրքիւլէս սկայն Անթէի ըրած է առանց երբէք միանգամ յոյսն, իւր մայրն, իւր ոտքին առջևէն սպրդեցնելու : Այ, ոչինչ ինձ համար անհնար չէ, ես, Պիւսին, Պիւսին որ Քրիլլօնի հանդոյն քաջ ամսականն ստացած եմ գիւցազանց պէս պիտի ապրիմ և պիտի ընեմ ինչ որ կ'ենն հսկաներ :

Այս խօսքերուն վրայ ձեռքը շլաճգօրէն մէկ դին տարաւ, որով կուրծքը կը պատաստէր, ճակատին բրտունքը սրբեց և յամբօրէն դէպ 'ի դուռն յառաջացաւ, իւր կուրծքն ու ժգնակի օ-

թոյններուն կը զարներ . համբերութիւն և քաղցրութիւն պատուիրեց . և ժպիտը շրթանցը վրայ, հանդարտութիւն ճակտին վրայ և հրաբուղիս սրտին մէջէն դուրս ելաւ :

Ճմարտ է որ իւր ճամբուն վրայ Պ. տ' Անթու դուքսն հանդիպեցաւ և զլուխը դարձուց, վասն զի այնպէս կզգար թէ իւր հողոյն բոլոր ամբութիւնը մինչև ժպտելու և զինքը բարեկամ կոչելով անարգաբար առող իշխանը բարեւելու չափ ոյժ չկրնար ունենալ :

Անցնելու միջոցին իշխանը Պիւսին անունը տուաւ, բայց Պիւսի ետին անգամ չդարձաւ :

Պիւսի իւր բնակարանը մտաւ. թուրը սեղանին վրայ դրաւ, դաշոյնը պատեանէն հանեց, բաճկօնակն ու վերարկուն ձեռքօքն հանեց և գլուխը իւր զինուոց յենարանին դնելով մեծկակ թիկնաթուրի մը մէջ նստաւ :

Իւր մարդիքը տեսան որ կծկտէր է, կարծեցին թէ հանգըստանալ կուզէ, ուստի հեռացան : Պիւսի չէր քնանար, կերպազէր :

Առանց գիտնալու թէ սենեկին ուրիշ մէկ անկիւնն ալ ուրիշ մէկը իրեն պէս, առանց բառ մ'արտասանելու առանց շարժում մ'ընելու և հառանականաբան յարաբերութիւն մը սկսելու համար մէկ բառի մը կամ նշանի մը և որ և է առթի մը սպասելու ոգուով նստած, հետաքրքրաբար զինքը կը դիտէ, նոյն դիրքին մէջ բառական ժամեր անցուց :

Վերջապէս սառնասոյր սարսուռ մը բոլոր ուսերուն վրայէն քայլելով իւր աչերն մթնցնել սկսեց . դիտող ունքը բնաւ բերանը չբացաւ :

Անմիջապէս Աոմսին ակօսաներն իրար զարնել սկսան, բազուկներն արձկուեցան, իւր ծանրացած գլուխը թիկնաթուրի յենարանին երկայնութենէն սահելով ուսին վրայ ինկաւ :

Այս միջոցին սոյն պարագաներն դիտող ու քննող անձը հառաչանք մ'արձակելով իւր ամբոսին վրայէն ելաւ և անոր մօտեցաւ :

— Պարոն կոմս, տենդ ունիք, ըսաւ :

Կոմսը ճակատը վեր վերցուց որն որ շերմի դալտոեան ծե-
քանեգոյն կամբութեամբը ներկուել սկսեր էր :

- Ա՛հ, Ռըմի՛. դու ես, ըսաւ :
- Ա, յո՛, կոմս, ձեզ կապասէի հոս :
- Հո՞ս, և ինչո՞ւ :
- Որովհետեւ հոս, ուր մարդ մը կը տանջուի, երկար
ատեն չկեցուիր :

— Ենորհակալութիւն, բարեկամս, ըսաւ Պիւսի երիտա-
սարդին ձեռքը բռնելով :

Ռըմի այս սոսկալի ձեռքն իրենիններուն մէջ պահեց և
զանի սիրով մ'իւր սրտին վրա սեղմեց, որ մանկան մը ձեռ-
քերէն աւելի տկար վիճակ մ'ունէր :

— Տեաներք, պարօն կոմս, ըսաւ, դիմնալ պէտք է թէ
այսպէս կենալ կուզէք, կուզէք որ տենդն զձեզ տիրէ ու
տառապէ, ոտքի ելէք, եթէ կուզէք նուաճել, կը կամիր ան-
կողին մտէք և այնպիսի ընտիր գիրք մը կարդալ տուէք,
ուրկէ օրինակ և ոժ կարենաք աւնուլ :

Կոմսին աշխարհի մէջ հնազանդելէ զատ ուրիշ բան մը չէր
մնացած, հնազանդեցաւ :

Սակէ կը հասկցուի որ իրեն այցելութեան եկող ըսլոր բա-
րեկամը զինքն անկողնոյ մէջ տեսան :

Երկրորդ օրը մինչեւ վերջը Ռըմի կոմսին բարձիկը թող
չտուաւ, երկու պաշտօն ունէր, բժշկութիւն մարմնոյն և բը-
ժըշկութիւն հոգւոյն, որոց միտն համար զովացուցիչ օշարակ
և միւսոյն քաղցրիկ խօսքեր կը մատուցանէր :

Բայց, հետեւեալ օրը, որ աը Կիդի Լուվըր մտած օրն էր,
Պիւսի իւր շուրջը նսեցաւ որ Ռըմի չկայր :

— Խոնջած է, խորհեցաւ Պիւսի, խիտ ընական ըան մ' է,
խեղճ աղայ, օդի, արեւու և դարնան որքան կարօտութիւն
ունենալու է արդեօք, և երկրորդ որ Կէսթուիւտ ալ ան-
շուշտ իրեն կ'ապասէր, Կէսթուիւտ իրաւ է որ աղախին մ'է,
բայց կը սիրէ... : Սղախին մը երբ կը սիրուի չերուող թա-
դուհիէ մ'ալ անդին ու նախամեծար կ'ըլլայ :

Օրն այսպէս սպառեցաւ, Ռըմի չերեցաւ իրօք, վասնզի
բացակա էր, Պիւսի անոր կը լիափաքէր, այս հէգ տղուն հա-
մար՝ անհամբերութիւնէն սոսկալի զայրոյթ մը կ'զգար :

- Ա՛հ, միմնջեց երկիցս ու երկիցս, ես իւր երախտագիտու-
թեանն ու բարեկամութեանը կը հաւատաի ցարդ :
- Ա՛յ, այսուհետեւ երբէք բանի մ'ալ հաւատք ընծայել-
չեմ ուզէր :

Երեկոեան դէմ, երբ յիողոյնքնն բազմութիւններով ու
չուկներով լեցուիլ սկսեց, երբ արևն արդէն մարդ մոններով
առարկաներն որոշելու չէր ներէր Պիւսի բարձրագոյ և խառ-
նաչիոթ ձայներ լսեց իւր ներքնատենեկին մէջ :

Ա, յն ատեն ծառա մը բուրբովին խռոված ներս վազեց,
— Տէ՛ր իմ, ա՛ Սնժու դուքն է, ըսաւ :

— Ներս հրամցո՛ւր յարեց Պիւսի յօքերը այնպէս մը պը-
ստոելով որով իւր տիրոջ իր մասին անհանգիստն ըլլալէնըզ-
գածուին կիմացուէր, ան տիրոջ՝ որուն մինչև բարերարու-
թիւն իսկ կատէր :

Պուքսը մտաւ : Պիւսիի սենեակը լոս չկար, հիւանդնե-
րուն սիրտը խաւարը կը սիրէ, վասնզի ցնորից մառախուղն
ու մութը կը ժողովեն :

— Պիւսի, սենեակդ խիտ մութ է, այս բալը քեզ կը նե-
զէ, ըսաւ դուքսը :

— Պիւսի լուութիւն պահեց, անխորթութիւնը բերան
բանալու չներեց :

— Ուրեմն այդչալի ծանր հիւանդ էք, որ ինձ անդամ
չէք պատասխաններ, շարունակեց դուքսը :

— Սրդարեւ սաստիկ հիւանդ եմ, տէր իմ, միմնջեց
Պիւսի :

— Ուրեմն երկու օրէ՛ի վեր զքեզ իմ ընակարանս չլինալ
տեսնելուս պատճառն այս է, ըսաւ դուքսը :

— Ա, յո՛, տէր իմ, պատխասանեց Պիւսի :

Իշխանն այս Լալոնական պատասխանէն սրանդելով
սենեկին մէջ երկու երեք պտոյտ ըրաւ մութին ու կերպաս-

ներուն հետ շոշափուող քանդակագործութիւններն գիտելով :

— Ս, յաշափի մը կրնամ որոշել որ բնակարանդ լաւ շտկած ես, Պիւսի, ըսաւ դուքսը,

Պիւսի պատասխան չտուաւ :

— Պարծոնայք, ըսաւ դուքսն իր ազնուականներուն, քովի սենեակը դացէք, հաւաաալու կ'ստիպուիմ որ իմ հեղ բարեկամս իրօք ծանր հիւանդէ : Մի բոն ասոր առաջքն ինչո՞ւ չ'առաւ : Կայսեր մը բժիշկը Պիւսիի մը համար այնքան լաւ չէ :

Պիւսիի ծառաներէն մին գլուխը թոթվեց, դուքսն այս չարժուովը տեսաւ :

— Տեանենք, Պիւսի, ցաւեր ունիս՞, հարցուց դուքսը զըրեթէ չափազանց ողորանօք :

— Չեմ գիտեր, պատասխանեց կոմսը :

Դուքսն անոր մօտեցաւ ինչպէս այն նուիրուհիներուն, որ կը մերժեն և քանի որ մերժեն այնքան աւելի հաճոյակատար ու բարեօրոտ կը դառնան :

— Տեանենք, ըսէ ինձ, Պիւսի, ըսաւ :

— Ինչ ըսեմ ձեզ, տէր իմ :

— Ինձ բարկացած ես, հէ՞, յաւելցուց ցած ձայնով :

— Ես, բարկացած, ինչո՞ւ համար, նախ իշխանաց դէմ չ'եմ բարկանար : Ի՞նչ բանի կը ծառայէ ատի :

Դուքսը լռեց :

— Բայց, ըսաւ Պիւսի իւր կողմէն. յառաջաբաններով ժամանակ կը կորսնցնենք, վերջաբանը տեսնենք, Տէր իմ :

Դուքսը Պիւսիին նայեցաւ :

— Ինձ պէտք ունիք, այնպէս չէ՞, ըսաւ այս վերջինը անհաւատալի խտուրթեամբ մը :

— Ա՛հ, պարօն Պիւսի,

— Է՛հ, անտարակոյս ինձ պէտք ունիք. կը կրկնեմ ձեզ, կը հաւատամք արդեօք թէ ձեր զիս տեսնելու դալը մտերմական ցոյց մը կը ծանչեմ : Ա՛չ, քաւ լիցի. վասն զի դուք մարդ չէք սիրէր :

— Ա՛հ, Պիւսի, դու ինձ այդ օրինակ խօսք մ'ըսես :

— Տեանենք, ըմբռնենք խօսքերնիս, խօսեցէք, Տէր իմ, ինչ կարօտութիւն ունիք : Երբ մէկն իշխանի մը կը վերաբերի ու երբ այդ իշխանն ալ մինչեւ դքեզ իրեն բարեկամ անւանելու չափ կը քծնի, լաւ պէտք է անոր շողքորթութեան կամքն ու հաճոյքը գիտնալ և ըստ հարկին ամեն զոհողութիւն, նոյն իսկ կեանք չ'ինայել : Խօսեցէք :

Դուքսը շառագունեցաւ, բայց կեցած տեղը մութ ըլլալովը ոչ ոք չտեսաւ այս կարմրութիւնը :

— Ես քեզնէ ոչինչ կուզէի Պիւսի, և իմ այցելութիւնս շահադիտական ընթացք մը կարծեւովդ չատ կը սխալիս : Միմիայն օգին պայծառութիւնը և Պահաւորութեան ստորագրութեանը համար այս երեկոյ բոլոր Փարիզի չարժուովը տեսնալով փափաքեցայ որ քաղաքին մէջ շրջելու ատենս ինձ ընկերանաս :

Պիւսի դքսին նայեցաւ :

— Օռելյը չկայ քովդ, ըսաւ :

— Վ՛րնահար մը :

— Ա՛հ, Տէր իմ, բոլոր իւր յատկութիւններն մի տաք անոր, կարծեմ թէ ձեր քով ուրիշ պաշտօններ ալ կը կատարէ, և Օռելյը մէկ դին, նախ և առաջ տասն և տասներկու հատ ազնուականներ ունիք, որոց թուրերուն իմ ներքնատեսներէն տախտակամասներուն վրայ շառաչելը կը ըսեմ :

Դրան վարադոյրը կամաց մը վեր ելաւ :

— Ո՞վ է ան, հարցուց դուքսը բարձրաձայն, ո՞վ է որ առանց իմաց տալու իմ դռնուած սենեակս կը մտնայ :

— Ես Ուրմին, պատասխանեց լը Հօտուէն վեհօրէն և անտարբեր կերպով մուտք մ'ընելով :

— Ուրմին ո՞վ է, հարցուց դուքսը :

— Ուրմի բժիշկն է, Տէր իմ, պատասխանեց երիտասարդը :

— Ուրմի, ըսաւ Պիւսի, բժիշկէ ալ աւելի է, Տէր իմ, բարեկամը :

— Ա՛հ, ըրաւ դուքսը վիրաւորուելով :

— Լսեցի՞ր թէ դուքսն ինչ բանի կը փափաքի, հարցուց

Պիւսի անկողինէն ելլելու պատրաստուելով:

— Ս,յո՛, կը բաղձայ որ իրեն ընկերանայք, բայց . . . :

— Բայց ի՞նչ, ըսաւ դուքսն:

— Բայց չպիտի ընկերակցե՞ք, Տէր իմ, պատասխանեց լը Հօտուէն:

— Եւ ինչո՞ւ համար, դռնեց Ֆռանտուա:

— Վասն զի դուքսը խիստ ցուրտ է, Տէր իմ:

— Խիստ ցո՛ւրտ, ըսաւ դուքսն անոր իրեն զխմադրելու համարձակութեանը վարմացած:

— Ս,յո՛, խիբտ ցուրտ: Հետեւաբար ես որ Պ. Պիւսիի առողջութեանը պատասխանատու եմ իւր բարեկամաց և նոյն խակ իմ առջեւ, կարգիլեմ իրեն դուքս ելլել:

Պիւսի այլ եւս անկողինէն դուքս չցատկեց, բայց Ռըմինն ձեռքը իրենինին հանդիպեցաւ, և զանի նշանական կերպով մը սեղմեց:

— Իաւ է, ըսաւ դուքսը: Ըստ որում դուքս ելլելն այսքան մեծ վտանգ կը բերէ, թող կենա ուրեմն:

Եւ Նորին Բարձրութիւնը չափազանց վայրացած դէպ ի դուքսը երկու քայլ ըրաւ:

Պիւսի բերանն անգամ չբացաւ:

Դուքսը դէպ յանկողին վերադարձաւ:

— Ս,յայէս թոյլ տրուած է, գըրդ վտանգի մէջ մի դնէր:

— Կը տեսնէք, Տէր իմ, ըսաւ Պիւսի, որ բժիշկը կ'արգիլէ:

— Եթէ Սիրօնը տեսնես աղէկ կ'ընես, Պիւսի, մեծ բժիշկի մ'է:

— Տէր իմ. աւելի կը սիրեմ բարեկամ բժիշկի մը քան դեւտուն բժիշկի մը, ըսաւ Պիւսի:

— Արդ, մնաս բարեաւ:

— Երթայք բարեաւ, Տէր իմ:

Եւ դուքսն սաստիկ դժգոհմամբ դուքս ելաւ:

Հազիւ դուքս ելաւ, որուն մինչեւ պանդոկէն դուքս ելլելն Ռըմի ետեւէն կը դիտէր աչքին ծայրովը, բժիշկը հիւանդին քով վազեց:

— Օ՛ն, ելլել պէտք է, Տէր իմ, և եթէ կը հաճիս փութով, ըսաւ:

— Ինչո՞ւ համար ելլելս կուզես:

— Ինձ հետ շրջան մ'ընել երթալու համար, Սենեկին ներսը սաստիկ տաք է:

— Բայց հիմայ դքսին կըսէք որ դուքսը խիստ ցուրտ է:

— Անոր դուքս ելլելէն ՚ի վեր եղանակը դարձած է:

— Ս,յնպէս որ . . . ըսաւ Պիւսի հետաքրքրութեամբ ելլելով:

— Ս,յնպէս որ այս վայրկեանս, պատասխանեց լը Հօտուէն լաւ համոզուած եմ որ օդը ձեզ շատ շահաւոր է:

— Չեմ հասկնար, ըսաւ Պիւսի:

— Միթէ քեզ տուած օշարակներուս մէջէն բան մը հասկըցած ես, բայց և այնպէս կը կլլես զանոնք: Օ՛ն, աճապարէ՛ ելլենք, Պ. աՄնժու դքսին հետ պոռոյտ մը վտանգաւոր էր, բայց բժիշկին հետ առողջաւոր է. ես որ ձեզ այսպէս կ'ըսեմ, միթէ ինձ վտասահութիւն չ'ունի՞ս, եթէ այդպէս է, ուրեմն զիս ետ դարձունել պէտք էք:

— Երթանք ուրեմն, քանի որ կուզես, ըսաւ Պիւսի:

— Ս,յնպէս պէտք է:

Պիւսի դժգոյն և դողդոջուն ելաւ:

— Շահաբեր դունատութիւն, գեղցիկ հիւանդ:

— Բայց ո՞ւր պիտի երթանք:

— Փողոց մը, որուն օդը այսօր քիմիաբանօրէն լուծեցի:

— Եւ այդ օդը՞:

— Ձեր հիւանդութեանը համար շատ սքանչելի է, Տէր իմ:

Պիւսի հագուեցաւ:

— Փեղոյրս ու թուքս, ըսաւ:

Մէկով գլուխը ծածկեց, միւսը մէջքը կապեց:

Յետոյ երկուքն ալ դուքս ելան:

ՊԻՍԻՆ ՓՈՂՈՅԻՆ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Ուրմի իւր հիւանդն իր թեւին վրայ առնելով ձախը դարձաւ , Բօքիլիէն փողոցը մտնալով մինչեւ ամբողջը գնաց :

— Ինչ տարօրինակ բան է , ըսաւ Պիւսի , զիս կռանձ-Պա-թըլիէրի ճախիններուն կողմը կը տանիս և քաջ գիտես այն թաղն առողջարար է :

— Ո՛հ , Պարոն , ըսաւ Ուրմի , քիչ մը համբերութիւն , Բաժըվէն փողոցին շուրջը պիտի դառնանք , Պարնէօղ փողոցը աշերնիս պիտի ձգենք և Մօնթմարթըր փողոցը պիտի մըտնենք , կը հասկընաք , Մօնթմարթըրի գեղեցիկ փողոցը :

— Կը կարծէք թէ չճանչեր :

— Այդէկ , աւելի լաւ որ արդէն կը ճանչէք , ուստի ալ ինձ հարկ չմնար որ անոր գեղեցկութիւնը ձեզ նկարագրեմ և ձեզ խելոյն փորձիկ սիրուն , փողոց մը պիտի տանիմ : Միայն սա կըսեմ թէ ետեւէս եկի :

Սրդարեւ Մօնարթըրի դուռը ձախակողմը ձգելէ և փողոցին մէջ համարեա՛ թէ հարիւր քայլ առնելէ զինի Ուրմի աջակողմը դարձաւ :

— Ա՛հ , իրաւ որ գիտութեամբ է ըրածդ , ըսաւ Պիւսի , եկած տեղերնիս կը դառնանք :

— Ասի Ժիւլիէն կամ ըստ ոմանց Լեժրսիէն փողոցն է , զոր՝ Ժողովուրդն արդէն Ժիւսիէն յորջորջել սկսած է , որ կարծեմ այսպէս քիչ մ'ալ երթալով Ժիւսիէն պիտի կանչուի , վասն զի այս վերջինն ամենէն քաղցրահնչիւնն է , և մանաւանդ լեզուին արշաւն քանի որ իւր միջօրէն կը հասնի , այնքան ալ հետողհետէ իւր ձայնաւոր տառերն կը բազմապատկէ : Դո՛ւք Տէր իմ , այս բանը դուք քաջ գիտնալու էք քանի որ Բօլիլիոյ մէջ բաւական օրեր անցուցած էք , անոր դատարկասուններն ալ երբ փոքրիկ կոպիճներ ու դայլախազներ

փչերու և փչերով հայհոյած ատեն ինչ կերպարանք որ կառնէին տակաւին չորս բաղաձայններն ալ հետողհետէ չէին գործածէր երբ կը խօսակցէին

— Խիստ իրաւացի է , ըսաւ Պիւսի , բայց կարծեմ հոս լեզու քննելու և բանասիրական խնդիրներ լուծելու չենք եկած , ըսէ՛ ինձ ուրեմն թէ ո՛ւր պիտի երթանք :

— Սա փոքրիկ եկեղեցին կը տեսնէք , ըսաւ Ուրմի առանց Պիւսիի ըսածին ուրիշ պատասխան մը տալու : Հէ՛ , իւր փողոցի վրայ նայող ճատովն ու հասարակաց պարտիզին վրայ յանգող աւագ խորանովը ի՛նչպէս խորխորէն բանակած է : Գրաւ կը դնեմ որ մինչեւ այսօր երբէք այս բանին տեղեկութիւն չունէիր :

— Սրդարեւ , ըսաւ Պիւսի , չէի ճանչեր ատի :

Եւ այս Սէնթ-Մարի-լ Լեժրսիէն եկեղեցին չը մանող միայն Պիւսին չէր , այլ շատերը կային : Եկեղեցին ժողովուրդային էր և իրեն համար յատուկ ծուխեր ունէր , որոնք Բօքիլիոն մատուռն անունով հոն կը յաճախէին :

— Օն ուրեմն , ըսաւ Ուրմի , հիմայ որ սոյն եկեղեցւոյ անունը սովորել զինի բաւական արտաքին տեսքն ալ քննեցիք , ներս մտնանք , որ իւր դահլճին ապակիներն ալ անսնաք թէ որչա՛մ հետաքրքրական են :

Պիւսի Հօտուէնին նայեցաւ , և անոր դէմքին վրայ այնպիսի քաղցրիկ ժպիտ մը տեսաւ որ գիւրաւ կըրցաւ թափանցել թէ երկտասարդ բժիշկը զինքը եկեղեցի մտցնելուն մէջ ապակիները ցուցնելէ աւելի , որոնք մասնաւորապէս հասած ըլլալովն արդէն չ'պիտի կարենային տեսնուիլ , անշուշտ ուրիշ նպատակ մ'ունի :

Ի վերայ այսր ամենայնի՛ տակաւին ուրիշ բաներ ալ կային , զորս կարելի էր տեսնել , վասն զի երեկոյեան ժամասացութեան համար եկեղեցւոյ ներքսակողմը լուսաւորուած լինելովս վեշտասաներորդ դարուն պարզ և բնական նկարներն կերեւէին , զորս Խաախիա ի շնորհօ իւր պատուական կրկնային դեռ մեծաւ մասամբ կը պահէ , մինչդեռ մեր մէջ

օղին խոնաւութիւնն ու դարուն բարբարոսութիւնն ու վայրնու-
նութիւնն ժամանակին սահուն ընթացիցը հետ աննոց աւան-
դութիւնն ու հետքերը կը սրբեն կը տանին : Սրբարեւ եթէ
ոչ անդամալնական, գէթ պատմական ճշմարտութեան պարզ,
աննեղ և մեծ բարեկամ պատկերահան արուեստագէտը
մատրան ամենէն նշանաւոր մէկ անկեան մէջ Յռանտուս առա-
ջինի հրամանաւը և անոր համար Եգիպտացի Սրբուհւոյն
Մարիամայ կենդանադիրը դժադրած էր նոյն *գիրքին մէջ*
ուր դտնուէր էր սրբուհին Մարիամ նաւալարին *տարւ ստակ*
շունենալով՝ նաւողչքի համար իր անձը կը նուիրէր :

Ստոնցմէ վերջը Պիւսի Հօտուէին նայեցաւ, որն որ վայր-
կեան մը ծռած մեծ ուշադրութեամբ սոյն նկարը կը դիտէր :

— Քու Եգիպտացի Սրբուհի Մարեմայ մատուցիլ մի,
թէ՛ իմ ներսի դիւ անակրէրնդ ական աղանդն զարթուցանելու
գիտաւորութիւն ունիս : Եթէ այդպէս՝ շատ կը սխալիս, հոս
վարդապետներ ու դպրոցականներ պէտք է բերել :

— Քաւ լիցի, ըսաւ Հօտուէն : Ա՛նէ *վաւար զոչսն ինչ*
բէլու *խոյակն* :

— Լաւ, յետոյ :

— Սրբ, մտիկ ըրէք ուրեմն, հոս երբ մէկը մանայ, չը
կարծուի սակայն թէ աչքերը նայելով կրնայ ճաթիլ :

— Տեսնանք, դու զիս հոս բերելուդ մէկ ուրիշ նպատակ
մ'ունիս, այնպէս չէ՛. աղէկ զիտեմ որ Եգիպտացի կոյս Մա-
րիամին ծունկերը ցոյց տալու համար չէ :

— Ճշմարիտ չէ, ըսաւ Արմի :

— Արեմն տեսայ, պէտք է մեկնինք :

— Համբերութիւն. աւագիկ ժամերգութիւնն աւարտելու
վրայէ : Եթէ հիմայ դուրս ելլենք, հաւատարիմները կը շը-
փոթենք ու կը խանդարենք :

Եւ լը Հօտուէն կամացուկ մը Պիւսիին թեւը բռնեց :

— Ս.հ. ահաւասիկ ամեն մարդ ետ կը դառնայ, ըսաւ
Արմի : Եթէ կը հաճիք, մենք ալ անոնց պէս ընենք :

Պիւսի անտարբերութեամբ ու բացերեւ մտադրութեամբ

մը դէպ 'ի դուսն ուղղուեցաւ :

— Աղէկ, առանց օրհնած ջուր առնելու դուրս կեղեք :
Կարծեմ գլուխնիդ վրանիդ չէ :

Պիւսի մանկան մը պէս այս խօսքին հնազանդելով դէպ 'ի
յոյն սիւնն շտկուեցաւ, ուր օրհնեալ ջրոյն մարմարեայ աւա-
ղանը դրուադուած էր :

Ռըմի այս շարժումէն օգուտ քաղելով մօտակայ տիւկնոյ
մը նշան տալու պատեհութիւնն ունեցաւ որոյ վրայ կիներն ալ
իւր կողմէն անմիջապէս զգածուելով դէպի 'ի Պիւսիի դրու-
նուած սիւնն շարժեցաւ :

Այն վայրկենին որ կոմս իւր ձեռքը դէպ 'ի նուիրական
ջրոյն խեցեղինաձեւ աւաղանը կը տանէր, զոր երկու սեւա մար-
մարինէ Եգիպտացիներ վեր վերուցած էին, ուրիշ քիչ մը
պարարտ և սակաւ ինչ կարմիր, բայց կնացել ձեռք մ'ալ ի-
րենին մէջ մտաւ և մասններն սրսկման ջրոյն մէջ թըլեց :

Պիւսի չկրցաւ ինքզինք զսպել և իւր աչքերը նոյն ձեռքէն
անոր տիրոջ երեսն 'ի վեր դարձուց, բայց միեւնոյն միջոցին
ալ քայլ մը կրնկան վրայ ընկրկեցաւ և խոյն դժգունե-
ցաւ, վրան զի սոյն ձեռաց յատկութիւններուն մէջ, կարծես,
կիսովի սեռա շղարչի մէջ ծածկուած Աերթուիւտը կը նշմարէր :

Սյնպէս ձեռքը տարածած մնաց առանց մտածելու որ
խաչ հանէ, մինչդեռ Աեւթուիւտ ծածկուելով և զՊիւսի բա-
բեւելով կանցնէր, և իւր բարձր հասակին կիսանկարը փոքր
եկեղեցւոյն դաւթին ներքեւ կը դժադրէր :

Աերթուիւտէն երկու քայլ ետեւ որուն կորովի արմուկն տեղ
բանալ կուտար, մետաքսեայ մեկնոցակին տակ զգուցութեամբ
պլլուած կին մ'ալ կ'իջայր, կին մը, որոյ շքեղ և երևտասարդ-
տեսիլը, սիրուն սուրբըր, փափուկ հասակը Պիւսիին խորհել
տուին թէ աչխարհի վրայ իւր յիշողութեանը մէջ այս հան-
դամանդները կրող, այս հասակը, այս սուքը, այս ձեւը փայ-
լեցնող միայն մէկը կը ճանչէ :

Ռըմի ձայն չը հանեց ընաւ. միմիայն զինքը կը դիտէր :
Պիւսի դեռ նոր հասկնալ կսկսէր երկուսարդին զինքը Սէնթ

—Մորի—լ էժիբսիէն փողոցն առաջնորդելուն ու եկեղեցի՛ն մտցունելուն պատճառը :

Պիւսի սոյն կնոջ ետեւէն Հօտուէն ալ Պիւսիին ետեւէն գացին :

Եթէ մէջերնէն երկուքին տխրութենէն ու տժգնութենէն դառն վշտաց եւ տաղնապներու յայանութիւնը չըլար խիտա զուարճալի բան մը պիտի ըլլար չորս կերպարանքներու այս հաւասարաքայլ միմեանց ետեւէն ընթացող թափօրն :

Կերթուիւտ միշտ կարապետելով Մօնմարթի փողոցին անկիւնը որրեցաւ . այս փողոցին մէջ ալ քանի մը քայլ ընելէն յետոյ յանկարծ աջակողմն անել փողոց մը դարձաւ որոյ վըրայ դուռ մը կը բացուէր :

Պիւսի վարանեցաւ և դանդաջեց :

— Հը , պարոն կոմս , հարցուց Ռըմի , կուղէք որ միշտ ձեր կրնկան վրայ քայլեմ ու կոխտեմ :

Պիւսի ճամբան շարունակեց :

Կերթուիւտ , որ միշտ առաջէն կերթար , զըպանէն բանալի մը հանեց . և իւր տիրուհին ներս մտցուց , որն որ անկէց յառաջ անցաւ առանց դըլուխն անգամ մ' ալ ետին դարձնելու :

Լը Հօտուէն սենեկապանուհոյն երկու խօսք ըսաւ , մէկ դի կեցաւ և թողուց որ Պիւսի անցնի , յետոյ Կերթուիւտն ու ինք դըլուխ առ դըլուխ մտան , դուռը փակեցին և անել փողոցն անապատ դարձաւ :

Ժամն երեկոյեան եօթն ու կէսն էր , մայիսի առաջին օրն արդէն մարելու վրայ էր , դարնանային նախատող շնչոյն առաջընթաց ամրախառն օդի մը մէջ տերեւներ իրենց պատառուն պահարանաց ծոցին մէջէն մերկանալ կ' սկսէին :

Պիւսի շուրջը նայեցաւ , յիսուն ոտք քառակուսի տարածուած ետեմբ փոքրիկ պարտիզի մը մէջ կը դանուէր , որն որ ամենաբարձր պարիսպներով շրջապատեալ էր և որոց գագաթին վրայ նորաիթիթ որթեր և բաղեղներ իրենց նորածիլ կօկոններն արձակելով ժամանակէ ժամանակ երբեմն բուռի մասնկուռքներ վար կը թափին և ողօխն մէջ կը նետեն այն փոթովժահամ և բարկ հօտը , զոր երեկոյեան զովութիւնն իրենց տերե-

ւոց մէջ տեղերը կը թաղէ :

Երկայն տունիկը եկեղեցւոյն հին պատին ճեղքուածներէն դուրս ցցուելով դալարապեղ , դուռ պընձի գոյն կարմի կօկոններն կը բանային :

Վերջապէս առաջին շէփորակներն առաւօտեան արեւուն տակ փթթելով երիտասարդին շուարուն և ծփանուտ ուղեղըն իւրեանց անուշ հասուսներով կը գգուէին ու կը շարժէին . և ժամէ մ'իվեր իւր այսպէս մինակ , տկար և լքեալ վիճակին մէջ լուրջը դըլուխ չէին կրնար բերել քանի որ այնչափ դորովանօք սիրուած կնոջ մը ներկայութենէն չէին հօտէր :

Յամբիկի մը և բաղեղաւոր տունիկի մը որբանին տակ և եկեղեցւոյ որմին կը թնցուցած փայտէ բազմոցի մը վրայ Տիանա ճակատը խոնարհած , ձեռքերն անշարժ օրէն երկու քովերը ձգած նստած էր , որոյ մատնեւուն մէջերովը շահպարակ մը կերեւէր , որ անասրակոյս թերթ թերթ եղած հոն կը ճմլուէր . որոնք յետոյ աւազին վրայ աստ անդ կը ցանուէին :

Ս. յս միջոցին մերձակայ շաղանակներին մը ներքեւ պահուած սոխակ մ'իւր երկար և մերամազային երգերն սկսեց , զորս մերթ ընդ մերթ իշխուու վրայի մանածներուն որբներուն նըման սքանչելի խաղերով կը զարդարէր ու կը յերիւրէր :

Պիւսի այս պարտիզին մէջ տիկին Մոնտրօի հետ միայն էր , վասն զի Ռըմի և Կերթուիւտ հեռուն կը կենային , ուստի Պիւսի մօտեցաւ և Տիանա դըլուխը վեր առաւ :

— Պարոն Արմս , ըսաւ դողդոջ ձայնով մը , դարձուածքներ դորձածել մեզ չի վայելը , ձեր այս միջոցիս Սէնթ—Մարի լէժիբսիէն եկեղեցւոյն մէջ զիս դանալը բաղդի բերումը չկարծէք բնաւ :

— Ոչ , Տիկին , ըսաւ Պիւսի , Հօտուէնն որ դիս առանց ինչ նպատակի համար լինելն զխոցունելու՝ առաջնորդեց հոն և կերգնում որ չէի գիտէր . . . :

— Խմ խօսքերուս ողին չէք հասկնար , Պարոն , ըսաւ Տիանա տիրութեամբ : Ս. յս՝ , գիտեմ որ Պ. Ռըմին է զբեղ եկեղեցի առջանորդողը և թերեւս բռնի :

— Տիկին , ըստ Պիւսի , ոչ թէ բռնի . . . : Ձեի դիտէր թէ
ինչ տեսնելու պիտերթայի հոն :

— Ահա խիստ խօսք մ'ալ , պարոն կոմս , միմիջեց Տիանա
գլուխն երեքունենելով և Պիւսի վրայ խոնարակն անարկ մը վեր-
ցրենելով : Արծեմինձ հասկցնել կուզէր որ եթէ Ռըմիի դադու-
տիքը գիտնալու ըլլայինք , բնաւ անոր հետ չպիտի ընկե-
րանայիք :

— Ոհ , Տիկին :

— Բնական է , ստոյգ է : Պարոն , ինձի նշանաւոր ծառա-
յաւթիւն մ'ըրիք , և տակաւին իմ շնորհակալութիւնս չյայտ-
նեցի երբէք ձեր անձնուիրութեան : Ներեցէ՛ք ինձ , և ընդու-
նեցէ՛ք բոլոր իմ երախտագիտական յարգանքս :

— Տիկին . . . :

Պիւսի կանկ առաւ , այն աստիճան ղեղուած էր որ իւր
ծառայութեան վրայ յայտնելիք խօսք մ'ու գազափար մը
չունէր :

— Բայց շարունակեց Տիանա , իմ նպատակս ձեզ հասկը-
ցնել էր թէ ես ապաշնորհ կին մը չեմ և ուրացող կամ ան-
յիշատակ սիրտ մը չեմ կրեր . ձեզ հետ խօսակցելու պատուոյն
արժանանալուս համար ես Ռըմիի աղաչեցի , այս ժամադրու-
թիւնը ես ինքս որոշեցի . Ներեցէ՛ք եթէ ասով զձեզ ձանձ-
րութիւն պատճառեցի :

Պիւսի իւր ձեռացը մին սրտին կրթնցուց :

— Ռհ , Տիկին , ըսաւ , այդպէս բան մի մտածէ՛ք :

Գաղափարներն այս խորտակեալ տարաբաղդ սիրտը վերա-
դառնալ կ'ակտէին և իրեն այնպէս կը թուէր թէ երեկոյեան
այս քայցրիկ սեւքը , որ իրեն ամենահեշտ բոյրերու խանթա-
կաթ բաւեր կը բերէին , միևնոյն վայրկենին իւր աչերուն
վրայէն ամոզ մը կը ցնդեցնէին :

— Գիտեմ , շարունակեց Տիանա , որ խիստ ամենէն զօրեղն
էր , ըստ սրտմ երկար առնէ՛ ՚ի վեր այս այցելութեան պատ-
րաստած էր , գիտեմ թէ իմ խորհրդիս անապովդ որքան
աւ կրած ես , գիտեմ թէ որքան փափուկ անձ մ'էր : Աբ

ճանչեմ զձեզ և ձեր արժէքը , վստահ եղիք , դատեցէ՛ք հի-
մայ թէ ձեր իմ սրտիս զգացմանցը վրայ տարօրինակ գաղա-
փարներ կրելը զխոցած ատեններս որքան կը տանջուէի :

— Տիկին , ըսաւ Պիւսի , երեք օրէ ՚ի վեր հիւանդ էի :

— Այո՛ , տեղեակ եմ , պատասխանեց Տիանա կարմու-
թեամբ մ'որ սոյն հիւանդութիւնով ձեռք բերած բոլոր շահը
կ'անարգէր , այո՛ , և ես ձեռնէ առաւել կը տանջուէի , վասն
զի Պ . Ռըմի զիս կը խաբէր անշուշտ , Պ . Ռըմի ինձ կարծել
կուտար թէ . . . :

— Թէ ձեր մոռացումը ինձ տառապանք կ'առթէր : Ռհ ,
ճշմարիտ է :

— Արդ ըրի ինչ որ կը պարտէի , կոմս , յարեց ակիկն
Մոնտրօ . զձեզ տեսայ ձեր պարտաւորիչ խնամցոյ փոխարէն
իմ շնորհակալութիւնս կը յայտնեմ , և կերպուեմ որ այս մա-
սին յաւերժական երախտագիտութիւն մը պիտի պահեմ . . .
հաւատայ որ այժմ ՚ի խորոց սրտիս կը բարբառեմ :

Պիւսի ախուր կերպով գլուխը թոթվեց և բնաւ պատաս-
խան չի տուաւ :

— Ներկայի՛ք իմ խօսքերուս վրայ , կրկնեց Տիանա :

— Տիկին , պատասխանեց Պիւսի , անոնք որ մէկու մը հա-
մար բարեկամութիւն կը պահեն , կը հաւատտեն և կապացու-
ցանեն զանի ըստ հարկին ինչպէս որ կրնան . ձեր արբունիքը
ներկայութեան երեկոյին հոն վնեւս գիտէիք . գիտէիք որ ձեր
ներկայութեանը կեցած էի , պէտք էր իմ ակնարկներուս ողջ
ձեր անձին վրայ դառնալն զգայիք , սակայն նայուածք մ'անգամ
չվերցրեցի վրաս . զոնէ մէկ բառով մը , շարժուածքով մը և
կամ որ և է՛նչանով մը իմ ներկայ ըլլալս գիտնալնիդ չզգացու-
ցիք . յետ այսօրիկ , ակիկն , սխալեցայ , կարելի է զիս չկրցաք
ճանչել , որովհետեւ ընդ ամենը երկու անգամ տեսած էիք
զիս :

Տիանա այնպիսի կշտամբական ախուր ակնարկով մը պա-
տասխանեց , որ Պիւսի մինչև և աղեաց խորերէն գալարեցաւ :

— Ներեցէ՛ք , Տիկին , ներեցէ՛ք , ըսաւ , դուք ուրիշ կա-

Յանց պէս չէք երբէք, բայց դեղջուկ կանննց աչօք ամուսնութեան վրայ կը նայիք :

— Չէք դիտեր թէ որպիսի բռնութեամբ այդ վիճակին հասած եմ :

— Այո՛, բայց խղերն անկարելի բան մը չէ :

— Ընդհակառակն, անկարելի :

— Ուրեմն տակաւին չէք կրցեր հասկնալ թէ ձեր գլխոյն վերեւ ձեզ անձնուէր հողի մը կը հսկէ :

Տիանա աչքերը խոնարհեց :

— Մանաւանդ այդ կտորն էր որ, ըսաւ, ինձ սոսկում կազդէր :

— Ահաւասիկ այդ նկատման զոհեցիք զվեղ : Ո՛հ, Տիկին, յարեց, խորհեցեք թէ դուք ուրիշի մը վերաբերեցնէք ՚ի վեր ի՞նչ եղած է կեանքս :

— Պարոն, ըսաւ կոմսուհին համեղ կերպով երբ երկու մարդ այնպէս կապրին որ նոցա մին իւր թողածին անունը և միւսն իր ընդունուածին անունը կը կրեն, հոն կին մը առանց իւր պատուոյն մեծկակ փնաս մը նշմարելու երբէք իւր անունը չի փոխեր :

— Միշտ Մոնսորո անունը նախամեծարելով կը կրէք ուրեմն :

— Այնպէս կը կարծէք մըմնկեց Տիանա, աւելի ըսա :

Եւ իւր աչերն արտասուօք լեցուեցան :

Պիւսի, որ ինքն նորա գլխուն իւր կուրծքին վրայ լինալը տեսաւ, յուզեալ կերպով նորա առաջքը դնաց :

— Վերջապէս, ըսաւ Պիւսի, ահա նոյնը կը լլամ ինչ որ արդէն էի ձեզ համար, այսինքն օտար մի :

— Աւա՛ղ, ըսաւ Տիանա :

— Ձեր լուրթիւնն արդէն հերիք է պատասխան :

— Միայն իմ լուրթեամբ կրնամ խօսիլ :

— Տիկին, այդ լուրթիւնը ձեր Լուվրէն ընդունուելուն մէկ հետեւանքն է, Լուվրի մէջ զիս չէիք տեսներ, հօս հետքս չէք խօսիր :

— Լուվրի մէջ Պ. որ Մոնսորո ներկայ էր, որ զինք կը դիտէր և դիտէք որքան նախանձոտ է :

— Նախանձ, ո՛չ, այ՛հ Աստուած իմ, ալ ի՞նչ կ'ուզէ, ալ ի՞նչ երջանկութեան կրնայ նախանձիլ, մինչդեռ բոլոր աշխարհ իւր երջանկութեանը կը նախանձի :

— Պարոն, ըսի ձեզ որ նախանձ է, քանի մ'օրէ ՚ի վեր մէկուն մեր նոր բնակարանին շուրջը թախառելը կը տեսնէ :

— Ուրեմն Սէնթ-Սէնթօան փողոցի տնակը ձգեցիք :

— Ի՛նչ, դուչեց Տիանա զայրալիբ շարժում մը ընելով, ի՛նչ ուրեմն այն անձը դուք չէիք :

— Տիկին, ձեր ամուսնութիւնը հրապարակաւ ծանուցուելն ՚ի վեր, ձեր ներկայանալէն և Լուվրի երեկոյթէն ՚ի վեր, վերջապէս, ուր որ ինձ նայել չ'ուզեցիք, պառկած եմ, տենդը զիս կը լավէ, կը մեռնիմ, կը տեսնէք որ ձեր ամուսինն ինձ նախանձելու իրաւունք չունի, դոնէ անոր համար որ ձեր բնակարանին բոլորովը զիս չէ կրցած տեսնել :

— Լա՛ւ, Պարոն կոմս, եթէ ճշմարիտ է ըսածնիդ. շնորհակալ եղիք այն անձանութէն, վասն զի Մոնսորո, ինչպէս գիտեմ, զանի ճանկելով շատ կ'երկնէի որ դուք եղած ըլլաք, և ասոր համար ձեզ տեսնել ուզեցի որ ըսեմ, մի՛ ընէք այդպէս, պարոն կոմս, զիս աւելի եւս մի՛ թշուառացնէք :

— Կը կրկնեմ, Տիկին, թէ վստահ եղիք որ նոյն անձը ես չէի :

— Սրդ, թողէք որ ձեզի ըսելիքներս լմնցունեմ, Այս մարդէն երկնելով, զոր, որքան որ ալ մենք չենք ճանչէր, թուի թէ Մոնսորո կը ճանչէ, այս մարդուն ահովը կը պահանջէ որ Փարիզը ձգեմ, այնպէս որ, աւելցուց Տիանա ձեռքը Պիւսիին երկնցնելով, այնպէս որ, պարոն կոմս, մեր այս տեսութիւնը վերջինը պիտի նկատէք . . . : Վաղը Մեռիսօր պիտ' երթամ :

— Կը մեկնի՞ք, Տիկին, դուչեց Պիւսի :

— Միայն այս միջոցը կրնայ Մոնսորոն ապահովցնել, ըսաւ Տիանա, միայն այս կերպով իմ հանդատութիւնս կրնամ դըտնել : Նախ և առաջ, իմ մասիս, Փարիզ զգուցիլ է, զգուցիլ :

լի են նաև աշխարհք, արքունիք, Լուսինք, Լուս օրիորդութեան
յիշատակաց հետ առանձնանալով երջանիկ պիտ ըլլաւ, ինչ
կը թոսի թէ երկուսսարդական տարիներուս արահեաները կը ը-
կին գտնելով նախկին երանութեանս ցօղերէն քաղցրիկ կա-
թիլներ պիտի իջնան գլխոյս վրայ, Հայրս ինչ կընկերանայ,
Հոն Պ. և Տիկին տը Սէն-Լիւքս ալ կը գտնեմ, որոնք իմ
բացակայութեանս չափազանց կը տրտմին: Մնաք բարեաւ,
Պ. տը Պիւսի:

Պիւսի իւր գէմքը երկու ձեռքերուն մէջ պահեց:
— Սպա, մրմնջեց, ամէն բան լինցաւ:

— Ինչ կըսէք, գոչեց Տիանա սարի կելեղով:
— Կըսեմ որ, Տիկին, այն անձը որ գէեզ կը տարազըն,
այն անձը որ իմ մնացորդ միակ յոյսս, այսինքն ձեր շնած
օդը շնչելու, ձեր ետեւէն նախանձով գիտելու, անցնելու գ
ստուն, պատմութեանդ շարժելու, վերջապէս կենդանի ետ
մը և ոչ թէ ստուեր մ'երկրպագելու յայսս ալ կըբառնայ
կըսեմ թէ այդ անձը իմ մահկանացու ոտխալ է, ալ պէտք
կորսուի, այդ անձը ձեռքերուս մէջ պիտի բղբաեմ:

— Ո՛հ, պարոն կոմս:
— Թշուառականը, գոչեց Պիւսի, ինչ գէեզ կին ունկնաը
բաւական չէ, ձեզ պէս արարածներէն ամենէն չքնաղը, ամե-
նէն նուիրականը ժառանգելը հերիք չէ, տակաւին կը նախան-
ձի ալ, նախանձ, ծաղրելի և լախիլող ճիւղալ, աշխարհ
կըանել կուզէ:

— Ո՛հ, հանդարտեցեք, կոմս, հանդարտեցեք, Աստուած
իմ... թերեւս կրնայ արգարացուիլ իւր ընթացքը:
— Սըղարացուիլ, գու՛ք այսպէս կը խօսիք զայն պաշտ-
պանելու համար, Տիկին:

— Ո՛հ, եթէ գիտնայիք, բաւ Տիանա երկու ձեռքով ե-
րեսը ծածկելով, որպէս թէ մթութեան հակառակ հոն երեւ-
ցած կարմրութիւնը Պիւսիին ցուցնելու կը վախնար:
— Եթէ գիտնայի, կրկնեց Պիւսի:
— Ե՛հ, սովկին, մեկ բան մը գիտեմ, այն է թէ ձեզ ամուսն

